

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ
2007



ԿԳ ՏԱՐԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Դ Ե Կ Ե Մ Բ Ե Ր

2007

ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌԱԼՖ ԵԻՐԻԿՅԱՆ,
ՈՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ**

Համայն հայության նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատարիմ զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Գոհունակութիւն է Մեզ համար հաստատել, որ Դուք գովարժան նուիրումով ու աստուածասիրութեամբ սատար էք լինում լուսաւորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տէրունապատուէր առաքելութեանը, ինչը խօսուն վկայութիւն է առ մեր Սուրբ Եկեղեցին ունեցած Ձեր որդիական սիրոյ և հաւատարմութեան: Բարեպաշտ ու եկեղեցասէր ոգով, Դուք ազնիւ նուիրատուութիւնների շարունակական մատուցմամբ աստուածահաճոյ զօրակցութիւն էք բերում Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառութեանը: Ձեր նշանակալի իրագործումներում մեծապէս գովելի է Արցախի թեմում Ստեփանակերտի եկեղեցու շինարարութիւնը: Եկեղեցասէր հայորդուդ աջակցութեամբ կառուցեալ աղօթատունը պիտի նպաստի Արցախի հաւատաւոր Մեր զաւակների հոգևոր վերազարթօնքին և նրանց հոգիներում քրիստոնէական մեր սրբութիւնների նկատմամբ սիրոյ ու նախանձախնդրութեան ամրապնդմանը:

Մեծարգոյ Տիար, առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցուն և հաւատաւոր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մենք հաւատում ենք, որ եկեղեցանուէր նոյն սիրով ու քաջեռանդութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազնիւ կեանքով և բարի գործերով՝ որպէս արժանաւոր զաւակը մեր Մայր Եկեղեցու և մեր ժողովրդի:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ և Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արևշող բազում օրեր և Ձեր բոլոր առաքինի ձեռնարկումները պսակի մշտակայ յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ և ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 8-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2007 և ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 451

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով դեկտեմբեր ամսին

«Մ. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Էդուարդ և Նենսի Գյուլեսերյանները (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Տ. Զավեն քահանա Դեմիրճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Անդրեյ Սողովոյ (Ուկրաինայի հայոց թեմ)

Վարդգես Արզումանյան (Ուկրաինայի հայոց թեմ)

ՀԲԸՄ Մոնրեալի մասնաճյուղին (Կանադայի հայոց թեմ)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ ուխտագնացության համար կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովհաննես արքեպիսկոպոսին՝

Կարգալույծ հռչակված Հովհաննես արքեպիսկոպոսին այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Վարդգես Մայիլյան ավագանի անունով:

*

* *

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կանոնադրված ընթացքի համար կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Նորայր արքեպիսկոպոսին՝

Կարգալույծ հռչակված հոգևորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Արման Սիմոնյան ավագանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռի մի շարք միաբաններ նոր նշանակումներ են ստացել Մայր Աթոռի կառույցներում և Հայ Եկեղեցու տարբեր թեմերում:

Հոգեշնորհ Ս. Սահակ վարդապետ Մաշալյանը, ազատվելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսչի պարտականություններից, նշանակվել է Ճեմարանի տեսուչ:

Հայորդյաց տների Կենտրոնական գրասենյակի տնօրեն Հոգեշնորհ Ս. Գրիգոր աբեղա Խաչատրյանը համատեղության կարգով ծառայության է նշանակվել Արագածոտնի թեմում՝ որպես առաջնորդական տեղապահի ժամանակավոր պաշտոնակատար:

Հոգեշնորհ Ս. Նշան աբեղա Պետրոսյանը, ազատվելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսչի պարտականություններից, ծառայության է կոչվել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո:

Հոգեշնորհ Ս. Դավիթ աբեղա Քարամյանը, ազատվելով «Էջմիածին» ամսագրի փոխսմբագրի պարտականություններից, նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ

Դեկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհաբանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց «Դ-Տելեկոմ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին՝ բարձր գնահատելով նրա ազգօգուտ ու եկեղեցաշեն վաստակը:

Շքանշանի հանձնման արարողությունը բացվեց Տերունական աղոթքով:

Ապա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Հայրապետական Կոնդակում ի մասնավորի ասվում է. «....Գոհունակություն է Մեզ համար հաստատել, որ Դուք գովարժան նվիրումով ու աստվածասիրությամբ սատար եք լինում լուսավորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տերունապատվեր առաքելությանը, ինչը խոստովակայություն է առ մեր Սուրբ Եկեղեցին ունեցած Ձեր որդիական սիրտ և հավատարմության: Բարեպաշտ ու եկեղեցասեր ոգով, Դուք ազնիվ նվիրատվությունների շարունակական մատուցմամբ աստվածահաճո զորակցություն եք բերում Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառությանը: Ձեր նշանակալի իրագործումներում մեծապես գովելի է Արցախի թեմում Ստեփանակերտի եկեղեցու շինարարությունը: Եկեղեցասեր հայորդուդ աջակցությամբ կառուցյալ աղոթատունը պիտի նպաստի Արցախի հավատավոր Մեր զավակների հոգևոր վերազարթոնքին և նրանց հոգիներում քրիստոնեական մեր սրբությունների նկատմամբ սիրտ ու նախանձախնդրության ամրապնդմանը» (տե՛ս էջ 3):

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհակալական խոսքով դիմեցին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը և ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը: Նրանք իրենց խոսքում կարևորեցին Ռալֆ Յիրիկյանի՝ Արցախում իրականացրած բարեգործական և բարեսիրական գործունեությունը:

Վեհափառ Հայրապետին երախտագիտություն հայտնեց նաև մեծարյալը՝ արտահայտելով իր պատրաստակամությունը՝ ամենուր ծառայել Հայ Եկեղեցուն և ժողովրդին. «Ես միշտ շարունակելու եմ ծառայել մեր Եկեղեցուն, մեր ժողովրդին, մեր Հայրենիքին, մեր հայությանը: Ինձ համար Արցախ, Հայաստան, Սփյուռք տարբերություն չկա, ինձ համար հայությունը հայություն է»:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով մեծարյալի արժանիքներին և Եկեղեցուն ու ազգին բերած ծառայություններին, գոհունակությամբ նշեց, որ ճանաչում է Ռալֆ Յիրիկյանին նրա գործունեության սկզբից և նշմարել է նրա մեջ ազնիվ, եկեղեցանվեր, ժողովրդանվեր հոգի: Նորին Սրբությունը հատկապես կարևոր և մեծ ներդ-



րում համարեց Ստեփանակերտի եկեղեցու կառուցումը, որի շնորհիվ մեր ժողովրդի զավակները կհամախմբվեն փառաշուք կամարների ներքո, իրենց հայցն ու աղոթքը կբարձրացնեն առ Աստված և կգորացնեն իրենց հավատքը: Վեհափառ Հայրապետը նշեց նաև, որ հոգևոր ուրախություն է ապրում, երբ առիթ է ունենում գնահատանք հայտնելու, արժանին հատուցելու մեր ազգի նվիրյալ բարերարներին: *«Այդ գնահատանքը մխիթարություն է մեր սրտերին և խրախուսանք՝ տվյալ անձին, ինչպես նաև բարեգործ հայորդյաց, որպեսզի իմանալի լինի, որ յուրաքնչյուրի բարի գործը տեսանելի է Եկեղեցու և ազգի զավակների կողմից, և բարի գործն արժեվորվում ու գնահատվում է: Բարեգործության ոգին էության մասն է մեր ժողովրդի, որ դարեր շարունակ ուղեկցում է մեր ժողովրդի զավակներին, և հաճելի է, որ այսօր՝ Հայոց անկախ պետականության պայմաններում, ավելիով իր դրսևորումն է ունենում այդ ոգին»*, - ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ նշելով նաև, որ բարեգործ այդ ոգուն մենք ականատես եղանք նաև վերջերս՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին բերած գորակցությամբ:

Հանդիսությունը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՁԽՈՍԱԿԱՆ

Տ. ՊԱՐԹԵՎ ԱԲԵՂԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 դեկտեմբերի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ. Ամէն»:

Սիրելի հավատավոր ժողովուրդ,

Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Հայոց ազգի առաջին լուսավորիչների՝ Քրիստոսի տասներկու աշակերտներից երկուսի՝ Ս. Թադեոս եւ Ս. Բարդղղիմեոս առաքյալների հիշատակը, հետևաբար այսօրվա խորհրդածության մեր նյութը պիտի լինի երանելի առաքյալների կատարած գործը եւ նրանց ունեցած դերը մեր պատմության մեջ:

Հենց առաջինը, որ խոսում է առաքյալների մեծության մասին, նրանց անմահ սխարանքի մասին, նրանց փրկաբեր առաքելության մասին եւ նրանց ունեցած անգնահատելի դերի մասին հայ իրականության մեջ՝ առաքյալներին բնորոշող Լուսավորիչ կոչումն է, որով բնորոշված է նաև մեր հավատքի հայրը: Ինչպես Մեծի Տանն Կիլիկիո Բարեհիշատակ Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսն է ասում՝ «Քրիստոնեությունը հայ ժողովրդի աչքում լույս է, ուստի եւ նրա մատակարարները՝ Լուսավորիչներ»: Այդ լույսը մարդկային չէ, նյութական չէ, այլ երկնային, որն առաջին դարից ցայսօր լուսավորում է ազգս հայոց եւ առաջնորդում դեպ ճշմարտություն:

Ինչպես վկայում են հայկական եւ օտար աղբյուրները՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմները դրվել են Տիրոջ անմիջական աշակերտների՝ Ս. Թադեոս եւ Ս. Բարդղղիմեոս առաքյալների կողմից: Ս. Թադեոսը, որ հայտնի է մեզ մի քանի անուններով՝ Ղեբեոս, Լեբե, Ադդե, Հիսուսի աշակերտներից էր, ով Հիսուսին հարցնում է Տիրոջ հետևյալ արտահայտության մասին. «Ինձ ձեզ պիտի հայտնեմ եւ ոչ թե աշխարհին»: Հիսուս նրան պատասխանում եւ ասում է, որ Ինքը պիտի հայտնվի Իրեն սիրողների մեջ եւ ոչ երբեք սեր չունեցողների մեջ:

Ս. Բարդղղիմեոսը նույնպես Տիրոջ տասներկու աշակերտներից էր, ով մեզ Հովհաննու Ավետարանից հայտնի է նաև Նաթանայել անվամբ, եւ որի մասին Քրիստոս ճշմարտորեն վկայեց. «Ահա իսկական մի իսրայելացի, որի մեջ նենգություն չկա»: Երբ Փիլիպոսը Նաթանայելին ասում է, որ նա, ում մասին որ Մովսեսը Օրենքի գրքում ասում էր եւ ում մասին, որ մարգարեները վկայում էին, հայտնվել է Նազարեթ քաղաքում, Նաթանայելն անկեղծորեն հարցնում է. «Իսկ Նազարեթից հնարավոր է, որ բարի բան դուրս գա»: Այդ ժամանակ Փիլիպոսը նրան բերում է Քրիստոսի մոտ, որպեսզի ինքն իր աչքերով տեսնելով համոզվի, եւ Քրիստոս, տեսնելով Նաթանայելին, որ գալիս է իր մոտ, նրան ասում է. «Ահա իսկական մի իսրայելացի, որի մեջ նենգություն չկա», իսկ Նաթանայելը զարմացած հարցնում է, թե Քրիստոս որտեղից իրեն գիտի: Հիսուս նրան պատասխանում եւ ասում է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, որ մինչև Փիլիպոսի քեզ կանչելը, Ես քեզ տեսա թզենու տակ»: Պատահական չեն առաքյալներին նվիրված հոգեզմայլ շարականի խոսքերը. «Երա-

նելի Սուրբ առաքեալը, հրաւիրեալք ի սկզբանէ եւ ընտրեալք յորովայնէ»: Ուրեմն նրանք դեռ իրենց մոր որովայնում կոչված էին լինելու Տիրոջ խոսքի մատակարարները և մեր Սուրբ Եկեղեցու հիմնադիրները:

Ավետարանական այդ հատվածում խորհրդանշական է նաև Ս. Բարդողիմեոսի խոստովանությունը. «Ռաբբի, Դու Աստծո Որդին ես, Դու Իսրայելի թագավորն ես», որով առաքյալը ժառանգում է «Նախադավան առաքյալի» փառավոր կոչումը՝ Տիրոջ նախախնամությամբ հետագային դառնալով նախադավան հայոց ազգի լուսավորիչը:

Քրիստոս Իր ընտրած առաքյալներին պատվիրում է. «Որպես առաքեաց Զիս Հայր եւ Ես առաքեմ զձեզ: Գնացեք այսուհետեւ, աշակերտեցեք զամենայն հեթանոսս, մկրտեցեք զնոսա յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ: Ուսուցեք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ, եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի» (Մաթ. ԻԸ 19-20):

Ահավասիկ տերունապարզն այս պատվիրանը, որն առաջնորդեց առաքյալներին աշխարհի չորս ծագերը՝ Ս. Թադեոսին և Ս. Բարդողիմեոսին բերելով Մարաստան, Պարսկաստան, Հայաստան, Պարթևաստան և Հնդկաստան: Մինչ այդ, սիրելիներ, մենք տեսնում ենք, թե ինչպես է Քրիստոս հանգամանալից, ամենայն մանրամասնությամբ Իր աշակերտներին պատրաստում այս առաքելությանը, ավելին՝ այս առաքելությունը մեխն է ողջ նորկտակարանյան պատմության:

Առաքելության գաղափարն ընդգծվում է ամբողջ Նոր Կտակարանում, իսկ Քրիստոս Ինքը եղավ առաջին առաքյալը և նախատիպը բոլոր առաքյալների: Սա առաքելություն էր ոչ միայն որպես պարտականություն, այլև աստվածատուր սիրո արտահայտություն, մարդկանց փրկությանը ծառայելու սիրահոգաբար նվիրում: Քրիստոս աշխարհ եկավ, մեկ խոսքով ասած, հոգեփրկչական առաքելությամբ, այդ առաքելությունը փոխանցեց Իր աշակերտներին և այսօր այն փոխանցված է մեզ՝ եկեղեցականներին: Ինչպես որ Քրիստոս Գթթսեմանի պարտեզում հոժարակամորեն ընդունեց մարդկանց մեղքերի հետևանքով լցված դառնության գավաթը, որն իր առաքելության գագաթնակետն էր, լրումն էր, այդպես էլ Տիրոջ աշակերտները սիրով հանձն առան՝ լինելու աշխարհի լույսը, հալածվելու աշխարհի խավարից և Տիրոջ անվան համար մարտիրոսանալու: Ս. Թադեոսը և Ս. Բարդողիմեոսը նահատակվեցին Հայոց հողում, և նրանց վարդագույն արյամբ Հայոց հողում պտղաբերեցին քրիստոնեության անդրանիկ սերմերը, իսկ ազգս հայոց, միաբանված մեկ հավատի շուրջ, հավաքական գիտակցությամբ դավանեց կենդանի Աստծուն, և խավարը փոխարինվեց լույսով: «Ով որ ձեզ լսում է, Ինձ է լսում, և ով որ ձեզ է մերժում, Ինձ է մերժում, և ով որ Ինձ է մերժում, Ինձ ուղարկողին է մերժում, և ով որ Ինձ է լսում, լսում է Նրան, ով Ինձ ուղարկեց» (Ղուկ. Ժ 16),- Քրիստոս ասաց իր աշակերտներին: Հայ ժողովուրդը լսեց և ընդունեց առաքյալներին, ուրեմն ընդունեց և Քրիստոսին, թեև Նրան չէին տեսել, սակայն Քրիստոս ասում է. «Երանի նրանց, ովքեր չեն տեսնի և կհավատան»: Եվ այս հավատով է ավելի քան երկու հազարամյակ ապրում և արարում հայ ժողովուրդը:

Այսօր, սիրելիներ, երբ անդրադառնում ենք երկհազարամյա քրիստոնեական մեր պատմությանը, տեսնում ենք, որ, ի հեճուկս մեզ պատուհասած բազում արհա-

վիրքների, պատերազմների և դժվարությունների, հայ ժողովուրդը հավատարիմ մնաց իր դավանած քրիստոնեական հավատին և առաքյալների նահատակության օրինակը, հանուն հավատի և հանուն Քրիստոսի սիրուն գաղափարը կենսակերպ եղավ մեր ժողովրդի համար, որովհետև քրիստոնեությունը դարձավ մեր մաշկի գույնը: Նույնիսկ վերջին հարյուրամյակի խորհրդային բռնապետության բացահայտ աստվածամերժությունը չկարողացավ հեռացնել մեզ մեր հավատից:

Հայ ժողովուրդը այնպես հարազատորեն և ներդաշնակորեն ընդունեց քրիստոնեությունը, որ կարծես այն հենց իրենը լիներ: Առաքյալների քարոզչությամբ հայերիս մեջ արմատավորվեց լուսավոր ապագա ունենալու երազը, Երկնային արքայությունը ազգովի ժառանգելու հավաքական փափագը, մեր բոլոր իղձերը և երազները արդեն կապվեցին քրիստոնեության հետ:

Առաքյալների բերած լույսը եղավ հայի մխիթարիչը և սփոփիչը, և հայը հասկացավ, որ միայն Հայ Եկեղեցին կարող է լինել ազգի գոյության գրավականը, և որ եկեղեցու միջնորդությամբ պիտի կատարվի հայի մտավոր վերածնունդը, և Հայ Եկեղեցու Սուրբ Սեղանից պիտի բաշխվեն կենդանացուցիչ հացը և տերունապարզ Զնորհները:

Այսօր Հայ Եկեղեցին իր ձեռքբերումներով և կորուստներով, հազարամյա փորձառությամբ իմաստնացած պատմական իրողություն է այլևս, Համազգային բարձագույն կառույց, և սրանում անգնահատելի է Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների դերը: Մեզ առանձնակիորեն պետք է պարտավորեցնի այն հանգամանքը, որ Եկեղեցու հիմքերը դրվել են Քրիստոսի անմիջական աշակերտների ձեռքով:

Եվ այսօր առաքյալների հիշատակի տոնակատարությունը ևս մեկ առիթ է մեզ համար՝ անդրադառնալու մեր քրիստոնեական արմատներին և գիտակցելու առաքյալների հեղած արյան արժեքը: Եվ եթե այսօր մարմնավոր նահատակության անհրաժեշտությունը չկա, ապա գերակա է հոգևոր նահատակության անհրաժեշտությունը՝ անմնացորդ նվիրումի և ծառայասիրության, որով մեր Եկեղեցու հոգեփրկչական և ազգապահպան առաքելությունն է՝ ավելի պիտի արդյունավորվի: Աղոթենք առ Բարձրյալն Աստված, որպեսզի Սուրբ առաքյալների բարեխոսությունը մշտապես լինի մեր ժողովրդի համար՝ ի շինություն և ի պայծառություն Հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

**Տ. ԴԱՎԻԹ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(2 դեկտեմբերի 2007 թ.)

*«Ով բնակվում է Իմ մեջ, և ես՝ նրա մեջ, նա
շատ պտուղ է տալիս, որովհետև առանց Ինձ
ոչինչ անել չէք կարող»:*

(Հովհ. ԺԵ 5)

Միքելի հավատացյալներ,

Աստվածայինին հաղորդվելու հոգևոր կանչով այս առավոտ դարձյալ մեր քայլերն Աստծո սիրո ջերմությամբ լցված այս սուրբ տունն ենք ուղղել: Գուցե այս անգամ ավելի աճապարանքով, քանզի ձմեռային սառնությամբ լցված օդն ու մառախլապատ երկինքը բնագոյաբար մեր մեջ հոգիներս ջերմացնելու ցանկությունն ավելի հախտոն էին դարձրել: Ու հիմա ջերմացած մեր հոգիներին կարծես թե Քրիստոսի ձայնն ավելի հստակ ու լսելի է դառնում, որ այս անգամ մեզ մի անպտուղ թզենու մասին է պատմում:

Պարզ ու գեղեցիկ մի պատմություն՝ հասու ամենքիս, բայց և այնքան խորիմաստ ու բովանդակալից: Առակ այն մասին, թե ինչպես մեկը, որ իր այգում մի թզենի էր տնկել՝ նրանից պտուղ ստանալու ակնկալիքով, արդեն երրորդ տարին էր, ինչ հուսախաբ էր լինում՝ այն անպտուղ գտնելով: Բնական է, որ պիտի բարկանար ու մտածեր՝ կտրել-նետել այն, որ ավելորդ տեղ չգրադեցնի: Սակայն այգեգործը միջամտում է, որ մեկ տարի ևս համբերի ու առիթ տա նրան՝ առավել ևս հոգ տանելու ու խնամելու ծառին, որ գուցե մյուս անգամ պտուղ տա: Որքա՛ն հարազատ պատկեր. հավանաբար մեզանից շատերը նկարագրվածին համարժեք փորձառություններ են ունեցել: Չի՞ պատահել երբևէ, որ ինչ-որ ծառ ենք տնկել ու տարիներով սպասել, որ պտղաբերի, սակայն երկար սպասումից հոգնել ու դառնացել և մտածել ենք՝ կտրել-նետել այն, բայց դարձյալ մի վերջին հույս փայփայելով՝ որոշել մինչև մյուս աշուն սպասել:

Իր քարոզության շրջանի համար ևս նույնչափ հարազատ ու հասարակ այս պատկերով Քրիստոս փորձում է որոշ ճշմարտություններ հասու դարձնել՝ հավանաբար կամենալով ասել, որ պետք չէ ցուցադրական տերևաշատությամբ անպտուղ ծառի վերածվել, որ Տիրոջ ժողովուրդը թեև ընտրվել էր Աստծո կողմից, որպես խնամված մեկ ծառ աշխարհի այգում՝ իրեն հատուկ պտուղը տալու համար, սակայն ամուլ ու պարապ էր մնացել: Հետևաբար իր նպատակին չծառայած ազդը պիտի դուրս մնար այլևս Աստծո ծրագրից: Բայց երկայնամիտ ու սիրող Հայր Աստ-

ված, Իր Որդու միջնորդությամբ վերջնականորեն իրենից չի կտրում անպտուղ մնացածին, այլ պտղաբերելու նոր հնարավորություն է տալիս:

Հիսուսին լսողները այս օրինակից անուղղակիորեն նաև մեկ այլ ճշմարտություն պետք է քաղեն: Հին Ուխտի հետևորդների ըմբռնմամբ այն, ինչ պտղաբերում էր, վայելում էր Աստծո օրհնությունը: Հետևաբար Հիսուսի այս համեմատությունն ակնարկ էր նաև Աստծո օրհնությունից նրանց զրկված լինելու մասին:

Առակն այս, մասնավոր հանգամանքներում ու ժամանակներում ասված, չի սպառվում նաև տվյալ միջավայրի ու ժամանակի մեջ: Այն, ինչպես Քրիստոսի ասած ամեն մի խոսք, երբեք անցյալ չի դառնում, այլ կա որպես հարատև ու մշտանա ներկա, որովհետև ոչ թե դիպվածային հանգամանք ունի, այլ ներկայացնում է մարդկային բնության որոշ հասկանիշներ, որոնք ընդհանուր են բոլոր մարդկանց համար և նույնը՝ բոլոր ժամանակներում: Հետևաբար բացառություն չեն նաև մեր ժամանակներն ու նաև մենք այսօր: Որովհետև, եթե հպանցիկ կերպով իսկ անդրադառնանք մեր կյանքին ու անձին, կհասկանանք, որ թերևս բոլորս էլ կարող ենք առանց վերապահության ընդունել, որ անպտուղ թզենու օրինակով Հիսուս մեզնից յուրաքանչյուրին նկատի ունի: Եվ իրավամբ էլ անպտուղ թզենի ենք, որովհետև ապրում ենք, բայց հաճախ ամուլ կյանքով, երբեմն էլ միայն տերևաշատ ծառի պես, որ թեև գեղեցիկ է թվում ու մարդկանց աչքում բերրիության պատրանք ստեղծում, բայց իրականում զուրկ է որևէ արժեքից ու ներքին պարապությամբ է միայն որակվում: Այդպիսի կյանքն արդեն իսկ ավելորդություն է համարվում ու դատապարտված է կորսության, որովհետև անիմաստ ու ինքնանպատակ որևէ բան չկա Աստծո գործերում, այլ յուրաքանչյուր արարած իրեն վերապահված գործն անելու և պտուղը տալու է կոչված: Պարզապես Աստված միանգամից չի մերժում անպտուղ մնացածին, այլ իր երկայնամտությամբ ու սիրով դարձյալ առիթ է տալիս, որ գուցե մի օր պտուղ տա:

Սիրելիներս, իսկ մեզանից ո՞վ կարող է վստահ համոզումով իր անձի համար ասել, որ Աստծո ակնկալած պտուղն է տալիս: Չէ՞ որ պտղաբեր լինելու համար նախ պետք է դադարենք ինքնագո ծառի կյանքով ապրելուց ու հասկանանք, որ Քրիստոսով կոչվել ենք նոր լինելության, նոր կյանքով ապրելու, այս անգամ որպես ճյուղեր, որ առանց արմատի չեն կարող անգամ գոյություն ունենալ: Իսկ կենդանության արմատն այդ Քրիստոսն ինքն է, որ ասաց. «Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը» (Հովհ. ԺԵ 5) և «...ինչպես ճյուղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթե որթատունկի վրա հաստատված չլինի, նույնպես և դուք՝ եթե Իմ վրա հաստատված չլինեք» (Հովհ. ԺԵ 4):

Հետևաբար, քրիստոնյա անունը նախ՝ ժխտումն է ինքնագո ու առանձնացած լինելության և ապա՝ հաստատումը հաղորդության, մեկը մյուսով պայմանավորված գոյության: Հետևաբար քրիստոնեական ընկալմամբ մեկուսացած ապրել և հատկապես Աստծուց հեռու լինել արդեն իսկ նշանակում է չլինել, գոյություն չունենալ: Ըստ այսմ՝ ապրել, նշանակում է մասնակցել աստվածայինին, որից և, որպես կենսատու արմատից, կյանքի ավիշն ենք ստանում: Այդ ավիշն է, որ կենդանություն է

պարզևում ճյուղերին ու նրանց միմյանց կապում և այդպես նաև բոլորին միասին արմատի հետ հաղորդության մեջ պահում: Այդ ավիշն է նաև, որ ճյուղերով անցնում, պտուղ է դառնում: Դա նկատի ունի Քրիստոս, երբ ասում է. «Ով բնակվում է Իմ մեջ, և Ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց Ինձ ոչինչ անել չէք կարող»:

Ուստի, սիրելիներ, նախ ջանանք իսկապես ապրել, որպես միևնույն որթատունկի՝ Քրիստոսի վրա հաստատված ճյուղեր, որ յուրաքանչյուր Պատարագի որպես կենաց ավիշ Իր Սուրբ Մարմինն ու Արյունն է մեզ տալիս: Որովհետև միայն այդ կերպ կկարողանանք, թեև լինելով տարբեր ու բազում անդամներ, բայց Տիրոջ նույն կենսատու Արյամբ միավորյալ մեկ մարմին, տալ սրբության պտուղներ, քանզի «Եթե արմատը սուրբ է, սուրբ են նաև ճյուղերը» (Հռոմ. ԺԱ 16), հետևապես՝ սուրբ են նաև պտուղները :

Ուրեմն, Աստծո շնորհով հաստատուն մնանք մեր կենաց Արմատին, որպեսզի երբևէ մեզանում չպակասեն աստվածահաճո և սրբության գործերն ու պտուղները, և մեր ապրած որևէ օր անպտուղ չմնա:

**Տ. ԳԱԲՐԻԵԼ ԱԲԵՂԱ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(23 դեկտեմբերի 2007 թ.)

*«Որ բարձրացուցանե՞լ զանձն՝ խոնարհեցի.
եւ որ խոնարհեցուցանե՞լ զանձն՝ բարձրացի»:
«Ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի,
և ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա»:
(Մատթ. ԻԳ 12)*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Միբելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Աստծո ստեղծագործության ընթացքը ձայնում և Նրա հայտնությունը տեղեկացնում է, որ Տիրոջ արարչագործության պսակը Իր պատկերով և նմանությամբ ստեղծված մարդն է, որ փնտրում ու ցանկանում է գտնել իր երջանկությունը: Քիչ առաջ լսեցինք Ղուկասի Ավետարանի 18-րդ գլխի 9-14 համարները, որը մեզ պատմում է «Փարիսեցու և մաքսավորի առակը»:

Մաքսավորները Հռոմեական պետության պաշտոնյաներ էին: Նրանք վարձված էին պետության կողմից, որպեսզի հարկեր հավաքեին հսկայածավալ կայսրությանը ենթակա նահանգներում ապրող տարբեր ազգերից: Մատթեոս ավետարանիչը՝ տասներկու առաքյալներից մեկը, որ հայտնի էր նաև Ղևի անունով, ևս մաքսավոր էր, որը թողնելով իր պաշտոնը՝ հետևեց մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին (Մտթ. Թ 9): Իսկ փարիսեցիները հրեական հոգևոր վերնախավի ներկայացուցիչներն էին, հայտնի էին որպես պահպանողականներ և հրեական ավանդությունների նախանձախնդիրներ:

Առակում պատմվում է, թե երկու մարդ գալիս են աղոթելու դեռևս Հին Կտակարանյան եկեղեցում, որը բաժանված էր երկու մասի. մի մաս կարող էին մուտք գործել միայն Հին Ուխտի հետևորդները, իսկ մյուսում՝ բոլորը, նույնիսկ այլադավաններն ու հեթանոսները:

Արդ, փարիսեցին, մտնելով տաճար, կանգնում է աղոթքի: Սուրբ Գրքի հունարեն բնագրից երևում է, որ նա տաճարում կանգնում է ոչ թե մեկուսի, այլ հպարտ և ցուցադրական ձևով՝ ընդունելով հանդիսավոր դիրք, աղոթում է ոչ թե ցածր ձայնով, համեստ, որ չխանգարի ուրիշներին, այլ բարձրաձայն՝ ասելով. «Աստված իմ, շնորհակալ եմ Քեզանից»:

Առաջին այս բառերում արտասովոր որևէ բան չկար, ավելին՝ փառաբանել և գովաբանել Աստծուն, շնորհակալ լինել Նրան կարող են միայն ընտրված և հոգևոր կյանքով ապրող մարդիկ: Նա իր աղոթքում նաև նշում է. «Շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»:

Սա նույնպես լավ է, քանի որ չի կարելի նրանից խլել իր այդ առաքինությունը, քանի որ Մովսիսական օրենքը չէր պահանջում, որ շաբաթը երկու անգամ պահք պահեին, նրանց մոտ միայն կար մեկօրյա պահք, տարին մեկ անգամ, այն էլ՝ մաքրագործման օրը: Հետևաբար, փարիսեցին այդ անում էր կամավոր, դա խիզախություն էր: Ավելին, նա տասանորդն էլ էր վճարում, այն ամենի տասանորդը, որ աշխատում էր, նույնիսկ իր վաստակած ամենաչնչին գումարի տասը տոկոսը: Ճիշտ է, օրենքի համաձայն նրանք պետք է իրենց արդյունքի տասանորդը տային սրբությունների պահպանության համար, բայց նա տալիս էր իր ամբողջ «եկամտից», այսինքն՝ ամբողջ ունեցվածքից էր տալիս, որը նրանից չէր պահանջվում, որը նույնպես լավ օրինակ է: Այնուամենայնիվ, ճանապարհը փարիսեցուն տանում էր ինքնագոհության և անկատարության:

Միքելի հավատացյալներ, բնական հարց է առաջանում, այդ դեպքում ո՞րն է նրա սխալը: Աղոթքում, սակայն, նա նաև ասել էր. «Շնորհակալ եմ Քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շնացողները, և կամ ինչպես այս մաքսավորը»:

Նման դեպքեր շատ են պատահում, և նման օրինակներ մենք կարող ենք տեսնել մեր առօրյա կյանքում: Մենք իրավունք չունենք գնահատելու մեր առաքինությունները և ոչ էլ դատելու ուրիշներին: Դա միայն մեր Տիրոջ իրավունքն է: Նա է, որ գնահատելու և դատելու է մարդկանց:

Ինչպե՞ս կարող ենք գնահատել մեր գործած առաքինությունները, երբ Ղուկասի Ավետարանի ԺԶ 15-րդ համարում Տերն ասում է. «Դուք եք, որ մարդկանց առաջ ձեզ արդար եք ձևացնում, սակայն Աստված ձեր սրտերը գիտե. որովհետև այն, որ մարդկանց առաջ բարձր է, Աստծու առաջ զազրելի է» (Ղուկ. ԺԶ 15):

Բացի այս , եթե այժմ մենք գնահատենք մեր բարի գործերը, ապա Աստված ի՞նչը պիտի գնահատի: Այդժամ Նա մեզ կասի. դուք երկրի վրա եք ստացել, որը դուք եք նախընտրել: Առավել ևս չի կարելի դատել մերձավորին: Շատ հաճախ մեր մերձավորների արարքներում մենք նրանց քայլերի միայն մեկ կողմն ենք տեսնում: Դա արտաքին կողմն է, բայց մարդկանց ներքին տրամադրվածությունը, ներքին ապրումներն ու զգացումները մենք չենք տեսնում: Դրանք մեզ հայտնի չեն: Հետևաբար, մեզ հայտնի չէ Աստծո հանդեպ նրանց ունեցած զգացումները:

Մենք կարող ենք դատել և մեղադրել մեկին, սակայն շատ չանցած, ապաշխարելով Աստծո առաջ, նա կարող է ընտրել սրբությունը, ինչպես, օրինակ, Զակքեոսը: Չէ՞ որ նրան նույնպես բոլորը մեղադրում էին:

Ղուկասի Ավետարանի ԺԹ գլխում ընթերցում ենք, երբ Տերը Երիքովում այցելեց Զակքեոսի տուն, «ամենքը այս տեսան, տրտնջում էին և ասում, թե մեղավոր մարդու մոտ մտավ գիշերելու»: Իսկ Զակքեոսը եկավ-կանգնեց և ասաց Տիրոջը. «Տե՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ»: Եվ Հիսուս նրան ասաց. «Այսօր այս տան համար փրկություն եղավ, քանի որ սա ևս Աբրահամի որդի է, որովհետև մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին» (Ղուկ ԺԹ 7 –10):

Այս դեպքում մտածե՞լ ենք արդյոք, թե ինչ պատասխան ենք տալու Աստծուն: Ինչպե՞ս կարող ենք կանգնել Աստծո առջև և Նրա հայացքի ներքո նայել այն բոլոր մարդկանց, որոնց ատել ենք ու արհամարհել: Ավետարանում ասվում է, որ Աստծո տանը աղոթողներից երկրորդն էլ մաքսավորն էր, որ «կանգնել էր մեկուսի», մի

անկյունում՝ իրեն անարժան համարելով մոտենալ Սրբություն Սրբոցի դռներին՝ այժմ Խորանին, և «չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել», կանգնած էր խոնարհ հայացքով՝ չհամարձակվելով երկինք նայել, որտեղ ապրում են սերովբեներն ու քերովբեները: Այլ նա իր կրծքին էր հարվածում՝ ասելով. «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Նա իր միտքը, կամքը և զգացմունքը ներդաշնակել էր աղոթքի զորությամբ, որ տանում էր Տիրոջ սրբությանն ու արդարությանը: Մարդու ճշմարիտ հոգու պահանջն է խոսել ի խորոց սրտի տիեզերքի Արարչի հետ՝ այս երկրի վրա հաստատելու բարին, հաճելին և կատարյալը:

Միբելի հավատացյալներ,

Մաքսավորը հաշտվել էր Աստծո հետ, ապաշխարել էր իր մեղքերը և ներողատություն էր հայցում Աստծուց այս ամենի համար՝ հույսը դնելով Աստծո անասելի մարդասիրության վրա: Մաքսավորն իր ուրախությունն ու երջանկությունը տեսնում էր Աստծո ներկայությամբ ապրած կյանքի մեջ, քանի որ նա հավատում էր Տիրոջ զորությանը. «Զի հաւատք հասուցանեն ի ծանօթութիւն փառացն Աստուծոյ»:

Մի կողմից տեսնում ենք փարիսեցուն՝ բարեգործ և առաքինություններ գործող, սակայն հպարտ, աղոթելիս՝ հանդուգն և ոչ խոնարհ, իսկ մյուս կողմից՝ մեղավոր մեկին՝ մաքսավորին, որ խոնարհությամբ և հաշտությամբ հնազանդվում է Աստծուն, որը, այս առակից երևում է, ավելի ընդունելի է Աստծո համար, քանի որ Քրիստոս Ինքն ասաց. «Մա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. որովհետև ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի, և ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա»:

Ահա Աստծո հետ հաղորդվելու ճշմարիտ օրինակ, որ մարդուն բերում է հոգեկան խաղաղություն և հանգստություն՝ այսպիսով, Աստծուն տեսնել, իր հոգու հայելու մեջ, քանի որ մաքսավորը մարդու իսկական արժեքը տեսնում էր նրա հոգևոր բարձրության մեջ:

Մոտենում է ամավերջը: Բոլորս գնահատում ենք մեր արածները, ձեռքբերումներն ու նվաճումները՝ անձնական, ընտանեկան, աշխատանքային կյանքում, ըստ մեր կարողության ու սահմանի, սակայն եկեք՝ ուսանենք այսօրվա ավետարանական դրվագից և չհպարտանանք դրանցով, այլ հայցենք Աստծո ողորմածությունը, ինչպես մաքսավորներ՝ ստանալու նրա շնորհներն ու Տիրոջ արդարությունը՝ վասն մեր բոլորիս բարօրության, քանի որ «ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի, և ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրացնա»:

Մեր Տիրոջ սերը, շնորհներն ու խաղաղությունը թող լինեն ամենքիս հետ. Ամեն:

**Տ. ԻՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(30 դեկտեմբերի 2007 թ.)

«Ասում եմ ձեզ, թե՝ Ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի»:

(Ղուկ. ԺԹ 26)

Ահավասիկ Հիսնակաց 6-րդ կիրակին է, սիրելի՛ հավատացյալներ, և օրվա ավետարանական ընթերցվածը, «Տասը մնասների առակի» խորհրդով պայմանավորված, հրավիրում է մեզ խորհելու, խորհրդածելու անցնող տարվա մասին: Առակը ներկայացնում է, թե ինչպես մի ազնվական հեռու աշխարհ գնալիս, մինչև որ կստանար իրեն հասանելիք թագավորությունը և կվերադառնար, կանչելով իր ծառաներին՝ յուրաքանչյուրին մեկից մինչև տասական մնաս տվեց՝ թելադրելով շահեցնել դրանք մինչև իր գալը:

Բայց նրա համաքաղաքացիները ասում էին նրան. պատգամավորներ ուղարկեցին նրա հետևից և ասացին. «Մենք չենք կամենում, որ դա մեր վրա թագավորի»: Իսկ ազնվականն իր թագավորությունն ստացած՝ վերադառնում ու կանչում է ծառաներին՝ իմանալու, թե ով ինչքան կամ ինչ է շահել: Առաջինը գալով՝ արժանանում է «ազնիվ և բարի ծառա» կոչվելու՝ իր հավատարմության համար, որովհետև, տիրոջ խոսքի համաձայն, տասնապատիկ ավելացրել էր իր ունեցածը և ամբողջը ներկայացրել տիրոջը: Այս ամենի համար տերը տասնապատիկ ավելացնում է նրա ունեցածը, որովհետև փոքրի մեջ, քչի մեջ հավատարիմ էր եղել:

Գալիս է երկրորդը և արժանանում հինգ անգամ ավելի իշխանություն ունենալու, քանի որ հինգ անգամ կրկնապատկել էր իր ունեցածը:

Մեկ ուրիշն էլ գալով՝ վաստակում է տիրոջ բարկությունը, քանի որ իր ծուլության պատճառով չէր կարողացել անգամ սեփական անձի համար օգտակարություն ապահովել: Ծառայից վերցնում են իր ունեցածն էլ և տալիս նրան, ով արդեն ուներ, և ի պատասխան հնչող անուղղակի բարեխոսությանը, տերը պատասխանում է. «Ասում եմ ձեզ, թե՝ ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի»:

Սիրելի՛ հավատացյալներ, Աստծո բազմապատիկ իմաստությունը (Հռոմ. ԺԱ 33) երևում է հենց նրանից, որ Աստծո նախախնամության անբաղդատելի մեծությունն իրականանում է մեր մտառության սահմանից շատ ավելի ընդարձակ ծավալով, և այս ամենը նաև և հատկապես մեր նկատմամբ: Ու թեև հոգևոր գործերը մարմնավոր ու տարածական չեն, այդուհանդերձ գեղեցկի՛, բարու՛ և ճշմարտի՛ գաղափարը

նա՛ն մարմնավո՛ր զգայություններով է գոյանում (հմմտ. Ա. Տեր-Միքելյան, էջ 95, 99), ուր ընդունելի չէ՛ արդեն պատասխանելիքի բացակայությունը և պարտադիր անհրաժեշտություն է ճշմարտությունից դուրս զգալը, ինչպես որ մարդուս բարոյական կախումն Աստծուց:

Մեզ ներկայացնող առակն էլ խրատական-բարոյական է և վերաբերում է յուրաքանչյուրի ինքնաճանաչությանը. «Ոչ թե դուք ընտրեցիք... այլ ես ընտրեցի ձեզ» (Հովհ. ԺԵ 16), - ասում է մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Կա հաջողություն, որ չարիք է մարդուն, կա ողորմություն, որ չի կարող օգնել, բայց իր երկնային փառքը թողած և սրբազան ուխտով, հրատապ սրտով աշխարհ առաքված Հիսուս Քրիստոս զարմացավ Իր իսկ պատկերով ստեղծված մարդու անհավատարմության վրա (Մարկ. Զ 6) և տեսնելով Իրեն ուղղված հուսահատական՝ «խնդաղոց տխուր» ու «սրտաբեկ ուրախ» մարդկության հնիհն վիճակը, այնպես սիրեց «աշխարհն» ու մարդուն, որ այդժամ հայացք հառելով տիեզերական անծայրածիր հորիզոններին՝ գուցե թե որոշեց նո՛ր ուխտ կապել մարդկության հետ՝ վերահաստատելու Աստծո և մարդու սկզբնական ներդաշնակությունը: Եվ որպես այս ամենի հանրագումար մարդասերն Աստված բազմապատկելով իր անսպառ ներողամտությունը՝ հռչակում և հայտարարում է. «Ասում եմ ձեզ, թե՛ Ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի»:

Սիրելի՛ հավատացյալներ, հաշվող ժամեր են բաժանում մեզ Ամանորից, որը մեզ համար արժեվորվում է ոչ այլ կերպ, եթե ոչ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Ծննդով և Աստվածահայտնությամբ: Եվ օրվա խորհուրդն է ինքնակամ հոժարությամբ, սրտագին, ակնկալություններով ու զեղուն զգացողություններով, ազգովին, որպես մեկ միասնական ընտանիք անդրադառնալու մեր անցած ճանապարհին՝ հաստատուն պահելու մեր հավատքի ճրագը, քրիստոնեական ճշմարիտ գիտության լույսը, որովհետև ինչպես գրված է՝ «Ամեն բանի ժամանակը կա...» (Ժող. Գ 1), «հավաքելու» և «ցրելու ժամանակը»:

Ահավասիկ, այս հարատևությամբ պարտ է մեզ ամեն անգամ տարեմուտին հավաքվելու, համախմբվելու, բաժանվելու աշխարհից, ոչ թե կրկին վերադառնալու, այլ հանելու համար հին մարդը և «զգեցնելու»՝ հագնելու նորը, քաջ հույսով. և սա հենց միայն այն պատճառով, որ «Նախասկզբնական բարին հակառակորդ չունի, որովհետև բացառապես բարիք է» (Սուրբ Եվագր), որովհետև մեկ նորոգում կա բոլորի համար. շահեցնել ու կրկնապատկել այն ամենը, ինչ որ բարին Աստված մեր կամքից անկախ կանխորոշեց մեզ. դիմագրավելու ամեն տեսակ չարությանց, դիմավորելու համար Տիրոջ Հրաշափառ Ծնունդը, ինչպես որ մի օր էլ Տիրոջ օրը Գալստյան: «Ասում եմ ձեզ, թե՛ Ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի»:

Որքա՛ն խորիմաստ է Տիրոջ խոսքը, առաջին հայացքից գուցե անմեկնելի, այնպես, ինչպես հավատքի անընդդիմանալի և անդիմադրելի ուժը: Հետևապես, սիրելիներ, արդ ժամ է ոչ թե «խտորվելու և մոլորվելու անհետ ու անել բավիղների», ոչ թե հարատևելու ունայնության և աշխարհապաշտության մեջ, ուր կա միայն աղոթ-

քի իսպառ բացակայությունը, այլ առաքինությունների, որպես Քրիստոսի խաղաղասեր ու քաջ մարտիկներ, ամրակուռ, զրահավորված հավատի զրահով ու համբերությամբ և լավահույս վաղվա օրվա հանդեպ՝ որպես օրինակ ունենալով մեր նախնյաց վարքն ու կամքը՝ լինելու համաքաղաքացի սրբերին և ոչ թե նրանց, ում հայտնի առակն է մատնանշում. «Հունձքն առատ է,- ասում է,- իսկ մշակները սակավ» (հմմտ. Մատթ. Թ 37-38):

Ահավասիկ, այս պատճառով նաև երկնից երկիր առաքված Աստծո Միածին Որդին փութաց սրբագրելու, ուղղելու և առաջնորդելու մարդկությանը դեպի բովանդակ գեղեցիկը, բարին ու ճշմարիտը, հավատարիմ մնալու Իր առաջնային առաքելությանը և իմաստավորելու իր ապրած ամեն մի ժամը, օրը, տարին, հոգեկան խորը ապրումով վերապրելու և վերապրեցնելու հոգևոր-ազգային անանց արժեքները, նորոգվելու և վերգտնելու համար մեր հարազատ ինքնությունը, հայելու մեր ներսը, ջնջելու թյուրն ու խավարայինը, գնահատելու բարին, ապահովելու համար ներդաշնակություն մարդկության և ժողովուրդների հարազանց կյանքի մեջ:

Ահավասիկ այսօրինակ լուսավոր հոգեկան ապրումով, որպես հոգևորական թե աշխարհական, մտավորական թե աշակերտող, ճանապարհի ելած թե ակնկալող, հոգևոր սիրով, սպասումներով և ակնկալություններով անհրաժեշտ է մեզ ճանապարհելու հինն ու դիմավորելու նոր տարին, նորովի կյանքի կոչելու մեր բարի, ազնիվ ու լուսավառ երագները, քանզի Հայ Եկեղեցու ամեն առիթ հրավեր է, հրավեր երկնքից եկող հավերժական երջանկության՝ ուղղված դեպի հայ մարդը, ժողովուրդը, հայոց հաղթապանձ ազգն ու հայ ուխտավորը:

Միբելի՝ ուխտյալ հավատացյալներ, Նոր տարվա և Ս. Ծննդյան հրաշալի տոնակատարությանց նախաշեմին մեր սրտառուչ աղոթքն է ու մաղթանքը, որպեսզի յուրաքանչյուր ոք տարեմուտին անհրաժեշտությունն ու պարտավորությունն ունենա անդրադառնալու սեփական անձին, ինքնաքննությամբ շահելու, շահեցնելու և կրկնապատկելու իրեն տրվածը, ի բարին օգտագործելու ժամանակը, հետ-հեռահար հայացքով, թե որքանով հաջողեց անցնող տարվա մեջ, որքանով ավելացրեց ինքն էլ այս «աշխարհի բարին»...

Եվս մեկ նոր տարի է հառնում մեր առջև, իր ուրույն կենսագրությամբ և դրսևորումներով, այն այսօր էլ շարունակում է արժեվորվել ու իմաստավորվել նախնառաջ այն պատճառով, որ տոնական է, այն պատճառով, որ Նոր տարին մեզ համար, մեր ընկերային կյանքում այլ բան չէ, եթե ոչ՝ մարդասիրության, բարենորոգության տոնը, քանզի մեզնից յուրաքանչյուրը պարտավորություն ունի ապրելու, շահեցնելու տարին և ոչ թե կորցնելու անվերադարձ, չէ որ, ինչպես Հիսուս Քրիստոս է կանխորոշում՝ «Ով ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի»:

Հետևապես, սիրելիներ, այս օրը մեզ համար հաշվետվության օր է, հավատարմության օր, ինքնաճանաչության, ինքնամաքումի և հավասարապես ուխտի օր: Ինչպիսի ձեռքբերումներ ունեցանք, որքանով եղանք հավատարիմ մեր առաքելությանը, թեև պատրաստակամ, պատրաստ ենք արդյոք բավականաչափ ճանապարհ-

հելու հինը, որն այլևս չի վերադառնալու, և դիմավորելու հաղթական Նոր տարին և մեր Տեր Հիսուսի հրաշագարդ Սուրբ Ծնունդը մեր մեջ:

Ճշմարտության համար չկան ապաստարաններ, այն ծագող արևի պես է, երբ բացվում է և՛ տեսանելի է և՛ ընդունելի: Եվ այդ ճշմարտությունն այսօր գալիս է հաստատելու, որ բոլոր փորձություններով և դժվարություններով հանդերձ, հաղթական ու հաղթապանծ հայոց ազգն իր հոգու մեջ միշտ էլ ունեցել է տեսիլքը վաղվա օրվա և հրաշալի գալիքի նկատմամբ, ինքնամաքրումի և ինքնաճանաչության ուխտը, ամեն անգամ պարզ ու լուսավոր երկնքին հայելիս, իբրև «ազնիվ և բարի ծառա», ինչպես որ օրվա Ավետարանն է նախանշում, որովհետև ամեն անգամ, երբ պատել է անձկությունը, երբ վրա են հասել փորձությունները, պատմությունն արձանագրել է աննախընթաց վերելք դարերի ու վճռորոշ պահերի ընթացքին վասն Հայաստան աշխարհի, Հայ Եկեղեցվո, հայոց հավատի և հայ մարդու առհասարակ՝ շարունակելով զորանալ ու զորացնել այն հորիզոնը, որն այսօր էլ պատգամում է մեզ . «Ով որ ունի, նրան պիտի տրվի...»:

Թող առմիշտ, առհավետ օրհնյալ լինի Ամենայն Հայոց ներշնչարան Սուրբ Էջմիածինը, Ամենայն Հայոց հաղորդարանը՝ Հայոց Եկեղեցին, որի լույս խորաններից տարեակզբին թե տարեմուտին ամեն Աստծո օր մենք ամենքս ծնվում ենք ու վերածնվում խորիմաստ խորախորհուրդ՝ կենդանի Աստծո տեսանելի ներկայությամբ, անպարագրելի շնչով և այն հոգեկերտվածքով, որը խոնարհեցնում է, բարձրացնում ու ապրեցնում տարիներ ու դարեր շարունակ ոչ այլ բանի, քան Աստծո փառքի համար, և թող մեր Տեր Հիսուս Քրիստոս կյանքի բազմապատիկ օրեր ու տարիներ պարգևի մեզ ամենքիս մեր աստվածագնաց առաքելության մեջ այժմ և միշտ և հավիտյանս. Ամեն:

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՀԱՎԱՏՔ, ՀՈՒՅՍ, ՍԵՐ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

*«...այր գիտնական և իմաստապատում,
ճգնակիր և խարազանագգեսց, մաքրափայլ
կրօնիք... որ ամենայն կեանք և շարժումն սո-
րին՝ անգիր օրէնք են տեսողաց»¹*

ՂԱԶԱՐ Ա. ԶԱՀԿԵՑԻ

Հայ Եկեղեցու քրիստոնեական բարոյականության քարոզչության պատմության մեջ, հայ աստվածաբանների և վարդապետների փառանգում, Ս. Գրիգոր Նարեկացին ուրույն տեղ և ավանդ ունի հայ ժողովրդի կյանքը քրիստոնեական բարոյականության հիմքերի վրա խարսխելու, նրա հետագա ձևավորման և ամրապնդման գործում:

Թեև բանասերների, պատմաբանների գրականագետների կողմից բազմիցս քննվել և ուսումնասիրվել են սուրբ հոր կենսագրությունը, նրա ստեղծագործությունների գրականագիտական, լեզվաբանական, գեղարվեստական մտածողությանը առնչվող հարցերը, սակայն Ս. Գրիգոր Նարեկացու հոգևոր, աստվածաբանական հարուստ գրական ժառանգությունը խորությամբ ուսումնասիրված, ամբողջական ու բազմակողմանի լուսաբանված չէ: Հոգվածի հիմնական նպատակն է վեր հանել Նարեկացու հայացքները քրիստոնեական առաքինությունների մասին ըստ «Մատենանոցի»², և ոչ թե ցույց տալ Նարեկ սրբի կրոնաբարոյական հայացքների զարգացումը, ձևավորումը և կրած ազդեցությունները:

Քրիստոնեական առաքինությունների մասին Նարեկացու հայացքները նրա կրոնաբարոյական ուսմունքի ողջ համակարգի կարևոր մասն են կազմում: Լինելով Փրկիչի պատվիրանների հավատարիմ հետևորդը, նա, ոգեշնչված կատարելության հրավերով³, որին ձգտել էր ամբողջ կյանքում, անձնական մտավոր և գործնական փորձառությամբ, Մատյանում ցույց է տվել հոգու հոգևոր-բարոյական վերելքի և նորացման ուղին:

Անհրաժեշտ է նշել, որ Նարեկացին քրիստոնեական առաքինությունների մասին ամբողջովին համակարգված ուսմունք չի ներկայացնում:

Սուրբ Հոր համար առաջին տեղում ոչ թե իր ուսմունքի համակարգումը և բարո-

¹ Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ճահկեցոյ, Ս. Էջմիածին, 1734, էջ 627:

² Գրիգոր Նարեկացի, Մատենանոցի, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985: Այսուհետև այս հրատարակությունից օգտվելիս տողատակում նշելու ենք միայն՝ Գրիգոր Նարեկացի, Մատենանոցի, և էջը, իսկ հոդվածում՝ Մատյան:

³ Տե՛ս Մատթ. Ե 48:

յական չափորոշիչների հիմնավոր ներկայացումն էր, կարծում ենք, այլ հավիտենական փրկության համար մեղքերից մաքրվելու, հոգևոր-բարոյական կատարելության և անկյալ բնությունը վերականգնելու կոչը, ապաշխարության քարոզը: Նարեկացին հավատում է, որ փրկությունը բոլոր մարդկանց համար է, և Աստված կամենում է, որ բոլորը հավիտենական կյանքի արժանանան և ժառանգեն Երկնքի Արքայությունը: Սուրբ Գրիգորի համար ակնհայտ է, որ մեղավոր և սատանայի ստրուկը դարձած մարդը դեռ ի վիճակի է առաքինությունների միջոցով փրկվելու, վերականգնելու: Աստծո զավակի իր պատիվը և սրբանալու, սակայն Աստծուց հեռացած լինելու կացությունը բացասական է ազդում նրա հոգու մաքրման և սրբացման ընթացքի վրա:

Նարեկացին Աստծո և մարդու միջև կապը վերականգնելու ուղիներ է առաջարկում: Առաջինը՝ «ի ձեռն մարմնաւորացս»⁴ հոգևոր վերելքի հասնելն է, որն իրականանում է մարդկային բանականությամբ, գիտակցությամբ և մտային ճիգ է ենթադրում: Երկրորդը՝ ճգնակեցությունն է, որը մարմնի ճիգ է պահանջում: Պողոս առաքյալի « ընդ նմա մեռաք...» (Բ Տիմ. Բ 11) խոսքերը Նարեկացին մեկնում է, «...և մեռուցի զիս մեղացն ընդ մեռելոյն մեռեալ՝ որ վասն իմ մեռեալ անմահին» և շարունակելով՝ զարգացնում է այս միտքը, թե «յայտ է թէ յառաջ մեռանել պիտոյ է և սպանանել զանդամս մարմնոյ, որպէս հաստատէ զտոյն առաքեալ, և ապա լինի մոտ Աստուծոյ և աստուածային խորհրդոյն ի մարդն»⁵:

Սուրբ Գրիգոր Նարեկացին մասնավորապես ուշադրություն է դարձնում աստվածաբանական, քրիստոնեական առաքինություններին, որոնք անմիջականորեն կապված են մեղքի վերաբերյալ նրա հայացքներին: Այսպես, քանի որ Սուրբ Գրիգորը մեղքի մասին համակարգված, հստակ ուսմունք չունի, որը բացահայտեր նրանց արտահայտությունների հոգեբանական յուրահատկությունները, ուստի և չունի մեղքերին հակադրվող առաքինություն, որովհետև մեղքերի հետ պայքարի ընդհանուր սկզբունքը տվյալ մեղքին հակադրվող առաքինության ձեռքբերումն է: Սրանով էլ պայմանավորված է Նարեկացու մոտ առաքինությունների մասին համապատասխան ուսմունքի բացակայությունը խիստ համակարգված, աստվածաբանական, վարդապետական ընկալմամբ:

Առաքինությունների վերաբերյալ Ս. Գրիգորի հայացքների հիմքը մարդու հոգևոր-բարոյական ինքնակատարելության հասնելու, Աստուծով զորանալու սկզբունքն է: Նարեկացին իր ուշադրությունը սևեռում է հավատի, հույսի և սիրո առաքինությունների վրա⁶, քանի որ դրանք ուղիղ կապ ունեն մարդու փրկության հետ, սկիզբ են առնում Աստծուց և պետք է ներթափանցեն մարդու հոգու մեջ: Այդ երեք առաքինությունները, ինչպես իրավացիորեն նկատում է Ժան Պիեռ Մահեն, Նարեկացու մոտ «անբաժանելի են» և «ամբողջ երկում՝ սկզբից մինչև վերջ, հիշա-

⁴ Սրբոյ Խորն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 249:

⁵ Նույն տեղում, էջ 318-319:

⁶ Պատահական չէ, որ քննական բնագրի կազմողներ Ա. Ղազինյանը և Պ. Խաչատրյանը հետևյալ ենթադրությունն են անում. «Պայմանականորեն կարելի է ասել, որ Մատյանի հարուստ և բազմաշերտ բովանդակությունը կառուցվածքորեն խառնախուրդ է միջնադարյան աշխարհայեցողության երեք հիմնական հենասյուների՝ Հավատքի, Սիրո և Հույսի գաղափարների արձարժման և մարմնավորման վրա»: **Գրիգոր Նարեկացի**, Մատենա ողբերգութեան, էջ 183:

տակվում են մերթ միասին, մերթ հերթականորեն»⁷:

Զի թե եւ զերիսն հատուածս առանձնաւորականս

Ի մի եւ ի նոյն խորհուրդ դիտեսցես,

Յաւէտ մեծասցիս նոքաւք ի յԱստուած,

Քանզի թե հաւատաս ի Նա՝ եւ սիրես,

Որով եւ յուսաս աներեւութից պարզեաց Նորին: (Ժ, դ):

Սուրբ Հայրը վերլուծում է այդ առաքինությունները՝ դրանք նկատելով որպէս Աստծով զորանալու, մարդու և Աստծո միության, Նրա անտեսանելի շնորհներն ստանալու, և ի վերջո, Աստծուն նմանվելու ելման կետերը և բարձրագույն աստիճանները:

Սուրբ վարդապետը գիտի, որ մարդկանց հոգևոր-բարոյական մակարդակը այնքան էլ չի համապատասխանում մարդու այն բարձրագույն պատվին, որը սահմանել է Արարիչը: Սուրբ Գրիգորը համոզված է, որ հրեշտակայինին հավասար կորցրած վիճակի վերականգնումը հնարավոր է մեղքերից ու արատավոր ցանկություններից մարդու հոգին մաքրելով, որի հիմքում դրված է «սիրոյ և յուսոյ» «պատուակից» (Ժ, դ) հավատի սխրանքը:

Անդրադառնանք այդ երեք առաքինություններին առանձին առանձին:

1. Հավատ

Քրիստոնեական առաքինությունների համակարգման մեջ ամեն դեպքում որոշ նախասիրություն գոյություն ունի: Հավատի և մյուս առաքինությունների մասին Նարեկացու հայացքների հիմքը Աստվածաշունչն է: Պողոս առաքյալը, Կորնթացիներին ուղղված առաջին թղթում քրիստոնեական առաքինություններից առաջինն է համարում հավատը (Ա Կորնթ. ԺԳ 13), որը «յուսացելոց իրաց հաստատութիւն» է, և «յանդիմանութիւն որոց ոչն երևին» (Եբր. ԺԱ 1): Պետրոս առաքյալն էլ հորդորում է «հաւատովք մատակարարեսցիք զառաքինութիւն» (Բ Պետր. Ա5): Այս ամենը հնարավոր է հասկանալ և իմաստավորել հավատով, քանի որ այն «առանց երկբայութեան ի հոգւոյն աչս տեսանէ» (Ժ, դ): Հավատը, ըստ սուրբ Գրիգորի, այն ուժն է, որը բարձրացնում է մարդուն և նրան նոր արարածի վերափոխում: Քանի որ Նարեկացու ուշադրության կենտրոնում միշտ մարդն է և նրա փրկությունը, այդ պատճառով նա մեծ ուշադրություն է դարձնում մարդու հոգևոր կյանքում հավատի ունեցած նշանակությանը: Այդ տեսակետից Սուրբ Գրիգորը հետևում է Պողոս առաքյալին, որը, սակայն, նրան չի խանգարում իր նախընտրած հերթականությունն առաջարկել: Հետաքրքրական է, որ նա առաքինությունները երիցս թվարկում է հետևյալ կարգով՝ հավատ, սեր և հույս՝ փոխելով Պողոս առաքյալի թվարկման կարգը⁸: Այդպիսի սխեմայով էլ իրականացվում է Նարեկացու առաջարկած փրկության ուղին, որի հիմքը հավատն է:

Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց

⁷ **Ժան-Պիեռ Մահե**, Ողբերգության մատյանի կառուցվածքի և ստեղծագործման մի քանի հարցեր, Պատմա-բանասիրական հանդես, 1986, թիվ 4, էջ 101:

⁸ Հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 13:

Զհաւատոցն շինուած կառուցից.**Քանզի եւ ոմն ի նախնեացն, սոքիմք զինեալ,****Փոխեցաւ իսկոյն յանմահականն վիճակ վերին... (Ժ,բ):**

Այդ գաղափարը Մատյանում խոր իմաստ է ստանում և լավագոյնս համեմատվում է մարդու կատարելության և փրկության գաղափարի հետ: Նարեկացու համար հավատի միջոցով փրկությունը հենց այն ավետիսն է, որը փոխել է աշխարհը և նրան Աստվածանաշդություն պարգևել: Ըստ սուրբ վարդապետի, եթե հոգևոր կյանքում հավատի ազդեցությունը լինի ոչ բավարար կամ նվազի նրա ներդրումը անհատի հոգևոր կառուցման գործում, ապա ոչ մի արդյունք չի լինի: Հավատի տեղը կարող է գրավել Աստծո հետ մեղավոր մարդու միության թվացյալ հրապույրը՝ պատրանքը:

Հավատը մարդկային կյանքի քրիստոնեական բնավորությունն է, իսկ սերը և հույսը դրա գլխավոր կենսական արտահայտությունները, որոնք նրա հետ միատեղ նոր մարդ են ստեղծում: Վերջնական օգնությունը, ազատությունը տրվում է Աստծուց: Մեղքերի խոստովանությունը, ապաշխարությունը, ճգնությունը անհրաժեշտ են, սակայն բավական չեն: Հազիվ թե որևէ մեկը կարողանա փրկվել չափավոր, համեստ վարքով՝ առանց Աստծո Միածին Որդուն հավատալու: Առանց ճշմարիտ Աստծո հանդեպ հավատի չկա այն ուժը, որը կենտրոնացնէր մարդկային ջանքերը և իմաստ հաղորդեր նրանց: Ահա թե ինչպես է այս ամենը արդարացնում Նարեկացին.

Եւ արդ, ես՝ յետինս դաւանողաց, ունայն ի բարեաց,

Նայեցեալ խորհրդով մտացս ի սկզբնաւորն իմ եղելութիւն

Ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից,

Յուսով հաւատամ Յիսուսի Քրիստոսի առնել՝ զոր կամի: (ԺԱ,

ա):

Բացելով Ս. Գրիգորի միտքը, կարելի է եզրակացնել, որ Հիսուս Քրիստոս հավատի կենտրոնակետն է: Նարեկացու կարծիքով, հավատը անհավատների փրկության միակ միջոցն է, քանզի անգամ Քրիստոս երկնքից ոչինչ չի կարող անել այն մարդկանց համար, ովքեր չեն հավատում Իրեն: Հավատն առ Հիսուս Քրիստոսի Աստվածությունը, առ Աստված հավատը՝ մարդկության համար փրկարար ուղի է, որովհետև հենց Նա է մարդուն ազատում կյանքի ամենամեծ աղետից՝ մեղքի ստրկությունից: Իր միտքը Նարեկացին ձևակերպում է շատ հակիրճ. «Միայն դու յամենայնի սահման փրկութեան, Աստուած բոլորից, անձառ մեծութիւն...» (ԼԲ, գ): Միայն Աստծո Որդու գալստյամբ մարդկությանը բացվեց Քրիստոսի արքայությունը մտնելու հեռանկարը: Նարեկացին ասում է, որ եթե երբևէ մարդը կյանքից կտրվել էր սատանայի միջոցով, ապա հավատի օգնությամբ նորից կարող է վերականգնել սկզբնական պատիվը.

Զի որպէս երբեմն հերձուածականին չարափառութեամբ, ամենապատիւրն խաբէութեամբ նենգողին կարթի հատուածեալ ի բաց հերքեցայ՝ ելեալ ի դրախտէն, արդ, միաւորականաւ այսու ուղիղ ամբօթեամբ ի յաւանդ իսկապէս շնորհի անդրէն միւսանգամ համբարձեալ սովիմբ, ի թոխս թեւոց լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետեւեալ: (ՀԵ, ա):

Նարեկացին նոր ուժով է ընդգծում, որ հավատը բարձրագոյն առաքինություն է,

որը հաղորդակից է դարձնում հավերժությանը և շարունակում խրատել, որ հավատը հիմք է, որի վրա կառուցվում է մարդու հոգևոր կյանքը և որը կարող է հավատացյալին դեպի Երկնքի Արքայություն առաջնորդել.

Է զի եւ զչափն ընտրականացն բարեմասնութեան
Աստուծոյ հաճելեացն զննեալ աստանաւր՝

Ձայս պատկեր բանի ընկալաք նախնի գահերէց

Առ ի սրբութեանցն մօտ սովիմք հանդերձել... (Ժ,գ):

Նարեկացին խրատում է, որ առանց որևէ առաքինության, «ինքնիշխան բաւականութեամբ» (Ժ, գ) հավատը կարող է մարդուն կյանք պարգևել, քանզի նա անմիջականորեն ուղղված է Աստծուն:

Սուրբ Գրիգորն առանձնակի կարևորությամբ է քննում հավատով փրկության հարցը, ասելով, որ բոլորը հավատում են և փրկության հույս ունեն, անգամ «ի մահ մեռուցեալն... կրկին ընկելուգեալն» (Ժ, գ): Այսպիսի միտք արտահայտելու համար Նարեկացուն ներշնչում է «գլխախոյս տերունի պաշտելի բանին», ըստ որի «Ձամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն...» (Ժ, գ): Նա աներկբա հավատում է Փրկչի կողմից վհատյալ հորն ասված այս սփոփիչ խոսքերին⁹: Առանց հավատի մարդ երբեք չի հասնի այն ճշմարտությանը, որ Աստված կարող է իրեն ներել: Երբ կա հավատ, մեղքը բոլորովին չի խոչընդոտում Աստծո և մարդու մտերմացմանը, քանզի հավատացողը գիտի և հավատում է Աստծո ամենաներող գութին և ներողամտությանը: Աստվածաշունչը լի է ողորմության և ներման այդպիսի օրինակներով, որոնք Սուրբ Հայրը թվարկում է. Ենովքը, Ահարոնը, Դավիթը, Եղիազարը, Պետրոսը, անառակ որդին, պոռնիկ կինը, մաքսավորը¹⁰ և շատ ուրիշներ.

Եւ զաւագակն երջանիկ,

Որ յարձակումն վերջին շնչոյն՝ հաւատովքն պսակեցաւ¹¹.

Եւ զոր անքաւելին են պարտիք՝

Ձհաղորդեալքն սպանման մահու Արարչին¹²,

Առ որս՝ եւ զլխաւորն ընտրելոց Պաւղոս,

Որ երբեմն նախնին էր անաւրինաց¹³... (ԺԱ, գ):

Հավատով արդարացածների օրինակով և ապականված, «հողեղեն գոյութիւն»-ը հավատի գործությամբ «յոսկեղեն նիւթ» փոխելու հնարավորությամբ ոգեշնչվելով, Սուրբ Հայրը եզրակացնում է, որ մարդիկ այժմ փրկության հնարավորություն ավելի շատ ունեն, որովհետև Քրիստոս խոստացել է «մերկապարանոց լուսաւորութիւն», և եթե Աստված արդարացնում է մարդուն, ոչ ոք չի կարող դատապարտել.

Համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բանիս

Եւ ակն ունիմ փառացն շնորհի,

Քանզի արդարեւ յարդարացուցանելն զմեզ Աստուծոյ՝

Ոչ ոք զաւրէ դատապարտ առնել¹⁴... (ԺԱ, դ):

⁹ Տե՛ս Մարկ.Թ 23:

¹⁰ Տե՛ս Միքայ ԽԴ 15, Ելից ԼԲ 1-6, Բ Թագ. ԺԲ 1-16, Ելից ԺԸ, Դ 25, Մատթ. ԻԵ 75, Ղուկ. ԺԵ 11-32, Է 36-50, ԺԸ 9-14:

¹¹ Տե՛ս Ղուկ. 39-43.

¹² Տե՛ս Ղուկ. ԻԳ 43.

¹³ Տե՛ս Գործք Ը 1:

Սուրբ Գրիգորի միտքը և միտումը պարզ են. հավատացյալը չպետք է վախենա, քանի որ արյամբ գնվածի՝ քրիստոնյայի հավատը այն գլխավոր առաքինությունն է, որն օգնում է Քրիստոսի սերը և գթությունն ընդունել.

Այլ յայս անստուերագիր վստահություն ապաստան՝

Կամ կործանեալս կանգուն...

Մահու մատնեցեալս՝ ի կեանսն...

Դժոխայն գործովք գրաւեալս՝ ի լոյսն...

Կրկին գայթակղեալս՝ ի վերստին փրկութիւնն...

Ընդդիմաբան լուտացողս՝ ի ներումնն: (ԺԱ, ե):

Հավատը, այսպիսով, օժտված է մեծ ուժով, քանզի նա բարձրացնում է ընկածին, վերականգնում է խոնարհվածը, գտնում է կորցրածը, գոռոզին դարձնում է հնազանդ և փրկություն պարգևում:

Հավատն ու Աստծո օգնությունն անբաժանելի են: Ով հավատում է Աստծո ամենակարողությանը, իր հավատի շնորհիվ կատարվում է այն, ինչ խնդրում է և ինչը հրաշք էր կարծում: Այստեղից էլ՝ հավատը գորավոր է այնքան, որքան մարդ հավատում է: Հատկանշական են իր այս միտքը հիմնավորելու համար Ս. Գրիգորի վկայությունները: Կույրերի, Մարիայի և Մարթայի¹⁵ հավատի օրինակներով Նարեկացին ընգծում է հավատի և ստացված շնորհների սերտ կապն ու փոխազդեցությունը: Նա խոսում է խորը, անսասան հավատի անհրաժեշտության մասին և բացատրում է, որ կույրերի և Ղազարոսի քույրերի հավատն օգնեց, նրանց խնդրանքը կատարվեց, որովհետև նրանք Փրկչի խոսքին չէին կասկածել.

Ըստ որում հարցեալ Փրկչին ամենից ցոմանս ախտացեալս
տեսանելեալք՝

Հաւատա՞յք, ասելով, առ այդ, թէ կարող եմ առնել ձեզ գայդ,-

Ոչ պարզեւեաց աչաց նոցա լոյս,

Եթէ ոչ նախ զհաւատոցն գրաւ ընկալաւ.

Քանզի զի՞նչ, քան զմեռելութիւն քառաւրեայն դիոյ,

Առ կենդանութիւն մեզ անյուսագոյն,

Առ որ կանանցն՝ ժամանելոց ի յոտս Արարչին հաւատոցն

հանդերձանալք,

Անյապաղաբար զփառացն Աստուծոյ տեսին զհանդէս՝ ի յեղ-

բարն

կենդանութիւն: (ԺԱ,

բ):

Հավատը պարուրում է մարդուն և նա հետևում է Աստծուն: Նա ավելի ու ավելի է հնազանդեցնում իր կամքը Աստծո կամքին և դրանով իրեն ստորադասված, ստորացված չի զգում, քանի որ Աստծո ամենակարողության հանդեպ իր հավատին չի կասկածում և Նրան ապավինելով իր կյանքը՝ հույսը դնում է Աստծո գթասրտության և այն բանի վրա, որ ժառանգելու է երկինքը ու տեսնելու է Աստծուն: Իր միտքը Նարեկացին ներկայացնում է հետևյալ տողերում.

¹⁴ Տե՛ս Հռոմ. Ը 33-34:

¹⁵ Տե՛ս Մատթ.Թ 19, Հովհ. ԺԱ 39, 43-44:

Աներկմիտ յուսով հաւատամ՝
Ի կարողին ձեռն ապաստանեալ.
Ոչ քաւութեան միայն հասանել,
Այլ գնոյն ինքն տեսանել՝
Յողորմութիւն եւ ի գրութիւն
Եւ յերկնիցն ժառանգութիւն,
Թէպէտ եւ յոյժ եմ տաքագրելի (ԺԲ, ց):

Հավատը ծառայում է որպէս անցում աշխարհային, ժամանակավոր կյանքից դեպի անձնագոհ կյանք: Հավատի արդյունք են նաև մարդու սրտում հաստատված «կատարեալ իմաստութիւն»-ը, «տեսութիւն»-ը և ճշմարտության ճանաչումը: Հավատի հետ միաժամանակ ճանաչողութեանը զուգընթաց ծնվում է Ամենաբարձրային իմացութիւնը, որոնք կարևոր են Աստվածճանաչողության և աստվածային ճշմարտութիւնների ընկալման համար: Սուրբ Գրիգոր Նարեկացին համարում է, որ միայն հավատի միջոցով է տրվում իմաստութիւնը և «սեռն տեսութիւն»-ը.

Քանզի արդարեւ սեռն տեսութիւն,
Եւ կատարեալ իմաստութիւն,
Եւ առ Աստուած ընտանութիւն,
Եւ բարձրելոյն ծանալութիւն
Հաւատոց մասն երջանիկ եւ ընտրեալ անուն...(Ժ, դ):

Բացատրելով Սուրբ Հոր խոսքը, դժվար չէ որսալ այն միտքը, որ հավատն առ Աստված և Ամենաբարձրային իմացութիւնը չպետք է հավատացյալի կողմից անգիտակից գործողութիւններ լինեն: Նա պետք է գիտակցի ու իմանա, թե Ում և ինչո՞ւ է հավատում: Սրա համար է Նարեկացին Աստվածճանաչողության համար ընդգծում բանականության դերը¹⁶: Կարևոր է ոչ միայն Աստծո գոյության հանդեպ անսասան հավատը, այլև Նրան հնազանդվելը, հավատի ճիշտ, գիտակցված ու ազատ յուրացումը և միայն այդ ժամանակ է հնարավոր մարդու փրկութիւնը: Այսպիսի հավատը դադարում է կույր լինելուց և դառնում է մարդու հոգևոր կազմավորման և կատարելության կարևոր գործոն և միջոց: Այսպիսով, հավատը, որպէս առաքինութիւն, ընդգրկում է հավատացյալի ամբողջ արտաքին և ներքին կյանքը իր բոլոր արտահայտութիւններով, տարածվում նրա աշխարհայացքի վրա:

2. Մեր

Ինչպէս տեսանք, Ս. Գրիգորը նախապատվութիւնը տալիս է հավատին, սակայն այն չի բաժանում մյուս՝ սիրո և հույսի առաքինութիւններից.

Որ յարաձգեալ մնայ անվթար եւ անփակելի՝
Պատուակից գոլով սիրոյ եւ յուսոյ...Ժ,դ:

Հավատը սիրո և հույսի հետ «...զապառնիսն եւ զծածկեալսն առանց երկբայու-

¹⁶ Սուրբ Գրիգորը բանականության դերը հատկապէս շեշտում է Աստվածաշունչը հասկանալու համար, որովհետև, ինչպէս նա է արդարացիորեն ասում, «...զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ միտ առնուցում» (ԿԲ,ա): Հավատացյալի այդպիսի վիճակը նա համարում է անգիտակից և շարունակում համեմատութիւնները: Տե՛ս նույն տեղում:

թեան ի հոգւոյն աչս տեսանէ...» (Ժ, դ): Դժվար չէ նկատել, որ դրվատանքի այսպիսի խոսքերով Ս. Գրիգորը առաջ է քաշում այն միտքը, որ միայն հավատը բավական չէ հոգևոր-բարոյական կատարելության հասնելու համար: Հավատն ինքնին բարոյականության հիմք չէ, այլ այդպիսին դառնում է որպես սիրո հարազատ առաքինություն¹⁷: Առանց հավատի չկա քրիստոնեական սեր և առանց առ Աստված սիրո չկա հավատ: Այս պատճառով էլ քրիստոնեական մտածողության մեջ հավատը և սերը սերտորեն կապված են. ինչպես հավատին է վերապահված փրկությունը, այնպես էլ փրկվելու համար անհրաժեշտ է սեր առ Աստված, որից հետո միայն, ըստ Ս. Գրիգորի, ծնվում է և հույսը (տե՛ս Ժ, բ). «Դարձո՛ւ... յուսահատեալս՝ ի սեր միաւորիչ անքակտելի...» (ԿԳ, դ):

Սուրբ Գրիգորը հաստատում է, որ սիրո միջոցով մարդ միանում է Աստծուն. «Զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանաւք բերիմ» (ԺԲ, բ): Մարդ իր բարի գործերով կարող է ձեռք բերել այլ՝ «նմանութիւն վերնային», և դա հնարավոր է յուրաքանչյուրին, ով ապրում է Քրիստոսի պատվիրաններով: Մի այլ եզրահանգում ևս. քանի որ «**Աստուած... գործովք միայն գրաւի**, եւ ոչ ստեղծաբանութեամբ կաշառի...

...ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սեր,

Ուստի եւ ոչ բովանդակապէս փրկութիւն: (ԻԷ, դ):

Սիրո առաքինության վերաբերյալ Նարեկացու հայացքները ամբողջությամբ հիմնված են Փրկչի պատվիրանների վրա: Հիսուս Քրիստոս սերը բնութագրում է որպես Իր աշակերտներին բնորոշող գիծ¹⁸ և Իր հետևորդներին կոչ անում նրանով առաջնորդվել ոչ միայն Աստծո և մտերիմների, այլև թշնամիների հետ հարաբերություններում¹⁹:

Յուրաքանչյուր քրիստոնյայի համար սիրո առաքինության անհրաժեշտությունը Նարեկացին բխեցնում է այն ճշմարտությունից, որ Ինքը Աստված Սեր է. «Քանզի որպէս սիրոյն անուան կցորդես Աստուած» (ԴԳ, դ):

Մարդը, ով Աստծո պատկերն ու նմանությունն է, որպեսզի շփման մեջ լինի իր Սկզբնապատճառի հետ, պետք է Նրան հատուկ մի հատկանիշ ունենա, տվյալ դեպքում՝ սեր: Մարդը չի կարող իրապես սիրել իր մերձավորին, եթե նախ չի սիրում

¹⁷ Հմմտ. Գաղատ. Ե 6:

¹⁸ Տե՛ս Հովհ. ԺԳ 35:

¹⁹ Տե՛ս Մատթ. Ե 44-46:

Միրո Աղբյուրին, Ով Իր սիրո լիությունից ստեղծել և խնամում է մարդուն որպես Միրոզ Հայր, ու նրա փրկության համար անգամ զոհաբերել է Իր Միածնին.

Հայր Քո արհեստ, երկնաւոր, անճառ,

Որ առաքեացդ զքեզ ի վերուստ...

Այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գերւոյ,

Մինչեւ զքեզ իսկ մատնեաց մարդկան: (ԽԴ, ա):

Նարեկացին առաջ է քաշում նաև այն միտքը, որ Աստծո մարդասիրությունը բխում է Նրա անչափ գթասրտությունից, առատաձեռնությունից և կարեկցանքից, ուրով Նա գերազանցում է բոլորին (ԼԴ, Ժա, 390): Բացի այդ, Աստված սիրում է մարդկանց առավել, քան հրեշտակներին, որը չի վրիպում Ս. Գրիգորի ուշադրությունից.

Քանզի ոչ անուանեցար հրեշտակասեր...

Ոչ գրեցեր երբեք ի սիրել զնոսա,

Այլ առեր ի պատիւ մեծաց գովեստից՝

Առաջին դասեալ զմարդասիրութիւնն... (ԼԵ, ա):

Ինչպես երևում է այս հատվածից, սիրելու կարողությունը հատուկ է Աստծուն և եթե Նա մարդասիրությունը գերադասում է ամեն ինչից, ապա որքան կարևոր և խրատական է, որ մարդ իր նմանի հետ, և ընդհանրապես, մարդու հետ իր հարաբերություններում, լինի նա մտերիմ թե թշնամի, նմանվի Աստծուն:

Սիրել է պետք ոչ միայն սիրողներին, այլև թշնամիներին՝ սերը համատեղելով նրանց համար աղոթքով: Աստծուն սիրողը, բնականաբար, գիտի և Նրա կամքը և այն, ինչ հաճելի է Աստծուն և ամենուր հետևում է Նրան ոչ միայն խոսքով, այլև գործերով: Այդ միտքը կարմիր թելի նման անցնում է ամբողջ Մատյանով.

Քո է հատուցանել պտուղ քաղցրութեան ընդ փշոց խստութեան,
Սկզբնահայրդ այսմ նորոգ եւ զարմանաւոր կանոնաց կենաց²⁰:

Քանզի Բարի առնել ատելոյն,

Եւ աղաւթս՝ ի վերայ հալածչին,

Եւ փրկութիւն հայցել խոցողին,

Եւ սպանողին ներումն խնդրել,-

Ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից... (ՀԶ,ա):

Աստծո պատվիրանները «կանոնս բարեհրաւերս եւ կենդանատուրս, գրեալս հոգուն Աստուծոյ» (ԾԱ,գ) անվանելով, Նարեկացին ընդգծում է նրանց յուրահատուկ դերը հավատացյալի կյանքում, ով ձգտում է առաքինի կյանք վարել:

Սուրբ Հայրը ուշադրություն է հրավիրում այն հանգամաքի վրա, որ Աստծո համար ավելի կարևոր է, որ մարդ սիրի իր թշնամիներին և աղոթի իրեն ատողների համար, քան բարերարների, քանզի առաջինները, լինելով մեղքի մեջ, սիրո և աղոթքի կարիք ավելի շատ են զգում: Ընդօրինակության արժանի են Ս. Գրիգորի աղոթքները, որոնցում նա Աստծուց ոչ միայն խնդրում է իրեն ատողներին գթալ, այլև հրաշք գործել և նրանց էությունը փոխել, ինչպես, ըստ Նարեկացու, պահանջում է Աստված²¹.

²⁰ Ի նկատի ունի չարին բարիով հատուցելու Քրիստոսավանդ պատվիրանները, տե՛ս Մատթ. Ե 43-44, Մարկ. ԺԲ 31, Հռոմ. ԺԳ 9:

²¹ Տե՛ս ՀԶ,ա:

Եւ ընդ խնդրելս իմ ի Քէն բարի՝ իմոցն ատելեաց...

Անճառելի՛ս հրաշագործեսցես:

Մի՛ սատակեսցես զիմսն խաճանողս, այլ **փոփոխեսցես՝**

Խլեալ զխոտան բարս երկրաւորս՝

Զբարի՛սն արմատացուցես եւ յիս եւ ի նոսին... (ՁԳ, բ):

Մերձավորի և թշնամիների հանդեպ այդպիսի սեր ցուցաբերելու իր տեսակետը Նարեկացին բխեցնում է Քրիստոսի պատվիրաններից.

Քանզի, արդարեւ, առ միդ այդ պատուէր²² ամենայն հասակ
զարանայ,

Իսկ միւսոյդ՝ երկրորդի²³ առաջնովդ խնամով հանդիպել՝

Աստուածականիդ է նմանութիւն... (ՁԳ, դ):

Սուրբ Գրիգորը ցույց է տալիս նաև, որ մերձավորին սիրել, նշանակում է մասնակցել նրա կատարելության, փրկության և Աստծո հետ միանալու գործընթացին, որը իրականացվում է միայն Հիսուս Քրիստոսի միջոցով:

Միրո առաքինությունն ունեցող անձի համար սիրելը միայն բավարար չէ: Նա պետք է նաև աղոթի թշնամիների և բարեկամների մեղքերի ներման, մաքրման և փրկության համար.

Յիշեա՛յ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան

Եւ զոր ի մարդկային ազնե թշնամիս մեր՝ ի բարի,

Եւ արա կատարեա՛նոցին քաւութիւն եւ ողորմութիւն:

Մի՛ բարկացիս նոցա վասն իմ, Տէր,

Իբրեւ զսուրբս բամբասողաց (ՁԳ, ա):

Նարեկացու այս խոսքերում զգացվում է կարեկցանքի շունչ: Վշտանալ, տառապել, վշտակցել և օգնել մերձավորին, երբ նա փորձանքի մեջ է՝ դրանք սիրո հատկություններն են: Սրանց կարևորությունը շեշտելու համար հետաքրքրական է Սուրբ Հոր այն միտքը, որ մարդ, արհամարելով սիրո այդ կարևորագույն արտահայտությունները, իրեն դատապարտում է վախճանի.

Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին,

Ի դէպ իսկ, ըստ գծագրութեան այսր արինակի,

Ապականութեանն զքոյ նուիրեալ մատնիմ (ԺԹ, գ):

Միրող անձնավորությունը չի կարող անտարբեր նայել մերձավորի անկմանն ու պատժին: Խորությամբ ապրելով մարդկության մեղավորությունը, Ս. Գրիգորը, որպես ճշմարիտ մարդասեր, իրեն պատասխանատու է համարում աշխարհում գործված բոլոր չարիքների համար և իր վրա բարոյական պատասխանատվություն վերցնում ասելու.

Ո՛չ որ մեղաւոր իբրեւ զիս,

Ո՛չ որ անաւրէն, ո՛չ որ ամբարիշտ...

Ե՛ս միայն, եւ այլ ո՛չ որ,

Ե՛ս ամենայնն, եւ յի՛ս ամենեցունն: (ՀԲ, գ և շարունակություն-

²² Նկատի ունի Մատթ. Ե 43:

²³ Հմմտ. Մատթ. Ե 44:

նը):

Այսպիսի տխուր պատկերից Սուրբ Գրիգորը չի հուսահատվում: Նա ոչ միայն հույսը դնում է Աստծո գթության և ներման վրա, այլև խնդրում է մարդասիրություն ցուցաբերել:

Այլ ոչ թե առ փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութիւն,

Այլ առ աննուազ լիութիւն փրկչիդ Յիսուսի Քրիստոսի պաղատիմ

մարդասիրութիւն (ԺԸ,

ա):

Նարեկացու ամբողջ Մատյանը, որ ողբերգական լաց է իր և իր նմանների համար, անսահման սիրո արտահայտություն է նրանց հանդեպ: Այն ուղեկցվում է հույսով լի երգեցողությամբ, որ Աստված կլսի իր աղոթքները և կպատասխանի:

Այսպիսով, միայն Աստծո և մարդու փոխադարձ սերն է փրկության գրավական հանդիսանում: Դրա բացակայությունը կասկածի տակ է դնում մարդու փրկության հարցը, քանզի փրկությունը անհնարին է առանց այդ փոխադարձ սիրո:

3. Հույս

Մարդու փրկության ուղին չափազանց դժվար է: Բազմաչարչար, տառապած հոգին տատանվում և տանջվում է հավիտենական կյանքի ու հատուցման մասին կասկածներով, հակասական մտքերով և զգացումներով: Մխիթարության համար մարդուն համոզում է անհրաժեշտ, որով և բացահայտվում է հույսի անքակտելի կապը հավատի հետ, որի վրա այն հիմնվում է:

Սուրբ Գրիգորը հստակորեն մատնացույց է անում հավատի և սիրո առաքինությունների սերտ կապը հույսի առաքինության հետ, որն արտահայտում է մարդու մասին Աստծո խնամատարության, մտահոգության, մեղքից և մահից փրկելու վերաբերյալ անկասկած համոզումով: Մարդու հոգում հույսը սնվում և աճում է հավատի և սիրո շնորհիվ:

Կանգնեա՛ կործանեալս անձին **նշան վստահութեան,**

Զի մի՛ յուսահատութեանն կոթող կառուցեալ՝ զծածկեցելոցն

բողոքեցէ ԼԵ, գ:

Զի թե եւ **գերիսն հատուածս առանձնաւորականս**

Ի մի եւ ի նոյն խորհուրդ դիտեցես,

Յաւէտ մեծացիս նոքաւք ի յԱստուած,

Քանզի **թե հաւատաս ի նա՝ եւ սիրես,**

Որով եւ յուսաս աներեւութից պարզեւաց նորին (Ժ, դ):

Ինչպես հավատն ու սերը, այնպես էլ հույսը, հավատացյալին անհրաժեշտ է հոգևոր կատարելության և փրկության համար, քանզի նրանով են բնութագրվում մարդու բարոյական արարքները: Աստծուն չհավատացող մարդը հույս չի դնում Նրա վրա և անտեսում է Նրա պատվիրաններն ու խոստումները: Հույսն առ Աստված և Նրա գթությունը ամրացնում է հավատացյալին և նրա սրտում փրկության

հնարավորության գաղափարը հաստատում: Այդպիսի հավատացյալին փրկության ճանապարհից ոչ մի բան չի կարող շեղել: Նույնիսկ «ակնկալություն բարություն բարձրելոյ» մեղավորը կարող է հուսալ և ապավինել Աստծո անսահման գթությանը.

Յուսալ վերստին անդրէն միսանգամ

Նախապարգեւիցն փառազարդութեանց դարձեալ հասանել:

Քանզի եւ յաստուածուստ անդուստ հանդերձի եւ այս ներգործիլ առ սոյնս,

Վասն զի սա գտուողին զաւրութիւն ամենահնար աւետարանէ... (ԺԱ, Բ):

Սուրբ Գրիգորը նշում է, որ Աստծո գթասրտությունը անչափ է և Նա ուզում է փրկել բոլորին (ՁԷ,ա)²⁴ և մշտապես ընգծում այն գաղափարը, որ միայն մարդն է աստվածասեր և Աստված՝ մարդասեր²⁵: Առ Աստված հուսացող հավատացյալը հոգեպես հանգիստ է, կասկածներից չի տանջվում և չի վիսատվում, քանզի հավատում է, որ Ով սիրո և բարության պատճառով Իր Միածին Որդուն զոհաբերել է, որպեսզի փրկի մարդուն, Նա այլևս ոչինչ չի խնայի նրա փրկության համար: Այդ հանգամանքը մարդուն հույս է ներշնչում և թևավորում.

Այլ մեծիդ Աստուծոյ գթութիւն ամենաժաման

Կանուլս ազդեցաւ յիմ յուսատրութիւն,

Առ որս՝ զղջմունս, խոստովանութիւնս... (ԼԳ, գ):

Նարեկացին հաստատում և զարգացնում է այն միտքը, որ մարդկային ուժերը սահմանափակ են, որ մարդը չի կարող ինքն իրեն փրկել և առանց Աստծո կամքի զուր են նրա ջանքերը: Միայն Տերը ունի բուժիչ միջոցներ (ԿԹ, գ): Նարեկացին, նմանվելով Երեմիա մարգարեին, խրատում է, որ մարդը Աստծուց բացի չի կարող ուրիշ մեկի վրա հույս դնել: Նա ուսուցանում է, որ մեղավորը պիտի ապավինի միայն Աստծուն, քանզի միայն Նա ունի սիրո լիությունը, որը կարող է փրկել մեղքի կապանքներից և ապաշխարած հոգում նոր կերպար վերականգնել: Դրա համար է Ս. Գրիգորը հավատացյալներին խրատում հուսալ ոչ թե «առ երկրածին ոք... մահկանացու... մարդ ոք եղծական» (ԾԱ, ա), այլ առ Աստված և փրկության համար միայն Նրան աղոթել.

Այլ ոչ ի մարդ ոք ունիմ գոյս,

Եթէ անիծեալ ի տեսանողէն՝ անյուսադրելի վիստիմ²⁶,

Այլ ի քեզ, Տէր իմ ոգեսէր...

Արդ, շնորհեա՛ ինձ յոյս քաւութեան, կեանք եւ ապաւեն,

Եւ ի տուր շնչոյս թշուառի՝ առից զոգիդ քո բարի (ԲԱ, գ):

Սուրբ Գրիգորը զգուշացնում է հավատացյալներին, որ մեղավորությունը, մարդու ապականացու բնությունը կարող են խոչընդոտ լինել առ Աստված տանող ճանապարհին՝ ծնելով վիստություն և անհուսություն: Արատներից մաքրվելու հուսահատ փորձը հղի է վատթարագույն հետևանքներով: Փրկության ճանապարհին բազում հարցեր են ծագում, սակայն քրիստոնյայի հույսը երբեք չի կորչում, որովհե-

²⁴ Հմմտ. Մատթ. ԺԸ 14, Հովհ. Զ 39:

²⁵ Տե՛ս ԼԳ, Ը-թ:

²⁶ Հմմտ. Երեմիա ԺԷ 5:

տև այն Աստծո կողմից է շնորհված. «Եւ յոյսդ, որ ի քէն պարգև, մնացական եւ անջնջական յիշատակարան պահեցաւ» (ՀԳ, գ):

Կասկածը, փոքրոգությունը, կեղծ հույսը, անհամբերությունը, հուսահատությունը հույսի դեմ մեղքեր են: Աստված, Ով փրկության հույս և ներում է շնորհում, և անսասան հավատն առ Աստված՝ ահա հուսահատության դեմ Ս. Գրիգորի առաջարկած միջոցները: Մարդ հավատում է, որ Տերն իր բարին է կամենում և այդ հավատը նրա մեջ ամրապնդում է հույսը: Դա ևս մեկ անգամ ցույց է տալիս հավատի և հույսի կապը, քանզի հույսը, ըստ էության, հավատ է փրկության և հավիտենական կյանքի հանդեպ: Հույսի առաքինությունը այնքան կարևոր է հավատացյալի բարոյական կատարելության և փրկության գործում, որ Սուրբ Հայրը բազմիցս անդրադառնում է դրան: Սուրբ Գրիգորը խրատում է, որ հույսով զինվելով պետք է մարդիկ ջանասիրաբար աղոթեն Աստծուն.

Այլ դու, ամենազավր, Արարիչ բնաւից, Տերդ բոլորից...

Եւ ինձ ողորմեա՛ կրկին գթութեամբ՝ ձեռն մատուցեալ փրկութեան
Տարակուսեցեալ, կոշկոճեալ, վարանեալ ի մահ պարտելոյս:

Զի դու միայն ճանաչիս Աստուած՝ փառաւորեալ միշտ...²⁷ (ԿԸ, գ):

Փրկության մասին այս աղոթքում արտահայտված է անսահման հույս, և այդ հույսը, որով ոչ ոք չի կարող դատապարտվել, հավատացյալի համար դառնում է Աստծո ողորմություն: Եթե կա դատապարտություն և հատուցում, ապա գոյություն ունի և ներման ու փրկության հույս, որը հիմնված է Քրիստոսի փրկագործության հավատի վրա.

Զի քրիստոսեան Աւետարանն կեանս է ամենեւին,

Ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ,

Որով առ մեղանսն՝ դարձն, առ պարտիսն՝ շնորհն,

Առ եղծումն՝ նորոգութիւնն, առ անաբեկութիւնն՝ քաւութիւնն...

Առ գործարան մահուն՝ կենացն ազատութիւն (ԼԳ, դ):

Հույսը Աստծո խոստացած երանության ուրախ սպասումն է և իր մեջ պարունակում է վստահություն, որ մարդը այդ երանությունը պիտի ստանա Աստծո ողորմությամբ և իր պատրաստվածության չափով: Փրկության ճանապարհին մարդ պետք է հաղթահարի մեղքի և բարու միջև եղած անդունդը: Այդ անդունդը կամրջում է հույսն առ Աստված, որ Նա սիրում է և Իր սերը չի սահմանափակում: Այդ ընկալումն արտացոլված է Ս. Գրիգորի հոգևոր փորձառության մեջ, որը նա մեզ է կտակել իր աղոթքների միջոցով, քանի որ Նարեկացու համար առ Աստված աղոթքը փրկության հույսի ձայնն է: Սուրբ վանականը հորդորում է հուսալ առ Աստված, փրկություն ակնկալել և չի դադարում Աստծո անունը փառաբանել²⁸.

Այլ վերստին յուսացեալ ի Նա՝ կարդա՛ Նմա,

Ապաւինելոյս քաւիչ, նորոգիչ,

Փրկիչ, կեցուցիչ եւ կենդանարար... ԽԶ, դ²⁹:

²⁷ Տե՛ս նաև ԽԶ, գ:

²⁸ Դրանում կարելի է համոզվել, եթե անգամ կարդանք միայն բոլոր իննսունհինգ բաների սկիզբն ու վերջը:

²⁹ Տե՛ս նաև ՂԴ, ա:

Նկատի առնելով, որ Աստված հարստանում է ավելի տալով, քան ստանալով, գանձերը բազմապատկում է բաշխելով, քան հավաքելով³⁰, Նարեկացին համոզված է, որ Աստված լսում է մարդուն.

Հաւատամ այսմ ամենայնի՝ գտանել Քեւ ելք փրկութեան,

Հաւատամ անարգս ընդ պատուականին,

Յուսամ ընդ Աբրահամու եւ ընդ Աննայի... (ԼԱ, ա):

Իր ամբողջ էությամբ մարդուն և մարդկության փրկության գաղափարին նվիրված Ս. Գրիգորը լավատես է: Նա խորապես հավատում է, որ Աստծո օգնությամբ մարդը կարող է հաղթահարել հոգին տանջող հակասությունները: Նարեկացին հույս ունի, որ քրիստոնեական առաքինություններով զարդարվելով, ինքը կարող է մեղքերից մաքրվել, կատարելության հասնել և փրկվել: Նարեկացու այդ հույսի հիմքը Աստվածորդու մարդեղությունն է, որպեսզի մարդուն իր նախկին մաքրության և փառքի մեջ վերականգնի (Ժ, բ):

Հետևաբար, կարելի է ասել, որ առաքինությունների մասին Ս. Գրիգոր Նարեկացու ուսմունքում հավատը, սերը և հույսը, թեև «առանձնաւորական» են բնութայն, սակայն սերտ կապի մեջ են և կարող են մարդուն երկինք բարձրացնել: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրը հավատացյալի հոգևոր-բարոյական վերելքում ուրույն տեղ ունի: Միայն մեկ առաքինության հաջողությունը հնարավոր չէ, քանզի միակողմանի կատարելությունը մյուսների անտեսում է ենթադրում, և հոգևոր կատարելության վերելքը կասեցվում է: Հավատով սկսված, սիրով արտահայտված և հույսով ամրապնդված փրկության ուղին մարդուն տանում է անմիջապես առ Աստված և Նրա բարեբեր շնորհները (Ժ, բ):

Մատյանում բերված հատվածների աստվածաբանական վերլուծությունը համոզում է մեզ, որ նրանց հեղինակը, քրիստոնեական կարևորագույն առաքինությունների էության մասին իր հայացքները շարադրելով, ներկայացրել է այն բացառիկ խորը կրոնական, փրկաբանական իմաստը, որով պարուրված է իր բարոյական հայացքների և աշխարհընկալման համակարգն ամբողջությամբ:

³⁰ Նմանատիպ համեմատություն տե՛ս ԽԹ, բ:

ՊԱ ԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԵՎԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՐԿՆԱՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԱՇՏՈՑԸ

(Սուրբ Մեսրոպի գործի հաջողության գրավականները)

Մաշտոցը, ապրելով մեզանից 1600 տարի առաջ, ձեռնարկել և ի կատար է ածել մի գործ, որով դարձել է անմոռաց և բոլոր դարերում էլ անչափ սիրված հայ ժողովրդի կողմից: Հայերս արդեն հարյուր տարի էր, ինչ ընդունել էինք քրիստոնեությունը և դուրս եկել մերազն հեթանոսությունից (այդ մոայլի մեջ անգամ Աստված մեզ հետ գործ էր կատարել, նախ Աստված, Թադևոս առաքյալի ձեռքով դարձի էր բերել Եդեսիայում նստող Հայոց Աբգար թագավորին ու ուրիշ շատերի, հետո էլ Բարդուղիմեոս առաքյալի ձեռքով շարունակել էր այդ նույն գործը. դրանով իսկ նախապատրաստել էր հայերիս, հոգեմարմնավոր անհրաժեշտ հասունության հասցրել հավատքային նոր անցում կամ դարձ կատարելու համար) և համակվել Քրիստոսի լույսով: Հարյուր տարի էր անցել, ինչ դուրս էինք եկել հոգին և միտքը պարուրող մեր ազգի զգալի մթապաշտ թագավորությունից ու վայելում էինք նոր կրոնի հոգևոր և մտավոր բարիքները: Մակայն Գրիգոր Լուսավորիչը վաղուց էր, ինչ հեռացել էր աշխարհից, և այդօրինակ մեծ քարոզիչ չկար, որ լուսավորեր ժողովրդի միտքն ու հոգին իր բոցաշունչ խոսքով և նրա առաջ ճանապարհ բացեր դեպի Երկնային արքայություն, մանավանդ որ Սուրբ Գիրքը հայերեն չէր թարգմանված, ինչն էլ մեծ դժվարություն էր հարուցում ժողովրդին Քրիստոսի հավատքի լույսին հաղորդակցվելու համար: Ահա այսպիսի մի ազգագոյակտրվածքում է հայտնվում Մաշտոցը և մեր ժողովրդի առջև բացում հավերժական լուսավոր ճանապարհ: Մաշտոցը մեծ վճռականությամբ է ձեռնամուխ լինում այս գործին և ավարտում այն պայծառալույս պսակով: Մաշտոցի գործի հաջողությունը պայմանավորված էր մի շարք գրավականներով: Առաջինը, որ Մաշտոցը հանդես էր գալիս որպես *հայ ժողովրդի բարձրագույն ժառանգակներ* (զեն) կրող անհատ՝ ինչպես մարմնավոր, այնպես էլ հոգևոր և մտավոր առումներով: Մարմնավոր առումով, որովհետև հոգևորական դառնալուց անմիջապես հետո իրեն տալիս է խստակյաց ճգնակեցության և անընդհատ վարժեցնում է մարմինը՝ գիշերվա հանգիստ քունը մի քանի ռոպեում առնելով, գետնատարած քնելով, վայրի բույսերով սնվելով¹: Նա մարմինը ենթարկում էր իր հոգու կամքին՝ առաջիկա ծանր գործունեությունը իրականացնելու համար: Եվ այդպես էլ լինում է. տառերի գյուտից հետո նա միշտ շարժման մեջ է, որովհետև հասնում է մինչ Հայաստանի ծայրագույն գավառները՝ մինչև Սյունիք, Աղվանք ու Հայաստանի բյուզանդական մասը՝ ամենուրեք դպրոցներ ու վանքեր հիմնելով:

Հոգևոր առումով, որովհետև Աստվածաշնչի անդադար ընթերցումներով ու աղոթքներով թափանցում է Սուրբ Գրքի ծովածավալ լույսի մեջ՝ դառնալով Հիսուսի անվեհեր զինվորը, որի շնորհիվ էլ կարողանում է իր նպատակին հասնել: Մտավոր առումով, որովհետև նա կարողացավ թափանցել մեր լեզվի հնչյունական հավակարգի խորքերը և ըմբռնելով այդ համակարգի ողջ օրինաչափություններն ու

¹ Տե՛ս **Կոլյուն**, Ե դար, Վարդ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Եր., 1994, էջ 39:

յուրահատկությունները՝ նրանց համապատասխան տառապատկերներ գտավ, իհարկե, Աստծո ամենախնամ գորակցությամբ միայն:

Միշտ էլ այսպես է լինում, երբ ժողովուրդներն ընկնում են ազգապահպանման տեսակետից վտանգավոր իրադրության մեջ, և եթե իրենց նախասահմանված է չմեռնել, այլ ապրել, իրենք Աստծո՝ օգնությամբ գտնում են այդ վիճակից դուրս գալու ելքը: Այսպես էլ հայ ժողովուրդը, զգալով իրեն սպասվելիք դառն փորձությունը, դեռ շատ վաղուց՝ Աստծո կամոք, իր հոգեմարմնավոր արգանդում սաղմնավորում է Մաշտոցի ծնունդը: Այս ամենի մեջ, բնականաբար, գործում է աստվածային վերին գերագույն կամքը, որովհետև ինչպես տիեզերական օրենքներն են գործում՝ ըստ աստվածային վեհագույն ծրագրի, այնպես էլ՝ մարդկանց և ժողովուրդների կյանքում տեղի ունեցող օրինաչափությունները:

Այդպես էլ Մովսեսը եբրայեցի ժողովրդի կյանքում, որ դեպքերի աստվածային ծրագրին համապատասխան զարգացման բերումով՝ դեռ անչափ փոքրուց հայտնվում է Եգիպտոսի փարավոնի ընտանիքում, այնտեղ հասակ առնում, կրթվում և եգիպտական ողջ գիտելիքներն ու իմաստությունը իր մեջ առած՝ անհրաժեշտ պահին, երբ ուներ արդեն պահանջվելիք հոգեմտավոր հասունացում՝ 80 տարեկանում, Աստծուց հրաման է ստանում և ժողովրդին դուրս բերում եգիպտական գերությունից, այսինքն՝ հեթանոսական խավարից, ու առաջնորդում դեպի Ավետյաց երկիր՝ Հիսուսի գալիք լույսը²:

Եվ պատահական չէ, որ Կորյունը Մաշտոցին համեմատում է հենց Մովսեսի հետ, երբ գրերի գյուտով զինված՝ նա Ասորիքից վերադառնում է հայրենիք. «Մեծ Մովսեսն էլ այնպես ուրախ չէր Սինա լեռից իջնելու ժամանակ, որովհետև աստվածատես մարդն աստվածագիր հրամանն Աստծուց առած և իր բազուկների վրա իջնում է լեռից, բայց նա տխուր էր՝ չարագործ մարդկանց պատճառով, որոնք իրենց ձուլածո կուռքերն էին երկրպագում:

Իսկ մեր այս Երանելին հոգևոր մխիթարությամբ լցված՝ գիտեր ընդունողների հոժարությունը և ուրախությունը, ուստի ճանապարհների կայանները ավետաբեր էին նրա համար»³:

Այո՛, Մաշտոցը Աստծո Ընտրյալն է օժտված հայ ժողովրդի բարձրագույն ժառանգական հատկություններով՝ իր առջև դրված վեհ ծրագիրը իրագործելու նպատակով: Այդպես նաև Հիսուս բռնել էր քրիստոնյաներին հալածող Պողոս առաքյալին, որին Դամասկոսի ճանապարհին նախ լույսով խփել էր, կուրացրել և հետո աչքերին նորից լույս տալով՝ դարձրել էր իր մեծագույն նվիրյալներից մեկը՝ յուր խոսքն ու հավատը հեթանոսների հոգուն ու մտքին հասցնելու համար: Եվ Պողոսը, որ սկզբում այնպես հետևողականությամբ հալածում էր Նրա Եկեղեցին, այդպես հետևողականությամբ էլ, տեսակ-տեսակ փորձությունների ենթարկվելով, քարոզեց Նրա խոսքը հեթանոսներին՝ բացելով բազմաթիվ եկեղեցիներ: Նա այդ չէր անում դժկամությամբ կամ պարտավորված, այլ մեծ ակնածանքով ու սիրով, որովհետև արդեն ճանաչել էր Հիսուսին, գիտեր ու իր հոգում կրում էր այն խոր սերը, որ Հիսուս տածում էր մարդկանց նկատմամբ:

Ճիշտ այդպես նաև Մաշտոցը Պողոս առաքյալի նման բռնկված էր Հիսուսի սիրով: Նա չէր կարող իր առջև դրված ծրագիրը չիրագործել: Նա նույնպես ձեռնա-

² Տե՛ս Աստվածաշունչ, Մատեան Հին և Նոր Կտակարանների, Ս. Էջմիածին, 1994-ՌԵԽԴ, էջ 1-40:

³ Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1981, էջ 101:

մուխ էր եղել իր գործին մեծագույն նվիրվածությամբ, որովհետև, իրո՞ք, գիտեր Հիսուսի սերը, որ վերածվել էր իր ժողովրդի հանդեպ ունեցած վիթխարի սիրո:

Այն, որ Մաշտոցը լուսավորված և բռնկված էր Հիսուսի կողմից, երևում էր նաև նրա վարքագրի կողմից օգտագործված մի շատ գեղեցիկ և դիպուկ բառից՝ *թակար-դապատյալ*: Մաշտոցը «թակարդապատյալն» էր Հիսուսի և դրանով իսկ՝ իր ժողովրդի նվիրյալ ծառան ու «անընդհատ աղոթքի ու բազկատարած պաղատանքի մեջ էր առ Աստված», գրում է Կորյունը⁴:

«Նա մտքում դրեց ավելի հոգալ նույնպես ողջ Հայաստանի ժողովրդին մխիթա-րելու մասին, ուստի և ավելացրեց մշտամոռնչ աղոթքն ու բազկատարած պաղա-տանքն առ Աստված և անդադար արտասուքը և մտաբերելով առաքյալի խոսքը՝ ա-ստում էր հոգալով. «Տրտմություն է ինձ, և անպակաս են իմ սրտի ցավերն իմ եղբայր-ների և ազգակիցների համար»:

Եվ այդպես տրտմական հոգսերով պաշարված ու «թակարդապատյալ», մտած-մունքների ծփանքի մեջ ընկած՝ էլք էր որոնում այդ վիճակից դուրս գալու համար»⁵:

Մաշտոցի գործին մեծապես նպաստեց նաև այն հանգամանքը, որ նա Հայաս-տանի Տարոն աշխարհի ծնունդ էր, որը քաղաքակրթության և մշակութային շատ հին կենտրոն էր: Այդ են վկայում այնտեղ եղած բազմաթիվ հնամյա քաղաքներն ու ավանները (ավաղ, այսօր ավերված ու անտեր): Տարոնը միաժամանակ հեթանո-սական հավատքի խոշոր կենտրոններից էր: Հիշենք, թեկուզ, Քարքե լեռան լանջին և Տավրոսի դիմաց գտնվող Աշտիշատ գյուղը, որտեղ գտնվում էին Վահագնի, Անա-հիտի և Աստղիկի մեհյանները: Այստեղ էր կառուցվել նաև Հայաստանի առաջին քրիստոնեական եկեղեցին՝ Ս. Կարապետի կամ Գլակա վանքը՝ Հովհաննես Մկրտչի մասունքների վրա:

Այստեղ հայերը դարեր շարունակ գործ էին ունեցել գիտության, գրի, պաշտա-մունքի հետ: Այստեղ իրար էին բախվել նաև մի՛ կողմից շումերական ու եգիպտա-կան, մյուս կողմից ասորաբաբելապարսկական և հունական միտքն ու աշխարհա-յացքը: Եվ այստեղ հայերը շատ բան յուրացրել էին ո՛չ միայն հունական և պարս-կական մշակութային, այլև ասորականից և բաբելականից: Այս միջավայրը, ան-շուշտ, զգալի վճռական դեր է խաղացել նաև Մաշտոցի հոգեմտավոր հասունաց-ման գործում: Այստեղ Մաշտոցը մանկական տարիներին հիմնավոր կրթություն է ստացել Ներսես Մեծի բացած հելլենական դպրոցներից մեկում, որտեղ նա հիմնա-վոր տիրապետում է հունարենին, պարսկերենին և ասորերենին: Կարելի է ենթադ-րել, որ հետագայում տիրապետում է նաև վրացերենին ու աղվաներենին:

Տարոնի Հացիկ գյուղում ծնված և հիմնավոր կրթություն ստացած երիտասարդը չէր կարող պարփակվել իր գյուղի սահմանների մեջ, մի ինչ-որ գորավոր ուժ նրան հանում է իր գյուղից, ու նա բռնում է Հայոց մայրաքաղաքի ճանապարհը: Այս պա-հից իսկ սկսած՝ նա պատրաստվում է իրականացնել այն մեծագործությունը, որի համար աշխարհ էր եկել: Գալով մայրաքաղաք՝ նա սկզբում զինվորական ծառա-յության է անցնում, իսկ այնուհետև դառնում Արշակունյաց արքունիքի ատենադ-պիրը: Այս երկու ասպարեզներում էլ նա անչափ գնահատված է լինում, որովհետև և՛ որպես զինվորական շատ սիրված է լինում իր զորականների կողմից, և՛ որպես

⁴ Նույն տեղում, էջ 89:

⁵ Այսուհետ չակերտների մեջ դրվող մեջբերումները մենք երբեմն ավելի ենք հստակեցրել՝ ելնելով ժամանակակից արևելահայերենի առանձնահատկություններից:

ատենադպիր մեծ գովասանքի արժանացած հայոց թագավորից, վասնզի երբ հեռանում է ատենադպրի յուր պաշտոնից ու ճգնավոր դառնում, թագավորը երկար ժամանակ ընկնում է մեծ հոգսերի մեջ՝ հմուտ ատենադպիր չունենալու պատճառով: Հայոց արքունիքում զինվորականի և ատենադպրի ծառայությունները նույնպես կարևոր դեր են կատարում նրա գործի հաջողության համար, որովհետև նա լավ պատկերացում է կազմում Արշակունյաց արքունիքի, նրա շուրջ ծավալվող դիվանագիտական իրադարձությունների և ողջ աշխարհիկ կյանքի վերաբերյալ: Այս պահից սկսյալ Մաշտոցը իր մեջ ներառում է ե՛րեք հզոր անհատ՝ *հոգևոր Մեսրոպին, մտածող Մեսրոպին և զինվորական Մեսրոպին*:

Մաշտոցի գործի հաջողության ամենակարևոր գրավականը նրա կյանքում տեղի ունեցող կտրուկ շրջադարձն է, այսինքն՝ նրա հոգեմտավոր աստիճանում դարձի գալը և կրոնավոր դառնալը: Այս պահից նա թողնում է աշխարհիկ կյանքը և առանձնանալով Գողթնի բարձրադիր լեռներում՝ սկսում է խիստ ճգնել՝ իր հոգում ունենալով Հիսուսի սերն ու խաչը:

Լեռների առանձնության մեջ նա Աստվածաշնչի անդադրում ընթերցանումներով կատարելագործում է յուր հոգին՝ թափանցելով մարդու հոգեկան աշխարհի խորքերն ու գաղտնիքների մեջ, իսկ մյուս կողմից էլ՝ անվերջ ճնշում է իր մարմինը՝ հնազանդեցնելով այն յուր հոգու ամենակարող ուժին: Նա իր մարմինը պատրաստում էր առաջիկա բազում փորձություններին դիմագրավելու և դիմանալու համար: Եվ նրա մարմինը, իրոք, դառնում է մշակված ու գեղեցիկ հոգու բնակարան ու նրա ողջ գործունեության և անդադար շարժման ընթացքում հավատարմորեն ծառայում է նրան: Երբ Մաշտոցը ձեռք է բերում ավետարանական որոշակի երկնահոգեշահ գիտելիքներ, սկսում է աստիճանաբար աշակերտներ հավաքել ու նրանց մի՛ կողմից պատրաստել ճգնական կյանքին, իսկ մյուս կողմից՝ աստվածաշնչյան ուսուցմանը⁶:

Որոշ ժամանակ անց նա իր աշակերտների հետ հաճախ թողնում էր ճգնության կացարանը ու նրանց ողջ Գողթնի գավառում ցրելով՝ Աստծո շնորհաբեր խոսքն էր քարոզում, որովհետև Գողթնում զգալի ձևով գլուխ էր բարձրացրել հեթանոսական աղանդը⁷: Եվ այնտեղ՝ հենց Գողթնում, Մաշտոցը ստանձնում է Երկրորդ Լուսավորչի դերը ու այդպես էլ մեր պատմության մեջ կոչվում է⁸: Այս քարոզության ընթացքում նա տեսնում ու զգում է, թե ժողովուրդը որքան դժվարությամբ է Աստվածաշնչին հաղորդակցվում, քանզի այն հայերեն թարգմանված չէր, ինչպես Կորյունն է գրում. «Եկեղեցական արարողությունները և Սուրբ Գրքի ընթերցանությունները Հայաստանի վանքերում ու եկեղեցիներում կատարվում էին ասորերեն, որոնցից ոչինչ էլ չէին հասկանում կամ օգտվում այսպիսի մեծ երկրի բնակիչները: Եվ ասորերեն լեզուն չհասկանալուց՝ եկեղեցական պաշտամունքներն ու ժողովրդի ջանքերն ապարդյուն էին դառնում: Եվ երանելի այր Մաշտոցն այս մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս էր ներսում»⁹:

Այսպիսի դժվարությունների հանդիպելով՝ Մաշտոցը դարձյալ Գողթնում, աստիճանաբար, հանգում է Աստվածաշունչը հայերեն թարգմանելու գաղափարին՝

⁶ Հր. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 82-86:

⁷ Կորյուն, նշվ. աշխ., էջ 89:

⁸ Ա. Մարտիրոսյան, Մաշտոց, Եր., 1982, էջ 320:

⁹ Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 31:

կանգնելով միաժամանակ տառերի խնդրի առջև և սկսում է այս ուղղությամբ իր պրպտումները¹⁰։ Եվ նրա այս մտահոգությունը և նպատակամղվածությունը ավելի է սաստկանում նաև ա՛յն պատճառով. «Որովհետև Երանելի Մաշտոցը, հոգ տանելով, անվերջ տրտմում էր՝ տեսնելով հայոց մանուկների մեծ ջանքերը և առավել մեծ ծախսերը, որոնք շատ միջոցներով և հեռագնաց ճանապարհներում և՛ բազմաժամանակյա դեգերմամբ՝ իրենց օրերն էին մաշում ասորի գիտության դպրոցներում»¹¹։

Հենց Գողթնում, ինչպես գրում է նրա վարքագիծը, Մաշտոցը, հայոց գրերը գտնելու ճանապարհին, մեծ ջանքեր է գործադրում և չարչարանքներ կրում, սակայն դեռ հաջողության չի հասնում։ Եվ սա շատ բնական է, որովհետև այդպիսի մեծագործություն կատարելու համար մարդ պետք էր շատ պատրաստության, տառապանքների ու փորձությունների միջով անցներ։

Դժվարությունների այս պահին է, որ Մաշտոցի կողքին անսասան կանգնում են Հայոց կաթողիկոսն ու թագավորը¹²։ Այս գործում հատկապես վճռական է լինում Հայոց Կաթողիկոսի՝ Սահակ Պարթևի՝ Մաշտոցին զինակից դառնալը, քանզի վերջինս նույնպես բարեկրոն անձ էր ու մեծ հավատացյալ և իր անձը Մաշտոցի նման հանուն Հիսուսի անընդհատ չարչարանքի ու ճգնակեցության էր ենթարկում, ինչպես գրում է Մովսես Խորենացին¹³։

«Սահակ Հայրապետը բոլոր առաքինություններով իր հայրերին նմանվեց՝ աղոթքի կողմից գերազանցելով անգամ նրանց, որովհետև նա հավաքեց վաթսուն աշակերտ մայրաքաղաքների սպուդենների նման կրոնավոր մարդիկ՝ մագեղեն հագած, երկաթով պատած, ոտաբոբիկ, որոնք միշտ շրջում էին նրա հետ, նրանցով եկեղեցական պաշտամունքի կանոնը անխափան կատարում էին անապատականների նման և մեր աշխարհի հոգսը քաշում՝ աշխարհականների նման։ Նրա մոտ Մեսրոպը եկավ հայերեն գրերի առիթով»։

Գրերի գյուտը իրականացնելու նպատակով Մաշտոցն ու հայոց կաթողիկոսը իրենց գործակից են դարձնում նաև թագավորին. «Շտապիր, որ քո ժամանակում լինի Հայոց աշխարհի համար մեծ և օգտաբեր այս գյուտը, որն ապագայում պիտի բերի քեզ առավել մեծ շահ, անմոռաց հիշատակ և երկնային վայելքներ, քան քո թագավորական իշխանությունն է կամ քեզնից առաջ եղած քո Արշակունյաց տոհմակից նախնիներին»։

Արշակունի Վռամշապուհ թագավորը գիտակցեց նրանց խոսքերի ճշմարտացիությունը և գործի անցավ։ Ահա թե ինչպես է ներկայացնում թագավորի ոգևորությունն ու նվիրումը այս գործին նույն պատմիչը. «Եվ թագավորը, լսելով այս, ուրախացավ, փառք տվեց Աստծուն, որ իր թագավորության ժամանակ նա հոգևոր կյանքի այսպիսի ցանկություն պարգևեց Հայոց աշխարհին»¹⁴։

Այս գործի մեջ Վռամշապուհ արքայի ներգրավումով՝ ձևավորվում է մի հետաքրքիր ու լուսավոր եռյակ միություն, որը Սուրբ Երրորդության մի զարմանալի Երկնալուսապսակյալ խորհրդանիշ է ողջ քրիստոնեության պատմության մեջ։ Այս

¹⁰ Կորյուն, նշվ. աշխ., էջ 89, 91։

¹¹ Ղ. Փարպեցի, նշվ. աշխ., էջ 31։

¹² Կորյուն, նշվ. աշխ., էջ 91։

¹³ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 395։

¹⁴ Նույն տեղում։

միության մեջ, գրողիս կարծիքով, Վոամշապուհ թագավորը, կարծես թե, Հայր Աստծո խորհրդանիշն է, Մահակ Պարթև Հայրապետը՝ Որդի Աստծո, Մաշտոցը՝ Սուրբ Հոգու։ Եվ, իրոք, Սուրբ Հոգին է, որ հայտնվելով մարդու մեջ, նրան կրթում է, զորություն ու շնորհներ տալիս։ Եվ միշտ զորության, թե տկարության պահին Մաշտոցն է, որ հայ ազգապահպան, ազգառզեզաց զորությամբ թափանցում է հայորդիներին ներաշխարհը՝ հայրենիքում, թե օտարության մեջ, մեզ հայ պահում ու թեկուզ անթեղված, բայց լույսի ու հույսի կրակ բորբոքում մեր հոգիներում։ Թագավորի դերը կարևորվում է նրանով, որ նա էր հոգում աշակերտների, դպրոցների ու ճանապարհորդությունների ծախսերը¹⁵։ Մաշտոցի գործը հաջողությամբ է պսակվում, որովհետև նա ուներ լեզվական բնատուր երկնագիտահմուտ բարձր օժտվածություն, որի շնորհիվ, Արշակունյաց արքունիքում աստենադպիր աշխատելիս, ավելի էր խորացրել իր լեզվական գիտելիքները, մանավանդ որ հայերենից բացի գրություններ էր գրել հունարեն, պարսկերեն և ասորերեն, շնորհիվ որի ծանոթ էր նաև այլ լեզուների օրինաչափություններին։ Մի հանգամանք, որը բավականին նպաստել էր, որ նա ավելի խոր թափանցի հայոց լեզվի հնչական և այլ կարգի գաղտնիքների մեջ և շատ ավելի հմտորեն յուրացնի դրանք։ Պատկերացնելու համար, թե հայոց գրերը կերտելիս ինչպիսի լեզվական դժվարությունների է հանդիպել նա, նշենք դրանցից մի քանիսը միայն։ Հարց էր՝ թե ասորիների նման աջից ձախ գրել, թե հույների նման՝ ձախից աջ։ Պետք էր արդյոք ձայնավոր հնչյունները հունականի նման առանձի՞ն տառերով արտահայտել, թե՞ ասորականի պես՝ բառի վերև դրված նշաններով։ Տառերի անունների և պատկերների հետ ինչպե՞ս է հարկավոր վարվել, արդյո՞ք առաջնորդվել հունական կամ ասորական այբուբեններով, թե՞ յուրովի մոտեցում ունենալ։ Հույները բառասկզբում ձայնավորից առաջ **հ** հնչյունն արտահայտելու համար հատուկ տառ չունեին և գործածում էին ստորակետի նման մի նշան (')՝ դնելով բառասկզբում վերևից։ Հարց էր՝ այս հարցում ևս հետևել հույների՞ն, թե՞ հայերենում առանձին տառ ստեղծել այդ հնչյունի համար։

Մաշտոցին, հավանաբար, մտահոգել էր հատկապես **վ** և **լ** հնչյունների տարբերակման հարցը, չէ՞ որ **լ**-ն գրաբարում հանդես էր գալիս մեկ իբրև բաղաձայն, ինչպես՝ *Աւետարան*, *աւանդ* բառերում, մեկ իբրև՝ երկբարբառի **լ** կիսաձայն բաղադրիչ, ինչպես՝ *Աստուած*, *աւր*, *ձիւն* բառերում։ Հունարենում մի **ռ** կար, հայերենում էլ էր հարկավոր մի **ռ** թողնել, թե՞ տարբեր տառեր առանձնացնել **ռ** և **ր** հնչյունների համար։ Այսպես նաև **լ** և **ղ** հնչյունների հարցը, որոնց դիմաց հունարենը ուներ մեկ հնչյուն և մեկ տառ։ Մաշտոցը իր հզոր մտքի շնորհիվ կարողանում է հաղթահարել այս բոլոր դժվարություններն էլ՝ հայերենի 36 հնչյուններին էլ ուրույն տեսք տալով։ Այդ կերպ նա կատարեց նաև հայերենի **աւ**, **իւ**, **եա**, **ւոյ** և այլ երկբարբառների և եռաբարբառների ճիշտ առանձնացումը ու համապատասխան տառերով ճիշտ նշանակումը։ Փաստորեն, նա ուներ ժամանակակից շատ բարձր հնչյունաբանի հմուտ պատրաստվածություն և փորձառություն, որ կարողացավ յուր առջև ծառացած խոչընդոտները այդպես փայլուն կերպով հաղթահարել ու կերտել իր ժամանակի ամենակատարյալ այբուբենը՝ յուրաքանչյուր հնչյունի դիմաց մեկ տառ սկզբունքով, որն 1600 տարի է, ինչ ծառայում է մեր ժողովրդին¹⁶։

Մաշտոցի գործի հաջողության կովաններից էր նաև նրա կազմակերպչական

¹⁵ Կորյուն, նշվ. աշխ., էջ 95։

¹⁶ Այս մասին տե՛ս Մ. Խորենացու նշվ. աշխ. վերաբերյալ Ստ. Մալխասյանի տված 314 ծանոթագրությունը։

մեծ ջիղը, եռանդն ու գործունեությունը, ծրագրավորված և գիտակցված հետևողականությամբ իր գործը առաջ տանելը: Այս է ապացուցում նրա գործունեության ողջ ընթացքը: Տառերը գտնված էին, և դրանք նրա սրտովն էին: Մակայն ամենադժվար, տառապալից և կազմակերպչական բարդ գործը առջևում էր: Տառերը ուսուցանելու համար էին, իսկ դրա համար առաջին հերթին գիրք էր հարկավոր, ուրեմն անհրաժեշտ էր Աստվածաշունչը թարգմանել ամբողջությամբ, դասագիրք կազմել, դպրոցներ բացել, սկսվում էր գործունեության դժվար, համառ և երկարատև աշխատատարության մի շրջան, որը նույնպես հաղթահարվելու էր խելացի, բանիմաց և գրագետ կերպով: Մաշտոցի մեծագործության այս պահին նրան ամեն կերպ հովանավորում էր և նրա կողքին ամուր կանգնած էր Սահակ Պարթև Հայրապետը, ու նրանք, դառնալով հոգևոր ու մտավոր զուգակիցներ, սկսում են հայոց մեջ տարածել կրթալուսավորչական հզոր շարժում: Այսուհետ այս երկու անունները երբեք չի կարելի բաժանել միմյանցից: Սահակ Պարթև կաթողիկոսը, ավելի տարիքով ու Եկեղեցու գլուխը լինելով, գործում էր Հայաստանի կենտրոնական մասում՝ Այրարատ նահանգում՝ միաժամանակ իրականացնելով Աստվածաշնչի թարգմանությունը, իսկ Մաշտոցի գործունեության ոլորտը ողջ Հայաստանն էր՝ հատկապես նրա ծայրամասային գավառները, անգամ Վիրքն ու Աղվանքը: Այնուհետև Մաշտոցը հոգ է տանում, որ ուղղափառ աստվածապաշտությունը, այսինքն՝ Քրիստոնեությունը, ավելի տարածվի նաև Աղվանքում: Նա ներկայանում է տեղի Արսվաղեն թագավորին և Երեմիա եպիսկոպոսապետին և նրանց օժանդակությամբ գլուխ բերում սկսված գործը, իհարկե, շնորհալի Բենիամին թարգմանչի օգնությամբ: Եվ հետայսու Աղվանից Երեմիա եպիսկոպոսապետը՝ երկնահեռատեսը, Աստծո ողորմությամբ Աստվածաշունչը թարգմանում է (դարձնում է) աղվաներեն¹⁷:

Սյունիքում հայ դպրություն տարածելիս, միառժամանակ մոռանալով հայրենի մյուս գավառները, Մաշտոցը մտահոգվում է մեր դրացի վրաց ժողովրդի մասին: Նա յուր երկնապարզն մտքով լավ գիտեր, որ լուսավորության նախապայմանը սեփական գիր ունենալն է: Այս նպատակին հասնելու երկու ճանապարհ կար՝ հայոց այբուբենից մի կողմ դնել վրացերենում բացակայող հնչյունների համապատասխան տառերը կամ էլ ստեղծել նորերը: Որոշակի նպատակներից ելնելով՝ նա ստեղծում է նորերը, որովհետև չունենալ աշխարհաքաղաքացիության և ազգայնամոլական ոչ մի նկրտում: Ու Սյունիքում հորինելով վրացական գրերը, այնուհետև անցնում է մեր հարևան վրաց աշխարհը՝ յուր սյունեցի մի քանի աշակերտների հետ: Մաշտոցը ներկայանում է վրաց Բակուր թագավորին և Մովսես եպիսկոպոսապետին: Վրաստանում սիրով են ընդառաջում նրա նախաձեռնությանը. «Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ թագաւորին եւ զօրացն հանդերձ ամենայն գաւառօքն»:

Մաշտոցը այնուհետև «խրատեց և հորդորեց, որ ընդունեն այդ գրերը, սովորեն, տարածեն երկրում և ուսման ու կրթության հոգ տանեն, ինչպես հարևան հայկական գավառներում»: Եվ նախաձեռնությունը իր ձեռքն առնելով՝ թագավորի հովանավորությամբ աշակերտներ է հավաքում և սկսում նրանց կրթել ու դաստիարակել, այսպիսով՝ Վրաստանում ևս առողջ հիմքերի վրա դնելով հոգու և մտքի լուսավորման գործը¹⁸: Այս պահին, փաստորեն, Մաշտոցի մեջ վճռականորեն ու նպա-

¹⁷ Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 174-189, 213-221:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 174-177:

տակասվաց կերպով գործում են արդեն իսկ Վաղարշապատում ձևավորված հինգ հզոր անհատ՝ *զինվորական Մեսրոպը, դիվանագետ Մեսրոպը, հնչունաբան (գիտնական) Մեսրոպը, հոգևոր Մեսրոպը և քարոզող Մեսրոպը*:

Չմոռանանք ասել, որ նա Վիրքում գտնում է Ջաղա անունով մի մարդ (հավանաբար հոգևորական) «այր գրագետ եւ ճշմարտնահաւատ» և Աստվածաշունչը վերածում վրացերենի: Մաշտոցի սույն գործը այս կերպ է ներկայացնում Մովսես Խորենացին «հանդերձ Ջաղայի ոմամբ թարգմանաւ հելլեն եւ հայ լեզուի»¹⁹: Ամենայն վստահությամբ կարող ենք ասել, որ Աստվածաշնչի վրացերեն թարգմանության գործը հաջողությամբ կազմակերպելուց և ավարտելուց հետո՝ Մաշտոցի մեջ ներամտված հինգ հզոր անհատներին ավելանում է ևս մեկը՝ *թարգմանող Մեսրոպը*:

Այս ամենից ելնելով՝ հայ մեծավաստակ լեզվաբան Հր. Աճառյանը կատարում է նաև այսպիսի եզրահանգում, որ Մաշտոցը կարողացավ վրաց բազմաթիվ բաժանբաժան եղած ցեղերի միության հիմքը դնել, իսկ որոնք էին այդ տարբեր ցեղերը. «Այս բաժան-բաժան ցեղերը պիտի լինեին, բացի բուն վրացիներից, իմերեղները, գուրիացիները, աջարացիները, մինգրելները, խեվսուրները, թուշերը, փշավները, սվանները, ինգիլոները, ինչպես նաև լազերը (վրացական անվանակոչությամբ ճաները) եւ արխագները:

Կորյունի նշված միությունը,- շարունակում է մեծանուն լեզվաբանը,- անշուշտ ուրիշ բան չէ, եթե ոչ նախ՝ կրոնական և հոգևոր միություն, իբրև բոլորն էլ անդամ միևնույն վրացական ազգային Եկեղեցու, և երկրորդ՝ լեզվական միություն, իբրև բոլորն էլ գործածող միևնույն ծիսական լեզվի, որ պաշտոնական նշանակություն էր ստացած և գրականությամբ ապահովված»²⁰: Կարծես նախնական պայմանավորվածությամբ էր աշխատանքը այսպես բաժանված, որովհետև Մաշտոցը ավելի երիտասարդ էր, ներշնչված և եռանդով լեցուն:

Եվ այսպես որոշակի հետևողականությամբ և ծրագրված Հայ Եկեղեցու զույգ այունները գործը առաջ են տանում: Նախ՝ գտնում են Հայոց գրերը, հետո տեսնելով, որ Ս. Գրքի ասորական պեշիտտա օրինակից կատարվող թարգմանությունը հաջող է ընթանում և ավարտին մոտ է, Վաղարշապատում բացում են հայալեզու առաջին քրիստոնեական դպրոցը, քարոզողներ և ուսուցանողներ են պատրաստում: Այս պահին էր, որ Մաշտոցի մեջ ձևավորված վեց Մեսրոպներին, որոնց մասին մենք նշեցինք, ավելանում է յոթերորդը՝ *ուսուցանող (ուսուցիչ) Մեսրոպը*: Այնուհետև դպրոցներ և վանքեր են բացում Հայաստանի բազմաթիվ այլ գավառներում, ինչպես նաև Վիրքում և Աղվանքում: Սկսած գործը զգալի առաջ տանելուց հետո՝ կարիք են զգում ասորի և հույն նշանավոր հայրերի եկեղեցական գրվածքների թարգմանության²¹: Այս գործը նույնպես նրանք շատ խելացի և մտածված ձևով են լուծում. սկզբում արտասահման են ուղարկում ավագ աշակերտներին՝ հունարենի ու ասորերենի մեջ խորանալու և թարգմանություններ կատարելու, որոշ ժամանակ անց՝ նաև կրտսեր աշակերտներին: Ավելի ուշ նրանք աշակերտների ձեռքով Կոստանդնուպոլսից բերել են տալիս Աստվածաշնչի մի ընտիր օրինակ, որի միջոցով Սահակ Պարթև Հայրապետը աշակերտների (հիմնականում Եզնիկի) օգնությամբ շտկում,

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 175:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 174-175, 174-177:

²¹ Տե՛ս **Կորյուն**, նշվ. աշխ., էջ 122, 123:

հղկում և մշակում է «վաղվադակի» թարգմանությունը, որը և եվրոպացի հայագետ Լակրոզը անվանում է «թագուհի թարգմանության»²²: Սահակ Պարթև Հայրապետը, փաստորեն, մեր եզրույթով ասած, ականավոր թարգմանաբան էր՝ դեռևս հինգերորդ դարում:

Վարդապետարանում Մաշտոցն ու Սահակ Հայրապետը կրթում էին ոչ միայն քարոզության պատարաստվող աշակերտներին, այլև արքունի մարդկանց և ազնվականներին: Սահակ Հայրապետը ուրիշների շարքում հատկապես ուսուցանում էր Մամիկոնյան տոհմի մարդկանց: Նա իր ձեռքով վարդապետարան կամ դպրոց մտցրեց Վարդան Մամիկոնյանին և նրա Հմայակ ու Համազասպ եղբայրներին, որոնք նրա թոռներն էին²³: Բացի Մամիկոնյաններից Սահակ-Մեսրոպյան դպրոցներում ուրիշ նախարարական տոհմերից էլ աշակերտներ կային, ինչպես Վահան Ամատունին՝ Հայաստանի հազարապետը, թերևս, նաև Վռամշապուհ արքայի հավատարիմ Վահրիճը և ուրիշներ: Այս դպրոցներում գիտության և լուսավորության աղբյուրից իր բաժին ծախվել էր հագեցնում նաև հայ կինը: Պատմությունը մեզ է ավանդել երկու թանկագին անուն՝ Դստրիկ և Չվիկ, որոնք Մամիկոնյան եղբայրների կանայք էին: Առաջինը՝ Վահան Մամիկոնյանի կինն էր, երկրորդը՝ Հմայակ Մամիկոնյանի: Չվիկն էր, որ անգամ հայրենիքից հեռու դաստիարակեց մի որդի՝ Վահան Մամիկոնյանին, որը Վարդանից՝ յուր հորեղբորից 30-40 տարի անց Հայաստանում ապստամբության դրոշ բարձրացրեց և հաջողության հասավ²⁴:

Սահակ-Մեսրոպյան դպրոցներում իրենց գավակներին սովորելու էին ուղարկում նաև հայ շինականը և արհեստավորը: Զարմանալին հենց այս է, որ նրանց շարքերից դուրս էին գալիս ուսյալներ, որոնք ազդում էին երկրի ընդհանուր ճակատագրի վրա և փառքով պսակում իրենց ծննդավայրի անունները, ինչպես՝ Հովսեփը՝ Հոդոցիմ գյուղի անունը, Ղևոնդ Երեցը՝ Իջավանքինը, Աբրահամ սարկավագը՝ Արածինը²⁵: Եվ նշանակալիցն այն է, որ 30-40 տարում հասարակ ժողովուրդը այնքան է լուսավորվում, որ Վարդանի բանակում՝ աշխարհագրորի կազմում, Մաշտոցի աշակերտ Ղևոնդ Երեցի գլխավորությամբ հանուն հոգու և խղճի ազատության, հանուն լույսի՝ ընդդեմ խավարի, կենաց ու մահու կռիվ էին մղում, որից երևում է, թե ինչ ուժ ունեին Սահակ-Մեսրոպյան դպրոցները:

Զմոռանանք ասել, որ հինգերորդ դարի և հետագա բոլոր պատմիչների միահամուռ վկայությամբ քրիստոնեությունը շատ ավելի հեշտ ու հանգիստ է տարածվում Հայաստանի կենտրոնում՝ Այրարատում և նրա շրջակայքում, քան ծայրագավառներում, մասնավորապես Գողթնում, Սյունիքում, Արցախում և այլուր, որտեղ առավել կամ պակաս չափով շարունակվում էին պահպանվել հեթանոսական հավատալիքները ու ամեն մի հարմար պահի և առիթով արագ գլուխ էին բարձրացնում: Մաշտոցը առաջին հերթին ուղևորվում է հենց այդ գավառները և քիչ դժվարություններ չի կրում՝ նրանց կողմնորոշելու և կրկին դարձի բերելու ուղղությամբ: Այո՛, Քրիստոսախնամ էր Այրարատ նահանգը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ մեր ժողովուրդը, կորցնելով իր բնիկ տարածքների ինը տասներորդ մասը, կենտրո-

²² Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 259:

²³ Կոռյուն, Ե Դար, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, Եր., 1994, էջ 44: Այս մասին տե՛ս նաև Լժո, Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904, էջ 186:

²⁴ Լժո, նշվ. աշխ., էջ 321:

²⁵ Նույն տեղում, էջ 186:

նացել է հենց այստեղ, պահպանել է պատմական Հայաստանի այս կտորը, որովհետև մեր երկրի այս հատվածում լույսի խտությունը շատ ավելի մեծ է, որովհետև այստեղ է գտնվում Մայր Աթոռ Լուսամայր Սուրբ Էջմիածինը՝ դիմացը բիբլիական Արարատ լեռը և խորհրդանշաբար նույն լուսավոր ծիրի մեջ է նաև Մաշտոցի հավերժական հանգստարանը՝ Օշական գյուղում: Հուսանք, որ շատ շուտով այստեղ զսպանակված լույսը ճառագելու է և լուսավորելու իր նախկին վայրերը ու նրանից էլ հեռու:

Նշենք, որ ինչպես Մաշտոցի վարքագիրը, այնպես էլ Մովսես Խորենացին հայոց գրերի գյուտը համարում են աստվածային շնորհի արդյունք: Իսկ Աստված այդ շնորհը տալիս է այն մարդուն, ով այդ ուղղությամբ շատ է պրպտումներ կատարում, շատ է չարչարվում ու տառապում և արտասովորից ու պաղատալից աղոթքներ առաքում առ Աստված: Ահա թե ինչպես է Խորենացին նկարագրում Մաշտոցի աստվածային ներշնչաբունկումով կատարված գրերի գյուտը. «Մեսրոպը գնում է նրա մոտ և սրանից էլ շահ չգտնելով՝ ապավինում է աղոթքի: Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահպանում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ո՛չ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մոքում հավաքվեցին՝ ինչպես մի ամանում: Եվ նա, աղոթքից վեր կենալով, ստեղծեց մեր նշանագրերը ...»²⁶:

Մաշտոցի ծրագրած գործունեության նախապատրաստական փուլն այսպիսով հաջողությամբ ավարտվեց: Նա թափանցել է մարդկային ձայնի՝ դրանով իսկ հայոց լեզվի և նրա հնչակազմին բնորոշ երկրային ու երկնային խորհուրդների մեջ: Նրան հաջողվել է բացահայտել իր լեզվի հնչահամակարգի շատ օրինաչափություններ ու գաղտնիքներ, որոնց պրպտումներով և որոնումներով էլ, հավանաբար, հիմնականում զբաղվել էր: Հայոց նորակերտ տառերը կան, Աստվածաշունչը համարյա թարգմանված է, և Մաշտոցը մտածում է՝ ինչպես պետք է գործել՝ միաժամանակ կրթալուսավորչական գործունեություն ծավալել թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում, թե՛ սկզբում մի՛ հատվածում, ապա մյուսում, չե՞ որ Արևելյան Հայաստանը գտնվում էր պարսից տիրապետության տակ, իսկ Արևմտյանը՝ հունաց, որոնք իրար հանդուրժել չէին կարողանում, որովհետև «Արևելյան Հայաստանն ուներ Արշակունի թագավորներ, բայց գտնվում էր պարսից գերիշխանության տակ: Պարսկաստանում իբրև քրիստոնեության պաշտոնական լեզու ընդունված էր ասորերենը: Արքայից արքաները, հռոմեական ազդեցությունը թուլացնելու նպատակով, Հայաստանում ուժ էին տալիս ասորերեն լեզվին և առաջ էին քաշում ասորի եկեղեցականներին: Նրանք հովանավորում էին Ասորական Եկեղեցուն: Արևելյան Հայաստանում Եկեղեցու լեզուն ասորերենն էր: Սելևկիայի ասորական կաթողիկոսը, արքայից արքայի թևարկությամբ, ձգտում էր գլուխ դառնալու ողջ արևելյան քրիստոնեության. նա իր տիրույթի մեջ մտցրել էր արդեն Հայաստանը, Վրաստանն ու Ադվանքը: Հայաստանի Մահակ կաթողիկոսը չէր կարող այս ամենի նկատմամբ անտարբեր մնալ: ... Արևմտյան Հայաստանում, որ հռոմեական կայսրության մի մասն էր դարձած, պաշտոնական լեզուն էր հունարենը: Հայ Եկեղեցու մեջ այնտեղ ընդունված էր հունարենը: Այդպիսով, Հայոց Եկեղեցին կորցնում էր իր միությունը և թուլանում էր: Այդ ձեռնտու չէր հայ բարձր հոգևորականությանը: Պետք էր ու-

²⁶ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 405:

րեմն մտածել նաև Արևմտյան Հայաստանի մասին, ուր հույները ձգտում էին պահել իրենց ազդեցությունը և Հայոց Եկեղեցին կախման մեջ դնելու Կապադովկիայի եպիսկոպոսությունից»²⁷:

Ուստի հակավոր էր մեկ կամ մյուս հատվածում գործը վերջնականապես կարգավորել, ապա անցնել մյուս կողմը, հակառակ դեպքում՝ երկու հատվածներում էլ ազգագոյատևման տեսակետից այդ շատ կարևոր գործը կարող էր ձախողվել (հավանաբար այդպես է մտածել Մաշտոցը): Պարսիկներին հարկավոր էր համոզել, որ հայ գրերով կրթվելով և եկեղեցական արարողությունները կատարելով՝ հայերը հիմնովին կհեռանան հունական ամեն մի ազդեցությունից և կկողմնորոշվեն դեպի Արևելք: Նույն կերպ նաև հույներին, որ սեփական գրերով ուսումնառություն անցնելով և Եկեղեցու գործերը վարելով՝ հայերը ամբողջովին կհեռանան պարսիկներից և կկողմնորոշվեն դեպի արևմուտք: Ուրեմն հարկավոր է միայն մեկ հատվածում այդ գործը սկսել և վերջացնել, նոր անցնել մյուսը: Պետք էր սկզբում գործել Արևելյան Հայաստանում, որովհետև Հայաստանի մեծ մասը ընկած էր այդ հատվածում: Եվ Մաշտոցը նոր գրերը այնպես է ստեղծագործում, որ հույներին կարողանա վերջում համոզել, որ այդ գրերով Պարսկահայաստանում դպրոցներ է բացել ու կրթություն տարածել ոչ թե հույներից հեռանալու նպատակով, այլ պարսիկներից, որ նորաստեղծ գրերի հիմքում իբր դրել է հունական այբուբենը և այդ արել է ծածուկ, որպեսզի պարսիկները գլխի չընկնեն: Եվ Մաշտոցը այդպես էլ վարվում է ու նրան հաջողվում է հասնել իր վերջնական նպատակին, այսինքն՝ իրենց՝ նախօրոք մշակած ծրագիրը ամբողջովին իրականացնել:

Մաշտոցը, Արևելյան Հայաստանում կրթալուսավորչական գործը ամբողջովին վերջացնելուց հետո, աշակերտների մեծ խմբով շարժվում է Արևմտյան Հայաստան, սակայն տեղի Անատոլիոս կուսակալը ասում է, որ Հունահայաստանում հայալեզու դպրոցներ բացելու և աշակերտներ կրթելու համար պետք է կայսրի թույլատրությունը: Եվ նա, Սահակ Հայրապետից համապատասխան գրություններ վերցնելով, Վարդան Մամիկոնյանի, Դերջանի Գինտ եպիսկոպոսի ու մի քանի աշակերտների հետ ուղևորվում է Կոստանդնուպոլիս²⁸:

Կոստանդնուպոլիս մեկնելով՝ Մաշտոցը այս անգամ ևս, ինչպես Վրաստանում և Աղվանքում, հանդես է գալիս որպես հմուտ դիվանագետ ու հաղթանակով է վերադառնում այնտեղից: Մի բան, որը նույնպես նրա գործի հաջողության գրավականներից է: Թեոդոս կայսրը, Մաշտոցին երկար պահելուց հետո, վերջապես ընդունում է: Երևում է, որ կայսրը այդ միջոցին բանակցություններ էր վարում Կեսարիայի մետրոպոլիտի և Անատոլիոս կուսակալի հետ, այսինքն՝ առիթից օգտվելով՝ մշակում էր այն պահանջները, որոնք դնելու էր նրա առաջ, և որոնք բավարարելու դեպքում՝ միայն ընդառաջելու էր նրան: Մաշտոցը, իհարկե, սպասում էր Թեոդոս կայսրից այսպիսի մոտեցում և պատրաստվել էր դրան: Կարելի է ենթադրել, որ կայսեր առաջին պահանջն այն էր, որ Ս. Գիրքը թարգմանվի հունարենից (կամ գոնե ուղղվի ըստ հունարենի), երկրորդ՝ որ հայ երիտասարդները բարձրագույն կրթություն ստանալու համար գնան ոչ թե Ասորիք, այլ Բյուզանդիա. այլ խոսքով՝ ասորական կողմնորոշման փոխարեն հայերն ընդունեն հունական կողմնորոշում և երրորդ՝ Հայաստանից հալածեն բոբբորիտների վտանգավոր աղանդը: Երեք պա-

²⁷ Տե՛ս Մ. Աբեղյանի առաջաբանը Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքում, Եր., 1981, էջ 47-48:

²⁸ **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 201:

հանջներն էլ ընդունվում են ու փոխարենը Մաշտոցը դնում է իր պահանջները, առաջին՝ թույլատրել, որ Հունաստանում բացվեն հայալեզու դպրոցներ, երկրորդ, որ դրանց ծախսերը հոգա բյուզանդական արքունիքը և երրորդ, որ եկեղեցիներում ծիսական արարողությունները կատարվեն հայերենով²⁹։ Նրա պահանջները նույնպես ընդունվում են, և նա հաղթանակած վերադառնում է Հայաստան։ Այստեղ երևում է, թե ինչ հզոր էր մեր՝ արդեն նշած, Մաշտոցի մեջ ձևավորված երկրորդ անհատը՝ *դիվանագետ Մեսրոպը*։

Այնտեղ՝ Բյուզանդիայի մայրաքաղաքում, նրան միաժամանակ շնորհվում են ակումիտ և եկկլեսիաստիկոս տիտղոսները՝ հունաց մեջ ընդունված եկեղեցական աստիճանները։ Այսօր չգիտեն՝ ինչ տիտղոսներ են դրանք հունաց մեջ եղել։ Ելնելով այդ բառերի իմաստներից՝ կարելի է եզրակացնել առաջինի համար «անքուն, այսինքն՝ անդադար աշխատող» տիտղոսը, երկրորդի՝ «քարոզիչ, ուսուցչապետ»³⁰։ Այս պահին է, որ Մաշտոցի մեջ ձևավորվում է ութերորդ և վերջին հզոր անհատը. այսպես *ուսուցանող (ուսուցիչ) Մեսրոպը* դառնում է նաև *ուսուցչապետ Մեսրոպ*։

Հունահայաստանում Մաշտոցի գործունեությունը ազգային առումով անչափ օգտավետ էր, քանզի դրանով Հայաստանից բաժանված գավառները գոնե լեզվով ու գրականությամբ նորից միացան մեկ ամբողջության մեջ³¹։ Աներկբայորեն կարելի է ասել, որ առանց այդ ուղևորության Մեծ Հայաստանի մյուս հատվածը՝ հունական մասը, անշուշտ կօտարանար հայությունից և կձուլվեր հույն ազգաբնակչության հետ՝ գրկված լինելով ազգային գրից ու գրականությունից, հայերեն ժամերգությունից և կկազմեր հունական մետրոպոլիտության մի թեմ՝ որպես հետևանք՝ ապագայում ընդունելով նաև քաղկեդոնի դավանությունը³²։

Մաշտոցի գործի հաջողության անչափ կարևոր կովաններից էր նաև նրա՝ Աստծո նկատմամբ ունեցած մեծ հավատքը և Աստծո խոսքի լավ իմացությունը, որով կարողանում էր յուր գործակիցների հետ ամեն ինչ ճիշտ կազմակերպել ու նպատակամղված առաջ ընթանալ։

Մաշտոցը կարողացավ այդպես հմուտ և ամբողջովին իրագործել իր ծրագիրը, որովհետև ներշնչված էր Քրիստոսի լույսով ու գործում էր Աստծո կամոք։ Նա իր հոգևոր ու մարմնական տանջալից ու չարչարանք լի կյանքով հասել էր այն բանին, որ գիտեր ու զգացել էր, թե ինչ է Քրիստոսի լույսը և հավանաբար իր ժողովրդի հետագա կյանքը նաև հավերժ գոյատևումը տեսնում էր միայն այդ լույսի մեջ։ Նա Աստծո Ընտրյալն էր և գործում էր հանուն այդ նպատակի, որովհետև այդպես էր կամենում Աստված։ Նա միշտ էլ ժամանակ առ ժամանակ իր աշակերտների հետ առանձնանում էր լեռների քարայրներից մեկում, տրվում էր ճգնակեցությանը, անընդհատ կարդում էր Ավետարանը՝ թափանցելով նրա ծովածավալ խորհուրդների մեջ և հայացքը երկնալուսական հեռուներին՝ բարեգարդում էր իր հոգին՝ սաղմոսներ ու հոգևոր երգեր երգելով³³։ Մաշտոցի հոգու նման կատարելագործու-

²⁹ Տե՛ս Ստ. Մալխասյանի 322 Ծանոթագրությունը՝ Մ. Խորենացու «Հայոց պատմություն» գրքում, Եր., 1981, էջ 524-525։

³⁰ **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 190-213։

³¹ Նույն տեղում, էջ 213։

³² Տե՛ս Ստ. Մալխասյանի 322 Ծանոթագրությունը՝ Մ. Խորենացու «Հայոց պատմություն» գրքում, Եր., 1981, էջ 524-525։

³³ **Կորյուն**, նշվ. աշխ., էջ 128-131։

մը և այդօրինակ գործելակերպը նկատի ունի նրանից յոթ դար հետո ապրած Կարապետ Մասնեցի պատմիչը, որ այնպես ներշնչված ու վայելչագեղ լեզվով է խոսում նրա մասին՝ ինչպես նկատում է Հր. Աճառյանը. «Մարգեց մարմինը չարչարանոք, պարապեց միշտ Ս. Գրքի ընթերցանությամբ, սանձեց լեզուն և կողպեց շրթունքները, որ ունայն խոսքեր չբարբառեն: Բերանը քնար էր դարձնում, ատամները՝ լար, շրթունքը՝ մատներ, լեզուն՝ կետնտոց և հոգին Աստծո հոգուն խառնելով՝ իբրև երաժիշտ՝ հոգևոր երգեր էր քաղցրաձայն երգում՝ ի փառս Սուրբ Երրորդության»³⁴:

Մաշտոցի գործի հաջողության գրավականներից էր պատմական նպաստավոր ժամանակաշրջանը, որովհետև Վռամշապուհի թագավորության տարիներին երկիրը խաղաղված էր և ներքին խռովությունների և պատերազմների դաշտ չէր ներկայացնում: Այս ամենը, բնականաբար, պայմանավորված էր Պարսկաստանում դեպքերի բարեհաջող զարգացմամբ: Շապուհ Բ-ի մահվանից հետո՝ 379 թվից, Մասանյանների քաղաքականությունը այլ կերպարանք է ստանում, որովհետև գահ բարձրացած թագավորները այլևս չէին կամենում մոզերի ու ազնվականների թելադրանքով շարժվել: Մա նշանակում էր, որ մեջտեղից զգալի վերացել էր կրոնամոլ անհաշտ վերաբերմունքը պետական շատ հարցերի նկատմամբ, մանավանդ քրիստոնյաների հանդեպ: Վռամշապուհի ժամանակ Պարսկաստանում թագավորում էր Հազկերտ I, որ «մեղավոր» կոչումն էր ստացել: Նա մեղավոր էր այնքանով, որ քրիստոնյաներին չէր հալածում և չէր պատերազմում հույների դեմ: Ընդհակառակը, նա հալածում էր մոզերին և ազնվականներին, երբ վերջիններս փորձում էին կարգադրել, թելադրել իրենց կամքը: Ահա պարսիկ այս թագավորի ժամանակ էր, որ խաղաղ էր Հայոց աշխարհը ու պահն էր նպաստավոր մեծագործությունների համար³⁵: Եվ Մաշտոցի համար նպաստավոր էին պատմական ու քաղաքական հանգամանքները:

Իր հերթին Բյուզանդիայի Արկադիոս կայսրը (395-408) Պարսկաստանի հանդեպ վարում էր խաղաղասիրական քաղաքականություն: Անգամ իր կտակում կայսրը խնդրում էր պարսից Հազկերտ Ա (399-420) թագավորին լինել պաշտպան, հովանավոր և դաստիարակ իր փոքրահասակ Թեոդոսիոս որդուն: Պարսկաբյուզանդական հարաբերությունների նման ընթացքը Պարսկաստանում առաջացնում էր մեղմ վերաբերմունք քրիստոնյաների հանդեպ: Եղիշեն անգամ գրում է. «աստվածապաշտությունը բաց ճակատով ու ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում արքայից արքա Շապուհի (Գ) թագավորության սկզբից (այսինքն՝ 383 թվից) մինչև Վռամի որդի արքայից արքա Հազկերտի (439-457) երկրորդ տարին»³⁶:

Վերջապես, Մաշտոցի գործը հաջողությամբ պսակվեց նաև այն պատճառով, որ նա, լինելով հեռատես մարդ, ընտրել, կրթել և դաստիարակել էր այնպիսի աշակերտներ, որոնք իր պես անմնացորդ նվիրված էին իրենց երկրին ու ժողովրդին: Ժամանակակից հետազոտողները Սահակ Հայրապետի և Մաշտոցի աշակերտներին բաժանում են երկու խմբի, որոնց անվանում են թարգմանիչներ. 1) առաջին

³⁴ Կարապետ Մասնեցի, Յաղագս Վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոբայ, Վաղարշապատ, 1897, էջ 34:

³⁵ Լեւոն, նշվ. աշխ., էջ 161-162:

³⁶ Եղիշեն, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Եր., 1989, էջ 13:

կամ երեց թարգմանիչներ և 2) երկրորդ կամ կրտսեր թարգմանիչներ³⁷: Առաջինները նրանք էին, որ գրերի գյուտի ժամանակ արդեն հասուն էին և ունեին զգալի գիտելիքներ և իրենց վարպետներին թարգմանությունների ժամանակ օգնում ու գործակից էին լինում: Կրտսերները արդեն առաջին թարգմանիչների աշակերտներն էին, որոնք, նրանց մոտ կրթվելուց հետո, ուղարկվում էին զանազան քաղաքներ՝ կատարելագործվելու³⁸: Առաջին աշակերտները մոտ 60 հոգի էին: Ցավոք, պատմությունը պահպանել է նրանցից միայն կեսի անունները: Հիշենք նրանցից մի քանիսին միայն՝ Հովսեփ Վայոցձորցի, Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Եզնիկ Կողբացի, Աբրահամ Խոստովանող, Տիրայր Խորձենացի, Մուշեղ Տարոնացի, Ղևոնդ Երեց, Կորյուն և ուրիշներ: Իսկ երկրորդ թարգմանիչները տասներկուսն են՝ Դավիթ Անհաղթ, Գյուտ կաթողիկոս, Հովհան Մանդակունի, Եղիշե, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի և այլն³⁹: Այս աշակերտներն էին, որոնց վրա հենվելով՝ Մաշտոցն ու Սահակ Պարթև Հայրապետը կարողացան իրենց փառապանծ գործը առաջ տանել և հաղթանակի պսակով ավարտել: Այս աշակերտներն էին, որ Ավարայրի ճակատամարտի ժամանակ ողջ ժողովրդին ոտքի կանգնեցրին և փրկեցին Հայոց քրիստոնեությունը պարսից իր դարն ապրած զրադաշտականությունից (մագդեզականությունից):

Երանելի Մեսրոպը Հունահայաստանում գտնված ժամանակ կազմել էր հույն եկեղեցական հայրերի գրվածքների մի ժողովածու, որը, հավանաբար, այդ գրվածքներից լավագույնն էր և Սահակ Պարթև հայրապետի հետ հայերենի է վերածում: Նրանց գործակից են լինում յուրյանց չափահաս աշակերտներից հատկապես Հովսեփը և Հովհանը, որոնք Մաշտոցին Միջագետքում եղած ժամանակ օգնում էին «Առակաց» գիրքը հայերենի թարգմանելու գործում: Իսկ մնացած աշակերտների աջակցությունը այդքան էլ մեծ չէր, որովհետև նրանց մասին մասնակիորեն, առանձին չի հիշատակված⁴⁰:

Մաշտոցը, որևէ վայր ուսուցչության ու քարոզչության գնալիս, իր հետ վերցնում էր աշակերտների որոշակի խումբ ու վերջում նրանցից ոմանց տեղի դպրոցներում ու եկեղեցիներում գլխավոր կամ վերակացու էր թողնում: Այսպես, Հունահայաստանում դպրոցների ու եկեղեցիների վերակացու նշանակեց Ենովքին ու Դանանին, Աղվանքում՝ Հովնաթանին, Սյունիքում՝ Անանիային, Վրաստանում՝ Տիրայր Խորձենացուն և Մուշեղ Տարոնացուն: Նրա աշակերտներից շատերը հետագայում դարձան բարձրաստիճան հոգևորականներ. Հովսեփ Վայոցձորցին և Հովհան Եկեղեցացին դարձան կաթողիկոսական տեղապահներ, Եզնիկ Կողբացին՝ Բագրևանդի եպիսկոպոս, Տիրայր Խորձենացին՝ Կայենական, Անանիան՝ Սյունյաց, Կորյունը՝ Վրաստանի:

Միավրված չենք լինի, եթե ասենք, որ ինչպես այն դարերում, այնպես էլ մեր օրերում և ընդմիջտ հայերենով կրթություն ստացող յուրաքանչյուր մարդու հոգում գիտակցված կամ ենթագիտակցված իր ուսուցչի կողքին որպես անտեսանելի ոգի հայտնվում է նաև Մաշտոցը՝ փաստ, որը հենց սկզբից իրավացիորեն կանխատեսել էր նրա աշակերտը և վարքագիրը՝ Կորյունը. «Եվ այս պատմեցինք ոչ ի պատիվ

³⁷ **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 265-269:

³⁸ Նույն տեղում, էջ 267:

³⁹ Նույն տեղում, էջ 267-268:

⁴⁰ Նույն տեղում, էջ 245:

Աստծո սրբերին, որոնք ամենապայծառ հավատով ու վարքով ճանաչված հարգվեցին, այլև որպես քաջալերիչ օրինակ իրենց հոգևոր զավակներին և բոլորին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդեսերունդ»⁴¹:

Այսպիսով, վերոհիշյալ գրավականների շնորհիվ Մաշտոցը կարողանում է տառեր գտնել հայերենի, վրացերենի և աղվանների համար ու նպաստում, որ Աստվածաշունչը թարգմանվի հայերեն, վրացերեն և աղվաներեն ու մի ամբողջ կյանք տքնելով և չարչարվելով՝ ամենուրեք Հիսուսի ու գիտության լույսն է տարածում և դառնում համայն Հայաստանի և Այսրկովկասի երկնածիրում շողշողաշող մի Աստղ, որ դեպի իրեն է ձգում և՛ կանչում, և՛ ուղղորդում ուրիշ շողարձակ ու շողշողարձակ աստղերի...:

⁴¹ Կորյուն, նշվ. աշխ., էջ 147:

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԿԵՎՈՒԱՅԻՆ ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻ
«ՃԱՇՈՑԻ» ՀՈՐԻՆԻՉ ԵՎ ՊՃՆԱԶԱՐԴՈՂ

Կեռան* թագուհին 1272 թ. Ավետիս գրչին պատվիրում է Ավետարան գրել: Ավետիսը գրելն ավարտում է, իսկ նկարագարդելը հանձնարարում է մեկ ուրիշին. «Եւ իմ յանկ հանեալ զսա, ետ ի ձեռն այլում հմուտ և յարգի յարհեստ գրչութեան՝ զարդարել զսա խորանայք և ծաղկավէտ վայելչութեամբ և ոսկիատիպ պայծառութեամբ, եւ ետ ի վանս, որ կոչի Ակներ»⁵²:

Գրիչը թագուհու առաջնեկ Հեթումին ցանկանում է «Ժառանգել զթագն հայրենի և կեցեալ ըստ արինացն Աստուծոյ, վարժեալ գրովք աստուածայնովք և զինուք սպառազինաւք՝ յաղթող լինել ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի»⁵³:

1272 թ. Ստեփանոս քահանան Խազգիրք է ընդօրինակում ուխտի առաջնորդ Սիմեոն վարդապետի աշակերտի համար, իսկ մի տարի անց՝ Տեր Սիմեոնի համար Ավետարան է ընդօրինակում, որի նկարիչը Հովասափն է⁵⁴: Այնուհետև «Ի թուիս Հայ[ոց] ՉԻԴ (1275)... գրեցաւ երաժշտական տետրս Մանրուսման, ձեռամբ բազմամեղ քահանայի Ստեփանոսի ի հռչակաւոր անապատս Սկևռայ, որ է մերձ դղեակս Լամբրոնի եւ ի ստորոտ լերինս Տաւրոսի...»⁵⁵:

1283 թվականին Սկևռայի վանքը իր շրջակայքով դառնում է Հեթում արքայորդու սեփականությունը և Սկևռայի ուխտի միաբաններից նա ստանում է Ճաշոցը:

Հեթումը՝ Լևոն Գ թագավորի անդրանիկ որդին, ծնվել է 1265 թվականին: Մայրը՝ Լամբրոնի տեր Հեթումի դուստր Կիր Աննան կամ Կեռանը, ամուսնանալիս որպես օժիտ Լամբրոնը դնում է թագավորի իշխանության ներքո, իսկ Անդրանիկ որդին ծնվելիս նրան է նվիրում Լամբրոնի իշխանությունը՝ ասպետության աստիճան ստանալու հետ միասին 1283 թվականին⁵⁶:

Հեթումի դաստիարակությունը վստահվում է Վահրամ Բաբունի գիտնականին: Վերջինս միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչներից է, որը, սակայն, քաղկեդոնական էր: Նա «Ուներ զաղանդ քաղկեդոնական, բայց երկնչեր խաւսել յայտ յանդիման, զի թագաւորն իշխանաւք և այլ գիտնականաւք ուղղափառք էին, սակայն ապականեալ դեղեաց զՀեթում՝ տէր Լամբրոնին»⁵⁷: Քաղկեդոնականությունը բացահայտ չքարոզող Վահրամ Բաբունին ծածուկ

⁵² ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 416:

⁵³ Անդ, էջ 416:

⁵⁴ Նույն տեղում, էջ 433-435:

⁵⁵ Նույն տեղում, էջ 456:

⁵⁶ Ղ. Ալիշանը այդ առթիվ գրում է. «Բան մի Մաղաթեայ դարի Տարեգրի տայ կարծել, եթէ յառնուլ Լեւոնի ի կին զԿիր Աննա՝ դուստր տեառն Լամբրոնի, ընկալեալ իցէ՝ զբերդն զայն ի պաշտատական. քանզի ասէ, յետ յիշելոյ զմահ Կոստանդնի Արքայափոր (1263). «Եւ ի նոյն ժամու խառնեցաւ Լամբրոն ընդ թագաւորին Հայոց»: Սակաւուք յառաջ եղեալ գուշակի ամուսնութիւն Լեւոնի, քանզի ի նմին յիշեալ տարուց նշանակի ծնունդ անդրանիկան նորին»: Ղ. Ալիշան, Միսուան, էջ 532:

⁵⁷ Է. Բաղդասարյան, Գևորգ Սկևռացու վարքը, «Բանբեր մատենադարանի», N 7, Երևան, 1964, էջ 421:

կերպով այն ներարկում է պատանի արքայորդուն: Նա հարում է լատինականությամբ և ընդգրկվում Կիլիկիայում տարածված ֆրանցիսկյան միաբանության մեջ՝ եղբայր Հովհաննես անունով:

«Լատինական հիշյալ կրոնավորության հետևողները ընտանեկան բնակությունը թողնելով, պետք է ենթարկվեին վանական կենցաղին: Հեթում արքայորդին չամուսնացավ ողջ կյանքում և մինչև թագավորական գահ բարձրանալը վանական կենցաղով ապրում է իր տերության հոգևոր նշանավոր կենտրոն Սկևռայում, իսկ այնուհետև՝ հավանաբար Հռոմի պապի որոշակի արտոնությամբ»⁵⁸:

Ուսումնառության տարիներին երիտասարդ Հեթումը հիմնավոր կրթություն է ստանում: Տարիներ անց, 1293 թ., իր «Քերականությունը» նրան նվիրող Հովհաննես Երզնկացիին Հեթումի մասին գրում է. «Վարժ (էր) աստուածային գրոց սրբոց, և պատուող ուսումնականաց և գիտութեան հմտականաց... յոյժ գրասէր և ուսումնասէր, ունէր բարս բարեմիտ թագաւորն և ոչ դադարէր ի գիրս ստանալոյ և յեկեղեցոյ գանձս յաւելլումն առնելոյ»⁵⁹:

1283 թվականին, տասնութամյա Հեթումին տրվում է ասպետության աստիճան, և Լամբրոնի բերդի և շրջակայքի իշխանությունը ստանալու առթիվ մայրը՝ Կեռան թագուհին, մի ձեռագիր Ավետարան է գրել տալիս իշխանության գլխավոր վանք Սկևռայում, որը նաև իր հորենական՝ Օշինյան տոհմի դամբարանն էր և «մեծափառ թագուհին Հայոց Կեռան դուստր իշխանաց իշխան Հեթում Սեբաստոսի... ի մեծանուն սուրբ ուխտս Սկևռայ... մերձ յանմատոյց դղեակն Լամբրոն, որ է ի գլուխ Տարսնի և ի ստորոտ մեծի լերինս Տարսոսի, յորում ամի բարենշան և բարեպաշտ անդրանիկ որդին արքայիս մերոյ պարոն Հեթում զձիաւորութեան աշտիճան ընկալաւ եւ այժմ տիրէ աստուածապահ դղեկիս եւ այլ շուրջակայ գաւառացս...»⁶⁰:

Հեթումին ասպետության աստիճան շնորհելու տեսարանը պատկերված է Հովհաննես Արքաեղբոր ավետարանում, որը, ինչպես կտեսնենք, Գևորգ Սկևռացու գործն է: Ավետարանի ներդիր նկարներից վերջինը տերունական նկար չէ, այլ ձեռնադրության տեսարան⁶¹: Եպիսկոպոսը ձեռնադրում է երկու պատանիների. փոքրը՝ ծնկաչոք է, որի գլխի վերևում եպիսկոպոսը մի ձեռքով գիրքն է բռնել, մյուսով օրհնում է: Պատանին հագին կանաչ, ոսկեհուռ զգեստ ունի: Մյուսը՝ կանգնած է՝ նույնպիսի զգեստով, միայն կարմիր, ձեռքերում մի երկարավուն մոմ: Ներկա են երեք վարդապետ, մի աշխարհական և հեռվում մի պատանի ևս՝ ձեռնադրության սպասող: Ձեռնադրվողների մագերը բոլորաձև կտրված է կաթոլիկների նման՝ կատարից: Հավանաբար ձեռնադրող եպիսկոպոսը Հովհաննես Արքաեղբայրն է, իսկ ձեռնադրվողները ձիավարության աստիճան ստացող իր եղբոր՝ Հեթում առաջին թագավորի թոռներն են, Լևոն թագավորի որդիներ Հեթումը և Թորոսը:

1283 թվականին Սիս մայրաքաղաքում «արհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում և Թորոս և այլ մանգունք իշխանաց և որք յարքունական սպասաւորաց», - գրում է Հովհաննես Երզնկացի վարդապետը, որը արքունական այդ հանդեսի ա-

⁵⁸ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բեյրութ, 1960, էջ 1709:

⁵⁹ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 549:

⁶⁰ Մատենադարան, ձեռգ. հմր. 6764, էջ 263ա-263բ:

⁶¹ «Ուրախ եղեալ ցնծամք... մանաւանդ ընդ որդոյ արքայից նախածին և անդրանիկ զօրաւոր գաւակի, որ այսօր իշխանական փառք յարքաւ և ի հօրէ ճոխացեալ պատանի, ի թագաւորական գաւազանէ աճեցեալ շառաւիղ ծաղկի, հանդերձ միւս ևս գեղեցիկ բուսակցաւ, բարեբողբոջ պատանեկաւ և եղբայր:

տենախոսն էր. «Հրամայեցաւ ի վեհիցս սպասաւորել ի հոգեւոր այսմ սեղանոյ խրախճանութեան»⁶²: Այս նույն ոգին է իշխում Ճաշոցի հիշատակարանում՝ գրված Գևորգ Սկևռացու ձեռքով, որը ևս վկայում է, որ Ճաշոցի գրությունը սկսվել է 1283 թ. Հեթումի ձիավորության աստիճան ստանալու առթիվ, և Գևորգ Սկևռացին այնտեղ ներկա է գտնվել:

Հեթումը կաթոլիկ հոգևորականի հանդերձով է, որովհետև պատկանում էր Ֆրանցիսկյան միաբանությանը: Հեթումը ամբողջ կյանքում էլ մնաց հոգևորական և աշխարհական. «կրոնավորի սքեմով արքունիք կնատեր, և կրոնավորական գոտիեն պատերազմողի սուրը կկախեր»⁶³: Կիլիկիայում ընդունեցին ասպետության եվրոպական ձևը, իսկ Արևմուտքում ասպետությունը եկեղեցական արարողությամբ էին տալիս: Վ. Հացունին այդ առթիվ գրում է. «Հին հայ ասպետության, որ կը վերջանա իրապես մեր Արշակունյաց և անվանապես Մասանյան շրջանին հետ, Կիլիկիո մեջ կերևի եվրոպական ձևը, **ձիավորությունը** որ շատ պատվավոր աստիճան էր: Ի սկզբանե լոկ զինվորական նկարագրով, հետո միջին դարուն զգեցավ կրոնական հանգամանք մ'ալ ուխտյալ զինվորություն մը, նպատակ ունենալով հայրենյաց, կրոնից և տկարաց պաշտպանությունը: Ասոր համար արևմտյաք եկեղեցական արարողությամբ կու տային զայն, որո նման կարգ մը չեմ գտած Կիլիկյան մաշտոցաց մեջ: Ռուբինյանց թագավորելեն առաջ՝ Անտիոքա իշխանեն կընդունեին Հայք այդ աստիճանը և հետո մեր թագավորք սկսան տալ, կապելով զայն նշանավոր առիթից հետ»⁶⁴:

Եվ ահա Լևոն Բ իր որդիներին, ինչպես և այլ իշխանորդիներին, ասպետության աստիճան է տալիս 1283 թ. Աստվածհայտնության տոնին՝ հունվարի 6-ին: Իսկ ձեռնադրող եպիսկոպոսի՝ Հովհաննես Արքաեղբայրը լինելը ապացուցվում է այս նկարի և՛ Մատենադարանի⁶⁵ և՛ Վենետիկի ձեռագրերում⁶⁶ պահպանված նրա նկարների նմանությամբ:

Կտենենք, որ Մատենադարանի N 179 ձեռագրի ներդիրները (16) կատարել է Գևորգ Սկևռացին՝ Սկևռայում, 1287 թվականին:

Հեթում արքայորդու մասին առայժմ այսքանը: Ավելացնենք միայն, որ 1286 թ. նա ստանում է Ճաշոցը:

Ինչպես վերը նշեցինք, հիշատակարանից առաջ բերված հատվածի վերջին պարբերությունը ցույց է տալիս, որ Ճաշոցը պատրաստողը Հեթում արքայորդու Լամբրոնյան իշխանության սահմաններում, նրա իշխանության ներքո, ապրող մարդիկ են. «Զայս խրախճութիւնն հոգևոր և անմահական փարթամութիւնս ստացաւ նախայիշատակեալ բարեսէր **պարոնս մեր Հեթում**»: Ուրեմն Ճաշոցի ստացող Հեթումը այն պատրաստողների պարոնն է, իշխանը, տերը: Նշանակում է՝ Ճաշոցն ստեղծվել է Հեթումի տիրությունների սահմաններում, և ոչ այլուր, Լամբրոնյան իշխանների մշակութային գլխավոր կենտրոնում՝ Սկևռայի վանքում: Այժմ ծանոթանանք Սկևռայի վանքում Ճաշոցն ստեղծող միաբաններին:

ԳՐԻԶԸ. Սկևռայի նշանավոր գրիչներից է Ստեփանոս քահանան: Առաջին ան-

⁶² Մատենադարան, ձեռգ. հմր. 2173, էջ 86ա-88բ:

⁶³ Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1809:

⁶⁴ Վ. Հացունի, Պատմութիւն ինն հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 26:

⁶⁵ Մատենադարան, ձեռգ. հմր. 4243, էջ 15ա, 1263-1266 թթ. ձեռագրից:

⁶⁶ Վ. Հացունի, նշված աշխ., էջ 257, նկար 1263 թ. ձեռագրից:

գամ նրան հանդիպում ենք 1263 թվականին, երբ «ի մեծ ժողովարանս Սկևռայի», որի առաջնորդն էր Մխիթար եպիսկոպոսը, Հայրապետ քահանայի համար ընդօրինակում է մի Ավետարան: Այդ ժամանակ գրչի սնուցիչը և խնամարկուն, այսինքն՝ կրթողը և պահողը, իր ծերացյալ հորեղբայր Թորոսն էր, ձեռագրի ոսկողը՝ Օգսենտը⁶⁷:

1272 թվին Ստեփանոս քահանան Մանրուսմունք է ընդօրինակում Գրիգոր քահանայի համար ի հիշատակ «սնուցչին իւրոյ հոգևոր տեառն և վարժապետի տէր Միմեռնի առաջնորդի սրբոյ ուխտինս Սկևռայի»⁶⁸: Ուրեմն, Միմեռն վարժապետը Սկևռայի ուսուցիչներից էր, որ հասել էր առաջնորդի աստիճանի:

Հովհաննես քահանան, որդեգրելով Կոստանդին անունով մի մանկան, նրան հասցնում է քահանայության աստիճանի, ապա բերում Սկևռա՝ կրթությունը շարունակելու: Նրա համար 1275 թ. պատվիրում է «Երաժշտական տետր»՝ Մանրուսում, որը դարձյալ գրվում է «ձեռամբ բազմամեղ քահանայի Ստեփանոսի, ի հոչակաւոր անապատս Սկևռայ: Թորոս քահանան այստեղ հիշվում է արդեն որպէս ստացողի խնամարկու⁶⁹:

1278 թ. Ստեփանոս քահանան Սկևռայում դարձյալ Մանրուսում է ընդօրինակում Ստեփանոս քահանայի համար, ուր հիշվում են նրա Կոստանդին, նորընծա քահանա Կիրակոս և Հովսեփ սարկավագ եղբայրները և «զխնամաւղ եւ զսնուցիչ սոցա զպատկառելի քահանայն եւ զպատուելի ծերունին Դաւիթ»: Նույն Մանրուսումի պատճեն է նաև Մատենադարանի հմր. 630 ձեռագիրը, որը թեև հիշատակարան չունի, բայց գրչության նմանությունը, չափերը և կառուցվածքային նույնությունը թույլ են տալիս այն համարել Ստեփանոս քահանայի ձեռքով Սկևռայում գրված ձեռագիր⁷⁰:

Ստեփանոս քահանայի կատարած ընդօրինակությունը Կեռան թագուհու պատվիրած Ավետարանն էր Հեթում արքայորդու՝ 1283 թ. ասպետության աստիճան և Լամբրոնի իշխանությունն ստանալու առթիվ: Այստեղ առաջին անգամ Հեթում արքայորդին հիշվում է Լամբրոնի տեր: Գրիչն հասնում է արքունական պատվերներ կատարելու մակարդակի, իսկ Սկևռայում մինչ այդ Ստեփանոս Իրիցորդին էր կատարել նույնպիսի պատվեր: Սկևռայի գրչության դպրոցը ոչ միայն իշխանական, այլև արքունական ուշադրության էր արժանանում⁷¹:

Ստեփանոս քահանան հաջորդ ձեռագրերում գրության ժամանակը նշելիս, թագավորի հետ հիշատակում է նաև Լամբրոնի նոր տիրոջ անունը, որն նստում էր Լամբրոնի ամրոցում. «Ի ժամանակս աստուածապաշտ արքայի Լեւոնի որդւոյ Հեթմոյ, և ի նորուն աստուածասէր անդրանիկի Հեթմոյ տէրութեան աստուածապահ

⁶⁷ Մատենադարան, ձեռգ. հմր. 8590:

⁶⁸ Ն. Պողաբյան, Ցուցակ Երուսաղեմի, հտ. Ե, 1971, էջ 485: Տե՛ս և ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 420:

⁶⁹ Ա. Սյուրմեյան, Ցուցակ Հալեպի... հտ. Ա, էջ 243:

⁷⁰ Մատենադարանապետ Ս. Ամատունին, սույն ձեռագիրը համեմատելով Մատենադարանի N 759 ձեռագրի հետ, գրում է. «Ժամամուտներից այսչափ էլ պակասում է N 680 (այժմ 759) Մանրուսման-Խազգրքի մեջ: Գիրքը գրված է ՉԻԷ (1278) հայոց թվին և որովհետև սույն Խազգիրքը (630) թվական չունի, և գրությամբ, մանավանդ ժամամուտների դասավորությամբ և այլ երգերի խորագրերի միօրինակությամբ բոլորովին նման է հիշյալ Խազգրքին, ուստի հավանական է, որ նույն թվականին գրված լինի:

1895, 28 ապրիլի Ս. Էջմիածին (Մատենադարան, ձեռ. N 630, Ա. պահպանակից առաջ):

⁷¹ Մատենադարան, ձեռգ. հմր. 6764:

բերդիս Լամբրոնի, և ի կաթողիկոսութեան աստուածահաճո կրկին ծերութեամբ պատուեալ Տեառն Յակոբայ, ի ՉԼԴ (1285) թուականիս Հայոց գրեցաւ տառս յաստուածապահ սրբաբանս մեծի ուխտիս Սկևռայի»⁷²:

Ստացող Խաչատուր պատանին ձեռագիրն ստանում է ռաբունապետի հանձնարարությամբ, «...թելադրութեամբ Գեորգեայ վարդապետի, առ որում կայր ի վարժս կրթութեան Բանի և գրոց, ուսումնասէր դպիրն Խաչատուր ինքնագիր երկաւք ստացաւ զգիրս Ծննդոցն, զԴատաւորացն և զԹագաւորութեանցն, և վասն ոչ բերելոյ տկար մարմնոյն զերկս գրութեանն, աւժանդակեաց սնուցիչ նորին եւ քեռի աստուածապաշտ քահանայն Աստուածատուրն եւ սակս աղքատութեան կարծեաց, նախ զՆոր Կտակարանս ետ գրել իբրեւ զյոյժ հարկաւորս»:

Ահա այս Նոր Կտակարանը, գրում է Ստեփանոս քահանան. «Ստացան զայս աստուածախաւս մատենան Նորոյ կտակարանաց ի ձեռն իմոյ նուաստութեանս Ստեփաննոսի ամենամեղ և անպիտան գրչի... ի ՉԼԴ (1285) թուականիս հայոց... յաստուածապահ սրբաբանս մեծի ուխտիս Սկևռայի...» և հիշատակարանն ավարտում է այսպէս. «Արդ մաղթենք բոլորիցն Աստուծոյ զստացաւորք գրոցս՝ հանդերձ տրուպ գրչաւս եւ մերովքն համայնիւք, եւս եւ զպատուական քահանայն Ստեփանոս Գոյներերիցանց, և զծնաւոս նորին՝ գտանել ողորմութիւն ի Տեառնէ, որ աւգնական եղև ի նիւթ գրոյս»⁷³:

Այսպիսով 1285 թվականին Սկևռայում էին գտնվում Գեորգ ռաբունապետ Սկևռացին (որի դպրոցում սովորում էր պատանի Խաչատուրը), Ստեփանոս քահանան (որը Նոր Կտակարան է ընդօրինակում Խաչատուրի համար) և Ստեփանոս Գոյներերիցանցը (որը գրելու թուղթ է տալիս գրչին):

Թե՛ Գեորգ ռաբունապետը և թե՛ երկու Ստեփանոսներն ու Խաչատուրը 1288 թվականին դարձյալ Սկևռայում էին: Սույն Աստվածաշնչի հիշատակարանում Ստեփանոս Գոյներերիցանցը շարունակելով գրում է. «Եւ դարձեալ յԱստուած խրախուսեալք իմով ձեռամբ Ստեփաննոսի Գոյներիցանց փցուն գրչի ստացան զաստուածային գիրս սրբոց մարգարէից եւ զսրբագրաց ոմանց, յեւթն հարիւր երեսուն եւ եւթն (1288) թուականիս, ի մխիթարութիւն ինքեանց հոգւով...»⁷⁴:

«Մեկնութիւն Յոհաննոս Աւետարանին Յովհաննէսի Ոսկեբերանի» ձեռագիր հիշատակարաններից մեկում գրիչը խնդում է հիշել աշխատողներին. «...նախ՝ զՍրբազանն Կիրակոս վարդապետն, որ...յասորոց գրոյ և ի լեզուէ, և ի յունականէն քերթողական արհեստիւ թարգմանեալ ի հայ բարբառ և ի գիր... գրիչ Ստեփաննոսին... և ամենայն եղբարց սուրբ ուխտին Սկևռայի... 1281 թ.»:

Սկևռայի դպրոցի և գրիչների համբավը տարածվում է ամենուր: Թորոսը Կոստանդնուպոլսից ուսումնառության նպատակով գալիս է Կիլիկիա և ապաստանում Սկևռայում: 1290 թվականին նրա համար ընդօրինակվում է մի Ավետարան, «ի հայրապետութեան առաջին ամին Տեառն Ստեփաննոսի և յիշխանութեան թագաժառանգ ծիրանաձին պարոնին՝ Հեթմոյ, որդւոյ Լեւոնի արքայի, ի սուրբ և ի գերահռչակ ուխտս Սկևռա... ձեռամբ ամենամեղ քահանայի Ստեփաննոսի»⁷⁵:

⁷² ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 617-618: «Լոյս», Կ. Պոլիս, 1906, էջ 1219-1220:

⁷³ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 617-618: «Լոյս», 1906 թ., էջ 1219-1220: Հիշվում է նաև «կին ոմն ի նիւթ սորա աւգնական եղև, յիշեսցիք եւ գնա ընդ վերագրեալքն եւ Աստուած ձեզ յիշէ»:

⁷⁴ ԺԳ դարի հիշատակարաններ, Երևանի Մատենադարան, ձեռգ. հմր. 3816, էջ 618:

⁷⁵ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 659: Մատենադարան, ձեռ. հմր. 2630, էջ 302ա-302բ է

Նույն թվականին Ստեփանոսը ևս մի ավետարան է ընդօրինակում Ստեփանոս Սենեֆցու համար⁷⁶:

Կիլիկիայի Արքակաղնու ուխտի միաբանները «առեալ զնիւթ պատրաստեալ եղբարէն իւրեանց եկին ի հռչակաւոր ուխտն Սկևռայ, զի ի ձեռն գրչացն որ անդ, կատարեսցեն զփափագն իւրեանց գրութեամբ Սուրբ Աւետարանի»: Ստեփանոսը 1293 թ. ավարտում է Ավետարանը «ըստ տկար չափոյ ծերութեանս զառանցեալ տիոց և պակասեալ ի պատշաճ պիտոյից այսր արուեստի»⁷⁷: Այստեղ հիշվում է նկարիչ Սիոնը, իր նկարների տակ. «զյետին գծող ցանկիս և զնկարող սուրբ աւետարանչացն զՍիոն նրաստ քահանա»⁷⁸:

1295 թվականին մահանում է Ստեփանոսի Կոստանդին եղբայրը, որի երեք զավակների համար Ստեփանոսը ընդօրինակում էր մի Ավետարան. «...Աղաչեմ... յիշեսցիք ի Քրիստոս զտառապեալ եւ զմեղաւոր գծաւղս, եւս եւ զեղբար որդիսս իմ զՅովաննէս քահանայ եւ զԼևոն սարկաւագ եւ զՅուսէփ պատանի, վասն զի ի խնդրոյ սոցին, ի պակասեալ ամաց եւ ի զառանցեալ տիոց, եւ ի ծերութեան հասակի շնորհաւք բարեբարին Աստուծոյ աւարտեցի զսա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ի վայելումն յառաջասացեալ արեան մերձաւորացս»: Աղաչում է հիշել նաև իր հարազատ եղբայր Կոստանդինին, «որ ի սոյն ամի վախճանեցաւ» և մեղքերի թողություն է խնդրում նրան «եւ ստընդեայ մանկանց նորին»⁷⁹:

Այս մանուկներն արդեն գրիչներ և ծաղկողներ էին, որոնք աճել էին հորեղբոր հովանու ներքո: Այդ նույն թվականին Լևոնը Երեմիայի համար ընդօրինակում էր վերջինիս ուսուցիչ Գևորգ Սկևռացու «Երեմիայի մարգարեությունը», համառոտաձև Հեթում թագավորի խնդրանքով: Թագավորի մոտ էր գտնվում Սկևռացու ինքնագիրը, որը «գրեալ ձեռամբ իւրով ետ նմա» վկայում է Երեմիան և շարունակում. «Ես զայս տեսեալ վերջինս ի բնաւիցս փցնամիտ աշակերտս սորին Գևորգայ... Երեմիայ յորջորջեալ, հետիոտն աշխատեալ երկու անգամ առ թագաւորն իմ երթեալ. խնդրեցի զարարեալ արինակն, եւ վասն սիրոյ ետու գրել զսա Լևոնի լաւ եւ արհեստի գրչի...»: Իսկ Լևոնը խնդրում է հիշել իրեն, հորը՝ Կոստանդինին, «որ յայսմ ամի հանգեալ ի Քրիստոս խաղաղութեամբ... եւս առաւել աղաչեմ յիշել զպատուական քահանայն Ստեփանոս գրիչ, զարեղբայր իմ եւ զհարազատ եղբայրն իմ զՅոհաննէս քահանայ եւ զայլ եղբայրսն իմ եւ զծնողսն իմ»⁸⁰:

1295 թ. Լամբրոնի Տեր Հեթումի Մարիոն դուստրը, Կեռան թագուհու քույրը Ռուբեն գրչի ձեռքով Աղոթագիրք է ընդօրինակել տալիս հանգուցյալ ծնողների՝ հոր՝ Հեթումի, մոր՝ Թեֆանուի, քրոջ՝ հայոց թագուհի Կեռանի և անդրանիկ որդու՝ Մանուելի հիշատակին, «որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած աստ եւ ի հանդերձելումն, ամէն»: Հավանաբար Սկևռայում՝ տոհմական դամբարանում պետք է

⁷⁶ Բ. Կյուլեներյան, Ցուցակ Անկիւրիոյ Կարմիր վանուց, հմր. 318:

⁷⁷ Մատենադարան, ձեռ. 8425, էջ 257բ: Սկևռայում 1296 թ. Պողոս գրչի ընդօրինակած ձեռագրի (Հ. Ոսկանյան, Կիլիկիայի վանքերը, էջ 83) խորաններ ծաղկող Հովհաննէս Լամբրոնացին, հավանաբար Լևոն գրչի մեծ եղբայր Հովհաննէս քահանան էր:

⁷⁸ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 726:

⁷⁹ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 753: Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Բ., էջ 343-344:

⁸⁰ Մատենադարան, ձեռ. 8425, էջ 257բ: Սկևռայում 1296 թ. Պողոս գրչի ընդօրինակած ձեռագրի (Հ. Ոսկանյան, Կիլիկիայի վանքերը, էջ 83) խորաններ ծաղկող Հովհաննէս Լամբրոնացին, հավանաբար Լևոն գրչի մեծ եղբայր Հովհաննէս քահանան էր:

գրված լինի, ուր հանգչում են հարազատները⁸¹։ Հ. Քյուրտյանի հավաքածուի 72-րդ ձեռագիրը գրված է «ի մենաստանս Սկևռա»։ Գրչի անունը չի պահպանվել⁸²։

Ստեփանոս քահանայից մեզ ուրիշ ձեռագիր հայտնի չէ, բայց եղածն էլ բավական է, որպեսզի նա համարվի հայ գրչության երախտավորներից մեկը, եթե նկատի ունենանք նաև, որ, ինչպես կհամոզվենք քիչ հետո, նա է գրիչը նաև Հեթումի Ճաշոցի։ Շուրջ քառասուն տարի Սկևռայի գրչության դպրոցում նա բազմաթիվ ձեռագրեր է ընդօրինակել։ Նրա պատվիրատուների շարքում հանդիպում ենք նորոսում աշակերտի և արքայորդու, քահանայի ու թագուհու, իսկ ձեռագրերի մեջ՝ Մանրոսումի ու Ավետարանի, Ճաշոցի ու Աստվածաշնչի։ Դյուրընթեռնելի և ակնհաճո է Ստեփանոս քահանայի բոլորգիրը, իսկ գլխագիրը՝ զգաստ և գեղեցիկ երկաթագիր։ Նա հմուտ էր երաժշտության մեջ և ընտիր ու լավ օրինակներ էին նրա ձեռքով խազագրված ձեռագրերը։

Այս բեղմնավոր գրիչը անհայտ է մնացել ուսումնասիրողներին, որովհետև նույնացվել է մի ուրիշ նշանավոր գրչի՝ Ստեփանոս Գոյներերիցանցի հետ⁸³, որը Սկևռայում ուշ է աշխատել, և ավելի երիտասարդ էր, քան Ստեփանոս քահանան⁸⁴։ Ի դեպ, Գոյներերիցանցի հետ են նույնացվել նաև Սկևռայի մյուս գրիչներ Ստեփանոս Իրիցորդին⁸⁵ և Ստեփանոս Գրիչը⁸⁶։

Միննույն միաբանության նույնանուն անդամները որևէ կերպ մականվում էին միմյանցից տարբերվելու համար և աշխատում էին միշտ նույն կերպ գրվել։ Նրանք նույնիսկ հիշատակվելու կամ հիշատակարանում գրչության տեղն ու ժամանակն արձանագրելու յուրօրինակություն էին պահպանում։ Ստեփանոս քահանան իր գրած ձեռագրերի բոլոր հիշատակարաններում իրեն համարում է «Ստեփանոս ամենամեղ քահանա», մյուս Ստեփանոսը՝ հոր՝ Գոյներ երեցի անունով կոչվում է «Գոյներերիցանց»⁸⁷, երրորդը՝ հոր՝ Ղուկաս քահանայի անվան փոխարեն պահում է նրա հոգևոր անվանումը՝ «Իրիցորդի» և միշտ հիշվում է «Ստեփանոս մականուն

⁸¹ Փիրղալեմյան, Նշխարք..., ձեռ. 6332, էջ 291բ։ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 767։

⁸² ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 770։

⁸³ Ղ. Ալիշան, Միսուան, էջ 96-97։

⁸⁴ Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, էջ 51 «Սկևռայի մեծ գրչագիրներեն ու գծողներեն նկատելու է նմանապես Ստեփանոս Կայթառոնցին, հորջորջված Գոյներերիցանց»։ Բ. Կյուլեսերյան, «Լոյս», Կ. Պոլիս, 1906, էջ 1169։

⁸⁵ «Եւ համարիմ զնոյն Ստեփանոս (Գոյներերիցանց. Ա. Մ.) Իրիցորդի, որ յամի 1294 ընդօրինակել գրուածս ինչ Վարդանայ մեծի վարդապետի և զայլոց ի սակս Կեռան թագուհւոյն» (Ղ. Ալիշան, Միսուան, էջ 97)։

⁸⁶ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հ. Ա, էջ 1614։

⁸⁷ «Ստեփանոս տարտամ ի գործս սրբութեան (Գոյներ իրիցու որդի դաժան)» (Մատենադարան, ձեռ. N 1, էջ 105ա)։ Ղ. Ալիշանը հենվելով մի գրչի հիշատակարանի վրա, որում ասվում է, թե Գևորգ Սկևռացին «և զՍաղմոսն նոյնպես արարեալ, որ լաւ օրինակ է, այժմ գտանի առ մեզ, և աւելին ի վերայ՝ կարմիր գրով. յաւել և ի Տօնացոյցս և ի Ժամանակագրութիւնս՝ ուղղակի որ Գոյն Երիցանց կոչի», այսպիսի հետևություն է անում. «Այս բան ցուցանէ ինձ՝ կարմրադեղով նշանակեալ Գևորգայ զայլայութիւնս բանից կամ բառից ի Սաղմոս և յայլ Ժամագիրս, որք զի քահանայից կամ երիցանց ի պէտս էին, կոչեցաւ Գոյն երիցանց, յորմէ ածանցեալ է և մականուն ճարտար գրչին Ստեփանոսի» (Միսուան, էջ 533։ Ընդգծումները հեղինակինն են։ «Գոյներիցանց»-ը սղված և աղավաղված ձևն է։ Իսկ Սաղմոսի կամ Ժամագրքի «Գոյներերիցանց» կոչվելը նույնպես կապվում է Ստեփանոս Գոյներերիցանցի հետ, որովհետև այդ գործերի առաջին ընդօրինակողը նա է եղել, (Տե՛ս՝ Մատենադարան, ձեռ. N 179, էջ 527բ-544բ), որի օրինակից տարածվել է և այդպես կոչվել Տոնացույցը։

Իրիցորդի», իսկ չորրորդը՝ Ստեփանոս քահանան՝ պարզապես «Ստեփանոս գրիչ»:

Ահա և Ստեփանոս Իրիցորդուց մեզ հայտնի ձեռագրերը նախ ծանոթ «Ժղլանք»-ը «Զամենագով եւ զտրամաբան վարդապետն Վարդան՝ զարարող բանիս, եւ զստացող սորա զմեծապատիւ բարեպաշտ մայրն Կեռան թագուհէ՝ Թեւանու, հրամայեաց ինձ մեղաւորի Ստեփաննոսի եւ մականուն Իրիցորդի գրել զհոգիալից տառս՝ ի մխիթարութիւն աստուածասիրաց անձանց...»⁸⁸:

«Թեւանու»-ն Կեռան թագուհու մոր անունն է: Տեղը, անկասկած, Սկևռան է, որովհետև Ստեփանոս Իրիցորդու՝ մեզ հայտնի մյուս ձեռագրերը գրվել են Սկևռայում, որի միաբան է համարում իրեն: Մաշտոցի անվան Մատենադարանի N1999 ձեռագիրը («Կոչումն ընծայութեան Կիրոյի Երուսաղէմացոյ») գրված է Սկևռայի միաբան Կոստանդինի պատվերով (որին հայրը 1275 թ. բերեց Սկևռա սովորելու, իսկ Ստեփանոս քահանան նրա համար Մանրուսում ընդօրինակեց): Գրիչ Ստեփանոս Իրիցորդին աղաչում է հիշել իրեն, ստացողին և «հանգուցեալ հաւրն իւրոյ Յոհաննէսի քահանայի», «և ամենայն եղբարց սրբոյ մենաստանիս Սկևռայիս»⁸⁹: Ձեռագրի գրության թվականը հայտնի չէ:

Իրիցորդին 1297 թ., Սկևռայում իր՝ «անարժան քահանայի Ստեփանոսի եւ մականուն Իրիցորդու» համար ընդօրինակում է մի Ավետարան: Հիշում է հորը՝ Ղուկասին, մորը՝ Թագերին, եղբայրներին, ինչպես «նաև զեղբարք սրբո մենաստանիս Սկևռայի... զի յայս սակս ի բաց եղի զծերութեան անկարութիւն, զի շահեցայց ի ձեռք զողորմութիւն եւ զշնորհս, զի թերեւս գտից թողութիւն բազմութեան մեղաց իմոց եւ յուսալով ի հայրական եւ եղբայրական գութս ձեր զյառաջակայ հոգս իմ, ձեր սուրբ աղաթից յանձին արարի...»⁹⁰: Ծերացած գրչի, թերևս վերջին, ընդօրինակության Հիշատակարանը նույնպես ցույց է տալիս, որ նա սնվել, մեծացել, շնորհ է ձեռք բերել Սկևռայում, միաբանության հայրական հոգածությամբ:

Երրորդը Ստեփանոս Գրիչն է:

Մյուսը Ստեփանոս գրիչն է, որի մեզ հայտնի առաջին գործը Հեթում թագավորի համար 1295 թ. գրված Աստվածաշունչն է: Այն հանգամանքը, որ նա այդ թվականին թագավորի համար Աստվածաշունչ էր ընդօրինակում, վկայում է, որ նա բավականին վաստակ և լավ համբավ ունեցող գրիչ էր: «Ով Տէր իմ արքայ Հեթում, աղաչեմ յիշեալ ի սուրբ աղաթս քո զմեղաւոր գրողս սորա զՍտեփանոս՝ զծերացեալս մեղաւք, զի յոյժ աշխատեցայ ի գրելն սորա, մանաւանդ ի ցանկերս կարի խիստ աշխատեցայ»⁹¹:

Ստեփանոս Գոյներիցանցին առաջին անգամ Սկևռայում հանդիպում ենք 1285 թվականին, երբ պատանի Խաչատուրը «թելադրութեամբ Գեորգեայ վարդապետի,

⁸⁸ ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 419, տե՛ս նաև Բ. Սարգիսյան, Ցուցակ Վենետիկի, հ. Բ, էջ 1068, գրության ժամանակը հայտնի չէ. Ն. Պողարյանը դնում է 1272 թ. ներքո, (Ն. Պողարյան, Ցուցակ Երուսաղեմի, հ. Գ, էջ 414), իսկ Ղ. Ալիշանը 1274 թվականի տակ (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 97):

⁸⁹ Մատենադարան, ձեռ. N 780, էջ 251ա, 351բ, 227բ, 71ա, 9ա: Ձեռագրի առաջին մասի գրիչը Սմբատն է: Նա ձեռագրի 9ա թերթում գրում է. «Գրոցս տէրջն հրամանաւ մեծուցի զգիրս Կոստըն»: Իսկապես 9-րդ թերթից մինչև Ժ պրակի վերջը խոշորացած տառերով է գրված: Վերջին՝ «Կոստըն» բառը գրված է շուտով, որը հայելու մեջ է ճիշտ կարդացվում: ԺԱ պրակից գրել է Իրիցորդին, ոչ մեծացրած տառերով:

⁹⁰ Մատենադարան, դրսի մանրաժապավեն հմր. 499. ձեռագիրը գտնվում է Կ. Պոլսի Պալաթիո Ս. Հրեշտակապետաց եկեղեցում (հմր. 20): Հմմտ. ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 419-420:

⁹¹ Մատենադարան, ձեռ. N 180, էջ 497:

առ որում կայր ի վարժս կրթութեան բանի եւ գրոց», Աստվածաշունչ է գրել տալիս Սկևռայում: Նոր Կտակարանը գրել էր Ստեփանոս քահանան, իսկ պատվական քահանա Ստեփանոս Գոյներիցանցը «աւգնական եղեւ ի նիւթ գրոց»⁹²: Մինչ այդ Խաչատուր դպիրը 1285-1288 թվականներին, ընդ որում՝ 1285 թ. արտագրել էր «զգիրս Ծննդոցն, զԴատաւորացն և զԹագաւորութեանցն, և վասն ոչ բերելոյ տկար մարմնոյն զերկս գրութեանն, աւժանդակեաց սնուցիչ նորին և քեռի... Աստուածատուրն»:

1288 թվականին արդեն Աստվածաշնչի որոշ գրքեր լրացնում է Ստեփանոս Գոյներիցանցը՝ գրելով «Գիրս սրբոց մարգարէիցն եւ զսրբագրաց ոմանց»: Ձեռագրի մնացած մասը այդ թվականներին լրացնում է ինքը՝ Խաչատուր դպիրը, իսկ Գևորգ րաբունապետ Սկևռացին այդ Աստվածաշունչը օժտում է ցանկերով և նախադրություններով: Փաստորեն Խաչատուրի ստացած Աստվածաշունչը այն օրինակն է, որի վրա Սկևռայում աշխատել է Գևորգ Սկևռացին:

Սրանք են Գևորգ Սկևռացու՝ Սկևռայի գրչության դպրոցի գրիչները: Հեթումի Ճաշոցը մի գրչի գործ է: Ո՞վ է սրանցից գրել Հեթումի Ճաշոցը:

Ճաշոցի գրիչը Ստեփանոս քահանա Սկևռացին է:

Հեթումի Ճաշոցում գլխավոր հիշատակարանից բացի կա մի հիշատակագրություն⁹³, որտեղ գրիչը խմբագրողի ցուցմունքն է հայտնում, դարձյալ իր անունը չի հայտնում: Ուստի Ճաշոցի գրչին գտնելու համար Ճաշոցի գրությունը համեմատեցինք Գևորգ րաբունապետի՝ Սկևռայի դպրոցում աշխատող նրան ժամանակակից և գործակից գրիչների՝ Մատենադարանում պահվող ձեռագրերի հետ և համոզվեցինք, որ Ճաշոցի գրչությունը տարբերվում է Գևորգ Սկևռացու (ձեռ. 3082), Ստեփանոս Իրիցորդու (ձեռ. 1999), Ստեփանոս Գոյներերիցանցի (ձեռ. 179) և Ստեփանոս Գրչի (ձեռ. 180) ձեռագրերի գրությունից և նույնանում է Ստեփանոս քահանա Սկևռացու գրչությանը, որից Մատենադարանում վեց ձեռագիր է պահպանվում՝ գրված 1263, 1278, 1283, 1290, 1293 թվականներին⁹⁴: Սրանք բոլորն էլ ընդօրինակված են Սկևռայում Ճաշոցը ավարտելուց (1286) առաջ և հետո: Նշանակում է՝ Ստեփանոսը ոչ նորուսում էր, ոչ էլ ծեր: Ստեփանոսը դրանից երեք տարի առաջ Կեռան թագուհու պատվերով մի Ավետարան էր գրել: Ճաշոցը գրված է նույն բոլորգրով: Բոլորգրով են գրված նաև Ստեփանոս Սկևռացու և Սկևռայի վերնում հիշված գրիչների ձեռագրերը: Սակայն մանրախույզ քննությամբ հնարավոր է լինում տարբերել նույնիսկ միևնույն ժամանակում նույն գրչության կենտրոնում աշխատած տարբեր գրիչների ձեռագրերը, որովհետև յուրաքանչյուր անհատ գրում է իր սեփական ձեռքով, սեփական ոճով, տեսնում և վերարտադրում է յուրովի: Գրչության մեջ այդ յուրովին ավելի տեսանելի է լինում առանձին, հատկապես դժվարագիծ տառերի գրության ժամանակ: Հարցի լուծմանն օգնում են նաև գրչության արվեստի որոշ տարրերի զուգադրումն ու համեմատությունը, որոնք յուրաքանչյուր գրչի մոտ արտահայտվում են ոչ միշտ միատեսակ: Այս, անշուշտ, հեշտ գործ չէ, և միշտ հնարավոր չի լինում ձեռագրի այս կամ այն գրչին պատկանելը որոշելը: Այստեղ, բարե-

⁹² «Լոյս», Կ. Պոլիս, 1906, էջ 1219:

⁹³ «Համբարձմանն առաւուստուն և ճաշոյն կարգն գրեալ է ի մայիս ամիս ԿԷ համարն, զիտ և կարդայ և մի մեղադրեր, զի յետոյ գրեցի և ի Յինանցն ի կարգն դրի» (Մատենադարան, ձեռ. N 979, էջ 279ա):

⁹⁴ Մատենադարան, ձեռ. (համապատասխանաբար) 8590, 759, 630, 6764, 2630, 5784:

բախտաբար, գործին օգնեց Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուում Սկևռայի գրիչների ընդօրինակությունների առկայությունը և դրանց իրար հետ համեմատելու հնարավորությունը, որը մեզ բերեց այն համոզման, որ Հեթումի Ճաշոցի գրիչը Ստեփանոս Սկևռացին է, որին հանդիպում ենք 1263-1295 թվականներին՝ որպես հմուտ գրչի և գրչության ուսուցչի: Համենայն դեպս, նա 1260-1290-ական թվականներին Սկևռայի ամենանշանավոր գրիչն էր, որին պատվեր էին տալիս ոչ միայն թագուհին և արքայորդին, այլև ուրիշ գրչակենտրոններից գրիչներ, Սկևռայի դպրոցի աշակերտներ, ուսուցիչներ և այլք:

Մեր համոզմունքը ակներև դարձնելու համար ներկայացնում ենք վերոհիշյալ գրիչների՝ Մատենադարանում պահվող ընդօրինակություններից առանձին նմուշներ՝ հնարավորություն տալով հետաքրքրվողին անձամբ համեմատելու և համոզվելու մեր տեսակետի մեջ: Ուստի հրավիրում ենք ընթերցողի ուշադրությունը մասնավորապես «ջ» տառի գրչության վրա:

Առաջին տախտակում Ճաշոցից բերված նմուշը համադրված է Սկևռացու, նրանից առաջ և հետո ընդօրինակված ձեռագրերի նմուշների հետ, իսկ երկրորդում՝ Ճաշոցի նույն նմուշը՝ Ստեփանոս Իրիցորդու, Ստեփանոս Գրչի, Ստեփանոս Գոյներիցանցի և Գևորգ Սկևռացու կատարած ընդօրինակությունների հետ: Ընդ որում, որքան հնարավոր է եղել, ընտրել ենք միևնույն հատվածը՝ նկատի ունենալով հատկապես դժվարագիծ «ջ» տառի առկայությունը:

Նմուշների համադրությունից երևում է, որ Ճաշոցի գրիչը Ստեփանոս Սկևռացին է: Իսկ այս նշանակում է կրկին անգամ, որ Ճաշոցը գրվել է Սկևռայում, որովհետև Ստեփանոս Սկևռացին շուրջ չորս տասնամյակ այդտեղ էր աշխատում:

Ստեփանոս Սկևռացին Ճաշոցը գրելիս սերտ համագործակցության մեջ է եղել Գևորգ Սկևռացու հետ և շարժվել է նրա ցուցումներով՝ Հայոց գրատեսակների օգտագործման, կիրառման ժամանակ: Այս բանը երևում է Ճաշոցի և Կեռան թագուհու պատվիրած (որը ժամանակով՝ 1283 թ. ավելի մոտ է Ճաշոցին) և մյուս ձեռագրերի համեմատությունից:

Ճաշոցը գրված է այսպես. տոների մասին տեղեկությունները (օրերի, սրբերի, սաղմոսների թվի, կցուրդի, ընթերցվածի հատվածների մասին ցուցումները, կամ արարողության բացատրությունները) կարմիր թանաքով են և մանրագիր, բոլորգիր: Ընթերցվածը սկսվում է զարդագրով և տողը լրացվում է ոսկեգիր երկաթագրով կամ բոլորակ գրով, երբեմն այս երկուսը միասին, որին հաջորդում է մի տող ոսկեգիր բոլորգիր, և բնագիրը շարունակվում է նույն գրով, բայց սև թանաքով:

Մյուս ընթերցվածները շարահարելիս կարմիր բոլորգրով ցուցումներից հետո, զարդագրի տողը լրացվում է ոսկեգիր բոլորակ գրով կամ երկաթագրով և շարադրվում սև բոլորգրով, առանց ոսկե բոլորգիր տողի: Ընթերցվածների տների և աղոթքների պարբերությունների գլխագրերը նույնպես ոսկեպատ են, որոնց թիվը հասնում է մի քանի հազարի, իսկ ոսկեգիր տողերի քանակը՝ ավելի քան հազար երկու հարյուրի, որոնք ցրված են ողջ ձեռագրի էջերում: Ընդ որում երկաթագիր, աղյուսագիր տողերը և գլխագրերը գրել է կարմիրով, որոնք հետո ոսկեպատվել են:

Ստեփանոս Գրիչը խստությամբ չի պահպանել գրադարձի օրենքը, որը հավանաբար Ճաշոցի գրությունից հետո մշակեց Գևորգ Սկևռացին (վերջինիս աշակերտական ընդօրինակության (1268 թ.) մեջ նույնիսկ այն պահպանված է): Ձեռագիրը գրելիս գրիչը բաց է թողել զարդագրերի տեղը, որոնց մեծությունը հինգ տողագծերի

մեջ է տեղավորվում: Ամենայն հավանականությամբ զարդագրերն ունեցել են մոտավոր կաղապար-օրինակներ, որոնց հիման վրա տեղերը բաց են թողնվել և նկարվել են (վերջագիր): Այս երևում է նրանից, որ որոշ զարդագրերի տեղերը բաց են թողնվել, բայց մոռացվել են զարդագրվել, ուստի այդպես էլ մնացել են⁹⁵: Բաց են մնացել նաև առանձին գլխագրերի տեղերը⁹⁶:

Ընթերցվածների բուն բնագրային տնտեսամասերը նշված են շղագրով: Փաստորեն Հեթումի ճաշոցում մենք ունենք Մեսրոպ Մաշտոցի ստեղծած բոլոր չորս գրատեսակները (աղյուսագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր) և երկաթագրի հենքի վրա 11-րդ դարում առաջացած զարդագիրը:

Արտակարգ հարուստ է զարդագրված Հեթումի ճաշոցը, մոտ հազար զարդագիր, շուրջ հիսուն մարդագիր, 550 թռչնագիր, գազանագիր, 380 ծաղկագիր և ոճավորված գրեր: Հայոց այբուբենից միայն Է, Ղ, Չ, Ջ, Ռ տառերն այստեղ չունեն զարդագիր, մնացած երեսունը ունեն, որոշ տառեր նույնիսկ հարյուրավոր նմուշներով (Է-300, Ա-201, Զ-73, Ռ-71 և այլն):

Զարդագրեր կան, որոնք ձգվում են ամբողջ էջով կամ կես էջով մեկ: Նույնիսկ եթե որոշ տառեր կաղապարային արտաքին չափուձևային նմանություն ունեն, ապա տարբերվում են իրարից տառակոդերի զարդանկարչությամբ, գծերով ու գույներով, ելուստների ձևերով:

Զարդագրերը ավելի շատ կենտրոնացված ենք տեսնում ճաշոցի երկրորդ կեսում, որտեղ նվազում են լուսանցազարդերը, և զարդագրերը մասամբ աշխատում են լրացնել նրանց պակասը և պահպանել ձեռագրի զարդարվածության աստիճանն ու մակարդակը:

Եթե գրիչների սեփական մակագրություններով մեզ հասած գրչանմուշների համադրությամբ հնարավոր եղավ գանազանել նրանց տարբերությունները և հաստատել ճաշոցի գրիչ Ստեփանոս Սկևռացու ինքնությունը, ապա նույնը անել չենք կարող մանրանկարչի ինքնությունը որոշելու համար, որովհետև ճաշոցի և նրա խմբի ոչ մի ձեռագրի նկարչի մակագրությունը չկա, ոչ թե չի պահպանվել, այլ չի մակագրվել:

Բայց այստեղ ունենք մի այլ, ոչ սակավ կարևոր փաստարկ: Եթե Սկևռայում Հեթումի ճաշոցը գրել կարող էին վերը նշված բոլոր հինգ գրիչներից յուրաքանչյուրը, ապա նկարել կարող էր միայն նա, ով նկարիչ էր, նա, ում մասին գիտենք որպես այդպիսին: Իսկ այդպիսին, ինչպես առայժմ մեզ հայտնի է, միայն Սկևռայի դպրոցի րաբունապետ և արքայորդու բարեկամ Գևորգ Սկևռացին էր, որը «գեղազարդ շքով» նկարել էր Աստվածաշունչը «գոր տեսողաց և վայելողացն յայտնի է» և որը հաստատվում է նրա աշակերտ և գործակից Մովսես Երզնկացու և այլ վկայություններով:

*

* *

Այժմ ծանոթանանք Գևորգ Սկևռացու գործունեությանը, որպեսզի տեսնենք, թե

⁹⁵ Մատենադարան, ձեռ. 979, էջ 52ա. բաց է թողնված «Զ» զարդագիրը, էջ 55ա՝ կիսանկար, «Ա», էջ 57ա՝ «Վ», էջ 203ա՝ «Ե», 270ա՝ «Ե»:

⁹⁶ Անդ, էջ 239ա. վեցերորդ տողում բաց է մնացել «Յ» գլխագիրը, որովհետև չեն նկատել:

երբվանից և ինչով էր կապվում Սկևռայի վանքին ու դպրոցին, ինչ հարաբերության մեջ էր Լամբրոնի տեր արքայորդի Հեթումի հետ և Սկևռայում ստեղծած ինչպիսի մանկավարժական-գրչական-մատենագրական վաստակ ունի:

ԳԵՎՈՐԳ ՍԿԵՎՈՒՑԻ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ

Գևորգ Սկևռացու մասին պահպանվել են նրան նվիրված երեք վարքագրական երկեր⁹⁷, որոնց հիման վրա կաշխատենք պատասխանել առաջադրված հարցերին: Գևորգ Սկևռացին ծնվել է 1246 թվականին, Լամբրոն դղյակում, Առաքելի և Մլքեի ընտանիքում: Հինգ տարեկան հասակում ծնողները նրան հանձնում են քեռուն՝ Սկևռայի դպրապետ Գրիգոր Սկևռացուն, որի մոտ վարժվում է Սուրբ Գրքի ընթերցանության և գրչության արվեստի մեջ, ընդ որում «Գրչութեան արուեստի զգիշերն տիւ առնէր»⁹⁸:

Գրիգորը եպիսկոպոս դառնալուց հետո (1256 թ.) տասնամյա Գևորգին հանձնում է Մխիթար Սկևռայի ընտանիքում, որը «երևելի էր գործով եւ բանիւ եւ հմուտ արտաքին փիլիսոփայիցն... քաջաբան եւ նրբախօս, եւ ուղիղ բանիւ կործանիչ հերետիկոսաց...»⁹⁹: Մխիթարի մոտ, որը հետագայում դառնում է Սկևռայի ուխտի առաջնորդ, Գևորգը սովորում է ութ տարի և ձեռնադրվում սարկավագ: Այդ ժամանակ վախճանվում է Գրիգոր Սկևռացին: Քեռու հակառակորդների հալածանքներից զերծ մնալու և ուսումնասիրությունը շարունակելու համար տասնութամյա պատանին մեկնում է Արևելյան Հայաստան: «Գնաց յԱրևելս՝ առ երջանիկ ընտանիքի Վարդան եւ աշխատասիրաբար էլից գրեթին իւրում զիտութեան: Եւ կատարեալ ի սուղ ժամանակս եհաս իմաստից Սուրբ գրոց հնոց եւ նորոց մեկնութեան, եւ զքահանայականն էառ պատիւ ճոխութեան, այլ եւ արտաքնոցն, որք են ճեմական Արիստոտելի, Պիտագորեանց եւ Պլատոնեան եւ որք նոցունց գտան միաբան»¹⁰⁰:

Այդ պետք է տեղի ունեցած լինի 1264 թվականին: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Գևորգ պատանու Խոր Վիրապում սկսած, Սաղմոսավանքում շարունակած և Թեղենիքում 1267 թ. ավարտած Տոնապատճառը¹⁰¹: «Եւ եղեւ աւարտ գրչութեան սորա ի ձեռն տարաշխարհիկ պատանոյ ումեմն թարմատար գրչի Գեորգայ ի Կիդիկեան նահանգէն, յանմատչելի ամրոցէն Ղամբրաւն կոչելոյ, որ է ստորոտ մեծի ի լերինն Տաւրոսի, ուր ոչ եթէ իբրոյ ճարտար գոլով յարհեստ

⁹⁷ Առաջինը Սկևռացու աշակերտ Մովսէս Երզնկացու ներբողյանն է. «Դրուատ բանի սուղ ինչ պատմագրաբար երջանիկ ընտանիքայէտն և ի քաղցրաբարբառ վարդապետն Գեորգ Լամբրոնեցի» (Ղ. Ալիշան, Միսուան, էջ 104-105, նույնի՝ Հայապատում, Բ, էջ 504-507): Երկրորդը ամենաընդարձակ վարքն է, «Պատմութիւն վարուց երջանիկ եւ տիեզերալոյս Բաբունոյն Գեորգեայ ծնընդեանն եւ սնընդեանն եւ գերաւորաշ կատարմանն յունուարի ի ԺԱ»: Բնագիրը ուսումնասիրությամբ (Գևորգ Սկևռացու «Վարքը») հրատարակել է Է. Բաղդասարյանը («Բանբեր Մատենադարանի», N. 7, Երևան, 1964, էջ 399-410, 410-435) Մատենադարանի N 8356 (էջ 193բ-229բ) ձեռագրից: Հմտ. Ն. Պողոսյան, Ցուցակ Երուսաղեմի, Ա, էջ 306, «Պատմութիւն վարուց երջանիկ եւ տիեզերալոյս Բաբունոյն Գեորգեայ...» և այլն: Եվ երրորդը՝ Հայսմավուրքում մուծված նրա Վարքն է (Հ. Տաշյան, Մայր ցուցակ մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 46):

⁹⁸ «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 405:

⁹⁹ «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 414:

¹⁰⁰ Անդ, էջ 416:

¹⁰¹ Մատենադարան, ձեռ N 3082, էջ 476:

գրչութեան՝ յանձնապատասխան համարձակութեամբ ձեռնամուխ եղև ի գործ, որ ի վեր էր քան զկար նորա, այլ գյուղով խնաման վայելեալ՝ նախայիշեյեալ արանցս փառաւորաց և անիճահ վարկուցեալ զանց առնել զպատկառեցուցիչ հրամանաւ սոցին... սատարութեամբ նժդեհակցի պանդխտութեանն իւրոյ և դաստիարակի անկատարութեան Յովհաննու քահանայի»¹⁰²:

Այս մասը գրված է Գևորգ Սկևռացու ձեռքով, բայց երրորդ դեմքով: Ահա և գրչության հանգամանքների մասին հատվածը. «Բայց առաջին սկիզբն գրութեան սորա եղև ի տիեզերահոջակ սուրբ ուխտն **Վիրապին**... ուրանոր և մեզ ժամա(նակ) ինչ դեգերել ի դուռն աստուածագարդ այնր տաճարի սակս կրթութեան (մերոյ) ի մեծ վարդապետէն և յաստուածագգեաց առնէն **Վարդանայ**, որ (ընդ) այն ժամանակս ի վերայ ամենայն մասանց բարեաց, որով բոլորն (կա)տարի առաքինութիւն, և զուսուցչապետութեանն ևս զգործի յիւր արկեալ ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն Սրբոյն Գրիգորի նստելով, զամենայն եկեալսն յաստուածայինն ուղղեր ճանապարհ:

Եւ անտի փոխեալ եկեալ առ մեծ իշխանն **Քուրդ**, և մեր զկնի նորա հետնեալ ժամանակ (ին)չ արարաք յանուանեալն Սաղմոսավանք, ուր և զառաջին աւարտեցաք հատոր սրբոյ մատենիս: Եւ քանզի և դէպ լինել և անտի փոխել նմա ի գործ բարւոք ուսուցչութեանն, ի տեղի ուր տէր յաջողեցէ յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս ի բուն տունս իւրեա(նց) մեծահոջակ հրեշտակակրան աստուածաբնակ սուրբ ուխտս **Թեղինեաց**, ուր և յանկ իսկ հանաք զառաջարկեալս՝ բարւոք ընկալեալ զմեզ բարեբարւոյ և սրբասէր քահանայի Սարգսի սիրով և յաւժարամիտ կամաւք սպասաւորելով...» (էջ 477ա):

«Զամենայն պիտանի ծաղիկս պտղովքն հանդերձ ամբարեալ, դարձաւ ի բնիկ աշխարհն իւր,- գրում է վարքագիրը... Եկն յԱրևելից ոչ դատարկաձեռն, այլ երևելի պատարագ ընծայից ունելով ճոխ և ճեմ գիտութեամբ յինքն ամբարեալ... և որոց պետք էին՝ անխնայ բաշխէր անխափան... և որք ի խաւարի տգիտութեան էին՝ ընդարձակ և պարզ բանիւ զխորագիտութեան իմաստիցն Աստուծոյ յայտնէր»¹⁰³:

Գևորգ Սկևռացին վերադառնում է Կիլիկիա Վարդանի մահից հետո, այսինքն՝ 1271-1272 թվականներին:

Կիլիկիա վերադառնալուց հետո անհրաժեշտ գիտելիքներ ամբարած երիտասարդը իրեն նվիրում է քարոզության¹⁰⁴: Շուտով նա «յայտնի եղև մեծամեծաց եւ փոքունց, հայրապետին եւ եպիսկոպոսացն, թագաւորին եւ իշխանացն», որոնցից յուրաքանչյուրն ուզում էր օգուտ քաղել նրա իմաստությունից և արվեստից, որը նրա սիրելի մասնագիտությունն էր, որը նաև իր ապրուստի միջոցն էր. «Զի ոչ ումեք ծանրանայր, այլ միշտ գրչութեան արուեստիւ զմարմնոյ պէտսն պատրաստէր»¹⁰⁵:

Աստիճանաբար նրա մոտ են հավաքվում ուսումնասեր ծանոթ մարդիկ և խնդրում դասավանդել. «զի գտորբ և զաստուածային իմաստս ծաւալեաց, ուսումնասիրեաց և գիրս ի ձեռս առեալ զլուծումն յայտնութեամբ խնդրէին»: Բայց որովհե-

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 416:

¹⁰⁴ Անդ, էջ 417:

¹⁰⁵ Անդ, 418:

տև նա սիրում էր ճգնավորական կյանք և լռության մեջ գործել, իսկ ուսումնասիրները չէին դիմանում թափառումներին, կրկին հավաքվելով Սկևռացուն հարկադրում են հիմնավորվել որևէ տեղ վախեցնելով, թե «դատախազք լինիմք առաջի Տեառն, եթե ոչ հաւանիս աղաչանացս»¹⁰⁶: Գևորգ Սկևռացին հիմնում է իր դպրոցը սկզբում «մի անվայելուչ» տեղում, հետո՝ Սկևռայի վանքում:

Գևորգ Սկևռացուն սիրում և գնահատում է Լևոն Բ թագավորը՝ նրան համարելով ճշմարիտ և ուղղադավան վարդապետ, հաշվի էր նստում նրա հետ: Հեթում արքայորդին, երբ արդեն Լամբրոնի տերն էր, նույնպես սիրում էր Գևորգ Սկևռացուն և քաղցրությամբ լսում նրան: Սակայն թագավորը որդու դաստիարակությունը հանձնել էր արքունիքին մոտ կանգնած բանիբուն և ճարտասան Վահրամ Բաբունուն, որն «ունէր զաղանդ քաղկեդոնական, ապականել դեղեաց Հեթում՝ Տեր Լամբրոնին»:

Լևոն Բ-ի կենդանության ժամանակ և նրա մահից հետո իր թագավորության առաջին տարիներին Հեթումը լսում էր Գևորգ Սկևռացուն: Վարքագրի վկայությամբ, հոր մահից հետո, նույնիսկ երբ Հեթումը «սկսաւ յայտնել փոքր ինչ յուսմանէ չարափառութեանց, և սուրբս Գևորգ աստուածիմաստ խրատովն յետս նահանջեաց եւ բազում հպատակութեամբ լսէր սրբոյս և խոնարհէր ի բանս նորա, որպէս զհայրն իւր... եւ տեղեակ ևս էր գրոց եւ միշտ ջանայր զինքն ճշմարիտ ցուցանել... Բայց ի սրբոյս երկնչէր... եւ սուրբս խոնարհ եւ աննենգ բանիւ խոռվեալ սիրտն բժշկէր»¹⁰⁷:

Թե ինչպես զարգացան այնուհետև Հեթում Բ թագավորի և Գևորգ Սկևռացու հարաբերությունները, հայտնի է, ուստի այս հարցին մասամբ կանդրադառնանք: Սակայն, ինչպես այստեղ, Գևորգ Սկևռացին հեղինակություն էր Լամբրոնի տեր Հեթումի համար և խորհրդատու: Նրանք հաշտ են և խաղաղ, որը տևեց ընդհատումներով, նաև հետագայում. «Նաև որ տիրէրն աշխարհին՝ Հեթում խնդամտութեամբ և սիրով, և խոնարհ պարանոցն դնէր առաջի սրբոյն և անհնարինքն յիշխանութեան իւրում սրբոյն խնդրելովն՝ հնարաւոր լինէր: Զի բազմաց անձինք ի մահ մերձեալ նովաւ փրկէր և այլոց պարտուց թողութիւն շնորհէր»¹⁰⁸: Այս պայմաններում ծաղկում է Սկևռայի դպրոցը:

Գևորգ Սկևռացու՝ որպես գիտնականի համբավը տարածվում է ողջ Կիլիկիայում: Հովհաննէս Արքայեղբայր րաբունապետը նրանից խնդրում է գրել «Մեկնութիւն Գործոց առաքելոց»-ը¹⁰⁹ և «Դրուատ»-ը¹¹⁰. վերջինս նա գրում է 1283 թվականին, և այն կարելի է համարել նաև նախորդի գրության թվականը:

Գևորգ Սկևռացու ղեկավարությամբ Լևոն թագավորի ու Կեռան թագուհու հոգատարությամբ ծաղկող Սկևռայի դպրոցը այժմ արդեն Սկևռայի տեր Հեթում արքայորդու նախանձախնդրությամբ դառնում է Կիլիկիայի ամենանշանավոր մշա-

¹⁰⁶ Անդ:

¹⁰⁷ Անդ, էջ 421:

¹⁰⁸ Անդ, էջ 426:

¹⁰⁹ Մատենադարան, ձեռ. 4119, էջ 3ա. Մեկնութիւն Գործոց առաքելոց համառոտիւ, Գևորգեա Սկևռացոյ արարեալ. Առ խնդրոյն համառոտիւ տէր Յոհաննէս Արքայեղբայր՝ եպիսկոպոս նահանգաց աստուածապահ ղըղեկին Մովկոնի և մասին ինչ Բարձրբերդոյ և նոյն տեսուչ հռչակելի սուրբ ուխտին Գոներոյ և առ հանդիպեալսն մատենիս»:

¹¹⁰ «Դրուատ ի սուրբ առաքեալն և աւետարանիչն Յոհաննէս, ի պատկառելի խնդրոյ Յոհաննու եպիսկոպոսի, եղբար բարեպաշտ արքային Հայոց Հեթոյ, ի թուականին ՉԼԲ (1283) Գևորգեայ մեծի և յոբնալոյս վարդապետի ասացեալ Սկևռացոյ» (Լ. Պողարյան, Յուցակ Երուսաղեմի... հ. Ա, էջ 306):

կութային կենտրոնը, որտեղ մշակվում է գիտությունը, կատարելագործվում է գրչությունը, մանրանկարչությունն ու երաժշտությունը, մատենագրությունը, գրվում են մեկնաբանություններ, լուծմունքներ, բանաստեղծություններ: Այդտեղ մշակվում է գրչության արվեստի քերականական տեսությունը¹¹¹ գեղեցիկ գրելու, գիրքը ճաշակով ձևավորելու արվեստը, որոնց օրինակը տալիս էր Գեվորգ Սկևռացին. «Զի էին բանք սրբոյն նման ոսկւոյն... և լեզուն՝ հրեղէն, և ի քերս բանից և բառից և զծից՝ իբր անմարին (անմարմին - Ա. Մ)»¹¹²:

Գևորգ Սկևռացին այդ ժամանակ ոչ միայն Աստվածաշնչի նախադրություններն ու ցանկերն է հորինում, այլև նկարագարում է սքանչելի կերպով. «Զի ի բոլոր Աստուածաշունչ գիրս կարգեայ նախադրութիւնս և ցանգս գլխաւք յարիներալ... և **գեղագարդ շքով նկարեալ, զոր տեսողացն և վայելողացն յայտնի է**»¹¹³, գրում է վարքագիրը: Իսկ Մովսես Երզնկացին իր ուսուցչին նվիրված «Դրուատ»-ում փառաբանում է. «զծեր և կանոնս կարգաւորս... առներ համարս գլխոյ և ցանկք և նախադրութիւնս Աստուածաշնչից տառից»¹¹⁴:

Գևորգ Սկևռացին նկարիչ էր և նկարելու մասին նշում կատարելու սովորություն չունէր, ինչպես ավելի վաղ գրիչները, «գրիչ» մասնագիտության մեջ տեսնելով նաև նկարչին: Իսկ գրչության մեջ նա ոչ միայն արվեստի տեսությունն է շարադրում, այլև մշակում է գրատեսակների ու զարդագրերի օգտագործմամբ էջը ձևավորելու եղանակ: Եվ այս հանգամանքը շատ են գնահատում նրա աշակերտները, վարքագիրները, արվեստասերները, ստացողները: Մովսես Երզնկացին շարունակում է.

Ծնանէր ծնունդս միշտ հոգևոր
Զարդիւնարարն և շնորհաւոր.
Մակեռակի տառիւք պճներ,
Հրաշիւք բանիցն զարդարէր,
Գրախեցիս հմտաւորէր,
Դարձմամբ ըզնոյն ծանուցանէր,
Բարի բաշխմամբ զբանն ողորկէր,
Կարգաւ ըզնոյն ուսուցանէր:
Թելադրութիւն տայր արհեստի,
Գրոյ և բանի յամենայնի¹¹⁵:

Գևորգ Սկևռացին միշտ «հոգևոր ծնունդներ», այսինքն գրքեր էր «ծնանում»՝ օգտագործելով երեք տեսակ տառ, ավելացրած մանրագիրը՝ ցանկերում, նախադ-

¹¹¹ «Գեորգայ վարդապետի արարեալ ի խնդրոյ Ստեփանոսի մականուն Գոյն երերիցանց Կայթառանցոյ մեղսաներկ անձին,

(ա) խրատ վասն հանգամանաց հեգից, որ և պատճառն իսկ է գրադարձին յարուեստ գրչութեան,

(բ) խրատ վասն առողջանութեանց

(գ) խրատ գրչութեան, զոր արարեալ էր զսա յառաջագոյն Գեորգայ վարդապետի ի խնդրոյ ուրումն, զորոյ զպակասն ի նմանէ յետոյ կամ ի վարդապետէն խնդրեալ, և նա կատարեաց զխնդրուածս իմ» (Մատենադարան, ձեռ. 2371, էջ 132բ-162ա):

¹¹² «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 470:

¹¹³ Անդ, էջ

¹¹⁴ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 103: Հ. Ոսկյանը մեջբերելով այս հատվածը, գրում է. «Անոր նկարչական և գրչական արուեստին կը հային... սա տողերը» (Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, էջ 36):

¹¹⁵ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 14:

րություններում և վերնագրերում և նկարագրողում էր, բանը, այսինքն՝ բովանդակությունը, բնագիրը: Մովսես Երզնկացին կարծես այքի առաջ ունի որոշակի ձեռագիր, երբ գրում է. (Անդ):

Զաչերս յառեր յաւէտ ի լոյս
 Զմատունս շարժէր ի գործ պիտոյս,
 Իբրև զհօրանս հոտից այծից
 Միշտ յօրինէր զշարքս տողից,
 Եռակի կերպիւ կազմէր
Գեղապաճոյճ յաւէտ գործէր
 Բոլորակ և աղիւսակ,
Եւ զվերջագիր տառս հրեշտակ,
 Գեղեցիկ և հրաշալի,
 Եւ պճնագարդ յամենայնի:

Այստեղ էլ գրի ու էջի պճնագարդման մասին է խոսքը:

Իսկ Գևորգ Սկևռացու վարքի մի այլ շարադրող գրում է. «Առնէր եւ զարուեստս գրչութեան գեղեցիկ եւ ճարտարութեամբ, քանզի ազնիւ էր եւ արագ առ ի գրել, ըստ նմանութեան Եւագրեա:

Զբոլորակ գիր հայրենի,
 Եւ զաղիւսակ հին տառ յարգի,
 Նաեւ զճոխ վերադասի,
 Որ համայն իցէ բաղձալի.

բազմաց առներ արդիւնս եւ յովից գրէր տառս գեղեցիկս, ոչ միայն ընկերակցաց, այլ և մենաստանից»¹¹⁶:

Ուրեմն, Գևորգ Սկևռացին զարդարում էր «Բանը», առանձին ամբողջական էջերում կամ սյունյակներում, ինչպես նաև լուսանցանկարներում՝ յուրաքանչյուր ընթերցվածի «բանին» (բովանդակությանն) համապատասխան, կամ «բանի հեղինակին նկարելով, հմտավորելով զարդագիրը լուսանցազարդելով: Մրանցից բացի, գլխազարդերն էր նկարազարդում «ճոխ վերադասի» և բոլոր զարդագրերը գունազարդում:

«Վերջագիր տառեր» են կոչվում բոլոր զարդագրերը, որովհետև նրանք գեղեցիկ և հրաշալիորեն նկարազարդվում են ձեռագրի բնագիրը ընդօրինակելուց հետո, գրվում են «վերջում, վերջագիր» կամ վերևում՝ դարձյալ վերջում: Ժամանակակիցների, ականատեսների, գործընկերների ու աշակերտների վկայությունները, և այն խոստովանությունները, որ նա Աստվածաշունչ է նկարազարդել, և ոչ մի տեղ չի հիշել իր նկարիչ լինելու պարագան, թույլ է տալիս պնդելու, որ Գևորգ Սկևռացին նաև նկարել է:

Ականատեսների այս վկայությունները, որոնք վերաբերում են Գևորգ Սկևռացու գրչության արվեստին, մեզ ներկայացնում են միջնադարյան հայ գրչության արվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկին, որը արվեստին տիրապետում էր ոչ միայն «տեսականաւ», այլև «գործնականաւ»՝ գրչության արվեստի տեսաբան, գրիչ, մանրանկարիչ, երաժիշտ: Սակայն առ այսօր մեզ հայտնի են նրա տեսական գործերը, իսկ գործնականները՝ ոչ, բացառությամբ Խոր Վիրապում ընդօրինակած Տոնա-

¹¹⁶ Զ. Տաշյան, Մայր ցուցակ մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 46:

պատճառի և 1392 թ. ընդօրինակած մի Ավետարանի, որի գլխագրերն ու լուսանցագրերը միայն գծած են և չեն գունավորված: Ավետարանիչների նկարները գունավորված են հետագայում¹¹⁷:

Գևորգ Սկևռացին գրել է բանաստեղծություններ, գանձեր, հորինել է եղանակներ: Հետաքրքրական է, որ գանձերը գրել է Սկևռայի փիլիսոփա, ասել է թե երաժիշտ աշակերտների և նրանց ուսուցիչների պատվերով:

Սկևռայի դպրոցում երաժշտությանը մեծ տեղ հատկացնելու վկայություն է նաև այն Խազգրքերի ընդօրինակությունները, որոնք, ինչպես տեսանք, կատարում էր Ստեփանոս քահանան տեղի աշակերտության համար:

Բացի այդ, Գևորգ Սկևռացին ուղղել, ճշգրտել է շարականները, այսինքն վերացրել է առողջանության նշանների և երաժշտական խազերի շփոթը¹¹⁸, որ տեղի էր ունեցել խազագրության արվեստին անտեղյակ, անվարժ գրիչների անտեղյակության պատճառով:

Մեր հետապնդած նպատակի համար ավելի կարևոր են Աստվածաշնչի ցանկերի և նախադրությունների հորինման հանգամանքները, որոնց վերաբերյալ բանասիրության մեջ տարակարծություններից բացի կան նաև մութ կետեր¹¹⁹:

¹¹⁷ ԺԳ դարի Հիշատակարաններ, էջ 692: «Քարոզ Վարդապ Ս. խաչին, ի խնդրոյ Տեառն Սիմեոնի Սկևռայի մեծի ուխտին առաջնորդի, ի Գեորգեայ վարդապետէ Լամպրոնցոյ և Սկևռացոյ»: Գանձի տների առաջին տողերի սկզբնագրերը հոդում են. «Գեորգեայ բան» (Ն. Պողարյան, Յուցակ Երուսաղեմի, հ. 2, էջ 285): Ի դեպ Գևորգ վարդապետի «Լամբրոնացի» և «Սկևռացի» կրկին մականուններով կոչվելը նշան է, որ նա նոր է հիմնավորվել Սկևռայում, որի համար կոչվում է Սկևռացի և դեռ չի անցել ծննդավայրի անունով Լամբրոնացի կոչվելու սովորությանը: Այդ ժամանակ նա գրում է այլ գանձեր դարձյալ Սկևռայի միաբանների խնդրանքով. «Գեորգեայ վարդապետի Լամպրոնեցուն ոգեալ քարոզ Սրբոյն Բարսղի ի խնդրոյ քահանայ Թորոսի» (Ա. Սյուրմեյան, Յուցակ Հալեպի... հ. Ա, էջ 244) (Այս Թորոսն էլ Սկևռայի մի այլ աշակերտի Կոստանդին խնամարկուն է, որը 1275 թ. ստացավ մի Մանրուսմունք):

«Քարոզ Սրբոյն Սարգսի Զարավարի, ի խնդրոյ սննդակցի եղբոր Սարգսի փիլիսոփայի, ի Գեորգեայ վարդապետէ Սկևռացոյ», «Քարոզ սրբոյն Գեորգեայ զարավարի, ի խնդրոյ Գորգայ փիլիսոփայի, ի Գեորգեայ վարդապետէ» և այլն, և այլն, որոնց բոլորի նախագիծը «Գեորգեայ բանց է (Անդ): Հավանական է, որ սրանց ոչ բոլորի մի մասի եղանակը ինքը պետք է հորինած լինի, և պատահական չէ, որ նրանք բոլորը գրվում էին Սկևռայի փիլիսոփա, ասել է թե երաժիշտ աշակերտների (Սարգիս, Գորգ) կամ նրանց նմանների ուսուցիչների (Սիմեոն, Թորոս) պատվերով, որոնց լաբունապետն էր Գևորգ Սկևռացին: Թերևս այս շրջանին (1270-ական թվականներ) է վերաբերվում շարակնոցի հետ կապված նրա աշխատանքները:

¹¹⁸ Ղ. Ալիշանը Գևորգ Սկևռացու մասին Մովսեսի «Դրուատ»-ի վերաբերյալ գրում է. «Մոռանալ դրուատիչն կամ ոչ պարզապես յիշէ զմիւս ևս յոյժ պիտանի հասարակաց գործ, որ և յայտարար ստուգասէր և չափագիտակ հանճարոյ Գեորգայ. այն է ընտրութիւն և հաստատութիւն բանից և եղանակաց Շարականաց մերոց:

Ծանօթ է բանասիրաց, զի ի ձեռագիր յիշատակարանս երգարանիս, անդստին ի սկզբանէ ԺԴ դարու՝ ի յոլովս նշանակի՝ գրեալ ըստ լաւ և ընտիր կամ ստոյգ օրինակին, որ կոչի **խլկցի** և յոմանս վկայի զի ընտրողն այս էր. **«Գրիգոր՝ առաջին վարդապետ** Սսայ և **քաջ քարտուղար** մականուն **խուլ**: Արդ, Առաքել Մինեայ եպիսկոպոս ի Լուծմունս Սահմանաց Դաւթի Անյաղթի, ասէ. Ճշմարտեալ բանք երգոցս՝ «խլկցու օրինակն է, ի Շարականացն, զոր մեծ վարդապետն Գեորգ **ուղղեաց**, այն՝ որ զԵսայի մարգարէն մեկնեաց, ի խնդրոյ Հեթում թագաւորին, ի Սիս... զի արիեստն առողջանութեան խառնեալ լիցի ի երգսն, որպէս նոյն Խլոյն օրինակն է, զոր **սահմանեաց** վարդապետն Գեորգ:» (Ղ. Ալիշան, Միսուան, էջ 104-106): Ուրեմն Գրիգոր Խուլը Շարականների եղանակներն է ճշգրտել, «խսկ Գևորգը զբանսն և զեղանակսն» (Ղ. Ալիշան, Միսուան, էջ 104-106):

¹¹⁹ «Հին կտակարանի նախադրություններն ու ցանկերը գրել է Գևորգ Սկևռացի նշանավոր

1280-ական թվականներին Գևորգ Սկևռացու գիտա-մանկավարժական-գրչական գործունեությունը Սկևռայի դպրոցում համընկնում է գրասեր Հեթում արքայորդու Լամբրոնյան տիրապետությանը, և արտահայտվում է ոչ թե տիրոջ (Հեթումի) և դպրոցի տեսուչի (Գևորգ րաբունապետի) պաշտոնական հարաբերությամբ, այլ ընդհակառակը, իմաստուն խորհրդատուի և գահաժառանգ սանի հարաբերությամբ, որոնք նաև մշակութային համագործակցության մեջ էին միմյանց հետ: Բանասիրությանը ինչպես Սկևռացու վարքից, այնպես էլ հիշատակարաններից հայտնի է, որ նա հորինել է Աստվածաշնչի ցանկերն ու նախադրությունները: Սակայն անհայտ էր, որ այդ արվել է արքայորդի Հեթումի խնդրանքով:

Ահա այդ հիշատակարանը, որ բերում ենք ամբողջությամբ, նաև հարցի հետ կապված որոշ կետեր ճշտելու համար է:

«...Մեղաւոր հողս Ստեփանոս Գոյներերիցանց ցանկացայ ստանալ զԱստուածաշունչ զիրս ըստ կարի այս երկրո՞րդ անգամ... և հանգեալ իմ ի ծերութեան և նուազեալ յամենայն զգայարանաց, որպէս գործոցս իսկ երևի, այլ վասն յիշատակի և միխթարութեան հոգւոյ և մարմնոյ յԱստուած ապաստան եղէ և նա ետ կարողութիւն և ստացայ առաջին զայս զաստուածատէս և զաստուածախաւս մարգարէն Մովսէսի զհինգ զիրան, և զՅեսուն, և զԴատաւորսն, և զՀռութն յաւել ի սա Խաչատուր վարդապետ՝ վասն յիշատակի հոգւոյ իւրոյ...»

Եւ քանզի լուսաւորիչն հոգւոյ իմոյ մեծ վարդապետն Գևորգ փարթամացոյց զբովանդակ Աստուածաշունչ զիրսս՝ իրք ի խնդրոյ ուրութ, և իրք՝ յինքն յինքենէ շարժեալ: Զգլխահամարսն ոչ զիտեմ ով է խնդրել, այլ զնախադրութիւնսն պարոն Հեթում խնդրեաց արքայորդին և արարեալ զսա, զի խնդրողքն բանի ըստ պիտոյից ժամանակին զինչ կամիցին՝ ղիւրաւ գտանիցին:

վարդապետը, ամենաուշը 1292 թվին, բայց գուցե նաև մի քանի տարի առաջ, միայն թե 1270 թվականից ոչ առաջ», գրում է Մ. Տեր-Մովսիսյանը և հնագույն օրինակը, որի մեջ հեղինակը առաջին անգամ հանդիպում է այդ ցանկերին և նախադրություններին, համարում է Ստեփանոս Գոյներերիցանցի 1292 թ. ընդօրինակած (Մատենադարան ձեռ. N 179) Աստվածաշունչը («Նիւթեր Ս. Գրքի ուսումնասիրութեան», Արարատ, 1904, էջ 218):

Բ. Կյուլեսերյանը 1906 թ. ներկայացնում է Պրուսայի Ս. Աստվածածին եկեղեցու Աստվածաշնչի նկարագրությունը, որը գրված է 1285-1288 թվականներին, որն ունի ցանկեր և նախադրություններ («Լոյս» Կ. Պոլիս, էջ 1166-1172, 1191-1196, 1216-1221): Այս այն ձեռագիրն է, որին ծանոթացանք վերևում, որպես Ստեփանոս քահանայի, Ստեփանոս Գոյներերիցանցի և Խաչատուրի ընդօրինակություն:

Հ. Անասյանը Գևորգ Սկևռացու Աստվածաշնչի ցանկերի և նախադրությունների աշխատանքի նախօրինակ է համարում Վենետիկի N 1 Աստվածաշունչը, որը 1319 թ. արտագրվել է Սկևռացու «ազնի օրինակից», իսկ թե երբ է գրվել վերջինս, «մեզ հայտնի չէ»: Ավետարանների գլխակարգությունները և նախադրությունները պարունակող հնագույն օրինակը համարում է Հովհաննես արքեպիսկոպոս Ստվածաշունչը՝ գրված 1270 թ., որը ինքը Գևորգ Սկևռացին հետո խմբագրել է: Եզրակացություն. «Ավետարանների նախադրություններն ու գլխակարգությունները և վերջիններիս կցված համաբարբառային կանոնները Գևորգ Սկևռացու հեղինակությունն են, հակառակ անցյալում եղած այն կարծիքին, թե նրա գրչին են պատկանում միայն Հին կտակարանի նախադրություններն ու գլխակարգությունները»:

Ամսիջապես նկատենք, որ Հովհաննես Արքեպիսկոպոս Ստվածաշնչում Նոր կտակարանը նախադրություններ չունի, այդտեղի գլխակարգություններն ու համաձայնության կանոնները ավելի վաղ կային, որոնք Գևորգ Սկևռացին հորինել չէր կարող (Հ. Անասյան, Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, «Էջմիածին», 1971 թ., ԺԱ-ԺԲ, 1972, Ա-Դ, համարներ: Առանձնատիպ, Էջմիածին, 1972 թ., էջ 22, 87):

Վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ սուրբ մատենիս միամիտ սրտիւ յիշել զվերոյգրեալքս՝ առաջին զօրինակին փարթամացոցիչն և շնորհողն մեզ առատապէս զԳէորգ վարդապետ, և զծնողսն իւր, զհոգևոր հայրն իմ, և զԽաչատուր վարդապետն՝ ծնողիւք իւրովք ևս և զտառապետալ ոգիս՝ զնուաստ գրիչս և զծնողսն իմ և զուսուցիչսն իմ՝ ի Տէր... ՉԽԶ (1297) թուին աւարտեցաւ ի փառս Աստուծոյ, ամէն, ի թագաւորս հայոց Սմբատայ և ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի»¹²⁰:

Այս հիշատակարանից երևում է, որ.

Մեծ վարդապետ Գևորգ Սկևռացին ճոխացրել է բովանդակ Աստվածաշունչը:

Որոշ բան ուրիշների խնդրանքով, որոշ բան՝ իր ցանկությամբ է կատարել:

Գլխահամարները անհայտ է թե ում խնդրանքով է կազմել, ամենայն հավանականությամբ իր կամքով է, բայց Նախադրությունները կազմել է Հեթում արքայորդու խնդրանքով:

Ցանկերը և նախադրությունները Գևորգ Սկևռացին կազմել է իր աշակերտ Խաչատուրի Աստվածաշնչի վրա¹²¹, որի սկզբը ինքը՝ Խաչատուրն է արտագրել, Նոր կտակարանը՝ Ստեփանոս քահանան 1285 թ., իսկ մյուս մասը՝ Ստեփանոս Գոյնեբերիցանցը՝ 1288 թվականին:

Մեզ թվում է, սույն օրինակի վրա նախնական աշխատանքը ավարտելուց հետո Գևորգ Սկևռացին 1289-1291 թվականներին գրում և նկարագրում է մի Աստվածաշունչ՝ ցանկերով և նախադրություններով, որը և հայտնի է որպես «Գևորգ Սկևռացու օրինակ»: Այս բանի ապացույցն է այն, որ Ստեփանոս Գոյնեբերիցանցը 1292 թ. Աստվածաշունչ է ընդօրինակում Գևորգ Սկևռացու և Խաչատուրի օրինակներից («յորոց արինակաց և զգիրքս գրեցի») ¹²². օրինակում Նոր կտակարանին հաջորդում են «Կանոն հաղորդութիւն տալոյ», «Կանոն մկրտութեան յորժամ քրիստոնեայ առնեն» (վերջից թերթ է պակասում և անհայտ է, թե էլ ինչ նյութեր կային)¹²³, որոնք «Մաշտոց» ժողովածուից են, այնինչ Ստեփանոս Գոյնեբերիցանցի օրինակում դրանց փոխարինում են այլ նյութեր՝ վերցված Գևորգ Սկևռացու օրինակից¹²⁴, ինչպես «Խրատք ընթերցմանց բովանդակ տարւոյն» (որի մեջ մեծ տեղ է հատկացված

¹²⁰ Մատենադարան, ձեռ 6273, էջ 60բ-61ա: Ձեռագիրը գտնվել է Եվդոկիայի Ս. Գևորգ եկեղեցում, 1865 թ. հունվարի 22-ին արտագրել է Ղ. Փիրդալեմյանը և մուծել իր «Նշխարք»-ում:

¹²¹ Խաչատուրի օրինակի նկարագրության («Լոյս», 1906, էջ 1166-1172, 1191-1196, 1216-1221) քննությունը ցույց է տալիս, որ, հիրավի գլխակարգությունները և նախադրությունները կատարված են ձեռագիրը գրելուց հետո, քանի որ նրանցից յուրաքանչյուրը գտնվում է ոչ թե համապատասխան գրքի սկզբում, այլ երբեմն մի քանիսը միասին, մի գրքի սկզբում, ընդ որում հաճախ վերջին գրքերինը ավելի առաջ են գրված քան սկզբինները և այլն:

¹²² Մատենադարան, ձեռ հմր. 179, էջ 562բ. «Յիշեսցիք ի Քրիստոս զհոգևոր հայրն իմ և լուսաւորիչ զԳէորգ վարդապետն և զհամակամ աշակերտ նորին զԽաչատուր, յորոց արինակաց և զգիրքս գրեցի բազում խնամարկութեամբ ի նորանէ... թուականիս ՉԽԱ (1292)»:

¹²³ «Լոյս», Կ. Պոլիս, էջ 1167:

¹²⁴ «Ի Գէորգ վարդապետին արինակէն գրեցի զսա: Եւ նա գտնվել էր թէ որք յընթեռնողն զսա այլափոխ բանիցն պատահեցել՝ մի տգիտութեան վարկցի կամ անձնահաճութեան, և մի համարձակեցի յեղաշրջել բան ինչ, զի յարինակէ մեկնութենէն Տեառն Խոսրովու ուղղեցաք, որչափ գտաք զի նմանէ քննեալն» (Մատենադարան, ձեռ. N 179, էջ 511ա): Այս վերաբերում է Աղաթամաստոյցին: Պատարագամատույցը վերջանում է այսպէս. «Ի Գէորգ վարդապետին արինակէն գրեցի զսա: Եւ նորա գրեալ էր, թէ մի հեղգութեան համարիք զոչ յաւելուլն ի սմա զհամբակագունից ոմանց զնորաձև բանից բարդումս... յիշեալ զմեղաւոր հոգս զՍտեփանոս...» (Անդ, էջ 555բ):

«Խրատք ըստ Ճաշոց գրոցն» նյութին), «Տաւնացոյց», «Աղաթամատոյց», «Պատարագամատոյց» և այլն:

Հետաքրքրական է, որ 1300 թվականին Գևորգ Սկևռացին կրկին ընդօրինակում է Աստվածաշունչը և վերջում դարձյալ շարադրում «Ժամագիրք» (մասնակի), «Պատարագամատոյց» (ծանոթագրված «Մի ոք մտացածին կարծելով շորթեցե, զի ի մեծէն Խաւսրովու է ասացեալ զառաջնոց աւրինակացն»), «Տաւնացոյց» (կանոնագրով), հիշատակարանով և բացատրականով: Այս բոլորը «գիտացեք զի երջանիկ վարդապետ Գեորգեա ձեռամբ գրելոցն փոխեցի... ոչ աւելի և ոչ պակաս» հավաստիացնում է գրիչը¹²⁵: Իսկ Խաչատուրի օրինակը Գևորգ Սկևռացու ձեռքով գրված չէ: Վերջապես Գևորգ Սկևռացու օրինակը նկարագարող էր, որն, ինչպես վկայում է վարքագիրը, «և գեղազարդ շքով նկարեալ, զոր տեսողացն և վայելողացն յայտնի է»¹²⁶: Այնինչ Խաչատուրի օրինակը միայն երկու նկար ունի (Մովսէս և Յետո՛ւ):

Այս բոլորը վկայում են, որ Գևորգ Սկևռացին 1288 թվականից հետո և 1292 թ. առաջ գրել և նկարագարող է Աստվածաշունչ մատյանը, որից և նրա իսկ աշխատած առաջին (Խաչատուրի) օրինակից 1292 թ. արտագրել է Ստեփանոս Գոյներերիցանցը Մատենադարանի հմր 179 ձեռագիրը¹²⁷: Այս ձեռագիրը արժեքավոր է նաև նրանով, որ Ծննդոց գրքի ցանկի վերջին սյունակում պահպանվել է Մովսէս նախամարգարէի նկարը: Մովսէսի նկարը գտնվել է նաև Խաչատուրի օրինակում, դարձյալ նույն ցանկի վերջում (16)¹²⁸: Խաչատուրը նորուսում աշակերտ էր, իսկ Ստեփանոս Գոյներերիցանցը ծաղկող չէր: Մնում է ենթադրել, որ այն նկարել է Գևորգ Սկևռացին:

Բայց այստեղ մեզ ամենից առաջ հետաքրքրում է Հեթում արքայորդու և Գևորգ Սկևռացու մշակութային համագործակցությունը: Լամբրոնի տերը խնդրել է Սկևռայի ռաբունապետին ձոխացնել Աստվածաշունչը նախադրությամբ, որը նա կատարել է և ավարտել 1288 թվականին: Այս համագործակցությունը շարունակվում է նաև հետագայում: 1293 թ. Հեթում թագավորը Հովհաննէս Երզնկացուց Քերականությունը նվեր ստանալուց հետո¹²⁹, Գևորգ Սկևռացուն նոր պատվեր է տալիս:

¹²⁵ Լ. Պողարյան, Ցուցակ Երուսաղեմի, հ. 2, 1972, էջ 499-501:

¹²⁶ «Բանբեր Մատենադարանի», էջ 479:

¹²⁷ «Լոյս», էջ 1168:

¹²⁸ Մատենադարանի հմր 179 ձեռագրի գրչության վայրը չի հիշատակված հիշատակարանում, սակայն այն ընդօրինակված պետք է լինի Արմենի մենաստանում, ուր այդ ժամանակ բնակվում էին Գևորգ Սկևռացին և Ստեփանոս Գոյներերիցանցը: Վերջինիս «ի նիւթ» օգնող Վահրամ սարկավագը, որն այդ թվականին Արմենի անապատում ավարտում է Փիլոնի գործերի ընդօրինակությունը, աղաչում է հիշել «զհոգևոր հայրն իմ և զուսուցիչ, որ իբրև գիւր մաքրէ զիմ զմարմնական ախորժակս՝ յաստուածայինսն յորդորելով հանապազ աննախանձաբար զՍտեփանոս Գոյներերիցանց» (Լ. Պողարյան, Ցուցակ Երուսաղեմի, հ. Ա, էջ 469):

¹²⁹ «...Աստուածասէր թագաւորն Հայոց Հեթում, որդի Լևոնի բարեպաշտի... վարժ աստուածային գրոց սրբոց և պատուող ուսումնականաց եւ գիտութեան հմտականաց, բարեգութ առ ամենեսեան եւ խնամածու, յորմէ եւ նուաստս Յոհաննէս Երզնկայեցի բազում խնամ սիրոյ եւ առատութիւն գթոյ վայելեցի, եւ զի յոյժ գրասէր եւ ուսումնասէր ունէր բարս բարեմիտ թագաւորն... Հեթում... զաղքատութիւն եկեղեցւոյ մար զարդարեալ ծածկէր եւ ոչ դադարէր ի գիրս ստանալոյ եւ յեկեղեցւոյ զանձս յաւելուած առնելոյ: Վասն որոյ եւ ես նուաստ Յոհաննէս Երզնկայեցի բիւր բարեաց պարտական. խոհեմամիտ և իմաստութեան պատուող արքայի, ընծայեցի զփոքր զայս գրքունք, որ կոչի Քերական... ի թուականիս Հայկազնեան տումարի ԶԽԲ (1293) գրեցաւ գրքուկս»:

Տեսնելով Եսայի մարգարեի երեք մեկնությունների կատարված «կարճ և համառատ» (Եփրեմ Ասորի), «ճոխաբար խաւսեցեալ» (Հովհաննէս Ոսկեբերան) և «ի սաւկաւն խաւսեցեալ» (Կյուրեղ Աղեքսանդրացի), «Հեթում ի մտի եղեալ զսոսա ի մի ժողովել... խնդրեաց զայս առնել հարկեցուցիչ հրամանաւ ի երրերջանիկ և ի լուսաբան րաբունապետէս Գեորգեայ, որ ընդ այսու ժամանակ առաքինութեամբ յանձին ներգործութեամբ բնաւին փարթամացեալ, որ այժմս քրտնաջան երկեամբք հրահանգէ զհամբակս, որ բանի էին հետևեալ զյոլովս»¹³⁰, որն ավարտվում է 1295 թ.¹³¹:

Բայց Հեթում արքայորդին մինչ այդ ստացել էր նաև Ճաշոց՝ «Հեթումի Ճաշոցը», որի քննությունը մեզ բերեց այն համոզման, որ այն գրված է Սկևռայում Ստեփանոս քահանայի ձեռքով: Սկևռացի րաբունապետի և Ճաշոց ստացողի պաշտոնական, բարեկամական հարաբերությունները, ինչպես նաև ստեղծագործական կապերը խոսում են այն բանի օգտին, որ Ճաշոցը ոչ միայն Սկևռայում կարող էր գրվել, այլև Գևորգ Սկևռացին այն մարդն էր, որ ի վիճակի էր այն կատարելու: Հեթում արքայորդուն տրված Գևորգ Սկևռացու բազմաթիվ խրատների և խորհուրդների պատմականորեն փաստարկված և Սուրբ Գրքով օրինականացված գրավոր արտահայտությունը գտնում ենք Ճաշոցում, որն ինչպես տեսանք, հաստատում է հիշատակարանը:

Հեթում արքայորդուն հայտնի էին Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր առաջնորդների համագործակցությունը գիտնական վարդապետների և արվեստավոր գրիչների ու ծաղկողների հետ: Նրան անձանոթ չէին կարող լինել ո՛չ իր Հեթում պայլի և Վարդան վարդապետի, ո՛չ էլ Կոստանդին կաթողիկոսի և Թորոս Ռոսլինի բեղմնավոր համագործակցությունը¹³², ինքն էլ պահպանում էր իր կապերը Գևորգ Սկևռացու հետ:

Այդ ժամանակ Սկևռայի դպրոցում աշխատում էին նշանավոր գեղագիրներ Ստեփանոս Իրիցորդին, Ստեփանոս քահանան, Ստեփանոս Գոյներերիցանցը, որոնց գրչական գործունեությանը ծանոթացանք փոքրիշատե, Գրիգոր Պիծակ ծաղկողը, Սիոն նկարիչը, Ստեփանոս Գրիչը, որոնց գործերին հանդիպում ենք Ճաշոցի գրությունից մոտ մի տասնամյակ ուշ, սակայն որոնք մեզ հետաքրքրող ժամանակահատվածում սովորում և աշխատում էին Սկևռայում: Իսկ Սկևռայի մատենադարանը հարուստ էր բազմաբնույթ մատյաններով՝ նկարազարդ, խազագրված, ընտիր և լավ օրինակներով, որոնց մի մասը տեղի արվեստավորների գործերն էին:

Ճաշոցի ստացող Հեթումի անձնավորությունը և Սկևռայի գրչության դպրոցի 13-րդ դարի երկրորդ կեսի գործունեության ծանոթությունը, դպրոցի րաբունապետ Գևորգ Սկևռացու գիտա-մանկավարժական, գրչական, խմբագրական և մեկնողական գործունեության քննությունը, ինչպես նաև Հեթում արքայորդու՝ Լամբրոնի տիրոջ և Սկևռայի րաբունապետի հարաբերությունը և մշակութային համագործակցությունը մեզ բերում է այն համոզման, որ Հեթում արքայորդին Ճաշոցը պատվիրել է իր Լամբրոնյան տիրության մշակութային գլխավոր կենտրոն Սկևռայի վանքում, որի մասին ակնարկներ կան նաև բուն ձեռագրում, և որը նշված ժամա-

¹³⁰ Մատենադարան, ձեռ. N 4825, էջ 207ա:

¹³¹ Մատենադարան, ձեռ. N 180:

¹³² Գաբեգին Հովսեփյան, Կոստանդին Ա. կաթողիկոս որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր, «Նիւթեր և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան» Պրակ Բ, Նյու Յորք, 1943, էջ 5-44:

նակահատվածում Կիլիկիայի գրչության ամենաարդյունավոր կենտրոններից մեկն էր, եթե ոչ ամենաարդյունավորը, իր բեղմնավոր ու հմուտ գրիչներով:

Ճաշոցը, հետևաբար, խմբագրել, գրել և նկարագարել են Սկևռայի արվեստավոր միաբանները, տեղի գրչության դպրոցի ներկայացուցիչները, հայ գրչության արվեստի ականավոր տեսաբան և հմուտ կիրառող, մատենագիր, խմբագիր, մեկնիչ, գրիչ և ծաղկող, Սկևռայի դպրոցի բաբունապետ Գևորգ Սկևռացու ղեկավարությամբ և մասնակցությամբ: Հեթում արքայորդու շրջապատում 1280-ական թվականներին Գևորգ Սկևռացին ամենահարմար մարդն էր, որ կարող էր խմբագրել Ճաշոցը այնպես, ինչպես այն ներկայացնում է մեզ, որպես «վարդապետութիւն խրատու», առաջին հերթին Հեթում արքայորդու համար:

*Հրատարակության պատրաստեց
Պատմական գիտությունների թեկնածու Ա. Ղազարոսյանը*

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԾԵՐՈՒՆԻՆ ԵՎ ՇՆԱԳԼՈՒԽԸ

Քրիստոս համբարձվելուց առաջ առաքյալներին ասաց, որ կուղարկի Մխիթարիչին՝ Սուրբ Հոգուն: Ղուկաս Ավետարանիչը գրում է. «Եվ ահա Ես ուղարկում եմ ձեզ Իմ Հոր խոստումը, իսկ դուք նստեցեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից գործությամբ զգեստավորվեք» (ԻԴ 49): Հովհաննու Ավետարանում Սուրբ Հոգու գալստյան մասին հիշվում է երիցս: Առաջին անգամ Հիսուս այս մասին ասում է Ոտնվայից հետո. «Եվ Ես պիտի աղաչեմ Հորը, և Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի: Ճշմարտության Հոգին, որին այս աշխարհը չի կարող ընդունել, որովհետև Նրան չի տեսնում և Նրան չի ճանաչում, բայց դուք ճանաչում եք Նրան, որովհետև ձեզ մոտ պիտի բնակվի և ձեր մեջ պիտի լինի» (ԺԴ 16-17):

Հիսուս, շարունակելով խոսքը, այնուհետև ասում է. «Բայց Ես ճշմարիտն եմ ասում ձեզ, լավ է ձեզ համար, որ Ես գնամ, որովհետև եթե Ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա, իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ... Երբ որ գա Նա, ճշմարտության Հոգին, ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ, որովհետև ոչ թե Ինքն Իրենից կխոսի, այլ ինչ լսի, այն կխոսի և գալիք բաների մասին կպատմի ձեզ» (ԺԶ 7, 13-14):

Գործք Առաքելոցի սկզբում ևս երկիցս հիշատակվում է Սուրբ Հոգու գալստյան մասին: Խորհրդավոր ընթրիքի ժամանակ Հիսուսի խոսքերի վկայակոչմամբ ասվում է. «Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց դուք այս օրերից ոչ շատ հետո պիտի մկրտվեք Սուրբ Հոգով» (Ա 5): «Գործք Առաքելոցում» Համբարձման նկարագրության մեջ ասվում է, որ երբ աշակերտները Հիսուսին հարցնում են Իսրայելի թագավորության վերահաստատման մասին, համբառնալուց առաջ Քրիստոս պատասխանում է. «Ձեզ տրված չէ իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց Իր իշխանության մեջ, այլ երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա, գործություն պիտի առնեք և Ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը» (Ա 7-8):

Սուրբ Հոգու էջքի մասին «Գործք Առաքելոցում» ասվում է. «Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս»: (Բ 1-4):

Հոգեգալստյամբ կատարվեցին Եզեկիել մարգարեի, Դավթի, Սողոմոնի և Հովել մարգարեի խոսքերը. «Նոր սիրտ եմ տալու Ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մեջ. ձեր մարմիններից հանելու եմ քարեղեն սիրտն ու մարմնեղեն սիրտ եմ տալու ձեզ, Իմ հոգին եմ տալու ձեզ» (Եզեկ. ԼԶ 26), «Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը, և Իր բերանի շնչով՝ Նրա բոլոր գործությունները» (Մաղմ. ԼԲ 6), «Արդարև, Տիրոջ հոգին լցնում է տիեզերքը, և Նա, ով պահում է ամեն ինչ, գիտե, թե ով ինչ է բարբառում» (Իմաստ. Սող. Ա 7), «Այն օրերին Իմ հոգուց կհեղեմ Իմ ծառաների վրա, Իմ աղախիներին վրա, ո-

րոնք կմարգարեանան» (Հովել Բ 29):

Հոգեգալուստը տեղի ունեցավ Պենտեկոստեի տոնին, որը հրեաները կատարում էին ի հիշատակ Սինա լեռան վրա Մովսեսին տրված Տասնաբանյայի՝ տասը պատվիրանների: Ինչպես գրում է Գրիգոր Տաթևացին, եգիպտական գերությունից ելնելուց հետո հիսուններորդ օրը անապատում տրվեց Հին Ուխտի կանոնը, և Հիսուսի խաչելությունից հիսուն օր հետո Վերնատանը տրվեց Նոր Ուխտի իմացությունը, որն առաքյալները քարոզելու էին ողջ աշխարհում¹:

Պենտեկոստեն, որն հունարեն նշանակում է Հիսուններորդ կամ Հիսուններորդ օր, հրեական նշանավոր տոներից էր և կատարվում էր Պասեֆից՝ Զատիկից հիսուն օր հետո, ինչպես ասացինք, ի հիշատակ Տասնաբանյայի ընծայման, ու նաև նվիրված էր բերքի երախայրիքը Աստծուն նվիրելուն: Ինչպես որ Զատիկին էին մեծ թվով հրեաներ հավաքվում Երուսաղեմում, այնպես էլ այս տոնին էր բազմամարդ դառնում Երուսաղեմը, և ինչպես որ Հիսուսի խաչելությանը Զատիկի տոնին բազմաթիվ ականատեսներ եղան, այնպես էլ հարկավոր էր, որ Սուրբ Հոգու իջմամբ աստվածային փառքի հայտնությունը Պենտեկոստեի տոնին ներկա եղողները տեսնեին: Ինչպես Հովհան Ոսկեբերանն է գրում, Սուրբ Հոգին այս նշանավոր տոնին իջավ, որպեսզի խաչելության ժամանակ Նրա անարգանքը տեսնողները տեսնեն և Նրա փառքը²:

Սուրբ Հոգու՝ Պենտեկոստեին իջնելու և այս օրվա հին ու նոր տոների խորհուրդների մասին Մաղաքիա արքեպս. Օրմանյանը գրում է. «Տօնին գլխաւոր նշանակութիւնը Սինեական օրինաց տուուչութիւնն էր, որ առաջին Զատիկէն կամ Եգիպտոսէ ելնելէն իբր յիսուն օր ետքը տեղի ունեցած էր, իսկ գլխաւոր արարողութիւն նոր հունձքին երախայրիքը նուիրելու եւ ճաշակելու օրէնքն էր, որուն համար հրէայք այդ օրը Տօն երախայրեաց հնձոց կը կոչէին: Օրէնքը կը հրամայէր այն օր Աստուծոյ նուիրել նոր ցորենի պաներ, այսինքն նկանակներ եւ զոհել եօթն որոջ եւ մէկ զուարակ նորահաս հօտէն եւ երկու խոյեր: Հրամայուած էր, որ այս նուէրն ու զոհը չըրած նոր ցորեն չուտուի. «Եւ զամենայն մուրկ փխրեալ մի ուտիցէք մինչեւ յօրն, յորում մատուցանեցէք պատարագս»³:

Սուրբ Հոգու էջքի ժամանակ հնչած ձայնի և բոցեղեն լեզուների մասին Ոսկեբերանը գրում է, որ ի հավաստումն Սուրբ Հոգու իջման, ձայնը հնչեց ականջին լսելի լինելու համար, իսկ բոցեղեն լեզուները իջան աչքին տեսանելի լինելու համար⁴:

Գրիգոր Տաթևացին էլ, նկատի ունենալով բոցեղեն լեզուները, գրում է, որ այն կարծրերը հալեցնում է, իսկ թույլերը պնդեցնում, ինչպես որ հրից մետաղը հալում է և կավը թրծվում, այնպես էլ անհավատների սիրտը հալեց և հավատքի բերեց, իսկ առաքյալներին կարծրացրեց, ամրացրեց իրենց հավատքում, որ ողջ աշխարհով աներկյուղ քարոզեն Ավետարանը⁵:

Նույն ձևով, Շարակնոցի Հոգեգալստյան կանոնում է ասվում.

Առաքելոյ աղանոյ, իջանելով մեծաձայն հրնչմամբ,
Ի բարձանց ի նմանութիւն լուսոյ փայլման,
Հրազինեաց անկիզելի զաշակերտսն,

¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմերան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 172:

² Մեկնութիւն գործոց Առաքելոց խմբագիր արարեալ նախնեաց յՈսկեբերանէ եւ յԵփրեմէ, Վենետիկ, 1839, էջ 45:

³ Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Համապատում, Կ. Պոլիս, 1913, էջ 1016:

⁴ Толковая Библия, том десятый, С. Петербург, 1912, стр. 13.

⁵ Շարակնոց, Վաղարշապատ, էջ 286:

Մինչդեռ նըստեին ի սուրբ Վերնատանն⁶:

Սուրբ Հոգու հրանման իջնելով՝ աշակերտներին ոսկու նման մաքրելու միտքն ենք գտնում և հետևյալ տողերում.

Մարսափելի հողմոյ նըման ահեղագոչ սաստիկ հընչմամբ
Երևեցար ի Վերնատանն Հոգիդ դասուն երկոտասան,
Որք առ ի Քէն մըկըրտեցան, որպէս զոսկի հրով մաքրեցան,
Մաքրեա ի մէնջ զմէզ մեղաց և ըզգեցո ըզլոյս փառաց⁷:

Սուրբ հոգով առաքյալների գորանալու և Ավետարանը աներկյուղ քարոզելու մասին Մաղաքիա արքեպս. Օրմանյանը գրում է. «Հոգւոյն Սրբոյ գալստեան բուն իմաստը աստուածային շնորհաց աշակերտներուն վրայ ներքնապէս հեղումն է, ներքին զօրութիւն մը, որ անոնց հոգիին վրայ կազդէ, միտքը կը լուսաւորէ, սիրտը կուղղէ, կամքը կը զօրացնէ, վարանումը կը փարատէ, արիւթիւն կը ներշնչէ եւ ազդեցութիւն ընելու կարողութիւն կու տայ: Այդ էր, որ առաքեալներուն պէտք էր, այդ էր, զոր Յիսուս խոստացեր էր եւ այդ էր, որ յատուկ եւ յայտնի կերպով նոյն օր պարգեւուեցաւ Վերնատան մէջ եղողներուն: Շնորհքը իմանալի էր, հոգեկան և ներքին, սակայն Աւետարանի յաղթութեան նշանակութիւնը պէտք էր տեսանելի եւ նիւթական եւ արտաքին կերպով ալ յայտնուէր ժողովրդին, որ արտաքինով կապեր, եւ զգալի կերպով պէտք էր ներգործէր աշակերտաց, որոնց վրայ դեռ շատ տկար էր իմանալի դրութեան ազդեցութիւնը: Այդ է բուն պատճառը, որ Աւետարանին սկզբնաւորութեան ատեն հրաշքներ եւ հրաշալիքներ յաճախ կը կատարուէին եւ միեւնոյն պահանջից հետևանքն էր, որ Հոգւոյն զօրութեան եւ շնորհաց աշակերտներուն վրայ իջնել եւ հանգչիլն ալ արտաքին հրաշքներով յայտնուեցաւ»⁸:

Հոգեգալստյան տոնի հոգևոր խորհրդի որպէս ընդհանրացում Օրմանյանը այնուհետև գրում է. «Հրէից ծածկամուտ պահուտողները հանկարծ յամարձակ եւ աննկուն քարոզիչներ կը դարձնէ: Յիսուսին հետեւող երեւնալով դժուարութեանց չբաղխելու համար փախչողները արիասիրտ նահատակներ կը կազմէ: Գալիլիոյ ծովակին առաջ ձկնորսները աստուածուսոյց վարդապետներու կը փոխէ եւ այս կերպով Ավետարանը Երուսաղեմէն սկսելով մինչեւ ի ծագս երկրի կը տարածէ եւ կը հաստատէ»:

Հին Ուխտի Պենտեկոստեի և Նոր Ուխտի Հոգեգալստյան տոների միջև եղած ընդհանրությունը Օրմանյանը հետևյալ զուգահեռով է ներկայացնում՝ վկայակոչելով հայրաբանական ավանդույթը. «Հոգւոյն Գալստեան Պենտեկոստեին տօնին յարակցիլը խորհրդաւոր նշանակութիւն մը ունեցաւ, որովհետեւ Հին տօնը Մինէական օրինաց տուուչութեան եւ Հին Ուխտի հռչակման յիշատակն էր, որ նոյն տօնն ալ քրիստոնէական օրինաց տուուչութեան եւ Նոր Ուխտի հռչակման յիշատակն եղաւ: Եւ ինչպէս հին տօնին բնական երախայրիքները կընծայուէին Աստուծոյ, նոր տօնին ալ բանական երախայրիքները Աստուծոյ ընծայուեցան, քրիստոնէական եկեղեցւոյ անդրանիկ քարոզիչները խօսեցան եւ քրիստոնէական եկեղեցւոյ անդրանիկ հաւատացեալները մկրտուեցան»⁹:

⁶ Գրիգոր Տաթևացի, Ձմերան հատոր, էջ 171:

⁷ Նույն տեղում, էջ 290:

⁸ Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ազգապատում, էջ 1017:

⁹ Նույն տեղում:


Հոգեգալստյան տոնը կատարվել է դեռևս առաքելական շրջանից, և տոնի հոգևոր խորհրդի մեկնությունը գտնում ենք Ընդհանրական Եկեղեցու վաղ շրջանի հայրերի գործերում, իսկ պատկերային հայտնի հնագույն արտահայտությունը՝ Ռաբուլայի Ավետարանում: Հոգեգալստյան նկարների պատկերագրությունը խարսխված է Սուրբ Հոգու էջքի «Գործք Առաքելոցի» պատմության վրա, համաձայն որի, 12 առաքյալները հավաքվել են Վերնատունը խորհրդանշող շինությունում, որի վերին կենտրոնական մասից, աստվածային երկինքը խորհրդանշող կապուտակ կիսաբոլորակից վայր է իջնում աղավնաձև Սուրբ Հոգին, որից կամ երկինքը խորհրդանշող բոլորակից աստվածության լույսով իջնում և առաքյալների վրա են հանգչում հրեղեն լեզվակները:

Պատկերների կենտրոնական մասում ծածկոցով (վարագույրով) պատված սրբության տապանակն է: Մի շարք պատկերներում սրբության խորհրդի վրա է հանգչում աղավնաձև Սուրբ Հոգին:

Հոգեգալստյան ժամանակ թեև չի նշվում, որ Տիրամայրը ևս Վերնատանն էր, սակայն, քանի որ Համբարձումից հետո Տիրամայրը առաքյալների հետ Վերնատանն էր, ուստի պատկերների մի մեծ խմբում Տիրամայրը ներկայացված է առաքյալների կենտրոնում: Հոգեգալստյան ժամանակ Տիրամորը կենտրոնում պատկերելը նաև շարունակությունն է Համբարձման պատկերագրական ավանդույթի: Այն, սակայն, նաև հոգևոր-այլաբանական մի կարևոր խորհուրդ ևս ունի: Վերնատանը Սուրբ Հոգու էջքով հաստատվեց քրիստոնեական Եկեղեցին, և Տիրամայրն այստեղ խորհրդանշում է եկեղեցին, որի համար նա պատկերվում է կենտրոնում, առաքյալներից առավել մեծ և ընդգծված դիրքով, և նույն այս պատճառով պատկերագրական մի խմբում Սուրբ Հոգին իջնում է ոչ թե եկեղեցու՝ բեմը խորհրդանշող Սրբության խորհրդի, այլ Տիրամոր վրա:

Քանի որ Համբարձմանը հաջորդեց Հոգեգալուստը, ուստի Տերունական պատկերաշարում ևս այս երկու թեմաները իրար են հաջորդում՝ իրար կապված լինելով պատկերագրական մի շարք ընդհանրություններով, որոնք արդեն վեցերորդ դարում լավագույնս արտացոլվել են Ռաբուլայի Ավետարանում:

Այստեղ ևս, ինչպես Համբարձման տեսարանում, Հոգեգալուստն, ասես, տեղի է ունենում Ձիթենյաց լեռան վրա: Երկու մանրանկարներում էլ նույն բնապատկերն է՝ Ադամական մեղանշման փշաբերությունից հետո (տե՛ս Ծննդ. Գ 18) Քրիստոսի հալության ծաղկաբեր դարձած երկրով և Ձիթենյաց լեռը խորհրդանշող ձիթենիներով:



ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏ
Ռաբուլայի Ավետարան

ՆԱՄԱՐԱՐՁՈՒՄ
Ռաբուլայի Ավետարան

Կիսականարն է միայն, որ խորհրդանշական ձևով հուշում է, որ Սուրբ Հոգու էջքը տեղի է ունենում ոչ թե նախորդ պատկերի նման Ձիթենյաց լեռան վրա, այլ Վերնատանը:

Երկու մանրանկարների կենտրոնում էլ Տիրամայրն է, ում աջ և ձախ կողմերում գտնվում են առաքյալների երկու խմբերը, որոնք գլխավորում են Պողոս և Պետրոս առաքյալները: Պողոս առաքյալը թեև ոչ թե Հոգեգալստի, ու առավել ևս Համբարձման ժամանակ դեռևս առաքյալների շարքը չէր դասվել, սակայն նրա ներկայությունը երկու պատկերներում էլ, որպես հեթանոսաց առաքյալ, խորհրդանշում է, որ Ավետարանը քարոզվելու է նաև հեթանոսներին:

Կրակե լեզվակները հանգչում են առաքյալների և Տիրամոր լուսապսակների վրա՝ խորհրդանշելով Սուրբ Հոգու էջքը:

Տիրամոր լուսապսակը, ի տարբերություն առաքյալների, ոչ թե ոսկեղեն է, այլ կապույտ և ավելի մեծ, որով առանձնանում է առաքյալներից: Տիրամոր լուսապսակին ոչ միայն կրակե լեզվակն է, այլև աղավնաձև Սուրբ Հոգուց իջնող լույսի ճառագայթները:

Թեև «Գործք Առաքելոցում» ասվում է. «Նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա» (Բ 3), սակայն, առաքյալների վրա հանգչող լեզուներից բացի, որպես Սուրբ Հոգու նշանակ պատկերվում է նաև աղավնին, ինչպես որ Մկրտության տեսարանում է, համաձայն ավետարանական հետևյալ խոսքերի. «Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս ելավ, եվ ահա երկինքը բացվեց Նրան, և Նա տեսավ Աստծո Հոգին, որն իջնում էր ինչպես աղավնին և գալիս էր Իր վրա» (Մտթ. Գ 16, տե՛ս նաև Մրկ. Ա 10, Դուկ. Գ 22):

Հիսուսի մկրտության հետ Հոգեգալստյան տարվող հոգևոր-պատկերագրական զուգահեռով Վերնատանը ևս, ինչպես Հորդանանում, վերևում աստվածային երկինքը խորհրդանշող կիսաբոլորակն է, որից վայր է իջնում աղավնակերպ Ս. Հոգին: Հորդանանում Ս. Հոգին եթե հանգչում էր Հիսուսի վրա, ապա Հոգեգալստյան պատկերներում Քրիստոսի հիմնած եկեղեցին խորհրդանշող Տիրամոր կամ եկեղեցու սեղանին, ուր սրբության ծածկյալ խորհուրդն է:

Սուրբ Հոգին երբեմն պատկերվում է ոչ թե աղավնաձև, այլ վար պարզված Աստվածային Աջով: Անդրադառնալով այն հարցին, թե ինչու Ս. Հոգին երբեմն Աստվածային Աջով է պատկերվել, Հ. Քյոսեյանը վկայակոչում է Անանիա Սանահնեցու, Վանական վարդապետի և Գրիգոր Տաթևացու մեկնություններն այս մասին¹⁰: Այսպես, Վանական վարդապետը իր «Խրատ դաւանութեան» գործում գրում է. «Հայր՝ անձն, Որդին՝ գոյացութիւն. **Հոգին՝ բազուկ էւ ի բազկէն՝ մատն**»՝ ընդգծված այս հատվածի համար վկայակոչելով ավետարանական «Ես մատամբն Աստուծոյ հանեմ գդեւս» (Դուկ. ԺԱ 20) խոսքերը¹¹:

Նույն այս միտքը Գրիգոր Տաթևացին ձևակերպում է հետևյալ կերպ. «Մատն Աստուծոյ կոչի Հոգին Սուրբ... նախ որպէս մատն է յէութենէ մարմնոյն, այսպէս եւ Հոգին

¹⁰ Տե՛ս Հ. Քյոսեյան, Հայ միջնադարյան կերպարվեստի աստվածաբանության շուրջ, «Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության» գրքում, Ս. Էջմիածին, 1995, էջ 24-26:

¹¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխտ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 341:

Սուրբ Է յեութենէ Աստուծոյ»¹²:

Հոգեգալուստը համարվել է հրով մկրտություն, որով մկրտվեցին առաքյալները: Հորդանանում ջրով և Վերնատանը հրով մկրտվելու մասին Ընդհանրական Եկեղեցու հայրերից Գրիգոր Նազիանզացին գրում է. «Ձեզոթին Քրիստոսի եւ զԻւրն եւս յայտ առնիցէ, զի ուր զմեղս թողուլ պէտք եւ ժամանակ է, հեզութին յառաջեսցէ: Իսկ աստ հուր, զի յետ ընդունելոյ ումէք զպարգեսս, ապա եւ դատաստանք պահեալ կան եւ հուր երկայն եւ տանջող զոչ հաւանեալսն»¹³: Ի հավաստումն ասվածի, Նազիազանցին վկայակոչում է Հովհաննես Մկրտչի՝ «Նա մկրտեսցէ զձեզ նախ հոգւով Սրբով աստ եւ ապա հրով անդ»:

Հայկական մանրանկարչության մեջ Հոգեգալստյան հնագույն մանրանկարը գտնում ենք XI դարում գրված Մուղնիի Ավետարանում (Երևանի Մատենադարան, ձեռ. հմ. 7736):

Մուղնիի Ավետարանը ներկայացնում է պատկերագրական արդեն ձևավորված կանոնը՝ Վերնատանը հավաքված առաքյալներով և Աստվածային երկինքը խորհրդանշող կիսաբոլորակից Սուրբ Հոգու իջնելով, նրանց վրա իջած բոցեղեն լեզվակներով:

Առաքյալների երկու խմբերը զխավորում են Պողոս և Պետրոս առաքյալները: Թեև Պողոս առաքյալը այդ ժամանակ դեռևս ընտրված չէր, սակայն նա որպես հեթանոսաց առաքյալ Պետրոսի կողքին պատկերվում է թե՛ Հոգեգալստյան և թե՛ Համբարձման պատկերներում:

Այստեղ Տիրամայրը պատկերված չէ, թեև սովորաբար առաքյալների կենտրոնում, Համբարձման պատկերների հետևողությամբ, ներկայացվում է Ամենասրբուհի Կույսը: Պատկերագրական գրեթե ընդհանրացված ավանդույթով պատկերագրական կոմպոզիցիայի ստորին մասի կենտրոնում՝ կիսախորանի մեջ, պատկերվում են «Ժողովուրդները» և այս մանրանկարում ևս հեղինակը աշխատել է շեշտված ձևով նրանց պատկերել տարբեր տարազներով, որը խորհրդանշում է, որ նրանք տարբեր ժողովուրդներ են ներկայացնում՝ համաձայն «Գործք առաքելոցի» այն խոսքերի, թե Հոգեգալստյան ժամանակ «Երբ այս ձայնը լսվեց, բազմությունը հավաքվեց ու խոնվեց, որովհետև լսում էին, որ նրանք խոսում էին իրենցից յուրաքանչյուրի լեզվով: Ամենքը հիանում էին և զարմանում, ու միայնց ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են, բայց ինչպես է, որ մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով, որ ծնված օրից խոսում ենք: Մենք՝ պարթևներ, մարեր և իլամացիներ, և նրանք, որ բնակվում են Միջագետքում, Հրեաստանում և Գամփքում, Պոնտոսում և Ասիայում, Փոյուգիայում և Պամփյուլիայում, Եգիպտոսում և Կյուրենիայի հարևան Լիբեայի շրջաններում, և Հռոմից եկածներ՝ թե՛ հրեաներ և թե՛ հրեության դարձածներ, կրեսացիներ ու արաբներ, լսում ենք, որ նրանք խոսում են մեր լեզուներով Աստծու մեծագործությունների մասին» (Գործք Բ 6-11):

Հոգեգալստյան ժամանակ Վերնատանը տարբեր լեզուներով խոսելը զուգահեռի մեջ է դիտվել Բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ լեզուների բաժանման հետ, թե այն ժամանակ Աստված տարբեր լեզուներով բաժանեց մարդկանց, իսկ Վերնատանը միավորեց. ինչպես Հովհան Ոսկեբերանն է գրում. «Ձի զբաժանեալսն յաշտարակէն և ի բազմաստուածութիւն ցրուեալսն ի մի աստուածապաշտութիւն ժողովեսցեն սիրով: Եւ որպէս անդ մի լեզուն ի բազումս եղև բաժանեալ, նոյնպէս և աստ

¹² Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 61-62:

¹³ Մեկնություն գործոց Առաքելոց խմբագիր արարեալ նախնեաց յՈսկեբերանէ եւ յԵփրեմէ, Վենետիկ, 1839, էջ 46:

բազում լեզուքն ի մի մարդ եղև ժողովեալ: Զի մի և նոյն Հոգւոյն գործ էր աստ և անդ»¹⁴:

Աշտարակաշինության ժամանակ բաժանելու և Վերնատանը միավորելու մասին Ներսես Լամբրոնացին Հոգեգալստյանը նվիրված ճառում ասում է. «Եւ զամենայն մարդիկ, որ յաշտարակէն բաժանեալ էին ի բազմաստուած մոլորութիւնս, միաւորեաց ի մի աստուածգիտութիւն ճշմարիտ երեք անձնական զօրութեանդ, յամենայն լեզուս զմի Աստուած փառաւորել ուսոյց Աւետարանին քարոզութեամբ ընդ ամենայն տիեզերս»¹⁵: Այսպիսով, նման մեկնաբանությամբ ասվում է, որ առաքյալների՝ տարբեր լեզուներով խոսելը խորհրդանշում էր, որ Ավետարանը քարոզվելու էր աշխարհի ժողովուրդների լեզուներով:

Նման մեկնաբանությամբ կարելի է նաև ենթադրել, որ առաքյալներից յուրաքանչ-յուրը Վերնատանը խոսեց այն լեզվով, որով նրան վիճակված էր քարոզելու, և քանի որ Հայաստանի առաքյալը Թադեոսն էր, ուստի Լամբրոնացին նրա համար գրում է. «Թադեոսն այն տխմար՝ տեսէք որքան վայելուչ Մեծաց Հայոց զբանս իւր ասէ»¹⁶:

Նման բնորոշումը անդրադարձն է այն ըմբռնման, որ Հոգեգալստյամբ անուս ձկնորսներն ու մաքսավորները լցվեցին Սուրբ Հոգով և դարձան Տիրոջ խոսքը քարոզող առաքյալները:

Հոգեգալստյան պատկերներում խորանում պատկերվող տարբեր ազգությունների ներկայացուցիչները խորհրդանշում են «Գործք Առաքելոցում» հիշված ժողովուրդներին և ընդհանրապես բոլոր այն ժողովուրդներին, որոնց քարոզելու էր Ավետարանը: Բյուզանդական պատկերագրությունում հատկանշական է, որ 8-10-րդ դարերում «Ժողովուրդներին» աստիճանաբար փոխարինում է մի ծերունի՝ ձեռքին մի գլխանոց պահած, որում գտնվում են 12 գալարափաթեթներ: Սև ֆոնին պատկերվող այս ծերունուն, որի գլխավերևում սովորաբար գրված է լինում *o kosmos*՝ «Ամբողջ աշխարհը», տարբեր մեկնաբանություններ են տրվել (նկ. ա):

Դեռևս 19-րդ դարի վերջում այն միտքն է հայտնվել, որ ծերունու տեղը սկզբնապես պատկերված է եղել Հովել մարգարեն, ում «Եվ պիտի լինի սրանից հետո, վերջին օրերին, որ Իմ հոգուց պիտի թափեմ ամեն մարդու վրա...» (Հովել Բ 27-31) խոսքերով Պետրոս առաքյալը Հոգեգալստյան ժամանակ դիմում է Երուսաղեմում հավաքված ժողովուրդներին (Գործք Բ 16-21)¹⁷:

Նույն այս շրջանում պրոֆեսոր Ուսոնը ենթադրել է, որ այս ծերունին ներկայացնում է Դավիթ մարգարեին: Իր այս տեսակետը հիմնավորելու համար վկայակոչում է Ռաբուլայի Ավետարանի Մատթայի ընտրության մանրանկարը, որտեղ 11 առաքյալները պատկերված են կիսաշրջանում, իսկ այն տեղում, ուր հոգեգալստյան պատկերներում ներկայացված են ծերունին կամ ցեղերն ու ժողովուրդները, կանգնած են 12-րդ առաքյալը դառնալու երկու թեկնածուները՝ Հովսեփ Բարսաբեն և Մատթային, որին էլ ընկնելու էր վիճակը (Գործք Ժ 3-26): Ըստ Ուսոնի, քանի որ Հոգեգալստյան ժամանակ ևս առաքյալները պատկերվում են կիսաշրջանաձև նստած, և Մատթային արդեն նրանց հետ է, ապա կիսախորանի այդ տեղը դատարկ էր մնալու: Որպեսզի այն դատարկ չմնար, ինչպես նաև թեմատիկ-պատկերային կապ ստեղծվեր Մատթայի ընտրության և Հոգեգալստյան պատկերների միջև, դատարկ այդ տարածությունում նկարիչները պատկերել են Դավիթ մարգարեին, որի խոսքերով է Պողոս առաքյալը հիմնավորում Հուդայից հետո 12-րդ առաքյալի ընտրությունը (Գործք Ա 20-

¹⁴ Մեկնություն գործոց առաքելոց, էջ 48:

¹⁵ Ճաշոց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1881, էջ 460:

¹⁶ Նույն տեղում, էջ 470:

¹⁷ См. у Н. Покровский, Евангелие в памятниках иконографии, Москва, 1892, стр. 458:

21): Ծերունու գլխանոցի 12 գալարներն էլ, ըստ այս մեկնաբանության, խորհրդանշում են Մատաթիայի ընտրության ժամանակ վիճակ հանելը և առաքյալների՝ 12-ը լինելը:

Ուսուրը այնուհետև գրում է, որ Ծերունին՝ Դավիթ մարգարեն, կամարով անջատված է առաքյալներից, որովհետև Վերնատան մասնակիցների թվին չի պատկանում: Նա, ի տարբերություն առաքյալների, կիսով չափ և մուր տեղում է պատկերված, որովհետև Հին Ուխտին է պատկանում:

Նման մեկնաբանությունը մերժում է բյուզանդական պատկերագրության խոշոր գիտականներից Ն. Պոկրովսկին փաստարկումների հետևյալ ընթացքով: Ծերունու կամ թագավորի պատկերը սովորաբար ունենում է հունարեն «Ամբողջ աշխարհը» մակագրությունը: Վկայակոչելով մի քանի թեմատիկ այլ մանրանկարներ, որոնցում, ինչպես Հոգեգալստյան պատկերներում կիսաշրջանի մեջ պատկերված է նույն այս թագավորը, Պոկրովսկին գրում է, որ մանրանկարներից մեկի տեքստային բացատրությունում ասվում է, որ աշխարհը խորհրդանշող թագավորը մուր վիճակի մեջ է պատկերվում, որովհետև մարդկային աշխարհը թաղված է մեղքի խավարում և գտնվում է դժոխքի իշխանության տակ¹⁸:

Պոկրովսկին վկայակոչում է նաև հունական պատկերասույց գրքից մի պատկերի այն բացատրությունը, որում ասվում է, որ նկարի մի տարեց մարդու Հոգեգալստյան պատկերների Աշխարհի նման¹⁹:

Համանման մի շարք օրինակների հիման վրա Պոկրովսկին այն եզրակացությանն է հանգում, որ սկզբնապես եղած «Ժողովուրդների» թիվը գնալով կրճատվել է, քանի որ խորանաձև շրջանում հնարավոր չէր ծավալվել, և թեմատիկ գեղարվեստական ընդհանրացմամբ նրանց փոխարինել է ծերունադեմ թագավորը և որպեսզի շեշտվի, որ նա բյուզանդական մտածողությամբ որպես թագավոր ներկայացնում է ժողովուրդներին, նրա գլխավերևում սկսել է գրվել Աշխարհ²⁰:

Բյուզանդական մանրանկարներում եթե «Ժողովուրդներին» փոխարինել է Աշխարհը՝ ծեր թագավորը, ապա հայկական մանրանկարչությունում գերիշխող պատկերագրական ձևը շարունակել է մնալ ժողովուրդների պատկերումը: Հայկական մանրանկարներում ժողովուրդների կենտրոնում, սակայն, հաճախ պատկերվում է այս թագավորը, որով հայկական մանրանկարներում փաստորեն իրար շաղկապված ենք գտնում Հոգեգալստյան բյուզանդական հին և նոր ավանդույթները: Հայկական մանրանկարների պատկերագրական այս տիպի քննությունը մեզ բերում է այն եզրահանգմանը, որ ծերունին կամ թագավորի նախատիպը սկզբնապես Դավիթ մարգարեն է եղել, և պատկերագրական այս մոտիվը իր հետագա զարգացման և տրանսֆորմացիաների ընթացքում է կորցրել իր սկզբնական իմաստը: Պատկերագրական մի խմբում «Ժողովուրդների» կենտրոնում ոչ միայն այս ծեր թագավորն է, այլև նրա գլխից ելնող մի ճյուղավորում կիսախորանի վերին մասում ուղղակիորեն կապվում է ծածկյալ խորհրդի կամ բեմի հետ, որը Նոր Ուխտում խորհրդանշում է Քրիստոսի գոհաբերությունը՝ բանական պատարագը (նկ. գ. Ավետարան, Ս. Էջմիածնի ձեռագրատուն, ձեռգ. հմր 131, թերթ 10ա, Մոկս գավառ, նկ. դ. Ավետարան, Ս. Էջմիածնի ձեռագրատուն, ձեռգ. հմր 463, թերթ 10ա, 1563 թ., Գանձասար, նկ. գ. Ավետարան, Ս. Էջմիածնի ձեռագրատուն, ձեռգ. հմր 203, թերթ 16ա, 1624 թ., Խիզան):

Ծեր թագավորից մինչև ծածկյալ խորհուրդը ձգվող այս ճյուղավորումը ուղղակիորեն խորհրդանշում է Եսայու մարգարեության «Եւ բխեցէ գաւազան յարմատոյն

¹⁸ Նույն տեղում, էջ 463:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 464:

Յեսսեայ» խոսքերը՝ ներկայացնելով Քրիստոսի ծննդաբանության ընդունված պատկերազրական ձևը, որը որպես գավազան սկզբնավորվում է Դավթից:

Եթե ընդունենք, որ Հոգեգալստյան պատկերների ստորին մասում ներկայացվող թագավորը Դավիթ մարգարեն է, որից ճյուղավորվում և վեր է բարձրանում Հեսսեի արմատից բխած գավազանը, ապա դրանով Հոգեգալստյան այս պատկերներում իրար են կապվում Հին և Նոր Կտակարանները:

Անհրաժեշտ է նշել, որ անգամ այն մանրանկարներում, ուր չկա այս ծերունին, միևնույն է, պահված է ճյուղավորումը, որը ներքևի կիսախորանից տարածվում է դեպ առաքյալներից յուրաքանչյուրը և վերին խորանը (նկ. Ը, Մալաթիայի Ավետարան, Թորոս Ռոսլին, 1267-1268 թթ., Երևանի Մատենադարան, ձեռգ. հմր 10675, թերթ 305ա):

Հոգեգալստյան շարականներում ևս Հեսսեի գավազանը ամենահաճախադեպ հանդիպող հոգևոր-բանաստեղծական պատկերներից է, որը ևս վկայում է, որ նրա պատկերային համարժեքն է մանրանկարների թագավորը՝ Դավիթ մարգարեն: Հոգեգալստյան շարականներից մեկում ասվում է.

*Որ ի վերայ բրդխեալ գաւազանին Յեսսեայ
Հանգեար եօթնարփեան շնորհօր,
Հոգի Աստուծոյ և խորհրդոյ, հոգի հեգութեան և զօրութեան,
Հոգի իմաստութեան և գիտութեան²¹:*

«Ժողովուրդների» շարքում հայկական մանրանկարներում ի թիվս այլատարազ ժողովուրդների, ներկայացվում է և շնագլուխ մեկը (նկ. է, Ավետարան, Երևանի Մատենադարան, XIII դ. կես, ձեռգ. հմր 7644, թերթ 10ա, նկ. ա, Ավետարան, Ավագ Ծաղկող, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի հավաքածու): Ինչպես գրում է Պոկրովսկին, այս շնագլուխը հանդիպում է նաև վրացական մանրանկարներում²²:

Արդ, ո՞վ է այս շնագլուխը:

Այս հարցի պատասխանը գտնում ենք «Ժողովուրդների» գլխավերևում կատարված մակագրություններում: Ինչպես որ բյուզանդական մանրանկարներում Թագավորի գլխավերևում գրված է Աշխարհ, այնպես էլ հայկական մանրանկարներում «Ժողովուրդների» գլխավերևում գրվում է նրանցից յուրաքանչյուրի անվանումը ըստ «Գործք Առաքելոցում» Հոգեգալստյան ժամանակ հիշված ժողովուրդների՝ մարք, պարթևք, իմամացիք կամ ելամացիք: Առավել հաճախ գրված է լինում **պարթևք և ելամացիք**: Անհրաժեշտ է նշել, որ **ելամացիք**-ը միշտ գրված է լինում շնագլխի վերևում, որով նա ներկայացնում է ելամացիներին կամ իլամացիներին: Այժմ փորձենք ներկայացնել, թե այս մակագրությունը կրողը ինչու է շնագլուխ ներկայացվում: Ծննդոց գրքում ասվում է. «Սեմի որդիներն են Ելամը, Ասուրը, Արփաքսադը, Լուդն ու Արամը» (Ժ 22): Ելամացիները կամ իլամացիները համարվում են սերված այս Ելամից: Ելամացիների մասին Շիրակացին գրում է. «Ընդհանուր Ասիայի երեսունմեկերորդ երկրամասը Ելամացոց երկիրն է, այսինքն՝ Խուժաստանը»²³:

Խուժաստանը հայ մատենագրության մեջ ծանոթ է Անհուշ բերդով, և այս երկրամասն են արքայվել Վարդանանց շարժման մի շարք մասնակիցներ: Փավստոս Բուզանդը գրում է, որ Արշակը բանտարկված էր «Անդմըշն բերդում, Խուժաստան երկրում» (Ե դպր., գլ. Ե): Բուզանդը նաև գրում է, որ Փառանձեմին սպանելուց և Արտա-

²¹ Ձայնբաղ Շարական, Վաղարշապատ, 1888, էջ 295:

²² Н. Покровский, նշվ. աշխտ., էջ 456:

²³ **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, աշխտ. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 305:

գերս ամբողջ գրավելուց հետո «գերինների ամբողջ բազմությանը տարան բնակեցրին մի մասը Ասորեստանում, մյուս մասը՝ Խուժաստան երկրում (Դ դպր., գլ. ԾԵ):

Նույն ձևով Վարդանանց ժամանակ Հազկերտը Տիգրոն հասած հայ նախարարներին որպես սպառնալիք ասում է, թե ձեր կանանց ու որդիներին Խուժաստան քշել կտամ²⁴:

Ե. Տեր-Մինասյանը Պարսկաստանի նահանգ Խուժաստանի մասին գրում է, որ այստեղ «աքսորվում էին հանցավոր համարվածների կանայք և որդիները՝ արքունի կալվածքներում աշխատելու համար: Գտնվում է Հին Բաբելոնից դեպի արևելք, Պարսից ծոցից դեպի հյուսիս»²⁵:

«Հայկազյան բառարանը» գրում է, որ *խուժիկ* բառից են ծագում *խուժ* և նմանաբնույթ բառերը, ինչպես օրինակ *խուժադուժ*, *խուժել*, *խուժան*: Խուժիկ բառի համար էլ ասվում է՝ «Խուժիկ բնակիչ Խուժաստանի»: «Հայկազյան բառարան»-ի խուժ-ով սկսվող բառերի ներքո բերված վկայությունները ցույց են տալիս, որ Խուժաստանը հայ մատենագրության մեջ ընկալվել է որպես հեռավոր և բարբարոսական մի երկիր:

Խուժադուժ և բարբարոս են համարվել նաև Եթովպացիները, որոնք Հոգեգալստյան բյուզանդական պատկերներում ներկայացվում են որպես թուխ և բարբարոս: Նույն ձևով «Հայկազյան բառարանում» է ասվում. «Եթովպացին խուժադուժ մի էր այր բարբարոս»: Անանիա Շիրակացին Եթովպիան Ներքին Եգիպտոս է անվանում²⁶:

Աշտարակաշինությունից հետո տարբեր ժողովուրդներին տրված լեզուները Եդիշեն այսպես է բնորոշում. «...փափուկ՝ հելլենն, սաստիկ՝ հռոմայեցին, սպառնական հոնին, աղաչական ասորին, պերճական պարսիկն, գեղեցկազարդ ալանն, ծաղրական գոթն, տափախոս և խաւարաձայն՝ եգիպտացին, ճճուողական՝ հնդիկն, համեղական՝ հայն, որ կարէ զամենն յինքն ամփոփել»²⁷: Եգիպտացիները այստեղ տափախոս և խավարաձայն են անվանվում եթովպացիների, ըստ այդմ և ելամացիների նման բարբարոս և խուժադուժ լինելու համար: Անտիկ գեղագիտության չափանիշներով, բարբարոսների լեզուն խուժադուժ էր, և բարբարոս բառն ինքը ծագել է նրանց խուժադուժ արտաբերումից:

Նույն ըմբռնմամբ, բարբարոսների հաջորդ թերությունը գազանաբարո և գազանաղեն լինելն էր, որը սերտորեն կապվում էր նրանց արտաբերման հետ, թե այդ պատճառով դժվար էին խոսում: Այստեղից է գալիս և բարբարոսների հեռավոր երկրները շնագլուխների և մարդակերների երկիր անվանելը: Անդրեաս և Մատթեոս առաքյալների համար եկեղեցական ավանդությամբ և պարականոն պատմություններով ասվում է. «Եւ տեսեալ Անդրէի զգազանաբարոյ մարդկանն»²⁸: Այնուհետև ասվում է, թե առաքյալը «գտեալ նաւավար յազգէն շանագլխաց», հասնելով նրանց երկիրը՝ «քարոզեաց շանագլխաց ազգին մարդակերաց»:

Հայ սրբախոսական գրականությամբ պահպանվել և «Յայսմաւորքներով» մեզ է ավանդվել Քրիստափոր շնագլխի, որն հայ մատենագրական աղբյուրներում անվանվում է շանագլուխ, վկայաբանությունը: Նրա համար ասվում է. «Էր այր մի շանագլուխ յազգէ սկիւթացոց, որոյ անուն էր մարդարիտ և կոչեցաւ Քրիստափոր»²⁹: Ի դեպ, նրա վկայաբանությունը կապվում է հենց լեզվախոսության շնորհի հետ, թե նա Աստծուց խնդրում է, որ իրեն հունարեն խոսելու և Ավետարանը քարոզելու շնորհը

²⁴ Եդիշեն, Վարդանանց և հայոց պատերազմի մասին, աշխտ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 97:

²⁵ Նույն տեղում, էջ 421:

²⁶ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 278:

²⁷ Լ. Խաչիկյան, Եդիշեի «Արարածոց մեկնությունը», Երևան, 1992, էջ 249:

²⁸ Անկանոն գիրք Առաքելականք, Վիեննա, 1904, էջ 138:

²⁹ Ս. Էջմիածնի ձեռագրատուն, ձեռգ. հմր 74, թերթ 486բ:

ընձեռի, որից հետո «Մերձեցաւ հրեշտակն ի շրթունս նորա և առժամայն սկսաւ խօսել յստակ և պարզ յունարէն»: Ահա այսպէս հոգեգալստյան պատկերներում ժողովուրդների շարքում իլամացիները, որպէս բարբարոս Խուժաստանի բնակիչներ, պատկերվում են շնագլուխ, որոնց ևս հասու դարձաւ ավետարանական քարոզչությունը, որով առավել է փառավորվում Աստծո խոսքը:

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԵԳՐՈՂՆԵՐԸ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ,
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՄԱՍԻՆ**

Հայ բնագիտական մտքի պատմության և Հայաստանի լեռնա-աշխարհագրական դիրքի և բնական հարստությունների մասին միջնադարյան աղբյուրների որոնման ընթացքում մեր ուշադրությունը գրավեցին եվրոպական ճանապարհորդների ուղեգրությունների՝ Հայաստանին վերաբերվող հատվածները: Այս ճանապարհորդների մի զգալի մասին միայն պայմանականորեն կարելի է ուղեգրողներ համարել, որովհետև նրանք Եվրոպայից մինչև Մոնղոլիա և Իրան երկայն ուղին անցել են ուրուշակի դիվանագիտական առաքելությամբ և ճանապարհին, պայմանավորված նույն այդ առաքելությամբ, ուսումնասիրել են իրենց անցած երկրների աշխարհագրական դիրքը, բնական ամրությունները, ռազմագիտական հնարավորությունները և ջրային ռեսուրսները՝ միաժամանակ շեշտված հետաքրքրություն ցուցաբերելով նաև այդ երկրների պատմության և մշակույթի նկատմամբ:

Ասվածը վերաբերվել է հատկապես Հայաստանին, քանի որ մեր երկիրը առանձնակիորեն գրավիչ էր աստվածաշնչային հիշատակներով և հոգևոր շնչով լեցուն պատմա-մշակութային արժեքներով: Պայմանավորված այս հանգամանքով, նրանցից շատերն անգամ շեղվել են անցնող ճանապարհների ընդունված երթուղուց, որպեսզի տեսնեն Արարատը, Ս. Էջմիածինը և Հայոց աշխարհի մի շարք այլ սրբավայրեր:

Իրենց այցելած այս վայրերում նրանք իրենց ուղեկցորդների և թարգմանիչների միջոցով լսած տեղեկությունները գրառել և ներկայացրել են ճանապարհորդությունների ավարտից հետո լույս տեսած ուղեգրություններում, որոնց այս հատվածները կարևորվում են ոչ միայն որպես պատմական արժեքավոր սկզբնաղբյուրներ տվյալ վայրերի մասին, այլև որպես վերջիններիս հետ կապված ավանդությունների, կատարված հրաշքների և պահվող մասունքների մասին եթե ոչ առաջին տեքստային գրառումները, ապա այդպիսի հնագույն առաջին գրառումներից, որոնց հայերեն թարգմանությամբ մենք ստանում ենք տվյալ ավանդության թեև որոշակիորեն խմբագրված, սակայն սկզբնական բնագիրը, քանի որ դրանք տեղային ավանդությունների գրառումներն են՝ կատարված տվյալ վայրի անմիջական տպավորության ներքո:

Ուղեգրություններում Հայաստանին վերաբերվող տեղեկությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր տեղեկություններ, որոնք հիմնված են հայ պատմիչների ու եվրոպական հեղինակների գործերի վրա, և տեղեկություններ, որոնք իրենց անմիջական դիտարկումների և գրառումների արդյունք են: Հաճախ այս երկուսը միախառնվում են իրար և իրենց ունեցած տեսական ընդհանուր դրույթները նրանք համապատասխան որոշակիացման ու խմբագրման են ենթարկում Հայաստանով անցնելիս:

Քանի որ առաջիկա տարվա սեպտեմբերին Ս. Էջմիածնում տեղի է ունենալու Մյուռոնի նոր օրհնություն, ուստի մենք ցանկացանք թարգմանաբար ներկայացնել Սուրբ Էջմիածնին, Սրբալույս Մյուռոնին և մյուռոնօրհնության ժամանակ օրհնվող Մյուռոնի հետ կապվող սրբություններին վերաբերվող ուղեգրական հատվածները:

Ինչպես հայտնի է, սկսած 19-րդ դարից թարգմանաբար ներկայացվել են Վիլիամ Ռուբրուքի (ԺԳ դ.), Մարկո Պոլոյի (ԺԳ դ.), Ռոյ Գոնսալես Կլավիխիոյի (ԺԵ դ.) և մի շարք այլ ճանապարհորդների ուղեգրությունների՝ Հայաստանին վերաբերվող բաժինները:

Այս աշխատանքը առավել համակարգված և ամբողջական ձևով կատարելուն 1930-ական թթ. ձեռնամուխ եղավ Հովհ. Հակոբյանը՝ հրատարակելով Հայաստանով անցած եվրոպական ուղեգրողների ուղեգրությունների՝ Հայաստանին վերաբերվող բաժինները: Հովհ. Հակոբյանը ծրագրել էր այս աշխատանքը կատարել ութ հատորով, որոնք ընդգրկելու էին ԺԳ դարից մինչև ԺԹ դարի վերջը Հայաստանին վերաբերվող ուղեգրությունները: Ծրագրված այս հատորներից, սակայն, լույս են տեսել երկուսը, որոնցից առաջինն ընդգրկում է ԺԳ-ԺԶ դարերը, իսկ երկրորդը՝ 19-րդ դարի առաջին քառորդը:

Հովհ. Հակոբյանի հրատարակած այս երկու հատորները, լինելով կատարված հսկայական աշխատանքի արդյունք, որում լույս տեսած բնագրերը օժտված են կարևոր ծանոթագրություններով, ինչպես նաև տվյալ հեղինակներին ներկայացնող ներածականներով, այնուամենայնիվ, ունեն մի կարևոր բացթողում: Այստեղ կրճատված են եկեղեցական ավանդություններին և եկեղեցական սրբություններին վերաբերվող հատվածները: Այս հանգամանքը պայմանավորված է թե՛ 1930-ական թթ. մտայնությամբ և թե՛ ուղեգրությունները որպես պատմական սկզբնաղբյուրներ դիտելու մոտեցմամբ, որով զանց են առնվել հիշյալ հատվածները:

Հայաստանով անցած ուղեգրողների գործերի՝ Ս. Էջմիածնին նվիրված հատվածները 2003 թ. հրատարակեց բարեհիշատակ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը «Ս. Էջմիածինը ուղեգրություններում» գրքում, ուր բերված են ութ տասնյակից ավելի ուղեգրողների՝ Ս. Էջմիածնին վերաբերվող հատվածները այդ գործերի բնագրերի՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իտալերեն և իսպաներեն լեզուներով, իսկ գրքի մնացյալ շարադրանքը՝ առաջաբան, հարուստ ծանոթագրություններ և տեղեկատու ցանկեր, անգլերեն է:

Մենք մեր այս շարքը հրատարակության պատրաստելով, որպես ուղեցույց ունեցել ենք Հովհ. Հակոբյանի և Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հրատարակությունները՝ նրանց մատնանշած աղբյուրների հիման վրա վերականգնելով Հովհ. Հակոբյանի մոտ եղած այն կրճատումները, որոնք վերաբերվում են Ս. Էջմիածնին ու Հայ Եկեղեցու սրբությունների հետ կապված ավանդություններին, ինչպես նաև Աշճյանի գրքից դուրս մնացած ուղեգրական այն հատվածները, որոնք թեն ուղեգրությունների՝ Ս. Էջմիածնին վերաբերվող հատվածները չեն, սակայն նրանցում ևս խոսվում է Ս. Էջմիածնի ու Հայոց Եկեղեցու սրբությունների մասին:

Այս շարքը նպատակահարմար գտանք սկսել Ավգուստ ֆոն Հաքստհաուզենի (1792-1866 թթ.) Անդրկովկասին նվիրված ուղեգրական բնույթի ուսումնասիրության՝ Ս. Էջմիածնին վերաբերվող հատվածով, որում հեղինակը կարևորում է Ս. Էջմիածնի դերը հայ ժողովրդի ազգային միասնության գործում, ինչպես նաև շեշտում Սրբալույս Սյուռոնի առանձնակի նվիրականությունը հայ ժողովրդի համար:

Անդրկովկասին նվիրված այս գործը հետազոտողների համար այնքան է կարևորվել, որ 1856 թ. Լայպցիգում գերմաներեն հրատարակվելուց հետո այն հաջորդ տարիներին լույս է տեսել նաև անգլերեն, ռուսերեն և կրճատ տարբերակով նաև հայերեն:

ԲԱՐՈՆ ՕԳՈՍՏՈՍ ՖՈՆ ՀԱՔՍՏՀԱՌԻԶԵՆ

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍ
ՆՈԹԵՐ ՍԵՎ ԵՎ ԿԱՍՊԻՑ ԾՈՎԵՐԻ ՄԻՋԵՎ ԲՆԱԿՎՈՂ
ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ Դ

(հատված)

Հայերի մոտ առանձնակիորեն ուժեղ է ներքին միությունը: Հայերի մեծ մասը թեև սփռված և տարածված է աշխարհի երեք մասերում, սակայն ոչ մի տեղ չընջվեց նրանց ազգային նկարագիրը, ոչ մի տեղ հայերը երբեք չխառնվեցին այն ժողովուրդներին, որոնց մեջ ապրեցին: Այս առումով նրանց կարելի է համեմատել հրեաների՝ համաշխարհային պատմության մեծագույն հանելուկի՝ Աստծո ժողովրդի հետ, որը անխորտակելի մնաց մարդկային գոյությունների հանդեպ, որովհետև Աստված էր ապավեն լինում նրանց: Հրեաների մոտ կրոնի պահպանությունը համագործ է ազգության պահպանությանը: Նրանք ունեն այնպիսի հոգևոր ուժ, որ 2000 տարվա ընթացքում միասնական մի միությամբ է միավորում աշխարհասփյուռ այս ժողովրդի անդամներին, առանց աշխարհագրական կենտրոնացման:

Նույն ձևով հայերի մոտ կրոնի պահպանումը սկիզբը և հիմքն է ազգության: Հայերը մեծ սեր ունեն դեպ իրենց հայրենի հարազատ երկիրը, որտեղից ժամանակին ելել են և ուր վերադառնալ ցանկանում են: Իրենց այս հայրենի երկրի կենտրոնն է Էջմիածնի կաթողիկոսությունը:

[...]¹

[Աբովյանի պապը] ամեն տարի իր ընտանիքով ուխտի և երկրպագության էր գնում Էջմիածնի սրբավայրերը: Հայերի մոտ բարեպաշտական սովորություն է հինգ տաղավարներին հաջորդող երկուշաբթի կատարել իրենց ննջեցյալների հիշատակը, որի համար նրանց գերեզմաններին են բերում պես-պես մրգեր, հաց, միս, գինի, որոնց վրա քահանան օրհնություն է կարդում, ապա բաժանում են կարոտյալներին: Այս օրերին նաև հարուստ նվերներ են տալիս տվյալ վայրի եկեղեցուն: Յուրաքանչյուրն առանձնահատուկ ձևով իրեն պատիվ է համարում թանկարժեք նվերներ ուղարկել Էջմիածնի կաթողիկոսական տաճարին: Այդ օրերին այստեղ անթիվ նվերներ են տրվում Թուրքիայից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Եգիպտոսից, Կ. Պոլսից, Մոսկվայից, Պետերբուրգից և Աստրախանից: Նրանք, ովքեր անձամբ էին բերել իրենց ընծաները, ետ վերադառնալիս երկյուղած բարեպաշտությամբ և արտասովոր պատմում էին, որ տեսան Սուրբ Տաճարը, եկեղեցու կենտրոնը, ինչպես նրանց օրհնեց կաթողիկոսը՝ ձեռքը նրանց գլխին դնելով, և, ինչպես իրենք համբուրեցին նրա ծունկը, առան գինու օրհնության բաժակը և սուրբ նշխար²:

¹ Հաքստիաուզենը այստեղ խոսում է խաչատուր Աբովյանի գերդաստանի, նրանց հյուրասիրության և բարեպաշտության մասին:

² Նշխարը սպիտակ հաց է կլոր կտրած, դրոշմված փայտյա կաղապարով, որի վրա փորագրված են

ԳԼՈՒԽ Թ (հատվածաբար)

Օգոստոսի քսանյոթին, ճաշից հետո, ես, Աբովյանը և Պետրոս Նեմը, ելնելով Երևանից, գնացինք Էջմիածնի մեծահռչակ վանքը՝ մայրը հայոց եկեղեցիների և աթոռանիստը կաթողիկոսների, որը գտնվում է Երևանից 17 վերստ հեռավորության վրա, ընդարձակ մի դաշտում, Արարատ և Արագած լեռների միջև:

Համաձայն հայկական ավանդության, այստեղ (Արարատյան դաշտում) էր երկրային դրախտը, և հրաշունչ Արարատն էր հրեշտակի այն բոցեղեն սուրը, որը փակեց Ադամի և նրա սերունդների մուտքը դրախտ: Համաշխարհային ջրհեղեղը Արարատի բոցեղեն այս սուրը հանգցրեց և ավերեց դրախտը, և այս պատճառով Նոյը պետք է իջներ Արարատ լեռան վրա, որպեսզի մարդկային ցեղը երկրորդ անգամ դարձյալ այնտեղից սկզբնավորվեր: Այստեղ Նոյը տեսավ երկնային հաշտության ծիածանը և այստեղ գտավ դրախտի քաղցրահամ պտուղների մնացորդները, խաղողի որթը և դարձյալ տնկեց մեր երկրում: Այս պատճառով Սուրբ Գրիգորը նորից կառուցված եկեղեցուն տվեց Քավիչի էջքը անունը, որը նշանակում է Էջմիածին:

Ճանապարհին անցնում էր բավականին լավ ոռոգվող դաշտի միջով, և երեկոյան մենք հասանք վանք, սակայն այնտեղ չտեղավորվեցինք, ինչպես որ ընդունված է այն ճանապարհորդների համար, որոնց գալու մասին տեղյակ է պահվում, և պետք է մենք ինքներս մեզ մնալու տեղ գտնեինք, որը, սակայն, բարեբախտաբար, շնորհիվ հայերի հյուրընկալության, մենք բավականին հեշտությամբ գտանք վանքից ոչ հեռու գտնվող գյուղում՝ «Վաղարշապատում»:

Քանի որ արդեն շատ ուշ էր, որպեսզի գնայինք նայելու վանքը, ուստի ես բավականություն գտա հավաքելով գյուղին վերաբերվող որոշ տեղեկություններ:

Այն ունի 360 տուն: Տները և այգիները բնակիչների սեփականությունն են: Նրանք, սակայն, վանքին պարտավոր են մեծ հաստատուն հարկ վճարել: Յուրաքանչյուր տան վերջինիս պատկանող այգու հետ միասին տուրքը կազմում է երկուսից յոթ ռուբլի արծաթ, ամբողջը՝ 1320 արծաթե ռուբլի, որի հավաքման պատասխանատուն համայնքն է: Կարծում եմ, որ այս հարկը հավաքվում է, որպեսզի վանքը այն ծախսի այս բնակավայրի վրա, ինչպես որ այդ հարկով ջրանցք փորվեց և ջուր բերվեց գյուղերի համար, ինչպես որ Երևանում կան ջրի հոսքը հսկողներ:

Դաշտերը պատկանում են վանքին և ցորենի, գարու և ընդհանրապես բերքի մեկ հինգերորդի չափ հարկով տրվում են բնակիչներին, հարկը, սակայն, տրվում է միայն բերքահավաքից հետո, երբ բերքը հավաքված է լինում: Մինչ այդ, բնակիչները պետությանը որևէ հարկ չեն տալիս: Նրանք պարսկական իշխանության շրջա-

Տիրոջ չարչարանքի գործիքները՝ պատված պսակով: Այս ձևը կա հայկական բոլոր եկեղեցիներում: Նշխարը ծառայում է Հաղորդության խորհրդի կատարմանը Պատարագի ժամանակ, սակայն այն նշխարները, որոնք պատրաստվում են Զատիկի և Օսնոյան համար, հոգևորականների կողմից տներն են տարվում օրհնության և շնորհավորանքի համար: Այն վերցնում են երկյուղածությամբ ու հոգևորականին որևէ նվեր են տալիս: Նշխարների կաղապարը գեղեցիկ է հատկապես Էջմիածնում: Այնտեղ այս նշխարը ստացողը այն բարեպաշտությամբ պահում է մինչև իր մահը և մահից հետո այդ նշխարը դնում են նրա կրծքին և նրա հետ գերեզման իջեցնում [հեղ.՝ Հաքսո]:

նից, որպես վանքապատկան գյուղացիներ, ազատ են պետությանը հարկ տալուց:

Պարսիկները միշտ հարգել են հայոց եկեղեցական կալվածքները՝ խուսափելով հատկապես նշանավոր վանքերին³ ձեռք տալուց:

Բացի Վաղարշապատից, Էջմիածինը ունի և այլ չորս գյուղեր՝ փոքր և աղքատ, որոնցից յուրաքանչյուրի հարկը հազիվ հասնում է 300 ռուբլու:

Վանքի գլխավոր եկամուտը կազմում են ողջ Ասիայով և մասամբ Եվրոպայով ու Աֆրիկայով սփռված հայ ժողովրդի առատաձեռն նվերները: Նրանց այս տուրքով են հոգվում հոգևորականների, տաճարի սպասավորների և տարբեր շինությունների կարիքներն ու ծախսերը, իսկ մնացյալ գումարը հավաքվում է կաթողիկոսի (Մայր Աթոռի) գանձարանում, որն այնուհետև դարձյալ վանքի համար է ծախսվում՝ հոսելով Պարսկաստանից, Հնդկաստանից, Թուրքիայից և այլ վայրերից:

Հաջորդ առավոտյան ես վերջապես այցելեցի նշանավոր վանքը, որը շրջապատված է բարձր պարիսպներով, ութ բուրգերով՝ աշտարակներով և նախկինում համարվում էր լավ ամրացված: Առաջին պարսպից ներս մտնելով, տեսնում ես մանրավաճառների և տարբեր արհեստավորների կրպակները: Այստեղ է գտնվում և մեղրամոմի գործարանը: Երկրորդ դարպասը տանում է ներս, ուր և հռչակավոր տաճարն է: Ակնհայտ է, որ այն միանգամից չի կառուցվել, այլ տարբեր մասերը տարբեր ժամանակներում են կառուցվել: Այդ կառույցները տարբեր ճարտարապետական ձևեր են ներկայացնում՝ բյուզանդական, գոթական, մավրիտանական և նոր իտալական ոճերով, ինչպես որ ցույց են տալիս շինության և զարդաքանդակների տարբեր մասերը:

Նոր ճարտարապետությամբ է կառուցված և քարե հուշարձանը Պարսից արքունիք գնալու ճանապարհին վախճանված անգլիացի դեսպան Մակդոնալդի, որը կանգնեցրել է նրա այրին և գտնվում է տաճարի Ավագ դռնից ձախ: Այս գերեզմանաքանդակն ունի անգլերեն, պարսկերեն և հունարեն լեզուներով արձանագրություններ: Այս գերեզմանը ցույց է տալիս կաթողիկոսի և հոգևորականների մեծ հանդուրժողականությունը և լայնամտությունը, որ ոչ միայն թույլատրել են նրան այստեղ թաղել, այլև իրենց Մայր Աթոռում այսպիսի մի մահարձան են կանգնեցրել մեկին, որն, ըստ նրանց, հերետիկոս է:

Տաճարի ներսում նույնիսկ լուսավոր օրերին մութ է լինում, որից եկեղեցին շահում է, որովհետև նա մեծ ծավալներ չունի:

Եկեղեցու երկարությունը 50 արշին է, լայնությունը՝ 48 և բարձրությունը՝ 35: Տաճարում իշխում են բյուզանդական ճարտարապետությունը և սիմվոլիկան: Բոլոր կողմերում երևում են արձանագրություններ, որոնք հայերը շատ են սիրում:

³ Պարսիկները ընդհանրապես հարգում են քրիստոնյա բարձրաստիճան հոգևորականներին, հատկապես հայ հոգևորականներին: Աբաս Միրզան երբ օսմանցիների հետ պատերազմի ժամանակ գալիս-հասնում է Էջմիածին, Կաթողիկոսից խնդրում է օրհնել և սրբել իր սուրը: Եթե այս պատերազմը ռուսների դեմ լիներ, ապա կարելի էր ենթադրել, թե նա քաղաքական նկատառումներով այսպես վարվեց, սակայն քանի որ դարձյալ մահմեդականների դեմ էր կռվում, ուստի այդպես վարվեց կրոնական զգացմամբ կամ սնահավատությամբ:

Թուրքերն ու քրդերը նույնպես հարգում են հայոց սրբությունները: Բայազետի մահմեդականները կարծում են, որ ժանտախտից, որն, ըստ ավանդության, պատահում է յոթ տարին մեկ, կարելի է ազատվել միայն Սուրբ Գեղարդի մասով, որը պահվում է Էջմիածնում: Նախկինում մեծ հանդիսությամբ այն տանում էին Բայազետ, և այն ոչնչացնում էր ժանտախտի գորությունը:

Այստեղ գտնվում է նույնիսկ մի տիբեթական զանգ, որի վրա փորագրված է տիբեթական խորհրդավոր մի աղոթք՝ „Om mani” և այլն:

Սեղանի դիրքն ու ձևը և առհասարակ եկեղեցու ողջ հորիվածքը տարբերվում է հունականից: Սեղանն⁴, ըստ ավանդության, կառուցված է այն տեղում, ուր կռապաշտության ժամանակ զոհարան էր եղել և Արտեմիդի արձանը:

Այստեղ կա մեծ հարստություն ոսկուց, արծաթից և պատվական քարերից, բայց կարելի է ենթադրել, որ նրանցից ավելի շատ պահվում է թաքստարանում: Ավագ Սեղանի մոտ գտնվում է բացառիկ գեղեցիկ, նրբաձև պատրաստված կաթողիկոսական գահը՝ ակնհայտորեն եվրոպական աշխատանք ռոկոկո ոճով, կամ ավելի շատ վերածնության: Այսպիսի գերազանց աշխատանք ինձ շատ հազվադեպ է հաջողվել տեսնել: Ինձ ասացին, որ այն տարիներ առաջ նվիրել է Հռոմի պապերից մեկը Էջմիածնի այդ ժամանակվա կաթողիկոսին: Թեև ստույգ չգիտեին՝ երբ և ինչպես, բայց գտնում էին, որ դա եղել է տասնվեցերորդ կամ տասնյոթերորդ դարերում:

Պատկերների մեջ բնավ չնշմարվեց գեղանկարչական առումով ուշադրության արժանի գործ: Տաճարի ներքին որմերը գեղազարդված են հայ նկարչի կողմից 1736 թ., պարսկական խայտաբղետ ծաղկանկար ոճով:

Այստեղ գտա Փրկչի պատկերը կտավի վրա, ինչպես որ այն կա հայկական շատ եկեղեցիներում: Այս պատկերի մասին տարբեր ավանդություններ կան Արևմտյան ու Արևելյան Եկեղեցիներում: Արևմտյան Եկեղեցում ասվում է, թե երբ Հիսուս Քրիստոս գնում է խաչը ելնելու՝ հոգնածությունից ընկնում է և հրեա մի կին թաշկինակով սրբում է Նրա քրտնաթոր երեսը և թաշկինակի վրա ուրվագծվում է փրկչական սուրբ պատկերը և այն անվանվում է Սուրբ Վերոնիկայի պատկեր (Vera icon՝ ճշմարիտ պատկեր, որն այնուհետև աստիճանաբար փոխարինում է այդ կնոջ անվանը):

Հայերի մոտ ուրիշ ավանդություն կա: Ասվում է, որ Քրիստոս Փրկչի ժամանակ Հայաստանում թագավորում էր Աբգարը: Նա լսում է Հիսուս Քրիստոսի մասին և հավատում է Նրան: Լինելով բորոտ, մարդ է ուղարկում նրա մոտ՝ խնդրելով բուժել իրեն: Երբ իմանում է, թե հրեաները հետապնդում են Հիսուսին, հրավիրում է Նրան գալ Հայաստան, որ ինքը և ողջ ժողովուրդը Նրան կպատկանեն, իսկ եթե Հիսուս չկարողանա գալ, ապա գոնե ուղարկի Իր կենդանագիր պատկերը: Փրկիչը պատասխանում է, որ Ինքը երկիր առաքվեց, որպեսզի մեռնի հրեաների ձեռքով: Եվ վերցնելով կտավը, դնում է Իր սուրբ դեմքին և աստվածային կերպարանքը այդժամ դրոշմվում է կտավի վրա: Այս պատկերը տալիս է Աբգարի կողմից առաքված դեսպանին՝ հասցնելու թագավորին: Սուրբ Գրքի այն տեղը, ուր Քրիստոս ասում է. «Երանի նրանց, որ չեն տեսել Ինձ և կհավատան», հայերը համարում են Աբգարի համար ասված:

[...] Ընդհանրապես, Էջմիածինը և Կաթողիկոսը մեծ ազդեցություն ունեն հայ ժողովրդի և նրա ազգային միասնության պահպանման վրա: Էջմիածինն է այն կենտրոնը, ուր հավաքվում և գալիս են Գանգեսի, Նեղոսի, Եփրատի, Վոլգայի և Նևայի ափերից և եղբայրաբար իրար ձեռք են մեկնում, ծանոթանում և միություն կազմում: Այդ բոլոր կողմերից հոգևորականները պետք է գան և տանեն Սուրբ Մյուռոնը Էջմիածնից, որն օրհնելու իրավունք ունի միայն կաթողիկոսը: Այս ձևով մշտապես

⁴ Նկատի ունի Իջման Ս. Սեղանը:

ընդունվում և ամրապնդվում է միությունն իրենց ազգային Եկեղեցու:

Այնտեղ, ուր այժմ Էջմիածինն է, Քրիստոսի ծննդից 600 տարի առաջ հայոց ամուր Արտիմետ- Կաղաք քաղաքն էր հայկական Վարդշե թագավորի: Այնտեղ, ուր այժմ կանգնած է վանքը, գտնվում էր Կուլտոսի հեթանոսական տաճարը՝ միախառնված պարսկական և հունական առասպելներից: Անահիտը կամ Արտեմեդը (հունական Արտեմիդան) և Արամազը (պարսկական Օրմուզը) և Վիրը (պարսկական Միտրան) այստեղ ունեն իրենց պաշտամունքի տեղիները: Ողջ երկրով տարածված էին նրանց զոհարանները, որոնք քրիստոնեության ընդունումից հետո վերածվեցին քրիստոնեական եկեղեցիների, ինչպես որ տեղի ունեցավ Եվրոպայում:

Վաղարշակը՝ հայոց նշանավոր թագավորներից մեկը և հիմնադիրը Արշակունյաց թագավորության, այս քաղաքը դարձրեց մայրաքաղաքը Արշակունյաց պետության, պատեց պարիսպներով և անվանեց Նոր Քաղաք: Ինչպես գրում է Փավստոս Բուզանդը, երբ 354 թ. Սասանյան Շապուհ Երկրորդը ավերեց Վաղարշապատը, այն ուներ 19.000 տուն: Քաղաքն այլևս չվերականգնվեց, սակայն գյուղն այժմ ևս կոչվում է Վաղարշապատ: Այստեղ մեհյանի տեղում Տրդատ Մեծը և Սուրբ Գրիգորը կառուցեցին քրիստոնեական առաջին եկեղեցին և այն անվանեցին Էջմիածին, այսինքն՝ Իջավ Միածինն: 529 թվականից մինչև 618 թ. եկեղեցին ավեր էր, մինչև Կոմիտաս կաթողիկոսը վերաշինեց այն: Նա կառուցեց նաև քարե գմբեթը:

Տարբեր ժամանակներում նրա վրա նոր մասեր են հավելվել: Եկեղեցին մեծապես ավերվեց Շահ-Աբասի ժամանակ և հիմնովին նորոգվեց 1629 թ. ստանալով այն տեսքը, որով կանգուն է մինչև այսօր: 1446 թվականից Էջմիածինը դարձավ կաթողիկոսների հաստատուն նստավայրը:

Կուսակրոնություն ընդունած հոգևորականները Հայոց Եկեղեցում բաժանվում են երկու խմբի, որոնցից մեկը ամբողջապես մերժում է աշխարհը և նրա գայթակղությունները, և Աստծուն նվիրվելով՝ առանձնանում մենաստաններում, ինչպես օրինակ՝ Սևանում, ուր խաղաղ, խստակյաց և մենակյաց կյանք են վարում: Նման հոգևորականները խիստ հարգված են ժողովրդի կողմից: Կուսակրոնների մյուս խումբը ջանում է և նպատակադրվում հասնել հոգևոր մեծամեծ աստիճանների, իշխանության և պատվի, որը կարող է տրվել միայն կուսակրոններին:

Ամիսներ առաջ կաթողիկոս էր ընտրվել Ներսես արքեպիսկոպոսը, բայց իմ Էջմիածնում լինելու ժամանակ նա այնտեղ չէր գտնվում, որովհետև կայսրը կամենալով նրան անձամբ տեսնել՝ հրավիրել էր Պետերբուրգ՝ հաստատելու կաթողիկոսական իշխանությունում: Միապետը շուտով համոզվեց, թե որքան գործույնյա, եռանդուն և իրավախոհ է այդ զարմանալի մարդը, հաստատեց նրա կաթողիկոսական իշխանությունը և ետ ուղարկեց պատիվներ շնորհելով:

Ես, ինչպես ասացի, Էջմիածնում չհանդիպեցի կաթողիկոսին, սակայն, երբ 1843-1844 թթ. ձմռանը Պետերբուրգում էի գտնվում, մի բարեպատեհ առիթով ծանոթացա կաթողիկոսի հետ: Գնդապետ Վ.-ն, որը մոտ էր եղել Ներսեսի հետ ռուսների՝ պարսիկների հետ մղած պատերազմի ժամանակ, ինձ տարավ նրա մոտ: Կաթողիկոսը ապրում էր Լազարյանների տանը, որոնք ելնելով իրենց հայկական ազգանունից, ողջ հայ ժողովրդի հոգևոր առաջնորդին իրենց տանը ընդունելու պատիվը չէին ցանկանում զիջել որևէ մեկին:

Մի անգամ երեկոյան մենք երկուսս նրան ներկայացվեցինք պրն Լազարևի կողմից: Մեզ ընդառաջ եկավ ոչ բարձրահասակ, նիհարավուն 70-ամյա մի ծերունի՝ եր-

կար, ձյան նման սպիտակ մորուքով, փայլող սև աչքերով, սուր և խոհուն դիմագծերով, հեզ և բարեհոգի հայացքով: Նա վանականի սև հանդերձով էր, և միայն վեղարին հոյակապորեն փայլում էր ադամանոյա խաչը:

Կաթողիկոսը միայն ռուսերեն էր հասկանում, որի համար մեզ հնարավոր կլիներ այդ լեզվով խոսել միայն թարգմանչի միջոցով, որը պատրաստակամորեն համաձայնվեց լինել պարոն Վ-ն ընդունված պայմանական առաջին ողջույններից հետո: Ես մինչ այդ վարելով ընթացող խոսակցությունը, կաթողիկոսին բազմաթիվ հարցեր տվեցի: Քանի որ ես եղել էի Հայաստանում, ուստի կարողացա այդ հարցերը տալ՝ նկատի ունենալով Հայաստանում տիրող վիճակը և կամ էլ խոսակցությունը վարել այդ թեմայով: Կաթողիկոսը դրանից հասկացավ, որ ես Հայաստանի հետ կապված նախապաշարումներ չունեմ, այլ սիրով և հայ ժողովրդի ներքին կացությանը տեղյակ լինելով եմ խոսում, որի համար արտահայտեց իր գոհունակությունը և ինձ հետ շատ անկեղծ եղավ:

Ես այդ երեկո իսկ գրառեցի խոսակցության ողջ բովանդակությունը և այստեղ բերում եմ այնպիսի հատվածական տեսքով, ինչպիսին մենք վարեցինք այն, առանց հետևողական ընթացքի, հաճախ մի թեմայից անցնելով մյուսին: Կաթողիկոսի խոսքերը իմ կողմից հիմնականում բերված են բառացի, իսկ իմ տված հարցերը մեծ մասամբ դուրս թողեցի որպես անկարևոր:

«Էջմիածինը կառուցվել է 305 թ.: Այդ ժամանակ Հռովմեացիներին իշխում էր Դիոկղետիանոս կայսրը և Հայոց Տիգրանը⁵: Տաճարի ներքո եղող ստորերկրյա լիճը և եկեղեցու արտաքին որմի հատվածը, որոնք հայտնի չէ, թե ում կառուցածն են, այդ ժամանակի տակավին կանգուն գործեր են: Դարձյալ այդ շրջանից մի կարմիր քար դրված է եկեղեցու կամարներից մեկում, որն առաջ գտնվում էր մի ավերյալ կամարի մեջ:

Եկեղեցու նախկին տանիքը նման էր շրջված նավակի: Այն չխախտվեց, այլ նրա վրա բյուզանդական գմբեթ բարձրացրեցին, որի համար ճարտարապետներ կանչեցին Կ. Պոլսից, և այս պետք է որ եղած լինի մեզանից հազար տարի առաջ:

Կաթողիկոսական գահը, որ գտնվում է եկեղեցու Սեդանի ձախ կողմում, ուղարկվել է Ինոկենտիանոս Երկրորդ Պապի կողմից 1697-1699 թթ. և նվիրվել է ժամանակի հայոց կաթողիկոսին: Այդ ժամանակ հայ հոգևորականները և կաթողիկոսը լատին քարոզիչների մեքենայությունների պատճառով թշնամաբար էին տրամադրված Պապի հանդեպ: Կաթողիկոսը ցանկանալով վերջ տալ այս թշնամությանը, խնդրեց Հռոմից ուղարկել մի վստահելի անձնավորություն, որպեսզի նրա միջոցով ներկայացնի առկա տարաձայնությունները: Պապն ուղարկեց հայր Քրիստափորին Կապուչինյան միաբանությունից և նրա միջոցով նվերներ կաթողիկոսին, այդ թվում և այդ գահը: Հայր Քրիստափորը կարողացավ համաձայնություն հաստատել կաթողիկոսի և Հռոմի Պապի միջև և այդ ժամանակից Պապի կողմից ուղարկված գահը հարգվում է որպես հիշողություն այդ ժամանակի մասին:

Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքները կրում են պատրիարքի տիտղոսը և ոչ թե իրավունքները: Նրանց երկուսի իրավունքներն էլ ավելի չեն, քան Լիսաբոնի և Վենետիկի պատրիարքներինը: Նրանց երկուսին էլ իշխանությունից կարող են փոխել կաթողիկոսը կամ ժողովուրդը, բայց կաթողիկոսին երբեք, որպես մյուռո-

⁵ Տիգրան⁵. հավանաբար կաթողիկոսը խառնել է անունները: Այդ ժամանակ Հայաստանում թագավորում էր Տրդատ Երրորդը կամ Մեծը: Նա քրիստոնեություն ընդունեց 303 թ. [հեղինակ՝ Հաքսո]:

նով օծյալի:

Հայոց Եկեղեցին բոլորից հանդուրժողն է հավատի հարցերում: Բոլոր նրանց, ովքեր մի անգամ մկրտվել են, ճանաչում և ընդունում է քրիստոնյա և երբ նրանք դիմում են, տալիս է օրհնություն և հաղորդություն, առանց նրանցից պահանջելու, որ նրանք պատկանեն Հայոց Եկեղեցուն կամ միանան նրան: Ես ինքս Երևանում հաղորդություն տվեցի մահացող երկու հռոմեադավան կաթոլիկ լեհուհիների, որոնք հաղորդություն խնդրեցին:

Հայաստանը երկարատև դարերի ընթացքում եղավ արյունահեղությունների և մեծամեծ սարսափելի պատերազմների թատերաբեմ: Նրա խեղճ ժողովուրդն ու Եկեղեցին միշտ հետապնդվեցին պարսիկների և օսմանցիների կողմից: Արդեն երկու հարյուր տարուց ավելի է, որ մեր հայացքները հատել էինք Ռուսաստանին՝ նրանից սպասելով օգնություն:

Մինչ պարսկական պատերազմը, երբ որպես Եփրեմ կաթողիկոսի փոխանորդ և հավատարիմ մեկը գտնվում էի Բայազիտում, Հնդկաստանից եկած անգլիացի քարոզիչները առաջարկեցին մեր Եկեղեցու միությունը իրենց հետ, որոնք նաև ցանկանում էին հայ երեխաների համար դպրոցներ բացել անգլիացիների և Հյուսիսային Ամերիկայի խնամքի և պաշտպանության ներքո, որով ողջ հայոց ազգը անգլիացիների հովանավորության ներքո կանցներ, սակայն ես հանձն չառա՝ վախենալով, թե արդյո՞ք այդպիսով չեմ վնասի իմ Եկեղեցուն և փրկությունը տեսնում էի միայն Ռուսաստանի հետ միանալու մեջ:

Իմ ժողովուրդը քաղաքակրթված չէ, բայց ունի հրաշալի ընդունակություններ: Նա խիստ վաղ զգաց դպրոցների կարիքը և լուսավորության ծավալումը: Ես ծրագրեցի Տփղիսում հիմնել վարժարան 800 աշակերտով և իմ այս նպատակը մեծ աջակցություն գտավ մեր ժողովրդի կողմից: Դպրոցը հիմնվեց և ոչ երկար ժամանակվա ընթացքում հավաքվեցին 400 երեխաներ:

Նմանապես իմ ցանկությունն էր Ս. Էջմիածնում՝ մեր Եկեղեցու կենտրոնում կառուցել մեծ վարժարան աշխարհի բոլոր կողմերում ցրված հայորդիների համար և այս վարժարանի հետ միասին նաև հոգևոր և աշխարհիկ կրթության ճեմարան:

Հայերը ցրված են մինչև աշխարհի հեռավոր կողմերը և մեծ թիվ են կազմում, նմանվելով ծովի ալիքներին: Ասում են, թե մինչև 15 միլիոն են հաշվվում հայերը: Ինձ թվում է, չափազանցված է այս թիվը, սակայն կարող եմ հաստատորեն ասել, որ հայերի թիվը անցնում է ութ միլիոնից: Հռոմեադավան հայերը միայն կովկասյան նահանգներում 18.000 են: Նրանցից բացի, հապա թե որքան հռոմեադավան հայեր կան օսմանյան կայսրությունում, Լեհաստանում, Ավստրիայում, Իտալիայում, միայն Հռոմը գիտե՞:

[...]

1828 թ. նա [Ներսեսը] նշանակվեց Բեսարաբիայի առաջնորդ և իր աթոռանիստը դարձավ Քիշինևը, ուր մնալով՝ առանձնացավ բազում տարիներ՝ նվիրելով իր անձը Բեսարաբիայի թեմի բարեկարգությանը: Ազգը, սակայն, չմոռացավ նրան և բոլորի աչքերը հառնված էին նրան: Էջմիածնի նախորդ կաթողիկոսի մահվան բոթը դեռ նոր էր տարածվել և երբ անհրաժեշտ եղավ նոր կաթողիկոս ընտրել, ողջ ժողովուրդը Գանգեսի ափերից մինչև Նևայի եզերքը և Կարպատյան լեռներից մինչև Հիմալայներ միաձայն Ներսես ասացին. «Որչափ կենդանի է Ներսեսը, աղաղակեցին նրանք բոլորը, ուրիշ ոչ ոք չի կարող նստել Սուրբ Գրիգորի աթոռին»:

Ներսեսի ընտրության առիթով այստեղ ցանկանում ենք վկայակոչել մի քանի տեղեկություններ Հայոց կաթողիկոսների ընտրության մասին: Հայկական ավան-

դրությամբ ասվում է, թե Փրկչի երկինք համբարձվելուց կարճ ժամանակ անց Յոթանասնից մեկը եղող Թադեոս առաքյալը գալով Եդեսիա, մկրտեց հայոց Աբգար թագավորին և շատ ուրիշների, սակայն նրան հաջորդող թագավորները հրաժարվեցին հավատից, և քրիստոնեությունը հազիվ էր առկայծում Հայաստանում մինչև Գրիգոր Լուսավորիչը, որը Արշակունի թագավորների ցեղից էր: Նա Հայաստան գալով՝ տարբեր չարչարանքներ կրեց և քարոզելով Ավետարանը, ժողովրդին և Տրդատ Մեծին դարձրեց քրիստոնեական հավատին և դարձավ Հայոց Եկեղեցու հիմնադիրը, որի համար ժողովուրդը նրան համարում է հայոց առաքյալ: Սուրբ Գրիգորը սկզբում արքեպիսկոպոս էր և Սեդեեստրոս Պապը չորրորդ դարի սկզբին նրան ձեռնադրեց ինքնիշխան կաթողիկոս հայոց⁶:

Սուրբ Էջմիածնի աթոռի կաթողիկոսները հաստատում են, որ իրենց իշխանությունը և կոչումը հաջորդաբար փոխանցվել է դարերի ընթացքում, սկսյալ Ս. Գրիգորից, որի համար նրանք մինչև այսօր մեծ կարևորություն են տալիս Ս. Գրիգորի անապական աջին, որը պահվում է Էջմիածնում:

Էջմիածնի կաթողիկոս-պատրիարքը համարվում է Հայոց Եկեղեցու գլուխը: Միայն նա իշխանություն ունի օրհնելու Մյուռոնը և նշանակելու եպիսկոպոսներ հայկական տարբեր թեմերի համար: Նա է հսկում եկեղեցական գործերին, կրոնական հարցերին և բարոյական կենցաղին: Նա միայն կարող է թույլատրել եկեղեցական կանոններից շեղումները, և ժամերգության ողջ պաշտամունքի ընթացքում հիշվում է նրա անունը: Հայոց լեզվով կրոնական գրքերը հրատարակվում են միայն նրա հրամանով: Կաթողիկոսը ճանաչում է թե՛ տիեզերական և թե՛ Հայոց Եկեղեցու ժողովների իշխանությունը:

ԳԼՈՒԽ Ժ

(հատված)

Թեև միայն նրանց (հայերի) փոքր մասն է ապրում իր հայրենի երկրի կենտրոնում, իսկ մեծ մասը տարածված է Փոքր Ասիայով, մասամբ և Աֆրիկայում և Եվրոպայում, սակայն ունեն սերտ և անմիջական կապ իրենց հայրենիքի հետ և իրենց անշարժելի և անխախտ ազգային-կրոնական կենտրոնը և միությունը կաթողիկոսությունն է, որը միշտ ունեցել է մի մոգական ազդեցություն և իշխում է ողջ ժողովրդի վրա: Հայ ժողովրդի ցրվելը աշխարհով շարունակվում է ավելի քան հազար տարի: Այս ընթացքում Հայաստանը ունեցավ հնարավոր բոլոր իշխողներին, որոնց ընթացքում Կաթողիկոսությունը, ամեն անգամ ընկնելով իշխանության և նվաստացման տակ, հաճախ ընկնում էր և հոգևոր ու բարոյական առումներով, սակայն չնայած դրան, նրա համախմբող դերը, որով ի մի է գոդում ազգի ցրված տարբեր անդամներին, երբեք չթուլացավ, և զարմանալին այն է, թե հայերը ինչպես այսպես հավատարիմ մնացին իրենց հայրենիքին, լեզվին, բարքերին և քրիստոնեությանը թե՛ ազգային և թե՛ եկեղեցական առումներով:

Նույն ձևով հրեաները, սփռված լինելով ամենուր և բնակվելով օտարների մեջ, դարձյալ պահպանում են խորհրդավոր կապը: Հրեաները թեև չունեն համախմբ-

⁶ Այստեղ միանգամից պատմական երկու անձնություն է թույլ տալիս Հաքստհաուզենը: Նախ, որ Ս. Գրիգորը սկզբում արքեպիսկոպոս չի եղել և միանգամից կաթողիկոս է ձեռնադրվել, և որ Լուսավորչի ձեռնադրությունը եղել է Կեսարիայում և ոչ թե Հռոմում:

ման նյութական այնպիսի մի կենտրոն, որը նրանց մի ամբողջության մեջ կհավաքեր՝ տալով Արքիմեդի հենման կետը, որի վրա կհիմնեին լծակները՝ բարձրացնելու ողջ աշխարհը:

Ինձ հարմար է գալիս ասել, որ հայերին նախասահմանված է լինելու խմորի այն զանգվածը, որը խմորելու է ողջ Ասիան, բարոյական կենդանությամբ վերստին հոգևորություն հաղորդելով նրա մեռյալ տարերքին: Հայերի կրոնական կենտրոնը, հայերի միջև հաստատելով սերտ կապ, նրանց մեծ առավելություն է տալիս հրեաների հանդեպ:

*Անգլերենից թարգմանեց
Գայանե Պողոսյանը*

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԵՂԵՌՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1913 թ. Կ. Պոպուլով, Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուին նվիրված գրական ասուլիսում, խոսելով գրական նոր սերնդի մասին, Գրիգոր Զոհրապը նկատել է տվել. «Նոր սերունդին գրականությունը ... ամեն ինչ տառապանք է հոն. ամեն ինչ աղաղակ է բողոք: Հայկական ջարդերու ականատես գրականություն է. միտքերը՝ մռայլ, բառերը դաշոյնի պէս փայլատակող. մահահոտ է արիւնաներկ գրականություն հայկական ճակատագրին պէս»¹:

Այս իրողության վերաբերյալ ավելի վաղ՝ 1908-ին, Կահիրեում լույս տեսնող «Լուսաբերում» Վահան Թեքեյանը գրել է. «... Ամբողջ ծովածավալ գրականություն մը, Կովկասէն մինչև արտասահմանի ամենէն հայաբնակ կենդրոն, ծնալ ու սնեցալ արյունի և պղծումներու, ավերակաց և դիակույտերու հոտով»²: Ժողովրդի ճակատագիրը բոլոր ժամանակներում է հայ գրողի համար եղել ու մնացել կարևորագույն թեմա: Սկսած Խորենացուց՝ հայ գրողը ինչ էլ որ գրել է ու պատկերել՝ հարցերի հարցը ժողովուրդն է եղել ու երկրի վիճակը (ինչպէ՞ս չհիշել հայ ժողովրդի մեծ զավակներից մեկի՝ Մարտիրոս Սարյանի մի արտահայտությունը, թե «ինչ էլ, որ նկարում եմ՝ Հայաստան է դուրս գալիս»): Այսպէս հայ երկիրն ու հայ մարդը, նրանց անցյալն ու օրհասական ներկան հայ մտքի մեծերի համար մշտատև ասելիք է եղել, սրտի ցավ ու մտահոգություն: Անգամ այնպիսի գուտ «անձնական լարի» բանաստեղծ, ինչպիսին Մեծարենցն է, իր «Երգ» բանաստեղծության մեջ գրել է.

Քո՛ւյր, մոտեցո՛ւր իմ ձեռքին
Աստվածաբոցն հըրացան,
Զի ամե՛ն բան ինձ կրկին
Կը հիշեցնէ վրե՛ժն արյան³...

Դարեր տևած ասպատակությունները, անհատում հորդաների արշավանքները այդուհանդերձ չունեցան ազգակործան այն հետևանքները, որ ունեցավ հայակույ եղեռնը: Այն իր հետ բերեց ոչ միայն հողային կորուստներ ու ազգային կազմակերպված կյանքի քայքայում, այլև բարոյական ու ոգեղեն հուսալքում, տևականորեն դատապարտված լինելու մտայնություն: Ընդգրկման ծավալներով ու հետևանքներով իր նախադեպը չունեցող 1915-ի հայոց եղեռնը, ուր գործում էր ոչ միայն թուրքի կիրքը, ինչը սովորական մի բան էր, այլև թուրքի միտքը (ջարդարարը լոկ ամբողջը չէր, այլև ազգային ընտրանին, մտավորական սերուցքը՝ թուրք գրա-

¹ Գր. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 2004, էջ 241:

² «Լուսաբեր», Կահիրե, 1908, թիվ 486:

³ Մ. Մեծարենց, Երկեր, Երևան, 1986, էջ 134:

գետը, թուրք բժիշկը, թուրք իրավաբանը, համալսարանականը, պետական գործիչը), է՛լ ավելի մտասնեռեց հայ գրողի ասելիքը դեպի համընդհանուր ժողովրդական ճակատագիրը: Հայ մարդու համար այլևս, Մեծարենցի խոսքերով ասած՝ ամե՛ն, ամե՛ն բան «կը դարձըներ» «գույնն արյան», «հոտն արյան», «համն արյան», «ձայնն արյան»: Եվ բնական է, որ եղեռն տեսած և անգամ այն չտեսած, բայց նրա հետևանքները լիովին ճաշակած ամեն մի հայ գրող անտարբեր չմնաց այդ «սև արևի» (Շ. Շահնուր) նկատմամբ և իր ստեղծագործություններում այս կամ այն խորությամբ անդրադարձավ համայնական կյանքի կործանման պատճառ դարձած եղեռնին:

Ազգային փլուզման, կորուստների ու ցավի արձագանքողներից մեկն էլ դեռևս 1913-ին Երկրից հեռացած Համաստեղը եղավ, ում առաջին գրական փորձերը, որ չափաճո էին, ամենատիպի կերպով անդրադարձնում են հայ արյան ու նախնիների ծանր պատմությունը.

Արի՛ն, արի՛ն թափեցին,
Արիւն արցունք թափեցինք,
Լըճակին մէջն արիւնի
Գիրկ գիրկ աստղեր քաղեցինք:
Երթանք, ընկեր, այգիին
Գինին փրփուր կ'արիւնի.
Երթանք շանթին, վրէժին,
Երթանք ուժին հայրենի⁴:

Նույն շրջանում գրողի առջև հառնում էին մահվան ու սարսափի նաև այլ տեսիլներ (հիշենք 1920-ին նրա գրած և «Փյունիկում» տպագրած «Մահվան տեսիլները»): Հետագայում ստեղծված նրա գրականությունը եկավ լրացնելու արևմտահայության կյանքի, մարած գեղեցկությունների, դրանց հաջորդած աննախադեպ տարագրության, եղեռնի աղետաբեր հետևանքների ու գաղթահայության ծանր վիճակի գեղարվեստական էլ ավելի խորքային պատումը: Առաջին հայացքից թվում է, թե համաստեղյան էջերը կենցաղագրություններ են և կամ քնարականությամբ շաղախված հայրենի բնաշխարհի հուշ-տեսարաններ: Մինչդեռ իրականում դրանք շատ տարողունակ են և մի կողմից բովանդակում են հայ մարդու ազնիվ նվիրումներն ու աշխարհպատկերացումները, որ նրան նախ և առաջ առանձնացնում են այդ նույն հողի վրա ապրող այլազգիների ցածրակենցաղ ու դատապարտելի ապրելաձևից, ինչը հանգում էր թալանի ու բռնի ուժի մշտատև կիրարկումներին, մյուս կողմից՝ դրանք արարման ու աշխատանքի փառաբանման պատկերներ են, որ Համաստեղի խոսքը բարձրացնում են մինչև համամարդկային երազանքների արժևորումները: Մի գրականություն, որ գյուղական արարչական կյանքի իր գրավիչ պատկերումներով վարուժանական ավանդույթների շարունակությունը եղավ: Բայց եթե Համաստեղի մեծ նախորդի երգած գյուղը («Հացին երգը») միտված էր իր ժամանակակիցների մեջ սերմանել աշխատանքի ու խաղաղ կյանքի նկատմամբ սեր ու նվիրում, ապա Համաստեղի նպատակը այլ էր՝ արթուն պահել սերը հայրենի հողի ու եզերքի նկատմամբ: Այլ խոսքով՝ վարուժանական խոսքն ուղղված էր հայ մշակներին, որ

⁴ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1917, 10-ը նոյեմբերի:

ապրում էին սեփական երկրում, Համաստեղի պատգամն ուղղված էր տարագիր դարձած և օտար երկինքների տակ ծվարած սփյուռքահայությանը: Այդ պատճառով էլ Վարուժանը գրում էր ներկա ժամանակով՝ «Իրիկվան մեջ, գյուղին քով, Կը *մըը-մընջե* գուռն ուռիին տակ շքեղ»⁵, կամ՝ «Տընակին մեջ մըթընշաղ, կըտուրին տակ հայրական, *Ամբարնե ըն են*, շար ի շար, նոր բերքերով ծոցվորած»⁶:

Վարուժանական աշխարհում «Մարդը կ'երթա երգելով» («Հերկեր»), սերմնացանի բուռը «Արտերուն վրա՝ գերդ արշալույս՝ կը բացվի» («Ցան»), մինչդեռ Համաստեղի շարադրանքը ընթանում է անցյալ ժամանակով, քանի որ նա խոսում ու գրում է արդեն անցյալ դարձած կյանքի մասին. «Այն տարին կենդանիներու համաճարակ *կար*» («Միջո»), կամ՝ «Օհան գեղի էն ծերերեն էր» («Էս աշխարհը կվիլի»), կամ «... ես *կհիշեի* Գանձակ Պարսամին դիմագիծը: Անոր դեմքին վրա ալ հով *կար*» («Անձ-ընը») և այլն: Համաստեղյան գրականությունը կատարում է մի կարևոր դեր՝ ընթերցողի մեջ արթնացնում է կարեկցանքի զգացում ու հարազատություն առ տառապած մարդն ու անմեղ գոհը:

Համաստեղն իր պատմվածքների մեծ մասում, իհարկե, պատմում ու ներկայացնում է «իր գյուղին բարությունը»: Հեքիաթ չէր ու հեքիաթ էր այդ աշխարհը, և հայրենի հողը խայտում էր հայ գյուղացու ոտքերի տակ: Շուրջբոլորը «կհորդեր գյուղական կյանքն ու առատությունը», ուր ապրում ու արարում էր հայ մարդը, ինչպես ռենձպար Թորոն, որ ամեն օր հպարտ անցնում էր Չայի կամուրջի վրայով՝ նոր բացված բամբակի ծաղիկը արախչու ծալքերի մեջ դրած. «Թորոն տուն կերթար, բամպակի ծաղիկը իր կնոջ երեսին, աչքերուն կքսեր՝ բամպակը բուսցնող հողին ժպիտով: Երեկոյին ձեթի ճրագին առջև մի քանի գլուխ «Եկեսցե՛» կկարդար ու կպատկեր կնոջ քով, համբուրելու անոր թուշը, բամպակի ծաղիկն արգասավորող հողին պես արգասավորելու վաղվան լծվարը, սերմնացանը, նաճարը, քահանան, մշակը»⁷:

Հայրենի հողի կորուստը հոգևոր Հայաստանի կերպարով փոխարինելու նպատակով թեև Վազգեն Շուշանյանը 20-ական թվականներին պիտի գրեր, թե «Հոն կյանքն իմաստուն էր... Մարդիկ կապրէին իրարու հետ՝ ներդաշնակ ու խաղաղ»⁸, սակայն Համաստեղը բոլորովին էլ այն կարծիքին չէր, թե «այն օրերին»՝ ասել է թե արևմտահայության կյանքում, ամեն ինչ հարթ էր ու չկային մարդկային բարդ հարաբերություններ: Ընդամենը մի քանի էջ կազմող նրա գործերից մեկում՝ «Երնեկ այն օրերուն», գրողը պատկերում է այդ կյանքի նաև ստվերոտ դրսևորումները: Դրկից երկու հարևաններ հավերժական վեճերի ու կռիվների մեջ են, մանր, շատ մանր ու առտնին պատճառներով՝ հավերի, թոռների, ջրատար խողովակի... Չնչին բաների պատճառով այդ կյանքում ծավալվող կռիվների մասին Շահնուրն էլ է գրում իր «Առավոտյան շեփոր», «Մանուկ մը տարեցներու մեջ» և այլ գործերում: Բայց եթե Շահնուրի նպատակն էր ցույց տալ, որ արևմտահայ զանգվածի մի մասը ապրել է մանր ու ճղճիմ մի կյանքով և հեռու է եղել *ազգային կյանքից*, ապա Հա-

⁵ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1986, էջ 191:

⁶ Նույն տեղում, էջ 199:

⁷ Համաստեղ, Հայաստանի լեռներու արնգահարը, Երևան, 1989, էջ 343 (Համաստեղից կատարված բոլոր մեջբերումները բերված են այս գրքից: Այսուհետ կնշվեն միայն էջերը - Ա. Ա.):

⁸ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925, Գ տարի, N 12:

մաստեղի ասածը այն է, որ հայ մարդն իր ապրելաձևով հեռու էր *քաղաքականությունից* և զոհ դարձավ մեծ տերությունների խարդավանքներին:

«Երևեկ այն օրերուն» պատմվածքի հերոսները վերոհիշյալ ներամիտփ կյանքով են ապրում մինչև տեղահանության սկսվելը, մինչև տուն ու տեղից բաժանվելը, մինչև ականատես լինելը համազոտագիների ցիրուցանումին, հայ կանանց հափշտակումներին, մոր ու զավակների բաժանումներին, մինչև... իրենց իսկ աքսորվելը: Ու երբ դժբախտության ճանապարհին պատահականորեն իրար են հանդիպում երկու անհաշտ հարևանները, նրանց մեջ արթնանում է հին օրերի վերհուշը, որ այս անգամ նրանց պատկերվում է որպես երանության ժամանակներ, երբ չկար սպանդ ու մահ, երբ կյանքը հարաբերական հանդարտ ընթացքի մեջ էր:

Իր ստեղծագործություններում Համաստեղը ուղղակի կերպով չի խոսում ու գրում, թե ինչ է եղեռնը, ինչպես ընթացավ, նա չի էլ պատկերում սարսափազդու տեսարաններ: (Եվ դա ոչ այն պատճառով, որ դրանք գեղարվեստականացման գրեթե ենթակա չեն: Զե՞ որ արյան, նախճիրի, մահվան տեսարանները դեռ եղեռն չեն ու չեն կարող բացահայտել ողջ ողբերգությունը): Սրան հակառակ, գրողը հաճախ է առաջ քաշում, թվում է, թե արդեն վաղուց իրենց պատասխանները գտած հարցեր՝ ինչ բան է աշխատանքը, ինչ է բարին ու գեղեցիկը, ինչ է նվիրումը..., որ իրենց ամբողջության մեջ ընթերցողին մղում են մի սևեռուն խոհի՝ ի՞նչ եղան այդ ամենը, ինչո՞ւ չկան և ովքե՞ր են մեղավորները: Ընթերցողի մեջ ծնվում է նաև հաջորդ մտածումը. ինչո՞ւ են Համաստեղի հերոսները *չափից դուրս* սիրում հայրենի հողն ու իրենց աշխարհը: Արդյո՞ք այդ ահագնացած սերը կյանքի ավերման ու եղեռնի ժխտումը չէ:

Սպանդի էությունը ներկայացնելու նպատակով Համաստեղը առավելապես կանգ է առնում նրա թողած հետևանքների վրա, երբ դատարկվել ու ամայացել է մի ողջ եզերք և խեղվել է մարդու կյանքը: Այդ գրականությունը հուշում ու ասում է, որ աշխարհում թնաժում է չարը, այն անխուսափելի է դարձել կյանքի բոլոր ոլորտներում ու վերանում է ամեն բան, ինչը արդար էր ու գեղեցիկ:

«Էս աշխարհը կփլի» պատմվածքը յուրահատուկ տեղ է գրավում Համաստեղի գործերի շարքում: Պատմվածքը չի պատկերում բուն եղեռնը և ոչ էլ նրա պատճառած կորուստներն ու սպառնումները: Այստեղ ներկայացվում է այն գերլարված սպասողական մթնոլորտը, որի մեջ ապրում էր արևմտահայությունը առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, երբ կյանքը դուրս էր գալիս իր բնական հունից, ասել է թե՛ եղեռնի նախօրերը, երբ մի կողմից «գեշ լուրեր» էին լսվում, թե «Ալմանը ֆրենկին կհաղթե», մյուս կողմից արդեն նկատելի էր դառնում, որ փաթթոցավորները շատանում են ու բացահայտ սպառնում՝ թե «մի քանի օր» է մնացել հայության վերջը տալու: Ու մինչև հայ մարդը շենացման աղոթքներն շուրթերին զբաղված էր հերկ ու ցանով՝ ամայացնում են հայրենի դաշտերն ու այգիները, ավերում շեները, նրա աչքերի առաջ փլվում է իր տունը, «մարախներին» նման աշխարհը լցվում է ջարդարարներով. «... դաշտերուն մեջ մարդ չկար», «գրակալը սանդուղներուն վրա» ընկած էր մնացել, քահանայի շուրջատը՝ «ծառին վրա նետված», արտում մնացել էին «խոտ քաղելու մանգաղը, մշակին գլխարկն ու կոշիկները»:

Պատմվածքը ուշագրավ է նաև իր կառուցվածքով. այն իրար հաջորդող դրվագների միջոցով մատնանշում է եղեռնին նախորդած «տրամաբանական» դեպքերը, երբ խաղաղ կյանք են մուտք գործում պատերազմական օրերի տագնապները, հե-

ռուններից լսվող հրանոթների կրակոցները, ապա գյուղ խուժած ժանդարմների վայրագությունները: Պատմվածքի հերոսի՝ Օհանի համար, որ իր կյանքի իմաստը տեսնում էր խաղաղ աշխատանքի մեջ և իր գյուղի դաշտ ու արտը «գոց գիտեր... ինչպես քահանան ավետարանը», որ «բահը ուսին էր», երբ անգամ «գլուխը բարձին դրած կքնանար», եթե խաղաղ օրերին անըմբռնելի էր մնում, թե մարդիկ ինչու են մեղք գործում, ինչու են ծույլ և ինչու են դաշտն ու այգին անմշակ թողնում, ապա գահավեժ դեպքերի ժամանակ նրա նախկին վրդովմունքը վեր է ածվում մարդկային ու ազգային դժբախտության անփարատելի ողբերգության: Նրա աչքերի առջև աքսորվում ու բռնությունների են ենթարկվում հարազատներն ու համագյուղացիները: Նրանք բոլորը «...դաշտերուն, ճամփաներուն վրա դիակներ տեսան ու իրենք ալ դիակներ եղան» (էջ 424):

Իր՝ «Նապաստակի մը օրագիրը» պատմվածքում այս ամենի մասին Համաստեղը գրում է այլաբանորեն: Բանջարանոցի մեջ ազատ ապրող, թռչունների, ծաղիկների ու սեզերի գեղեցկությամբ հիացած, լուսնի ու արևի լույսից, իր իսկ ստվերից զարմանք ապրող, երջանկությամբ ու սիրով լցված նապաստակի կյանքը ընդհատվում է, քանի որ այն վայրով, ուր նա վայելում էր իր կյանքի երջանիկ պահերը, «անցած էր որսորդ մը իր որսկան շուներով» (էջ 76):

Եղեռնը հազար հազարավորների կյանք էր խլել: Իսկ նրանք, ովքեր հրաշքով փրկվել էին մահվան ճիրաններից, հայտնվել էին աշխարհի չորս ծագերում, հսկա քաղաքների հոշոտող խառնարաններում ու հաստոցների մամլիչների առջև:

Հայրենի արտ ու դաշտից վտարված շատերից մեկն էլ Համաստեղի «Զոհը Կար Ամուն էր» պատմվածքի հերոսն է: Նրան տրված չէր հայրենի եզերքում վայելելու իր երջանկությունը: Ավերիչ ալիքը նրան օտար ափեր է նետել, դեմ հանդիման կանգնեցրել մարդակուլ մի անծանոթ իրականության առջև (նույն կացության մեջ է գտնվում նաև «Վարդան» պատմվածքի հերոսը): Նա իր տարագրյալի կյանքի տաղտուկը ջանում է փարատել հայրենի եզերքի ու կենդանական աշխարհի վերհուշներով: Արտաքնապես տգեղ դիմագծերով այդ մարդու սիրտը լեցուն է անցած օրերի պատմություններով, Վանքի ճանապարհի, Սևքարի, Պաղակի ջրերի, բերրի դաշտերի ոսկիացող ցորենների քաղցր հիշատակներով: Նրա հոգում, ինչպես «Հայաստանի լեռներու սրնգահարը» դրամայի հերոս Գրիգորի ունկերում, հար արթուն է հայոց աշխարհի դաշտ ու լեռան հրաշք սրինգի կանչող ձայնը:

Որքան ծավալվում են Կար Ամուի երազանքները, որքան անուշ են հնչում հայրենի տան արձագանքները, այնքան բիրտ ու դաժան է գծագրվում նրա առջև գործարան տանող ճանապարհը, նրա գյուղացու էությանը խորթ աշխատատեղի խառնիճաղանջը, ուր անիվավար փոկերը «կթռչեին արագ», փայլուն երկաթե ձողերը «ետ առաջ կերթային ու կհեային վիշապի մը պես» (էջ 128): Նա փորձում է երագով իր կյանքը դարձնել գեղեցիկ ու իմաստալից, բայց պիտի գար այն պահը, երբ, մոռացած երկաթ ու փոկ, բենձպար Սաքոյի հետ խոսքի բռնվելով՝ մոռանալ դառն իրականությունը և ... «Հեղ մըն ալ, հանկարծ ... քը՛րդ, քը՛րդ ... գործավորներն իրար անցան ու գտան մարմնի կտորներ անիվներուն փաթթված» (էջ 128): Զոհը Կար Ամուն է, ում ապրած ազնիվ կյանքն ու երազանքները հանդուրժելի չէին ո՛չ նրան վտարած, ո՛չ էլ ընդունած մարդկանց համար:

Այսպես ամեն մի տարագրի մո՛տ, շա՛տ մոտ են թվում հայրենի լեռներից եկող

սրնգի արբեցնող ձայները, և պատահական չէ, որ իր «Հայաստանի լեռներու սրնգահարը» դրամայում Համաստեղը ասես հանձնարարելով հարցնում էր, թե այդ կախարդական երազների միջից «Ե՞րբ պիտի արթննանք, ա՛խ, ե՞րբ պիտի արթննանք» (էջ 692): Եվ դա «Վարդան» պատմվածքի համանուն հերոսի սահմանափակ նպատակը չէ՝ վերաշինել «իր պապենական ջրաղացը» և «վարպետ ջաղչիպան» դառնալ, այլ ավելի մեծ մի բան, որ Երկրի վերադարձով պիտի ավարտվեր ու հաշտավայրությամբ:

Եղեռնի ակնառու անդրադարձները համաստեղյան գրականության մեջ առավել լազույնս դրսևորվել է «Զրույց շունի մը հետ» պատմվածքում: Կարո Սասունին ուշագրավ մի վկայություն է անում կապված այս պատմվածքի ստեղծագործական պատմության հետ, ըստ որի Համաստեղի հետ բոստոնյան մի հանդիպման ժամանակ գրողը խոստովանել է. «Բանաստեղծութիւն մը սիրտս կը դրոշէ ... ու անուն մը չեմ կրնար տալ այն նիւթին, որ համերգի մը բազմահնչին արձագանգներով կը լեցնէ հոգիս»⁹: Շարունակելով իր խոսքը՝ Սասունին գրում է, որ երբ ինքը ամիսներ հետո վերադարձել է Բոստոն, «Հայրենիքի» խմբագիր Ռուբեն Դարբինյանը իրեն հայտնել է, որ իր ամսագրում տպագրում է Համաստեղից մի պատմվածք, որը «Խորունկ ապրումներու եւ բանաստեղծական թռիչքի ինքնայատուկ ստեղծագործութիւն է»: Այդ «ծնված տղան» (որակումը Սասունուն է) հենց Համաստեղի հոգին լցրած այն ստեղծագործական երկունքի արդյունքն էր, որ «ցեղին սրտի մորմոքը կ'երգեր եւ շքեղ երազի մը յաղթերգութեամբ կը վերջանար»¹⁰:

Պատմվածքի հերոսին բախտակից թափառական կենդանին, որին նա Անտոնիոս անունն է տալիս, յուրովի գրուցակից է դառնում (իրականում հերոսը մենախոսում է)՝ բացահայտելու համար Տեր Էլ Զորի անապատներով հալածորեն քայլած, «Հալեպ, Ալճերի, Մարսել ու օր մըն ալ Փարիզի փողոցներուն մէջ» հայտնված հայ գաղթականի կյանքի ու հոգու պատմությունը, ում միակ մտերմիկ իրը «պատեն կախված գանգն» է մնացել, որ նա իր հետ բերել էր շիկացած անապատներից: Պատմվածքում հիշատակվող գանգը նս իր նախապատմությունն ունի:

«Հայրենիք» օրաթերթի 1965 թ. համարներից մեկում Համաստեղը վկայում է, որ ինքը 1929-ին ճամփորդություն է կատարել դեպի Մերձավոր Արևելք և Լիբանանից մեկնել է Տեր Էլ Զոր ու տեսել իր գրականության մեջ վերակենդանացած տիպերի «հազար հազարով» ոսկորները: «Ավելի մտերմացած» իր ժողովրդի տխրությունների հետ, հայ ողբերգությունը լռելյայն կրելով իր հոգու խորքում՝ մի փոսի միջից նա իր հետ է վերցրել փղոսկրի գույն ստացած մի գանգ, որի հետ «ճամբու ընկեր» ու «մտերիմ» է դարձել. «Եթե միայն գիտնայի անունը այդ գանգին...,- գրում է Համաստեղը,- Իմ յուզուած երեւակայութեանս մէջ անուններ եկան շարքով ու այդ անունները մարմին առին... Ես նոյնիսկ իմացայ անոնց ձայները»¹¹:

Գրողը Մահտեսի Արութի՝ ձայնն էր, որ լսում էր, ում հափշտակված աղջիկների մեջ գեղեցկությունը ծաղիկի պես կաճեր, Մակար վարժապետի՝ նր, ում գրատախտակը լի էր Շիրակացու թվերով, Տեր Թաթևիկի՝ նր, ում ձայնի մեջ խունկ կար ու երգում էր հրեշտակի ձայնով, Մարութենց Ատոմի՝ նր, որ թիկնեղ հողագործ էր ու Հա-

⁹ «Բազին» ամսագիր, Բեյրութ, 1966, N1:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1965, 22-ը ապրիլի:

յաստանի հողն էր հերկում, ռանչպար Կարոյի՞նը, որ իր արտին այցելության էր գնացել: Նրանց բոլորի, բոլորի կյանքը խորհրդանշող այդ գանգը գրողի հոգում ապրել ու շնչել է, գրուցել ու Համաստեղին մղել գրելու կյանքի հավաստի հիմքեր պարունակող իր լավագույն գործերից մեկը:

«Զրույց շունի մը հետ» պատմվածքի հերոսը այն հարյուր հազարավորներից մեկն է, որ ականատես է եղել, թե ինչպես բիրերով ու կացիններով զինված մարդակերպ գազանները տներից, ճամփաներից ու դաշտերից խուժել են խաղաղ հայ մարդու վրա ու խոշտանգել նրան:

Պատմվածքի հերոսը անանուն է (պայմանականորեն հեղինակը նրան անվանում է Օվանի տղա), ինչը պատահական չէ և իրենով մարմնավորում է տարագիր դարձած թե՛ ամեն մի առանձին և թե՛ ընդհանրացված հայի վիճակը, որ դատապարտված է «միս մենակության», լքվածության ու մտավոր լլկանքի: Նրա կյանքի հեքիաթն անցել է հայրենի Հողդարում, ուր «սերմ կնետեր», ուր ջերմանում էր շենշող աղջկա սիրով ու շեն տան մասին երագում: Անցնելով պատերազմի մահացով, ապրելով նրա ողջ սարսափները, նրան ավերիչ ալիքը նետել է օտար մի աշխարհ: Նրա նախկին հպարտ հոգուց ոչինչ չի մնացել, բայց անկասելի է դարձել եզերքի կարոտը, արևի ու կյանքի երկրպագությունը:

Նրա մտապատկերներում, ինչպես և Համաստեղի կերտած հայ գյուղացիների մի շարք այլ կերպավորումներում, անընդհատ արթնանում ու մեկը մյուսին են հաջորդում կործանված գյուղի՝ դեպի երկինք պարզված ձեռքերով քահանան, որ հեռացել է եկեղեցուց՝ վառված թողնելով կանթեղը, համագյուղացի Մակարը, որ կիսատ է թողել վարը, Խաթուն մամը, ում այգին «չքրած» է մնացել, վարպետ սերմնացաններն ու սայլագործները, կամրջաշինարարներն ու «դիոլ զարկողները»:

Այդ ամենին խառնվում են անապատներում սփռված հարազատների՝ «սավանի պես ճերմակ» ոսկորների ու ծնողների կմախքների սարսափագրու տեսարանները, օտար փողոցների մեջ թափառող մերկ որբերի թշվառ կացությունը, սևաչա աղջիկների լլկվելը վավաշոտ զինվորների ու ավազակների կողմից, որոնց ականատեսն է դարձել ինքը՝ այս անգամ արդեն քաղաքակիրթ աշխարհում:

Երբեմնի շեն գյուղ ու տեղից հիմա ավերակներ են միայն մնացել, հայ մարդու հեռացումով դատարկվել են գյուղատար ճամփաները, ցամաքել աղբյուրները, սարդոստայններ կախվել փլված եկեղեցու քիվերից, ջնջվել վարժապետի ձեռքով գրված «Արարատը աշխարհի ամենագեղեցիկ լեռն է» նախադասության տառերից շատերը՝ տեղը թողնելով անորոշ մի բան՝ « բա տը շխ բիի ամ նա դեցիկ լեռ »՝ ճիշտ և ճիշտ հայրենի եզերքի նման:

Իսկ ի՞նչ է իր հետ բերում այս ընդարձակ աշխարհում բանտարկյալ դարձած գաղթականին վաղվա օրը: Համաստեղը համոզմունք է հայտնում, որ *վերադարձի հույս*, այն հույսը, որ գրողի շուրթերին ու մտորումներում դառնում է մայր երկրի, արևի ու աշխատանքի գեղեցկություններին ձոնված մրմունջ ու երգ, ուր սովորական չէ ծառը, որ ծաղկում է, թռչունը, որ թռչում է, խոտը, որ ծլում է, սայլը, որ լեցուն է ցորյաններով:

Շա՞տ են հայ գյուղի տեսիլքներով լեցուն համաստեղյան գեղումները: Թերևս այն: Բայց մի՞թե դրանք մարդկային չեն, մարդասիրական, լեցուն նույն մարդ արարածի ու աշխարհի սիրով: Ու մի՞թե վարուժանական երագված գյուղի ու աշխա-

տանքի հավերժական պատկերների շարունակումը չեն դրանք և կամ բակունցյան հագրոների բաղձանքը՝ այս անգամ սփյուռքյան պայմաններում: Համաստեղը հավատացած էր, որ իր հնչեցրած այդ անմարելի երգը պիտի լսեն «Աշխարհի չորս հովերուն ցրված» ցեղակիցները, նրանց հոգում պիտի արթնանա հայրենի տան կարոտը ու պիտի գան... Պիտի գան հավաքվեն «յոթը վարպետները գյուղին եկեղեցին շինելու համար», պիտի գան կամուրջ շինողները, աղյուս թափողները, գերան տաշողները, որմնադիրները, քարակոփները, վար անողները, սերմ նետողները, հնձվորները, ճամփա շինողները, շարական երգողները, և բանաստեղծները «նարեկյան ներշնչումով» պիտի բանաստեղծեն արարումն ու աշխատանքը: Ու զարհուրելի մարդիկ, այս ամենին ի տես, «այլևս չպիտի սպանեն»:

Համաստեղի պատմվածքներից մեկը կրում է «Անձրևը» վերնագիրը: Կարելի է ասել, որ անձրևը գրողի համար փիլիսոփայական ենթիմաստ է ստանում, այն բարիքի, առատության, հաշտության մարմնավորումն է, որ արգասավորում է հողն ու լվանում մարդկանց չարացած հոգիները: Այդպես համաստեղյան ողջ գրականությունն է մաքրում ընթերցողի ներաշխարհը, նրան ազնվացնում ու կապում հայաշխարհի անանց արժեքներին, հիշեցնում ու ասում, որ *այն ժամանակ* մարդիկ տարբեր էին, հավատ կար, արդար վաստակ կար, կյանքի գեղեցկությունը կար, այն ժամանակ, երբ հայ մարդը վաստակած կանգնած իր հայրենի հողի վրա, արևագալի շարականներ էր երգում ու հպարտ աղոթքի կանգնում:

«Տե՛ր, բարի լույս, արարիչ մարդկանց, ծառոց ու տնկոց: Յորյաններուն առատություն ու արև պարգևես, Տե՛ր, էքիները սֆաթե, կարկուտե, մարախե ու խաշինքները չոռե պահես, Տե՛ր: Աշխարհին խաղաղություն ու թագվորաց հաշտություն» (էջ 408-409):

Այսպես էր ապրում հայ մարդը, և այդ ամենից մնաց արյուն ու աքսոր, ու թեև չեղավ խաղաղություն ու հաշտություն, բայց նրա մեջ չմարեց կատարյալ կյանքի տենչանքը, հայրենի եզերքի կարոտը, վաղվա համախմբումի հավատը: Ու նրա գրողի շուրթերից քանի դեռ «երկնքի ու երկրի դեմ» կախված է այն իմաստուն հեգնանքը, որ մեզ ծանոթ է «Զրույց շունի մը հետ» պատմվածքում պատկերվող անապատների ավազների միջով անցած մարդկային գանգի հայացքից, հայ մարդը հարդիմադարձելու է ամեն մի ավերման ու եղեռնի:

Եղեռնը, այո՛, խաթարեց հայ մարդու՝ շինականի, կրոնավորի, հողագործի, մտավորականի արարչական խաղաղ կյանքը: Այն խաթարեց նաև հայ գրողի ստեղծագործական միտքը, բայց չկասեցրեց: Համաստեղը մեկը եղավ, որ կյանքի նոր ժամանակներում բորբոքեց մեր գրականության մի հատվածի կիսամար կրակը և իր ստեղծագործություններով օգնեց իր ժողովրդին նոր պայմաններում ևս շարունակել կենսասեր մնալ, սիրել աշխարհն ու մարդկանց և լցվել հայությամբ:

*ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԵՎ ԱՐՑԱԽԸ**

1809 թ., Դանիել Կաթողիկոսի մահից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Ռուսաստանի հայության հոգևոր առաջնորդ Եփրեմ Ա Ձորագեղցին (կթղ. 1810-1831): Նա կարևոր դեր է խաղացել Գյուլիստանի պայմանագիրը կնքելու գործում (1813 թ.), համաձայն որի Ռուսաստանին անցան Ղարաբաղի, Գանձակի, Շաքիի (Նուխի), Շիրվանի (Շամախի), Դերբենդի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունները: Եփրեմ Կաթողիկոսի կողմից 1814 թ. Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին նշանակվեց Անդրկովկասի ռուսահպատակ հայոց առաջնորդ:

Դեռևս 1763 թ. Գանձասարի Ներսես Կաթողիկոսի մահից հետո 1765 թ. Էջմիածնում Կաթողիկոս էր օծվել Հովհաննես Հասան-Ջալալյանցը, որը գահակալել է մինչև 1786 թվականը: Այդ նույն թվականին նա եղերական վախճան ունեցավ Շուշիի խան Բրբահիմի բանտում: Հովհաննես Կաթողիկոսը իր ողջ կյանքը նվիրաբերել էր հայության ազատագրությանն ու անկախությանը: Նրա ողբերգական մահից հետո կաթողիկոսական գահին պետք է նստեր իր եղբայր Սարգիսը: Այդ ժամանակ այնպիսի ծանր վիճակ էր ստեղծվել, որ Արցախից հնարավոր չէր գնալ Էջմիածին և օծվել որպես Գանձասարի Կաթողիկոս: Գանձասարում էլ հնարավոր չէր կաթողիկոսական ընտրության համար ժողով հրավիրել: Սարգսի համար ընտրության վայր դարձավ Գանձակը, որը վաղնջական ժամանակներում եղել է Աղվանից կամ Հայոց Արևելից կողմանց կաթողիկոսների նստավայր: Առանց Էջմիածնի համաձայնությունը ստանալու, Սարգիս Հասան-Ջալալյանը 1792 թ. դեկտեմբերի 18-ին Գանձակում օծվեց որպես Աղվանից Կաթողիկոս¹: Նա Գանձասարում երկար չկարողացավ գործել: Բրբահիմ խանի խարդավանքներից դրդված, 1798 թ. ստիպված էր թողնել արթոռանիստ Գանձասարի վանքը և հեռանալ Թիֆլիս: Այստեղ նրան, Րաֆֆու վկայությամբ, սիրով է ընդունել Հերակլ երկրորդ թագավորը²: Հերակլի մահից հետո նրան հաջորդած իշխան Գիորգիի և Էջմիածնի միջև հարաբերությունները լարվեցին: Սարգիսը Ղուկաս Կաթողիկոսի պահանջով իր եղբորորդի Բաղդասար վարդապետի հետ մեկնում է Էջմիածին՝ իր խոնարհությունը հայտնելու և կաթողիկոսական Աթոռին հաստատվելու իր պաշտոնը ստանալու համար: Ղուկաս Կարնեցին սակայն Սարգսին կարգեց Հաղպատի վանքի վանահայր և միննույն ժամանակ Ղարաբաղից գաղթվածների առաջնորդ: Այդ նույնը հրովարտակով հաստատում է և իշխան Գիորգին³: Սարգիսը համաձայնվել է կրել արքեպիսկոպոսի աստիճան և գործածել առաջնորդական կնիք: Սակայն դրանով նրա հակասություններ

¹ Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց Եկեղեցին և մշակույթը, Երևան, 2001, էջ 247: Բ. Ուլուբաբյանը նշում է, որ օծումը տեղի է ունեցել դեկտեմբերի 8-ին, իսկ Գրիգոր Տեր-Հովհաննիսյանցը՝ 18-ին («Փորձ», 1880, N 5, էջ 145):

² Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ.10, Երևան, 1964, էջ 287:

³ Նույն տեղում, էջ 289:

րը Էջմիածնի հոգևորականների հետ չվերջացան: Սարգիս արքեպիսկոպոսը Հաղպատում մնաց 14 տարի:

1805 թ., երբ ռուսաց բանակը մտավ Արցախ-Ղարաբաղ, և ոչնչացվեց Իբրահիմ խանը, 1812 թ. Սարգիս Կաթողիկոսը վերադարձավ Գանձասարի վանք և «նորից սկսեց գործածել Կաթողիկոսական տիտղոսն ու կնիքը»⁴: Եվ չնայած Էջմիածնի հոգևոր իշխանությունը դեմ էր, սակայն Սարգիս Կաթողիկոսը չէր ցանկանում «Աղուանից կաթողիկոսութեան վերջանալը իւրեանով տեսնել»⁵: Սարգիս Հասան-Ջալալյանը դիմում է Իբրահիմի սպանությունից հետո ռուսական իշխանությունների կողմից Ղարաբաղի խան նշանակված Մեհտի-դուլի խանի օգնությանը, որը և հրովարտակով Սարգսին կրկին հաստատում է Գանձասարի Կաթողիկոս: Բայց ահա Անդրկովկասի ռուսահպատակ հայոց առաջնորդ Ներսես Աշտարակեցու, Եփրեմ Կաթողիկոսի և ռուսաց տերության համատեղ գործունեությամբ, 1815 թ. վերջ տրվեց Աղվանից հինավուրց կաթողիկոսությանը և «առաւ Սարգսից կաթողիկոսական կոչումն ու պատիւը և փոխարէնը տուաւ նորան մետրապօլտութեան պատիւ արքեպիսկոպոսական պաշտաման մէջ»⁶:

Ըստ պատմական աղբյուրների՝ «Ներսեսը Աղվանից կաթողիկոսությունը միանգամից վերացրեց և Սարգիս Կաթողիկոսը պաշտոնապես հայտարարվեց Գանձասարի կամ Ղարաբաղի արքեպիսկոպոս (մետրոպոլիտ)»⁷: Եվ այսպես, շուրջ 1475 տարի գոյատևելուց հետո Աղվանից կաթողիկոսությունը իր վախճանին հասավ 1815 թվականին: Ասենք, որ այդ իրադարձությունից 10 տարի առաջ, 1805 թ. մայիսի 14-ին, Իբրահիմ խանի և ցարի այսրկովկասյան գործակալ գեներալ Յիցիանովի միջև Քուրակչայում կնքված ռուս-խանական դաշնագրով վերջ էր տրվել նաև հայ մելիքությանը և արցախահայության ճակատագիրը հանձնել դահիճ Իբրահիմ խանի ժառանգների տնօրինությանը⁸:

Սարգիս Հասան-Ջալալյանը մեծ հայրենասեր էր և իր կյանքի վերջին տասնամյակում, հասկանալով ժամանակի պահանջը, մտածում էր հայրենի երկրամասի ապագայի մասին և փորձում էր հայրենիքը գերծ պահել տարբեր իշխողների ոտնձգություններից, ինչպես և ցարական գործակալներից: Նա ձգտում էր հարաբերությունները ջերմացնել Ներսես Աշտարակեցու հետ: Թե՛ այդ ժամանակ և թե՛ 1843 թ. Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո, Ներսես Աշտարակեցին կտրված չէր արցախահայության կյանքից: Այդ են ապացուցում հրապարակված և չհրապարակված բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մեծամասնությունը գրվել է Ներսես Աշտարակեցու կողմից:

1816 թ. հոկտեմբերին գեներալ-լեյտենանտ Ալեքսեյ Երմոլովը նշանակվում է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և քաղաքացիական մասի կառավարիչ: Նա Թիֆլիս ժամանեց հոկտեմբերի 10-ին: Լեոյի բնորոշմամբ՝ Երմոլովը տիպիկ ռուս չինովնիկ էր, որը «գրագրություն է վարել, պատերազմներ է մղել» և վայելում էր «կոմս Արակչենի հովանավորությունը» ու դարձել էր «անվանի արևելյան

⁴ Ուլուքաթյան Բ., նշվ. աշխ., էջ 247:

⁵ Գրիգոր Տեր-Յովհաննիսեանց, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանցի համառոտ կենսագրություն, «Փորձ», 1880, N 5, էջ 154:

⁶ Նույն տեղում, չջ 155:

⁷ Акты Кавказской археологической Комисии (АКАК), т. 5, ч. 6. 1873, ст.437 и 443.

⁸ Ուլուքաթյան Բ., նշվ. աշխ., էջ 249:

սատրապ Կովկասի իրականության մեջ»: Նա Թիֆլիսում ապրում էր «արևելյան խանի նման, պահում էր մի ամբողջ հարեն, որի մեջ գտնվում էին կանայք կովկասյան բոլոր ազգություններից»: Նա ոչնչացրեց Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունները՝ մտցնելով «նրանց մեջ ռուսական կառավարություն»⁹: Երմոլովի օրոք 1817 թ. Անդրկովկաս եկավ Վալերիան Մադաթովը. ղարաբաղցի մի հայ զինվորական, որը ծնվել է Վարանդայի Ավետարանոց գյուղում: Նա այն հայ առաջին գեներալն էր, որը «երևան է գալիս իր երկրում հռչակված իր քաջություններով»¹⁰:

Մադաթովը նշանակվելով Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի զինվորական շրջանային կառավարիչ, վերջ է տալիս այդ խանություններում գոյություն ունեցած ավագակություններին և «հաստատում կատարյալ անդորրություն»¹¹: Մադաթովը դառնում է ժողովրդական հերոս, մանավանդ Դադաստանում տեղի ունեցած մարտերի ժամանակ, երբ Երմոլովը նրան հանձնեց արևելյան ճակատի հրամանատարությունը:

Կարճ ժամանակամիջոցում Ներսես Աշտարակեցու, Ալեքսեյ Երմոլովի և Վալերիան Մադաթովի միջև մտերիմ կապեր էր հաստատվել, և Ղարաբաղի հետ կապված շատ հարցեր արքեպիսկոպոսը քննարկում էր նրանց հետ, մանավանդ Երմոլովի:

Ներսես Աշտարակեցին գրագրության մեջ էր գտնվում Արցախի շատ հոգևոր և աշխարհիկ գործիչների հետ: Նա ակտիվորեն մասնակցում էր 19-րդ դարի քսանական թվականներին Արցախի հետ կապված այս կամ այն հարցերի քննարկմանը և վճռմանը: Նա այցելում է Արցախ: Իրենք՝ Արցախից բազմաթիվ հոգևոր և աշխարհիկ այրեր նամակներով և տարբեր բնույթի խնդրագրերով դիմում էին Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցուն, նրանից ստանում անհրաժեշտ խորհուրդներ: Քանի որ Նուխին մտնում էր Արցախի թեմի մեջ, ուստի Ներսես Աշտարակեցին կապված էր նաև այդ երկրամասի հոգևոր և աշխարհիկ մարդկանց հետ, նրանցից ստանում էր նամակ-խնդրագրեր և ամեն կերպ փորձում բավարարել նրանց պահանջները: Օրինակ, Նուխուց Օհաննես քահանան 1814 թ. սեպտեմբերի 9-ին Ներսես արքեպիսկոպոսին ուղարկած նամակում բողոքում էր, թե իրենց տարածքում յոթ տղա և յոթ աղջիկ թուրքացվել են, որի դեմ «տնաբոյս հայազգի կառավարիչները ոչ մի բան չեն ձեռնարկում»¹²:

Ներսես Աշտարակեցին ծանր էր տանում նման դեպքերը: Օրինակ. 1818 թ. դեկտեմբերի 14-ին Կովկասյան զորքերի հրամանատար Ա. Երմոլովի տեղակալ Վելյամինովին գրած նամակում բողոքում էր, որ Նուխիի շրջանի Տաղբուլաղ գյուղի խան Մահմեդ Հասանը նույն գյուղի բնակիչ քեթխուդա Սարգսի աղջիկ Յուրիին բռնի մահմեդականացրել է¹³: Նույնպես Նուխուց 1814 թ. հոկտեմբերի 10-ին ուղարկված մի անստորագիր աղերսագրում հեղինակը պատմում է այնտեղ կատարված բազմապիսի չարագործությունների, անիրավ տուգանքների, կաշառքով չհաս ամուս-

⁹ Լեո, Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, Երևան, 1984, էջ 395:

¹⁰ Նույն տեղում, չջ 396:

¹¹ Նույն տեղում:

¹² Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թուղթ 164ա, վավերագիր 427 (այսուհետև՝ Մատենադարան, թղթ. և վավ.):

¹³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ. 31, վավ. 151:

նություններ կատարելու, բնակչության հացահատիկը հափշտակելու և այլն անօրինությունների մասին: Հեղինակը Ներսես Աշտարակեցուց խնդրում էր միջոցներ ձեռնարկել¹⁴: Մինչ այդ 1813 թ. նոյեմբերի 11-ին Շուշիից Աղվանից Կաթողիկոս Սարգիս արքեպիսկոպոսը Ներսես Աշտարակեցուն, որը դեռևս գտնվում էր էջմիածնում, գրած նամակում գանգատվում էր Արցախում տեղ գտած մի շարք անօրինությունների մասին, որտեղ դժվար էր գտնել «հայ բնակչության մեջ արմատաւորւած անկարգութիւնը»¹⁵:

Ելիզավետապոլից¹⁶, որտեղ վերաբնակվել էին Երևանից տեղափոխված բազմաթիվ հայ ընտանիքներ, 1817 թ. հոկտեմբերի 24-ին Ներսես արքեպիսկոպոսին բողոքել են, որ Ցիցիանովի կողմից իրենց հանձնված բնակարանները նրան հաջորդած իշխանությունների կողմից խլվել ու տրվել է թուրքերին: Նամակի հեղինակները խնդրում են արքեպիսկոպոսին վերադառնալ իշխանությունների մոտ պաշտպանել իրենց իրավունքները¹⁷:

Հայ ժողովուրդը միշտ էլ հավատարիմ է եղել իր Եկեղեցուն, և դարերի ընթացքում կառուցվել են հազարավոր եկեղեցիներ: Գանձակի հայերը 1819 թ. փետրվարի 25-ին Ներսես արքեպիսկոպոսին ուղարկած նամակում խնդրում են թույլ տալ Գանձակում կառուցել հայկական եկեղեցի¹⁸: Նման քայլը չէր կարող չուրախացնել Ներսես Աշտարակեցուն, որն ավելի շատ եկեղեցիներ կառուցելու ջատագով էր:

Ներսես Աշտարակեցին իր մի շարք գրություններում և նամակներում ցանկություն էր հայտնում արցախահայությանը տեսնել ծանր հոգսերից ազատված և ունենալ բարեկարգ կառավարություն: Ահավասիկ, 1816 թ. հունվարի 29-ին Արցախի Վարանդայի հասարակությանը նրա գրած նամակը.

«Ներսես արքեպիսկոպոս եւ հոգեւորական ծայրագոյն կառավարիչ Հայոց Վրաստանու եւ մարմնաւորականաց պատուելի ժողովրդեան Հայոց Վարանդու ի տէր խնդալ:

Ի մեկ ամսոյս գրեալն ձեր յաղագս Իկիրմիտօրտեցի տէր Գեորգ քահանային հասոյց ինձ պայծառ մէլիք Խուդադադն, եւ ծանեայ զխնդիր ձեր վասն յիշեալ քահանային, այլ որպէս ճշմարիտն է՝ այնպիսի խնդիր չունէր զտեղի ի մեջ բարեկարգ կառավարութեան, բայց զի յոյժ սիրելի պայծառ մէլիք Խուդադադն էր միջնորդ, ի պատիւ երեսաց նորա գրեցի եւ հոգեւոր կառավարութեան մերում թոյլատրել նմա յիրումն քահայանական պաշտօնի, այլ որդւոցն նորա՝ ոչ բնաւ, վասն որոյ ծանուցանելով զսոյն ձերում հասարակութեանն եւ եւ մնամ վասն ձեր միշտ աղօթարար զի առաւել լիցի շնորհն Աստուծոյ ի վերայ ձեր ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ, որում եւ ցանկում յաւերժ, իմով ձեռամբ»¹⁹:

Հնչումների և անօրինությունների դեմ բնակչության կողմից հաճախ տեղի էին ունենում ընդվզումներ: Նման մի երևույթ էլ տեղի ունեցավ 1818 թ., որն ուղղված էր Գանձակից՝ Մինաս վարդապետի թույլ տված մի շարք անօրինությունների դեմ:

¹⁴ Նույն տեղում, վավ. 428:

¹⁵ Նույն տեղում, վավ. 431:

¹⁶ Իշխան Ցիցիանովի կողմից հայոց Գանձակը, ի պատիվ մահացած կայսրուհի Ելիզավետայի, 1806 թ. վերանվանվել է Ելիզավետապոլ:

¹⁷ Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ 32, վավ. 183:

¹⁸ Նույն տեղում, վավ. 186:

¹⁹ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ 164բ, վավ. 915, թ. 58:

Այդ հարցը հասել էր Ներսես արքեպիսկոպոսին, որը գտնում էր, որ, այնուամենայնիվ, Մինաս վարդապետին մի առ ժամանակ կարելի է թողնել վանքում: Արցախի հոգևոր առաջնորդ Սարգիս Ջալալյանը 1818 թ. ապրիլի 10-ին Ներսես արքեպիսկոպոսին ուղարկած նամակում գրում է, թե ամբողջ ժողովուրդը պահանջում է Մինաս վարդապետին հեռացնել վանքից: Նա սպառնում էր, որ եթե ժողովրդի պահանջը չկատարվի, ապա ինքը կհրաժարվի հոգևոր իշխանությանը ենթարկվելուց²⁰: Մինաս վարդապետը 1818 թ. հունվարի 1-ին Գանձակից Ներսես արքեպիսկոպոսին ուղարկած նամակում խոսելով Սարգիս մետրոպոլիտի թույլ տված ապօրինությունների մասին, որոնք իբրև «օտարների մոտ ծաղրի առարկա են դարձրել հայերին» և օրինակներ բերելով մետրոպոլիտի կողմից անօրեն կերպով կանանց արձակելու, չհաս ամուսնություններ կատարելու և այլնի մասին, արդարություն էր պահանջում²¹: Թե որքանով էին Մինաս վարդապետի գրածները ճիշտ, չենք կարող ասել, սակայն որ Ներսես Աշտարակեցին դրան չանդրադարձավ, դա ևս փաստ է: Այնուամենայնիվ, մի բան հստակ է. Ներսես Աշտարակեցու համար միանգամայն անընդունելի էր ամուսնության և ապահարգանի կանոնների խախտումը: Դեռևս 1815 թ. նոյեմբերի 26-ին Գանձասարի մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոսին գրած նամակում նրան հիշեցնելով իր նախորդ խորհուրդը կրոնական կարգերն ամուր պահելու մասին, հարցնում է, թե ինքը՝ Սարգիս մետրոպոլիտը, ինչպես է թույլ տվել, որ Միրզաբեկ տանուտերի որդի Աբրահամը իր կնոջ կենդանության օրոք հայ քահանայի ձեռքով պսակվի այլ կնոջ հետ²²:

Արցախի աշխարհի հոգևոր կյանքում քահանաների միջև հաճախակի տեղի ունեցող վիճաբանությունների մասին բազմաթիվ նամակ-բողոքներ են ուղարկվել Ներսես արքեպիսկոպոսին և նրան խնդրել միջոցներ ձեռնարկել: Արցախի Զրաբերդի, Գետաշենի, Վարանդայի և Բկիրմիդորդի հասարակությունների կողմից նման մի բողոք էր ուղարկվել Ներսես Աշտարակեցուն, որին 1819 թ. մարտի 26-ին գրած պատասխանում արքեպիսկոպոսը հայտնում է, որ ստացել է նրանց հանրագրությունը քահանայական վեճերի վերաբերյալ և մնացել դժգոհ: Նա նկատողություն է անում, թե «առանց կառավարության կանխագույն գիտության», չի կարելի այդպիսի բազմաստորագիր հանրագիր կազմել: Նա բողոքող հասարակությանը հորդորում էր չմիջամտել քահանայական վեճերին և որ քահանաները իրենք կարող են ներկայացնել իրենց բողոքները միմյանց դեմ²³:

Ինչպես ասվել է, Ներսես Աշտարակեցին արցախցի շատ մտերիմներ ուներ, որոնց հետ պահպանում էր նամակագրական կապ: Օրինակ, նա շատ մոտ էր շուշեցի Զոհրապ և Մարկոս Թառումյանների հետ: 1820 թ. հունվարի 15-ին Մարկոս ադա Թառումյանին գրած նամակում խոստանում է շուտով ուղարկել Շուշիում կառուցվելիք եկեղեցու հատակագիծը, որի ծախսերը պետք է կատարեին Թառումյանները²⁴: Նույն թվականի սեպտեմբերի 9-ին Զոհրապ Թառումյանին ուղարկած նամակում տեղեկություններ է հարցնում Շուշիում կառուցվելիք եկեղեցու հետ կապ-

²⁰ Նույն տեղում, թղթ 164³, վավ. 433:

²¹ Նույն տեղում, վավ. 434:

²² Նույն տեղում, վավ. 766:

²³ Նույն տեղում, թղթ 165, վավ. 208:

²⁴ Նույն տեղում, վավ. 179:

ված մի շարք հարցերի վերաբերյալ: Նաև հաղորդում է, որ նահանգապետի կարգադրությամբ ուղարկում է պրոպկա ծառի սերմեր, որպեսզի այդ ծառը աճեցվի Ղարաբաղում²⁵:

Ներսես Աշտարակեցին մոտ էր նաև շուշեցի Հախումյանների հետ: 1821 թ. օգոստոսի 6-ին Պապա Հախումյանին գրած նամակում շնորհավորում է նրան Կ. Պոլսից ողջ վերադառնալու առթիվ: Նրան տեղյակ է պահում, որ ինքը ստացել է Գաբրիել Պատրիարքի կողմից ուղարկված ավանդը և պատվիրում է գաղտնի պահել իր այդ նամակի բովանդակությունը²⁶:

Արցախ-Ղարաբաղի հետ առնչվող կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել 1821-1822 թվականներին, երբ Եփրեմ Կաթողիկոսը հեռանում է Էջմիածնից և գալիս Ղարաբաղ: Ո՞րն էր դրա պատճառը: Հարցին անդրադարձել են մի շարք հեղինակներ:

Ալեքսանդր Երիցյանը գրում է, որ 1800-1810-ական թվականներին Էջմիածնի կաթողիկոսությունը կքած էր պարտքերի տակ, որը հիմնականում պարսկական իշխանությունների վարած քաղաքականության արդյունքն էր: Կաթողիկոսությունը ստիպված էր վարդապետների պատվիրակություն ուղարկել Պարսից շահի մոտ՝ ողորմածություն խնդրելու, սակայն արդյունքում վիճակն ավելի է ծանրանում: Եղիշե Գեղամյանը նշում է, որ թե՛ Եփրեմ Կաթողիկոսի և թե՛ պարսիկների քաղաքականության հետևանքով կաթողիկոսության առաջին տասը տարում Մայր Աթոռի պարտքը հասել էր 184 000 ռուբլու²⁷:

Երևանի խորամանկ և հայերին մեծ դառնություններ բերած սարդարը Եփրեմ Կաթողիկոսին հուշում է դիմել Շուշիի հարուստներին և նրանցից գումար խնդրել: Այդ ժամանակ, ըստ Եղիշե Գեղամյանցի տվյալների, Շուշիում կար մոտ 500 հայ ընտանիք, որոնց մեջ քիչ չէին հարուստները: Այդ հարուստների շարքում վերոհիշյալ Թառումյանց և Հախումյանց ընտանիքները Շուշի էին եկել Երևանից՝ փախչելով սարդարի բռնություններից: Եփրեմ Կաթողիկոսը մուրհակ է ուղարկում Թառումյանների ընտանիքին և խնդրում 4000 թուման: Թառումյան եղբայրները հստակ պատասխան չեն տալիս:

Սարդարը Եփրեմ կաթողիկոսին խորհուրդ է տալիս անձամբ գնալ Շուշի և փող խնդրել ոչ միայն Թառումյաններից, այլև ուրիշ ունևորներից: Կաթողիկոսի համար հարմար առիթ էր անվտանգ հեռանալ Երևանի խանությունից: Եվ ահա, գրում է Մ. Թադևոսյանը. «Եկն էհաս նա, ընդ որում էին տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս, Յովհաննէս եպիսկոպոս գրագիր, և ի վարդապետաց անտի Յովսէփ Կարբեցի՝ գանձապետ, Գրիգոր Աշտարակեցի՝ շարադիր կոնդակաց, Մինաս վարդապետ՝ բժիշկ, Յովհաննէս վարդապետ Դրիմեցի՝ ատենադպիր, իսկ ի սարկաւագացն՝ Յովսէփ Եղոկիացի, Շահոն Երևանցի, Գրիգոր Երևանցի և Առաքել Անտօնի՝ ժամասացք»²⁸:

Հանապարհին թափորին միանում է Մեսրոպ Թադևոսյանը: Թափորը Էջմիածնից դուրս է գալիս 1821 թ. սեպտեմբերի վերջին (ումանց պնդմամբ՝ նոյեմբերի 2-ին-

²⁵ Նույն տեղում, վավ. 370:

²⁶ Նույն տեղում, վավ. 435:

²⁷ Եղիշե ավ. քին. Գեղամյանց, Պատմական քաղվածքներ, Բաքու, 1909, էջ 122:

²⁸ Մեսրոպ Թադևոսյան, Ուղեգրություններ, Հոգվածներ, Նամակներ, Վավերագրեր, Երևան, 1975, էջ 152:

Հ. Ա.) և Նախիջևանի վրայով հասնում է ռուսաց սահմանին, այն անցնում և մտնում Տաթև: Այդ մասին իմանալով՝ Կովկասյան զորքերի հրամանատարի տեղակալ Վելյամինովը կարգադրում է Ղարաբաղի և Զանգեզուրի կառավարիչ Մեհտի-դուլի խանին արգելել Եփրեմ Կաթողիկոսի մուտքը Շուշի, մինչև գլխավոր հրամանատար Ա. Երմոլովից, որը այդ ժամանակ գտնվում էր Դադստանում և կոչվում էր լեռնականների դեմ, կարգադրություն ստանալը²⁹:

Կաթողիկոսը ստիպված էր դիմել Ներսես արքեպիսկոպոսին և խնդրել նրա միջնորդությունը: Ներսես Աշտարակեցին, որը միշտ էլ պաշտպանել է Եփրեմ Կաթողիկոսին, և չնայած վիրավորված էր նրա՝ էջմիածնից հեռանալու մտադրության մասին իրեն տեղյակ չպահելու համար, այնուամենայնիվ խնդրում է Երմոլովին՝ թույլատրել Եփրեմ Կաթողիկոսին գնալ Շուշի: Մ. Թադիադյանը գրում է. «Կուսակալ ժամանակիս էր կոմս Երմոլով, որ առ մեծ շնորհս ունեցավ զմեծն Ներսես արքեպիսկոպոս, թախանձանօք նորա հրաման գրեաց առ Մեհդի խան հրաւիրել զնա ի Շուշի, այլ թոյլ չտալ նմա առնելոյ ինչ՝ մինչ ինքն գրեցէ առ կայսրն՝ Աղէքսանդր Առաջին, և ընկալցի զհաճոյս նորա»³⁰:

Դրանից հետո միայն Կաթողիկոսի թափուրը, հրաժեշտ տալով Սյունյաց աշխարհին, մտավ Արցախ: «Իսկ Հայրապետն,- շարունակում է Մ. Թադիադյանը,- այնուհետև ի ձի հեծեալ առանձին, եկաք հասաք ի Շուշի, ուր խանն և ամենայն բազմություն հեծելոց և հետևակացն ընդ յառաջ ելին նորա, և տարեալ հանգուցին զնա ի տունն Հայրումեանց կոչեցեալ՝ որ ունէր սենեակս կրկին, մի՝ վասն Հայրապետին և սպասատրաց նորա, իսկ միւս՝ վասն Անտոն եպիսկոպոսի և գրագրացն առ հասարակ, ի միւս բակին բնակեր տեղապահ, և այլք աստ և անդ»³¹:

Ներսես Աշտարակեցին Թիֆլիսից ամեն կերպ աշխատում էր աջակցել Կաթողիկոսին: 1821 թ. նոյեմբերի 15-ին Զոհրապ և Մարկոս Թառումյաններին ուղարկած նամակում հայտնում է, որ ինքը դեռևս 1817 թ. մի գրություն է ուղարկել Կաթողիկոսին, որ ինքը կանխատեսել էր ներկա ողբալի դրությունը: Ներսես Կաթողիկոսը Ղարաբաղի ժողովրդին կոչ էր անում չինայել Աթոռին հնարավոր ամեն մի աջակցություն³²: Մի փոքր անց, 1822 թ. հունվարի 21-ին, Թառումյան եղբայրներին գրած նամակում Աշտարակեցին իր գոհունակությունն է հայտնում նրանց կողմից Կաթողիկոսին ցույց տված ջերմ վերաբերմունքի առթիվ և վստահեցնում է, որ ինքը հնարավոր ոչինչ չի խնայել ու չի խնայի Մայր Աթոռի և նրա գահակալի համար³³: Որ Երևանի սարդարը ամեն կերպ փորձում էր խարդախությամբ վատաբանել Եփրեմ Կաթողիկոսին և նրան մեղադրել իբրև յուրացումներ կատարելու համար, այդ է պացուցում հետևյալ փաստը. Զաֆար խանը 1822 թ. հունվարի 10-ին Շուշի ուղարկած նամակում հայտնում է, թե ինքը լինելով սարդարի կողմից էջմիածնի վերին հսկողության պատասխանատուն, նշում է, թե իբր Եփրեմ և Ստեփանոս եպիսկոպոսները կատարել են չարաշահումներ, և առաջարկում է ընտրել Սինոդի նոր

²⁹ Աղ. Երիցյանց, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Թիֆլիս, 1894, էջ 191-192:

³⁰ Մ. Թադիադյան, նշվ. աշխ, էջ 154:

³¹ Նույն տեղում, էջ 157:

³² Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ 165, վավ. 323:

³³ Նույն տեղում, վավ. 326:

կազմ³⁴:

Այդ առթիվ Ներսես արքեպիսկոպոսը հունվարի 21-ին Շուշի՝ Կաթողիկոսին ուղարկած նամակում հաղորդել է Երևանի սարդարի դիտավորությունների մասին և զգուշացրել նրան³⁵: Այդ նույն օրը Կաթողիկոսին գրած երկրորդ նամակում Ն. Աշտարակեցին հաղորդում է, որ նրա կողմից Թիֆլիս ուղարկած Անտոն եպիսկոպոսը իր առաջնորդությամբ ներկայացել է գեներալ Մադաթովին, հետո՝ կուսակալ Երմոլովին: Ապա նշում է, որ ինքը միշտ անձնվեր է դեպի Կաթողիկոսը, որից ներումն է խնդրում նրան ներկայանալ չկարողանալու համար³⁶:

Շուշիում, ըստ Մ. Թադիսյանի պատմածի, մահամերձ վիճակում գտնվող Մարկոս Թառումյանը տնեցիներին կարգադրում է ի մի հավաքել Էջմիածնի պարտքերի ու տուրքերի մուրհակները, պարզել ընդհանուր գումարը և վճարել նրա կրկնակին, և այդքանից հետո էլ երկու պարկ ոսկի է հանել տալիս ու հրամայում բաժանել աղքատներին: Ահա, այսպես, Եփրեմ Կաթողիկոսը ստացավ այնքան գումար, որ կարող էր փակել Մայր Աթոռի վրա ծանրացած հարկերն ու պարտքերը³⁷: Սակայն Դադստանից վերադառնալով՝ գլխավոր հրամանատար Ա. Երմոլովը 1822 թ. հունվարի 30-ին Եփրեմ Կաթողիկոսին հղում է մի նամակ, որը Կաթողիկոսին է հասցնում Վարանդայի Ավետարանոցի բերդակալ գնդապետ Բեուտը: Երմոլովը գտնում է, թե Կաթողիկոսի հեռանալը Ղարաբաղ կասկած է առաջացնում պարսկական կառավարության մոտ և կարող է ազդել ռուս-պարսկական հարաբերությունների վրա: Նա Կաթողիկոսին առաջարկում է վերադառնալ Էջմիածին: Երմոլովը զարմանք է հայտնում և Կաթողիկոսին հարցնում, որ եթե փախել էք պարսիկների ճնշումից, ինչո՞ւ Ղարաբաղ եք գնացել, այլ ոչ թե Թիֆլիս³⁸:

1822 թ. փետրվարի 13-ին Եփրեմ Կաթողիկոսը Շուշիից Երմոլովին ուղարկած գրության մեջ, ի պատասխան նրա հորդորանքին՝ վերադառնալ Աթոռ, հանգամանորեն պատճառաբանում է Էջմիածին վերադարձի անկարելի լինելը: «Բայց որովհետև,- գրում է Կաթողիկոսը,- ուղիղ ճանապարհաւ ես չէի կարող պարսից տերութիւնից առ այդ հրաման ստանալ, այդ պատճառաւ ստիպւած էի Ղարաբաղ գնալու» պատրվակով հեռանալ³⁹: Կաթողիկոսը Երմոլովից խնդրում է թույլ տալ Շուշիից գնալ Թիֆլիս, անձամբ ներկայանալ իրեն, իսկ եթե դա անկարելի է, ապա խնդրում է «Ներսէս արքեպիսկոպոսին ուղարկել ինձ մօտ գալու դիտաւորութեան վերաբերութեամբ և թէ այլ որևէ պատշաճաւոր տնօրէնութեան մասին»⁴⁰: Երմոլովը, սակայն, չի փոխում իր դիրքորոշումը: Նա մարտի 24-ին Եփրեմ Կաթողիկոսին գրած նամակում պնդում է իր որոշումը⁴¹: Եփրեմ Կաթողիկոսը, բոլոր դեպքերում, ակնկալում էր Երմոլովի միջամտությամբ Ալեքսանդր կայսրի ապավինությանը⁴²:

Եփրեմ Կաթողիկոսը հույժ կարիք ուներ հանդիպել Ներսես արքեպիսկոպոսի հետ, խորհրդակցել հետագա իր գործողությունների մասին, տեղյակ պահել նրան և

³⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ 42, վավ. 60:

³⁵ Նույն տեղում, վավ. 103:

³⁶ Նույն տեղում, վավ. 104:

³⁷ Ուլուքայան Բ., նշվ. աշխ., էջ 277:

³⁸ Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ 42, վավ. 22ա:

³⁹ Եղիշե աւ. ք. Գեղամեանց, նշվ. աշխ. էջ 133:

⁴⁰ Նույն տեղում, էջ 134:

⁴¹ ԱԿԱԿ, т. V, в. 6., с. 450, ինչպես և՝ Եղիշե աւ. ք. Գեղամեանց, նշվ. աշխ. էջ 134:

⁴² Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ. 42, վավ. 26:

ակնկալել նրա աջակցությունը: Նա բազմիցս խնդրել էր Ա. Երմոլովին, որ թույլ տա Ներսես արքեպիսկոպոսը գա Շուշի, որպեսզի «իրենք երկուսով խորհրդակցեն, խնդրի լուծման ճանապարհ գտնեն»⁴³: 1822 թ. մարտի 24-ին կուսակալ Ա. Երմոլովը Ներսես արքեպիսկոպոսին հայտնում է, թե Կաթողիկոսը խնդրել է թույլատրել նրան իր մոտ՝ Ղարաբաղ գնալու և Էջմիածնի գործերի համար անձամբ խորհրդակցելու: Երմոլովը հայտարարում է, որ այդ առթիվ իր կողմից ոչ մի արգելք չկա և դա թողնվում է նրա սեփական կամքին⁴⁴: Մնում էր ստանալ նաև Ներսես Աշտարակեցու համաձայնությունը գնալ Շուշի: Եփրեմ Կաթողիկոսը Թիֆլիս է ուղարկում հոգևորականների մի խումբ՝ Ներսես Աշտարակեցուն խնդրելու, որ գա Շուշի՝ անելիքները որոշելու համար:

Եվ, ի վերջո, Ներսես Աշտարակեցին համաձայնվում է և 1822 թ. մայիսի սկզբին ուղևորվում Շուշի: Նրան ուղեկցում էին Անտոն արքեպիսկոպոսը և Հովհաննես վարդապետը: Նա Շուշի մեկնելով՝ ուներ երկու նպատակ. Կաթողիկոսին համոզել կա՛մ հրաժարական տալ, կա՛մ էլ վերադառնալ Էջմիածին⁴⁵: Ն. Աշտարակեցին հենց որ հասնում է Շուշի, գեներալ Վելյամինովից ստանում է մի նամակ, որտեղ նշված էր, որ ռուսաց տերությունը այլևս չի կարող պահել Եփրեմին իր սահմաններում պատրիարքական կոչմամբ, այլ նրան կարող է ճանաչել լոկ իբրև վարդապետ և այդ աստիճանով թույլ կտրվի նրան բնակվել այնտեղ, որտեղ կամենա⁴⁶:

Ներսես Աշտարակեցին Շուշիում իջևանում է Թառույանների տանը: Նա այստեղ արժանացավ փառավոր ընդունելության: Հանդիպումներ ունեցավ գեներալ Մադաթովի, Մեհտի-դուլի խանի և այլ մեծամեծերի ու ժողովրդի տարբեր ներկայացուցիչների հետ: Գեներալ Երմոլովը սպասում էր իր հանձնարարությունը կատարելու վերաբերյալ Ներսես Աշտարակեցու հաղորդմանը: Ի վերջո 1822 թ. հունիսի 20-ին, ընդառաջելով Ներսես արքեպիսկոպոսի հորդորանքներին, 72 տարեկան Եփրեմ Կաթողիկոսը մի կոնդակով տալիս է հրաժարական, որի թելադրողը, անկասկած, եղել է Ներսես արքեպիսկոպոսը, ըստ որի իբրև Կաթողիկոսը հրաժարվում է «ազատական ընտրությամբ ի ինքնայոժար, անբռնաբար կամօք», որի հիմնական պատճառը իբրև տկարությունն է⁴⁷:

Հրաժարականի ներքո ստորագրել են տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսը, Անտոն արքեպիսկոպոսը, Հովհաննես Գրիգորը, Ներսես Աշտարակեցին, Սյունյաց արքեպիսկոպոս Մարտիրոսը⁴⁸:

Եփրեմ Կաթողիկոսի հրաժարականից մի քանի օր հետո, Ներսես Աշտարակեցին հունիսի 25-ին մի նամակ է հղում Վելյամինովին, որտեղ հանգամանորեն տեղեկություններ է հաղորդում Եփրեմ Կաթողիկոսի հրաժարականի մասին⁴⁹:

1822 թ. հուլիսի 4-ին փոխկուսակալ Վելյամինովը Ներսես արքեպիսկոպոսին գրած նամակում խնդրում էր Կաթողիկոսին խորհուրդ տալ չգնալ Ելիզավետպոլ,

⁴³ Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ. էջ 278:

⁴⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ 42, վավ. 51:

⁴⁵ Եղիշե աւ. ք. Գեղամեանց, նշվ. աշխ., էջ 138-139:

⁴⁶ Նույն տեղում, , էջ 138-139:

⁴⁷ Նույն տեղում, էջ 139:

⁴⁸ Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ 42, վավ. 27:

⁴⁹ Վկայագրեր Հայոց Եկեղեցու պատմության, գիրք Թ, Երևան, 2001, էջ 43:

այլ մնալ Ղարաբաղում, թեկուզ երեք շաբաթ⁵⁰:

1822 թ. հուլիսի 12-ին Ներսես Աշտարակեցին Վելյամինովին գրած նամակում հայտնում է, որ Եփրեմ Կաթողիկոսը Արցախում սպասում է Ա. Երմոլովի կարգադրությանը «...դէպ Յելիսաւէտօպօլ, շահեցաք զկամս Սրբազանութեան Նորին սպասել այլևս աստ ի սահմանս Ղարաբաղու զաւուրն 15 կամ 20, ըստ որոյ և նա մնալ ի Կեսապատ գեղջ, հեռանալով ի գիճային օդոյ և տեղոյ ամրոցին Շուշուայ, սպասէ բարեվախճան տնօրէնութեանց Նորին Բարձր Գերազանցութեան գլխաւոր կառավարիչի Ալէկսէ Պետրովիչ Երմոլովի...»⁵¹:

Ի վերջո, 1822 թ. հուլիսի կեսերին Եփրեմ Կաթողիկոսը և Ներսես արքեպիսկոպոսը շքախմբով մեկնում են Շուշիից և գնում Գանձասար: Մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոսը սիրով ընդունում է նրանց և պահում 15 օր: Սարգիս մետրոպոլիտը, Մ. Թադիաղյանի հաղորդմամբ, մի հրաշալի նժույգ է նվիրում Եփրեմ Կաթողիկոսին: Այստեղ էին նաև, բացի Սարգիս արքեպիսկոպոսից և նրա եղբորորդի Բաղդասար եպիսկոպոսից, նաև Արցախյան աշխարհի հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչները: Այնուհետև Թափորը Գանձասարից ուղղություն է վերցնում դեպի Գանձակ: Ճանապարհին հյուրընկալվում են Կուսապատի մելիք Վանի Աթաբեկյանին: Աթաբեկյանները Կուսապատի տերն էին և հայտնի էին իրենց ազնվականությամբ: Հետո, Գանձակի ճանապարհին, երբ հասել էին Մելիք Հովսէփ Փրիդունյանին պատկանող Գյուլստան բնակավայր, այստեղ ստիպված կանգ են առնում, որովհետև Ներսես արքեպիսկոպոսը Վելյամինովից նամակ է ստանում, որում կուսակալի տեղակալը առաջարկում էր առժամանակ մնալ Շուշիում, մինչև որ ինքը Երմոլովից հրահանգ կստանա իր պաշտոնից հրաժարված Կաթողիկոսի բնակվելու տեղի մասին⁵²: Բացի այդ, ըստ Եղիշե Գեղամյանցի բացատրության, կուսակալի տեղակալը ձեռքի տակ դեռ չունէր Եփրեմի հրաժարականը, որպէսզի նրան թույլատրէր գնալ Գանձակ⁵³: Բայց ահա մի քանի օր անց փոխկուսակալը հայտնում է, որ Ա. Երմոլովը համաձայնվել է, որ Եփրեմ Կաթողիկոսը Ղարաբաղից տեղափոխվի Ելիզավետապոլ, միայն մինչ այդ նա պետք է ազատի իր մոտ գտնվող հոգևորականներին, որովհետև, ինչպես երևում է հրաժարականից, Կաթողիկոսը միտք չունէր պահելու իր կոչումը⁵⁴: Եփրեմի համար մշտական բնակավայր է ընտրվում Հաղպատի վանքը, ուր և ժամանեց 1822 թ. աշնանը: Ներսես արքեպիսկոպոսը որոշ նախապատրաստական աշխատանքներ կատարելով այստեղ՝ մեկնում է Թիֆլիս:

Եփրեմ Կաթողիկոսը 1822 թ. օգոստոսի 17-ին, երբ գտնվում էր Վերին Շենում, լսում է, որ Շուշիում կառուցվող Ս. Աստվածածին եկեղեցու որմնասյուները փլվել են: Նա այդ կապակցությամբ իր վշտակցությունն է հայտնում և քաջալերում արցախահայությանը: Կաթողիկոսը արցախահայությանն ուղարկած կոնդակում սրտի մորմոքով է խոսում այդ պատահարի մասին և խորապես ու սրտաբուխ ցավակցում արցախցիներին: «Որոց,- գրում է նա,- և ծանուցանեմ զի լուր վշտացուցիչ սրտից ամենայն լաղաց յաղագս անկանելոյ զորմից սեանցն և ամենայն կամաբաց

⁵⁰ Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ 42, վավ. 53:

⁵¹ Նույն տեղում, վավ. 126:

⁵² AKAK, т.V, в.6., ст. 452.

⁵³ Եղիշե աւ. ք. Գեղամեանց, նշվ. աշխ., էջ 141:

⁵⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թղթ 42, վավ. 54:

և բոլոր առաստաղի Սուրբ Աստուածածին նորաշեն եկեղեցոյն հասեալ յանկարծակի յականջս մեր վշտացոյց զսիրտս մեր յոյժ յոյժ առաւելութեամբ, մի զի շինուածք, նուիրեալք Աստուծոյ, ընդդէմ ցանկացեալ վախճանի շինողացն, այնպիսի անակնկալ կերպիւ յառաջ քան զկատարումն հանգուցեալ յերկիրդ խոնարհեցան...»: Հետո օրինակներ է բերում եկեղեցիների շինարարության ժամանակ տեղի ունեցած նման դժբախտ պատահարների մասին ու արցախցիներին ոգևորում Աստծո հանդեպ իրենց հավատը ամուր պահել⁵⁵:

Արցախից վերադառնալուց հետո, Ներսես Աշտարակեցին չդադարեց Ղարաբաղի կյանքով հետաքրքրվել: 1825 թ. հունվարի 13-ին Շուշի՝ մելիք Հովհաննես Հարությունյանին ուղարկած նամակում նրան շնորհակալություն է հայտնում իրեն նվեր ուղարկած ձիու համար և խոստանում նրա մասին անպայման բարեխոսել գեներալ Սադաթովի մոտ⁵⁶: Ներսես արքեպիսկոպոսը մտահոգված էր Արցախի գյուղատնտեսության զարգացման հարցով: Օրինակ, 1826 թ. մարտի 27-ին Զոհրապ Թառումյանցին ուղարկած նամակում տեղեկացնում է, որ կուղարկի Հնդկաստանից ստացված բամբակի և լեղակի, ինչպես և ամերիկյան ծխախոտի սերմեր՝ Ղարաբաղում ցանելու համար⁵⁷:

Ներսես արքեպիսկոպոսը ստիպված էր միջամտել Սարգիս մետրոպոլիտի հետ կապված մի շատ կարևոր խնդրի լուծմանը: 1826 թ. հուլիսի 16-ին Պարսկաստանի թագաժառանգ Աբբաս Միրզան 60 հազարանոց բանակով անցնում է Արաքս գետը, ներխուժում Ղարաբաղ և պատերազմ սկսում Ռուսաստանի դեմ: Ղարաբաղում Աբբաս Միրզային, ինչպես գրել է Ալ. Երիցյանը, «անհամբեր սպասում էին նորան երկրացի թուրքերը»⁵⁸: Սահմանապահ ռուս զորքերը, մեծ կորուստներ կրելով, նահանջեցին և ամրացան Շուշիի ամրոցում: Պաշտպանվելու համար, նրանց հետ բերդ մտան նաև շատ հայեր: Ռուսական 1700-անոց կայազորը, գնդապետ Բեռտի գլխավորությամբ և հայերի ամենաջերմ աջակցությամբ, պաշտպանում էին ամրոցը: Բերդը մոտ 47 օր մնաց պաշարման մեջ: Թե՛ բերդում և թե՛ բերդից դուրս գտնվող հայերը, տանելով բոլոր ծանրությունները, դիմադրում էին թշնամուն: Այդ ժամանակ Արցախի մետրոպոլիտ Սարգիսը գտնվում էր Գանձասարում: Աբբաս Միրզան հրամայում է նրան, ինչպես և բերդում չգտնվող մելիքների բերել իր մոտ: Գահաժառանգը նրանից պահանջում է կանգնել Շուշիի բերդի տակ և բարձրաձայն աղաղակել, թե ինքը Սարգիս արքեպիսկոպոսն է, երդվում է իր սուրբ կարգով, որ պարսիկները չեն վնասի նրանց, եթե անձնատուր լինեն: Սակայն բերդի պարսպի վրա շարված հայ կանայք և աղջիկները քարե կարկուտ են տեղում և ասում. «Այսուհետև դու մեր հոգևոր տերը չես»: Այնուամենայնիվ, Սարգիս մետրոպոլիտի և նրա հետ եկած հայ մելիքների այդ վարմունքով կարողացան փրկել Գանձասարի վանքը ավերելուց և շատ հայերի կյանքը⁵⁹:

Երմուղվը, իմանալով այս մասին, կարգադրում է ձերբակալել Սարգիս մետրոպոլիտին և խիստ հսկողության տակ ուղարկել Թիֆլիս: Երմուղվը, որն այդ դեպքից

⁵⁵ Վառդագրեր Հայոց Եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 44-46:

⁵⁶ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 188:

⁵⁷ Նույն տեղում, վավ. 453:

⁵⁸ Աղ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 234:

⁵⁹ Նույն տեղում, էջ 252:

իրեն խոցված էր զգում, 1826 թ. դեկտեմբերի 2-ին Ներսես Աշտարակեցուն գրել է. «Ես հրամայեցի ուղարկել նրան Թիֆլիս իբրև մի մարդու, որ արժանի է խիստ պատժի: Այդ պատիժը կսպասեմ ես ձերդ սրբազանության խստապահանջությունից, վասն զի դուք եք Հայոց ազգի հավատարմական զգացմանց պահապանը»⁶⁰: Ներսես Աշտարակեցին այդ նույն օրը, դեկտեմբերի 2-ին, ցավով հայտնում է Վրաստանի հոգևոր առաջնորդին, որ Ղարաբաղի Սարգիս մետրոպոլիտը մեղադրվում է ռուսական պետությանը դավաճանելու մեջ և բերվել է Թիֆլիս, որպեսզի իր արժանի պատիժը ստանա⁶¹:

Ներսես Աշտարակեցին հանգամանորեն քննում է Սարգիս արքեպիսկոպոսին ներկայացվող մեղադրանքները և գտնում, որ դրանք «թշնամեաց բարուրանք» են: 1827 թ. հունիսի 14-ին նա, դիմելով արդեն նոր գլխավոր հրամանատար իշխան Պասկևիչին, հայտնում է, որ արքեպիսկոպոս Սարգիս գործը հանգամանորեն քննվել է: Ընդհակառակը, շեշտում է Ն. Աշտարակեցին, Սարգիս արքեպիսկոպոսը համոզել է «Աբբաս Միրզային այլևս չմատնել հայոց անտանելի տանջանքների և ահա այդ միջոցով նա ազատել է մոտ 60 հայերի մահից»⁶²: Նա Պասկևիչին խնդրում է Սարգիս արքեպիսկոպոսին ազատել հսկողությունից և թույլ տալ վերադառնալ Ղարաբաղ ու շարունակել վարել մետրոպոլիտի իր պաշտոնը⁶³: Եվ ահա 1827 թ. հունիսի 17-ին արքեպիսկոպոսը շտապում է ուրախացնել արցախահայությանը: Այդ նույն օրը Ղարաբաղի վիճակի և Շուշի քաղաքի հայ հասարակությունը հայտնում է Սարգիս արքեպիսկոպոսի անպարտ ճանաչվելու մասին և հորդորում պատվով վերաբերվել նրան՝ «ըստ առաջնոյն»⁶⁴: Մեկ տարի բանտում մնալուց հետո, Ներսես Աշտարակեցու ամենագործուն մասնակցությամբ, Սարգիս արքեպիսկոպոսը ազատվում և վերադառնում է Գանձասար:

Հետագայում, երբ Ներսես Աշտարակեցին 1843 թ. ընտրվել էր Հայոց Կաթողիկոս, առավել գործուն մասնակցություն է ունեցել արցախահայությանը վերաբերվող հարցերի լուծմանը:

⁶⁰ Նույն տեղում, էջ 253, նաև՝ AKAK, т. V, ч. 6., стр. 456.

⁶¹ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ 51, վավ. 111:

⁶² Նույն տեղում, վավ. 114:

⁶³ Աղ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 255-256:

⁶⁴ Մատենադարան, արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 166, վավ. 772, թերթ 36 և 37:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԵՐԵՆ ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Համաշխարհային գրականության հսկաներից մեկը՝ Հոմերոսը, «Իլիականում» և «Ոդիսականում» քանիցս գործածել է «թևավոր խոսք» արտահայտությունը: Նա պատկերավոր, արտահայտիչ խոսքը «թևավոր» է կոչել, քանի որ այն խոսողի բերանից կարծես թե թռչում է դեպի ունկնդրի ականջը: Բանափոխելով կարող ենք ասել, որ այժմ էլ հայերենով վկայված թևավոր խոսքերը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պետրոս Բեդիրյանի «Հայերեն թևավոր խոսքեր» բառարանից պիտի թռչեն-հասնեն ընթերցողների սրտին և մտքին:

Բառարանն ընդգրկում է հայերեն գրավոր (հազվադեպ՝ նաև բանավոր) խոսքում հանդիպող 2265 թևավոր խոսքեր: Սրանց մի մասը, այսպես կոչված, «միջագային» շերտն են կազմում. բառարանում տրվում են սրանց ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարժեքները: Այս կարգի թևավոր խոսքերի մեջ մեծ թիվ են կազմում սուրբգրային ծագում ունեցողները: Մյուսները ծագում են հունահռոմեական դիցաբանությունից, պատմական հանրահայտ իրադարձություններից, համաշխարհային (հիմնականում՝ եվրոպական) գրականության գոհարներից: Բառարանի թևավոր խոսքերի մյուս մասը հայկական ծագում ունեցող թևավոր խոսքերն են. սրանք գալիս են մեր գրականությունից, բանահյուսությունից, հայ ժողովրդի պատմությունից, երբեմն՝ նաև ֆիլմերից:

Պ. Բեդիրյանի բառարանը հիմնարար աշխատանք է: Բառարանի նյութը հավաքվել է հարյուրավոր սկզբնաղբյուրներից՝ այլազան գրականություն, մամուլ, նաև բանավոր խոսք: Թևավոր խոսքերը գրեթե առանց բացառության ներկայացվում են բնագրային օրինակներով, մի բան, որ տարիների տքնաջան աշխատանք է պահանջում: Հենց այդ բնագրային օրինակներն են փաստում այս կամ այն թևավոր խոսքի գործածականությունը հայերենում: Դրանք ոչ միայն ցուցադրում են թևավոր խոսքի գործածությունը, այլև նպաստում են իմաստի ընկալմանը:

Բառարանում ընդգրկված թևավոր խոսքերը ներկայացնում են հայերենի տարբեր գոյավիճակներ՝ գրաբար (*զինուորեալ մանկունք* - «հայրենիքին, նրա ազատությանը նվիրված մարտիկներ», *Ծանի՛ր զքեզ* - «առաջին հերթին ինքդ քե՛զ ճանաչիր, քո հնարավորությունները, քո ծագումը...», *Հունձք բազում են, եւ մշակք սակաւ* - «ասպարեզում գործ շատ կա, բայց նվիրված աշխատողներ՝ քիչ» և այլն), աշխարհաբարի տարբեր փուլեր՝ արևելահայերեն (*տառապանքս փորձ ունի, ամեն մեռնողի երանի տալ* և այլն), արևմտահայերեն (*հովվերգության ճյուղին կպատկանի* - «անիրական, խոսքի նյութի հետ կապ չունեցող բան է», *ոտքս կոտրեր՝ չերթայի* - «հեզնանքով ասվում է մի տեղ կամ մեկին այցելելու համար զոջալու մասին» և այլն), նույնիսկ խոսակցական լեզու և բարբառ (*Նաջարյանը փոշմանել ա* - «կատակով կամ հեզնանքով ասվում է մեկի մտափոխության, մի գործից ետ

քաշվելու մասին», *մի մուշտի* [բռնցքի հարված] *եմ տվել* - «ի՛նչ մեծ հարված եմ հասցրել որ» և այլն):

Կառուցվածքային առումով թևավոր խոսքերը ներկայացնում են բառեր (*Աբել* - «եղբոր զոհը դարձած մարդ», *կովախնձոր* - «կովի, գծողության պատճառ, առիթ», *Գոբսեկ* - «ծայրաստիճան ժլատ մարդ» և այլն), բառակապակցություններ (*Աբրահամի գառ* - «գոհաբերվելու պատրաստ էակ», *Աբու Հասանի մաշիկներ* - «խղճուկ, քրքրված կոշիկներ» և այլն) և նախադասություններ (*Ազնվականությունը պարտավորեցնում է* - «ղիրքը պարտավորեցնում է, որ համապատասխան կեցվածք ունենաս», *Հաննիբալը դարպասների մոտ է* - «մոտալուտ մեծ վտանգ է սպառնում» և այլն), որոնք վերաիմաստավորված են և պատրաստի մոծվում են խոսքի մեջ:

Պ. Բեդիրյանի այս բառարանում ընդգրկված թևավոր խոսքերը լեզվամշակութային և իմացական հսկայական տեղեկատվություն են պարունակում: Բառարանի նյութը նրանից օգտվողին տանում է Հին Հռոմ (*Եկա, տեսա, հաղթեցի* - Հուլիոս Կեսար), Հին Հունաստան (*ավգյան ախոռներ* - հունական դիցաբանությունից), Ռուսաստան (*կոտրած տաշտակի առաջ կանգնել* - Ալ. Պուշկին), աստվածաշնչյան ժամանակներ ու վայրեր...

Քրիստոնեությունը, մասնավորապես Սուրբ Գիրքը հսկայական ազդեցություն են թողել հայ մշակույթի զարգացման վրա. այդ փաստը բոլորին է հայտնի: Աստվածաշնչյան «հետքը» տեսանելի է նաև հայերենում, առավելաբար պատրաստի խոսքային կառույցների ոլորտում (դարձվածքներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, ասույթներ):

Ե դարից սկսած՝ մասնավորապես սուրբգրային ծագում ունեցող լեզվական միավորները հանդես են եկել հայերեն ինքնուրույն և թարգմանական գրականության էջերում և դարերի ընթացքում անընդհատ գործածվելով՝ դարձել մեր լեզվի անքակտելի մասը: Գրաբարյան փուլից հետո դրանց զգալի մասը գեղարվեստական գրականության մեջ և մամուլում գործածվում է նոր հայերենով՝ աշխարհաբարով: Մեզանում այդ կարգի միավորների տարածման գործում հայերեն Աստվածաշունչ մատյանից զատ մեծ դեր են խաղում նաև համաշխարհային դասական գրականության՝ քրիստոնեական մշակութային ավանդույթները կրող լավագույն նմուշների թարգմանությունները:

Առանձնանում են, այսպես կոչված, աստվածաշնչաբանությունները. սրանց սուրբգրային ծագումն առաջին իսկ հայացքից զգալի է թե՛ կառուցվածքի (ձևի), թե՛ իմաստային հարազատության տեսանկյունից: Հանրահայտ օրինակներ են՝ *ահեղ դատաստան, աղքատ Ղազարոս, աճեցե՛ք և բազմացե՛ք, ամեն բան իր ժամանակն ունի, այր և կին՝ մեկ մարմին, անառակ որդի, անկեզ մորենի, Ավետյաց երկիր* և այլն:

Հետաքրքրական են այն թևավոր խոսքերը, որոնց աստվածաշնչյան ծագումն «անզեն աչքով» չի երևում: Օրինակ՝ *ամբողջ սրտով, անմեղ գառնուկ, աչքի լույսի պես պահել, առանց դեմքին (ու դիրքին) նայելու, արևի (լուսնի) տակ ոչինչ նոր չէ* և այլն:

Իհարկե, մեծ թիվ են կազմում աստվածաշնչյան այն թևավոր խոսքերը, որոնք մինչև օրս գրաբարով են մնացել մեր խոսքի մեջ (*ակն ընդ ական, ատամն ընդ ատամն* - «վրեժխնդրության բանաձևում», *բազումք են կոչեցեալք, և սակաւք՝ ընտրեալք* - «հավակնորդներ շատ կլինեն, բայց արժանիներ՝ քիչ», *անցո՛ք քաժակս զայս յինէն* - «այս փորձանքից ինձ ազատի՛ր», *հարկ լուծանէ՛ զօրէնս* - «անհ-

րաժեշտությունը, կարիքն ստիպում են օրենքը զանց առնել» և այլն), իսկ մնացածները գործածվում են առավելաբար աշխարհաբար թարգմանությամբ:


Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի գրաբարի դասախոս Պետրոս Բեդիրյանը երկար տարիների ընթացքում մեկիկ-մեկիկ հավաքել, ի մի է բերել հայերենում գործածվող թևավոր խոսքերը, բացատրել դրանց իմաստները, ներկայացրել տարբերակները, այլալեզու համարժեքները: Այս ամենն արվել է մասնագիտական բարձր որակով:

Բառարանում զգալի է հայկական թևավոր խոսքերի տեսակարար կշիռը. ամբողջ գիրքը ներծծված է հայ դասական և ժամանակակից գրականությամբ: Ահա մի քանիսը՝ *հիմի է՛լ լռենք* (Ռ. Պատկանյան) - «էլի՞ հանդուրժենք. ինչքա՞ն լուռ մնանք», *նրբացուցիչ (մեղմացուցիչ) դեպք հանցանաց* (Հ. Պարոնյան) - «մեղքը, հանցանքը, զանցանքը փոքր-ինչ արդարացնող, մեղմացնող հանգամանք» (հեզնական), *սիրուհու չափ տենչալի, մահվան չափ անդիմադրելի* (Նար-Դոս) - «չափազանց գորավոր ապրում, պահանջ և այլն», *ուղեղային մորմոք* (Եղ. Չարենց) - «թյուր դատողություն, հիվանդ երևակայություն», *չաշխատեցի՞ր ամառը, ասա՛ ի՞նչ էր պատճառը* (Աթ. Խնկոյան) - «ասվում է ի հանդիմանություն անբանի, ծուլի» և այլն: Հայկական նյութի ընդգրկման տեսանկյունից դիտարկելիս բառարանի արժեքն ավելի է մեծանում:

Հայկական ծագում ունեցող մեծաթիվ թևավոր խոսքեր առաջին անգամ են բառարանային գրանցում ստանում, ուստի կարող են անսովոր թվալ կամ էլ տարակարծություն առաջ բերել: Մեր կարծիքով՝ որոշ դեպքերում այս կամ այն միավորը կարելի էր և թևավոր խոսք չհամարել, ինչպես՝ *անցի՛ր, սև՛ ամպ, դու իմ սրտից, բացվի՛ր, երկի՛նք կապուտակ* (Հովհ. Հովհաննիսյան) - «լավ օրերի հույս է արտահայտում», *չոռ ուտեիր՝ լավ չէ՞ր, հը՞, ցավ ուտեիր՝ լավ չէ՞ր, հը՞* (Դ. Դեմիրճյան) - «ասվում է մեկին, որ շատ ուտելուց հետո վատ է զգում», *ա՛յ դու ուտես չոռի մեծը* (Աթ. Խնկոյան) - «ասվում է, երբ մեկն անհեռատեսորեն մեծ սխալ է գործում», *ա՛խ, հայրենի քարի վրա լեզուն կտրած հավքն էլ կերգի* (Հովհ. Շիրազ) - «հայրենիքի քաղցրությունը շեշտող խոսք է» և այլն: Ուրիշները կարող են այլ խոսքեր մատնանշել, բայց դա բոլորովին չի ստվերում կատարված հսկայածավալ աշխատանքը: Շրջասությունների բառարանից հետո Պ. Բեդիրյանը հաջորդ հաջորդված բառարանն է հրապարակ բերում:

Հայ ընթերցողը հաճույքով պիտի մտնի հայերեն պատկերավոր խոսքի այս զանազանը և կարդա (այո՛, կարդա), ընդլայնի իր մտահորիզոնն ու հարստացնի իր խոսքը՝ առավել արտահայտչական ու բովանդակալից դարձնելով այն:

Պետրոս Բեդիրյանի «Հայերեն թևավոր խոսքեր» բառարանը վստահաբար կարելի է համարել հայերենագիտության վերջին տարիների ձեռքբերումներից մեկը:



ՁԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՎԵՑ ԱԿ- ՆԱՂԲՅՈՒՐԻ Ս. ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ ՄԱՏՈՒՌԸ

Դեկտեմբերի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղ, ուր հանդիսապես տեղի ունեցավ Սուրբ Վարդան Զորավար մատուռի օծման արարողությանը: Եկեղեցին կառուցվել է ԱԺ պատգամավոր Միքայել Վարդանյանի բարերարությամբ:

Դիլիջան քաղաքի մատույցներում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին և դեպի Ակնաղբյուր ուղեկցեցին Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ եպիսկոպոս Զուլյանը, Գուգարաց թեմի Տավուշի փոխառաջնորդ Սասուն ծայրագույն վարդապետ Զմրուխտյանը, թեմի եկեղեցականները, Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը և մարզային իշխանության այլ ներկայացուցիչներ: Մատուռի օծման արարողությանը մասնակցելու համար Ակնաղբյուր էին ժամանել ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը և ՀՀ Պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը:

Հոգեպարար շարականների երգեցողության ներքո Նորին Սրբությունը կատարեց մատուռի Ս. Մեղանի օծումը: Վեհափառ Հայրապետն աղոթքով հայցեց Բարձրյալ Տիրոջից անսասան պահել նորածո մատուռը, որպեսզի հայորդիները մշտապես արժանանան տերունական օրհնության և հաղորդ դառնան երկնային պարգևների:

Հավարտ արարողության Տավուշի մարզպետը մատուռի առջև ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ վարչապետի այցը Տավուշի մարզ և Ակնաղբյուր:

Օրը արժանահիշատակ էր նաև այլ իրադարձությամբ: Նորածո մատուռի մոտ էին հավաքվել նաև բազում գորակռչիկներ՝ իրենց ուխտը կատարելու Աստծո սուրբ խորանի առջև և ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Զորակռչիկներին և ակնաղբյուրցիներին իր օրհնության խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Այսօր մեր հոգին կրկին լցված է բերկրանքով ու ցնծությամբ, և գոհունակության այս զգացումով մենք միասնական աղոթքով կատարեցինք օրհնությունը Սուրբ Վարդանի անունը կրող նորակառույց այս մատուռի: Սրբազան այս մատուռի ուրախությանն այսօր հավելվել է նաև մեկ այլ ուրախություն. հնավանդ մի սովորության վերականգնում՝ զինակռչիկների երդման արարողություն եկեղեցու սուրբ կամարների ներքո, Աստծո ներկայության առջև: Հնամենի սովորություն կոչեցինք, քանզի մեր հայրերը, երբ մեկնում էին Հայրենիքի պաշտպանության առաքելությամբ, համախմբվում էին եկեղեցու կամարների ներքո, իրենց աղոթքն առ Աստված բարձրացնում, Աստծո օգնականությունը հայցում և Աստծուն ապավինած՝ մեկնում ծառայության: Ահա այսօր մենք ուրախությունն ունենք ականատեսը լինելու նման մի արարողության, երբ զորակռչիկ հայորդիները ծառայության մեկնելուց առաջ իրենց երդումը պիտի կատարեն և աղոթքն առ Աստված բարձրացնեն սրբազան այս

մատուռի կամարների ներքո», - ասաց Նորին Սրբությունը՝ իր գնահատանքը բերելով ՀՀ Պաշտպանության նախարարությանը և վստահություն հայտնելով, որ այս նախաձեռնությունը կհաստատվի որպես ընդհանրական կարգ, և ամեն զորակոչիկ, հայոց հնամենի գեղեցիկ սովորույթի համաձայն, իր երդումը կկատարի սուրբ խորանների առջև՝ ներկայությամբ Երկնավոր Տիրոջ:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց բարերար Միքայել Վարդանյանին, ում հանձնառությամբ ու նվիրումով իր ավարտին հասցվեց մատուռի կառուցումը: Վեհափառ Հայրապետը ողջունեց նաև ՀՀ վարչապետի ներկայությունը, ինչը նոր քաջալերանք պիտի լինի հայ զորակոչիկներին: Նորին Սրբությունը զորակոչիկներին հորդորեց նաև Հայրենիքին ծառայել այն զիտակցությամբ, որ զինվորական ծառայությունը պարզ զինակրություն չէ, այլ հոգու կերտվածք, սեր ու նվիրում հայրենի սրբություններին, նվիրական արժեքներին, սեր ու նվիրում մեր հողին ու պատմությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը բարի ծառայություն մատուցեց զորակոչիկներին՝ հայցելով Տիրոջ օգնականությունը բոլորին, և կատարեց զորակոչիկների օրհնության կարգ:

Արարողության ավարտին մատուռի բարերար տիար Վարդանյանն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին և շնորհավորեց ամենքին մատուռի բացման առիթով: «Մենք մեծ պատվով կատարեցինք այս աշխատանքը և նորից մեր ժողովրդին հույս տվեցինք, որ Վարդանանց ծառն ապրելու է հավերժ, և մեր զինվորները, միշտ այստեղից բանակ գնալով, լինելու են Աստծո Աջի պաշտպանության ներքո», - իր խոսքում նշեց բարերարը:

Ապա Նորին Սրբությունն ու ՀՀ վարչապետը գրուցեցին զորակոչիկների հետ: Ծառայության մեկնող երիտասարդներին Վեհափառ Հայրապետը հանձնեց Նոր Կտակարաններ և խաչեր: Այնուհետև ամենքը ծաղիկներ դրեցին ուխտատեղի դարձած Վարդանի ծառի հարևանությամբ կանգնեցված խաչքարի առջև, ապա ազգային երգերի ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ վարչապետը խաչքարի հարևանությամբ կատարեցին ծառատունկ:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Անուշավան Եպիսկոպոս Ժամկոչյանը, Մայր Աթոռի փոխդիվանապետ Ս. Մեսրոպ աբեղա Պարսամյանը, Նորին Սրբության գավազանակիր Ս. Հովնան աբեղա Հակոբյանը և Տեղեկատվական համակարգի տնօրեն Ս. Վահրամ քին. Մելիքյանը:

Օծման արարողությանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ, Տավուշի մարզի իշխանությունների ներկայացուցիչներ, Ակնաղբյուրի բնակիչներ:

ՄԱՅՐ ԱԹՐԱՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՅ ԵՐԵՎԱՆԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Դեկտեմբերի 22-ին Երևանի Աջափնյակ համայնքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Ս. Խաչ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Եկեղեցին կառուցվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ: Եկեղեցու ճարտարապետն է Ռուբեն Ագաոյանը:

Ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի և արարողությանը մասնակից Սրբազան Հայրերի՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի և Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազյանի, օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը: Ապա եկեղեցու կնքահայրերը սարկավագների ուղեկցությամբ վեմ քարերը զետեղեցին եկեղեցու հիմքերում:

Կառուցվող եկեղեցու կնքահայրերն էին՝ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը, ՀՀ վարչապետի խորհրդական Ֆադեյ Սարգսյանը, ՀՀ Գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Գալուստ Սահակյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանը, ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանը, ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանը, տիար Ռազմիկ Աբրահամյանը, տիար Վրեժ Մարկոսյանը, Աջափնյակ համայնքի թաղապետ Ռուբեն Հովսեփյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Արման Սահակյանը, բոնցքամարտիկ Արթուր Աբրահամը, տիարը Ռուբեն Տոնոյանը, Հակոբ Հակոբյանը և Ռաֆիկ Կարապետյանը:

Արարողության ավարտին Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն ընթերցեց եկեղեցու հիմքերի մեջ զետեղվելիք արձանագրությունը: Այնուհետև հավաքված ժողովրդին և եկեղեցու կնքահայրերին հայրապետական իր պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը. «Այսօր ձեզ հետ միասին մենք գոհարանական աղոթքով և սաղմոսերգությամբ կատարեցինք հիմնօրհները Ս. Խաչ եկեղեցու, որ պիտի երկինք պարզի իր խաչը Հայոց աշխարհի և մեր բարեպաշտ ու հավատավոր զավակների վրա, որպեսզի ազգս հայոց շարունակի իր հավատարիմ ընթացքն առ Աստված, շարունակի նախանձախնդիր լինել հայրենական իր ավանդների, սրբությունների պահպանման գործում և իր կյանքն ապրել Տիրոջ պատգամների ու պատվիրանների համաձայն:

Արդարև, մարդու կյանքն արժեկրթվում է և իմաստ է ձեռք բերում, երբ անհատն այդ կյանքն ապրում է Աստծո հետ, Աստծուն նվիրյալ կյանք է ապրում: Մենք մեր պատմությունից գիտենք բարի օրինակներ, թե ինչպես են մեր հայրերն ապրել՝ ի-

րենց կյանքը դարձնելով ամբողջական նվիրում Երկնային Տիրոջը, ապրել են Քրիստոսի սուրբ հավատքով՝ չզլանալով անգամ պահանջելի հարկին արյուն հեղել ի պաշտպանություն իրենց հավատքի ու սրբությունների:

Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ մեր հայրերի սրբազան այդ հավատքն ազգս հայոց հավատարմորեն շարունակում է պահել ու պահպանել մեր օրերում, երբ ապրում է՝ թոթափած իր ուսերից անհավատության յոթանասուն տարիների ծանր լուծը, ապրում է ազատ ու անկախ Հայաստանում՝ ունենալով բոլոր հնարավորությունները՝ վերակերտելու իր հավատավոր կյանքը ազատ մեր երկրի մեջ», - ասաց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետը ի դեմս ՀՀ վարչապետի շնորհակալություն է հայտնել ՀՀ իշխանություններին, որոնց բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կարողանում է շենացնել հայոց հոգևոր կյանքը, հիմնել և վերանորոգել վանքեր ու եկեղեցիներ, որոնց կամարների ներքո հայոց ազգը ամրացնում ու զորացնում է իր ոգին և աստվածաշնորհամբ ընթանում դեպի իր կյանքի նոր ժամանակները:

Նորին Սրբությունն իր բարձր գնահատանքն արտահայտեց Աջափնյակի թաղապետ Ռուբեն Հովսեփյանին և Աջափնյակի հավատավոր բոլոր բնակիչներին, որոնց նախանձախնդիր ջանքերով պիտի կառուցվի Ս. Խաչ եկեղեցին՝ զորակցությամբ, օրհնությամբ և հովանավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Վեհափառն իր գնահատանքը բերեց նաև եկեղեցու ճարտարապետին և շինարարներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ վարչապետը միասին եկեղեցու արձանագրությունն ամփոփեցին Ս. Խաչ եկեղեցու հիմքում:

Եկեղեցու կառուցումը նախատեսվում է ավարտել երեք տարուց: Եկեղեցին կունենա 34 մետր բարձրություն և սյունաշարով լայն գմբեթ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Սուրբ և Անմահ Պատարագի ընթացքում պատարագիչ Սրբազան Հոր՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ երեք սարկավազներ ստացան քահանայական ձեռնադրություն և օծում:

Մարկոս Սրբազանը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Գոռ սրկ. Գևորգյանը վերանվանվեց Ս. Հակոբ, Հակոբ սրկ. Մովսիսյանը՝ Ս. Արշեն, իսկ Արման սրկ. Երիցյանը՝ Ս. Մեսրոպ:

Ս. Պատարագի ընթացքին՝ «Ողջոյնի» պահին, Մայր Աթոռի միաբանները բարձրացան Սուրբ Խորան և շնորհավորեցին նորընծաներին:

Ձեռնադրությունից հետո Մարկոս Սրբազանը ուրախություն հայտնելով, որ Հայ Եկեղեցու անդաստանում սպասավորության կոչվեցին ևս երեք քահանաներ, իր պատգամն ուղղեց նորած քահանա Հայրերին: Սրբազան Հայրը անդրադառնալով հոգևորականի պատասխանատու առաքելությանը՝ հորդորեց՝ լցվել առաքինություններով ու հոգևոր շնորհներով, պատրաստ լինել յուրաքանչյուր նոր մարտահրավերի և անվտանգ ու խաղաղ հանգրվանի հասցնել իրենց վստահված հոգևոր հոտը:

Երեկոյան ժամերգությունից առաջ Մարկոս Սրբազանի գլխավորությամբ նորընծա քահանաներին Վեհարանում ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շնորհավորելով Մարկոս Սրբազանին՝ անդրանիկ քահանայական ձեռնադրության կատարման և նորընծաներին՝ քահանայանալու առիթով՝ Նորին Սրբությունն անդրադարձավ հոգևորականի բարձր և պատասխանատու կոչմանը, կարևոր ծառայությանը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունը հորդորեց նորած քահանա Հայրերին՝ քառասնորյա շրջանը լավագույնս օգտագործել քահանայական սպասավորությանն իրենց հոգևոր պատրաստության համար: Վեհափառ Հայրապետը մաղթեց նրանց հաստատուն մնալ իրենց կոչման մեջ, չընկրկել դժվարությունների առջև, հավատքով ու համբերությամբ հաղթահարել դրանք, սիրով և նվիրումով ծառայել մեր ժողովրդին:

Մայր Աթոռում քառասնորյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո, Նորին Սրբության բարձր տնօրինությամբ նորած եկեղեցականները հովվական ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռի տարբեր կառույցներում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Տ. ԱՐՇԵՆ ՔԱՀԱՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

(Ավագանի անունը՝ Հակոբ)

Ծնվել է 1982 թ. մարտի 16-ին Վանաձոր քաղաքում:

1989-1999 թթ. սովորել է Էջմիածնի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2005 թթ. ուսումնառությունը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավազի տոնին, ձեռամբ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավազ:

2005 թվականից աշխատում է Վեհարանում որպես գործավար քարտուղար:

2007 թ. դեկտեմբերի 9-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

(Ավագանի անունը՝ Գոռ)

Ծնվել է 1978 թ. Արարատի մարզի Խոր Վիրապ գյուղում:

1985-1995 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսումը շարունակել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

2001 թ. հուլիսի 22-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպս. Չուլջյանի:

2001 թ. ծառայության է նշանակվել Վեհարանում որպես սպասասրահի հյուրընկալ:

2002 թ. հունիսի 12-ին պաշտպանել է ավարտաճառ «Հովհաննես Գառնեցին և նրա մատենագրական ժառանգությունը» թեմայով:

2004-2005 թթ. ուսանել է Գերմանիայում՝ Ռեգենսբուրգի Արևելյան Եկեղեցիների ինստիտուտում:

2005 թ. վերադարձել է Մայր Աթոռ և շարունակել իր ծառայությունը Վեհաքանում որպես գործավար քարտուղար:

2007 թ. դեկտեմբերի 9-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՄԵՍՐՈՂ ՔԱՀԱՆԱ ԵՐԻՑՅԱՆ

(Ավագանի անունը՝ Արման)

Ծնվել է 1978 թ. սեպտեմբերի 2-ին Գեղարքունիքի մարզի Արծվաշեն գյուղում:

1985-88 թթ. սովորել է Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոցում:

1988-1995 թթ. սովորել է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1996 թ. ընդունվել է Սևանի «Մխիթար Սեբաստացի» համալսարանի պատմության ֆակուլտետ, որի լրիվ դասընթացը ավարտել է 2000 թ.՝ ստանալով պատմության ուսուցչի մասնագիտական որակավորում:

1998-99 թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի Մարտունի գյուղի միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ:

1999-2001 թթ. դասավանդել է Գեղարքունիքի մարզի Աղբերք գյուղի միջնակարգ դպրոցում:

2001 թ. մասնակցել է «Հայաստանի Պատանեկան նվաճումներ» և ՀՀ Կրթության և գիտության նախարարության կրթության բարեփոխումների կենտրոնի հետ համատեղ կազմակերպված «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» միացյալ դասընթացին՝ ստանալով իրավունքի ուսուցչի մասնագիտական որակավորում:

2001-2002 թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոցում որպես պատմության և իրավունքի ուսուցիչ:

2002 թ. մասնակցել է «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացված «Քննադատական մտքի զարգացումը կարդալ-գրելու միջոցով» դասընթացին՝ ձեռք բերելով մանկավարժական նոր հմտություններ:

2002-2003 թթ. սովորել է Վանաձորի Մարդու իրավունքների դպրոցում (Հայկական Սահմանադրական իրավապաշտպան կենտրոն)՝ ստանալով մարդու իրավունքների պաշտպանի մասնագիտական որակավորում:

2002-2005 թթ. ավարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանի եռամյա լրիվ դասընթացը:

2005-2007 թթ. հոգևոր սպասավորության է կոչվել Գեղարքունյաց թեմի Ճամբարակի տարածաշրջանում:

2005-2007 թթ. Հայ Եկեղեցու պատմություն և Հայոց պատմություն է դասավանդել Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի «Հայ 93» վարժարանում:

2006 թ. աշխատել է Սևանի STV1 հեռուստաընկերությունում՝ որպես հեռուստալրագրող և հոգևոր հաղորդումների մեկնաբան:

2007 թ. հուլիսի 29-ին, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2007 թ. ծառայության է կոչվել Գեղարքունյաց թեմի Ծաղկունքի Ս. Սարգիս և Ցամաքաբերդի Ս. Գևորգ եկեղեցիներում:

2007 թ. դեկտեմբերի 9-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՎԵՑԻՆ 23 ՆՈՐ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Ս. Ստեփաննոս Նախավկայի և առաջին մարտիրոսի տոնը: Տոնի օրը Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի, սարկավագական աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 23 սաներ, ովքեր հաջողությամբ հանձնել էին սարկավագական քննությունները:

Արարատ Սրբազանը, ուրախություն հայտնելով, որ Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր դասը համալրվեց 23 նոր սպասավորներով, նորընծա սարկավագներին ուղղված իր պատգամում ասաց. «...Սիրելի սարկավագներ, այն ուխտը, որ կատարեցիք քիչ առաջ, երբ ձեր ձեռքերը վեր էիք բարձրացրել «Աստվածային և երկնային շնորհ» շարականի երգեցողության ժամանակ, պարզապես մի ցուցադրական արարք չէ: Այդ ուխտը, որ կատարեցիք ոչ թե մեզ կամ ձեր հարազատներին համոզելու համար, այլ այդ ուխտը կատարեցիք Աստծո հետ: Մենք եղանք պարզապես միջնորդ՝ ձեր և Աստծո միջև: ...Աղոթքներում, որ ընթերցեցինք ձեռնադրության ժամանակ, ասվում է. «Ով Տեր Աստված, որ տալիս ես առատապես շնորհները», և այդ շնորհները հեղվում են ձեզ վրա անսահմանությամբ: Սակայն աղոթասացը շարունակում է, որ Աստված էլ մի բան է սպասում ձեզանից, այն է՝ Աստծո պատվիրանների պահպանումը: Եթե կարողացաք Աստծո պատվիրանները նախ դուք պահել, ապա ինքնաբերաբար այդ առիթը, հնարավորությունը և իշխանությունը պիտի ունենաք այդ պատվիրանները փոխանցելու հավատացյալներին՝ թե՛ այս պահից սկսյալ և նա՛ն ապագայում՝ որպես ձեռնադրյալ հոգևորականներ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս խորանը, վկան է եղել բազում և բազմաթիվ հոգևորականների ձեռնադրության. կաթողիկոսները այս խորանի վրա են ծնկաչոք ստացել իրենց հայրապետական օծումը, բազում եպիսկոպոսներ, կուսակրոն հոգևորականներ և սարկավագներ, պատմության տակավին հին ժամանակներից՝ Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև այսօր ստացել են իրենց ձեռնադրությունը և օծումը: Այսօր ձեզ է վիճակվել հետևելու մեր լուսաշավիղ նախորդներին»:

Սրբազան Հայրը նաև հորդորեց նոր ձեռնադրված սարկավագներին. «Այս է պահանջում Աստված, այս է պահանջում յուրաքանչյուր հավատացյալ, որ հոգևորականը, հովիվը, անկախ իր աստիճանից և պաշտոնից, նախ պետք է տա, տա և միայն տա. զոհաբերի և ծառայի նրանց, ովքեր կարիքն ունեն այդ սպասավորության»:

Ս. Պատարագից հետո Վեհաբանում Մայր Աթոռի բոլոր սարկավագներին իր հայրական օրհնությունն ու պատգամը տվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, շնորհավորելով սարկավագներին տոնի առիթով, իր ուրախությունը հայտնեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սարկավագաց դասը համալրվեց ևս 23 հոգով, և հորդորեց առավել նախանձախնդրությամբ ու ջանասիրությամբ լծվել իրենց առաքելության

իրականացմանը՝ աչքի առաջ միշտ ունենալով Ս. Ստեփաննոսի օրինակը, և իրենց ողջ ջանքերը ի սպաս դնել ի պայծառություն և ի շինություն մեր ժողովրդի և Եկեղեցու: Վերջում Նորին Սրբությունն ամենքին նվերներ հանձնեց:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր Տաճարում տեղի ունեցավ նաև դպիրների և ուրարակիրների ձեռնադրություն: Դպրության աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երկրորդ և երրորդ լսարանի սաները, չորրորդ լսարանի ճեմարանականներն արժանացան ուրարակրության պատվի:

Սարգիս սարկավազ Բաղդասարյան

Ծնվել է 1985 թ. հոկտեմբերի 3-ին Արարատի մարզի Խոր վիրապ գյուղում:

1992-2002 թթ. սովորել է տեղի Մարգար Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցում:

2000-2001 թթ. սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանում:

Դավիթ սարկավազ Մինասյան

Ծնվել է 1986 թ. հունիսի 16-ին Էջմիածին քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Էջմիածնի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանում:

Սևակ սարկավազ Գրիգորյան

Ծնվել է 1986 թ. հունվարի 23-ին Արմավիրի մարզի Այգեկ գյուղում:

1993-2003 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2003-2005 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, ապա տեղափոխվել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Արթուր սարկավազ Տիգրանյան

Ծնվել է 1985 թ. հունիսի 18-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

1994-2001 թթ. սովորել է Էջմիածնի Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցում:

1995-2000 թթ. հաճախել է Ս. Հռիփսիմյանց կույսերի անվան կիրակնօրյա վարժարան:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանում:

Առնակ սարկավագ Տերտերյան

Ծնվել է 1985 թ. դեկտեմբերի 9-ին Էջմիածին քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

1995-2002 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 2 երաժշտական դպրոցում:

1996-2001 թթ. սովորել է Ս. Մարիամ Աստվածածնի անվան կիրակնօրյա վարժարանում:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանում:

Գառնիկ սարկավագ Շահինյան

Ծնվել է 1986 թ. ապրիլի 24-ին Էջմիածին քաղաքում:

1993-1996 թթ. սովորել է Էջմիածնի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1996-2003 թթ. սովորել է Էջմիածնի Վահան Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2000-2001 թթ. սովորել է Ս. Ներսես Շնորհալու անվան կիրակնօրյա վարժարանում:

2003 թ. սովորել է Սևանի Վազգենյան Հեգևոր Դպրանոցում, այնուհետև տեղափոխվել Գյումրիի Հոգևոր Ընծայարան:

2004-2007 թթ. ուսումը շարունակել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանում:

Հայկ սարկավագ Եզեկյան

Ծնվել է 1985 թ. սեպտեմբերի 29-ին Երևանում:

1992-2002 թթ. սովորել է Վանաձորի Գևորգ Զառուչի անվան թիվ 24 միջնակարգ դպրոցում:

2003 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Գարիկ սարկավագ Նադանյան

Ծնվել է 1985 թ. դեկտեմբերի 29-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1992-2002 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2003 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Հարություն սարկավագ Երանյան

Ծնվել է 1986 թ. հունիսի 24-ին Արմավիրի մարզի Առատաշեն գյուղում:

1993-2003 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2003 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Արթուր սարկավագ Գևորգյան

Ծնվել է 1986 թ. հուլիսի 21-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1993-1997 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1997-2003 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

2003 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2004 թ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում, այնուհետև տեղափոխվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2005 թ. փետրվարին տեղափոխվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Արթուր սարկավագ Հովհաննիսյան

Ծնվել է 1987 թ. հունիսի 11-ին Էջմիածին քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թվականից սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Արման սարկավագ Գրիգորյան

Ծնվել է 1984 թ. Գյումրիում:

1991-2001 թթ. սովորել է Գյումրիի թիվ 15 միջնակարգ դպրոցում:

2002-2004 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2004 թ. տեղափոխվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2002-2007 թթ. սովորել է Գյումրիի պետական մանկավարժական համալսարանի հեռակա բաժնում՝ ստանալով մանկավարժ-աշխարհագրագետի որակավորում:

2006 թ. սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Միքայել սարկավագ Հակոբյան

Ծնվել է 1987 թ. մարտի 28-ին Երևանում:

1993-2003 թթ. սովորել է Երևանի թիվ 199 միջնակարգ դպրոցում:

2003 թ. սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Սարգիս սարկավագ Գալամդարյան

Ծնվել է 1986 թ. մայիսի 16-ին Երևանում:

1993-2003 թթ. սովորել է Երևանի թիվ 105 միջնակարգ դպրոցում:

2003 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Նույն թվականի հոկտեմբերին տեղափոխվել է Գյումրիի Հոգևոր Ընծայարան:

2004-2005 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2005 թ. փետրվարին տեղափոխվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Արմեն սարկավազ Սողոյան

Ծնվել է 1987 թ. հունվարի 19-ին Գավառ քաղաքում:

1993-2001 թթ. սովորել է Վանաձորի Եղիշե Զարենցի անվան թիվ 12 միջնակարգ դպրոցում:

2001-2003 թթ. սովորել է Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցում:

2003 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Դավիթ սարկավազ Մանգասարյան

Ծնվել է 1986 թ. հունիսի 17-ին Երևանում:

1993-1999 թթ. սովորել է Երևանի Սիամանթոյի անվան թիվ 162 միջնակարգ դպրոցում:

1999-2003 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

2003 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2007թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Կարեն սարկավազ Թորոսյան

Ծնվել է 1986 թ. նոյեմբերի 15-ին Էջմիածին քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Էջմիածնի Վ. Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2003 թ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում: Նույն թվականին սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2004-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավազ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Արսեն սարկավազ Հմայակյան

Ծնվել է 1986 թ. նոյեմբերի 28-ին Էջմիածին քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջ-

նակարգ դպրոցում:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագձյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Համլետ սարկավագ Մովսիսյան

Ծնվել է 1986 թ. հուլիսի 6-ին Էջմիածին քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Էջմիածնի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1997-2003 թթ. սովորել է Ս. Հովսեփյանց կիրակնօրյա վարժարանում:

2003-2005 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագձյանի:

Այժմ սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանում:

Արթուր սարկավագ Սարգսյան

Ծնվել է 1986 թ. դեկտեմբերի 6-ին Էջմիածին քաղաքում:

1993-1996 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

1996-2003 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագձյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Գարեգին սարկավագ Մողմունյան

Ծնվել է 1985 թ. մարտի 24-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

2003-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագձյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

Գոռ սարկավագ Հակոբյան

Ծնվել է 1986 թ. հունիսի 28-ին Վանաձոր քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Վանաձորի թիվ 5 միջնակարգ դպրոցում:

2003-2004 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2004-2007 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2007 թ. սովորում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս.

Գալթագճյանի:

Այժմ սովորում է Ե լսարանում:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ


Ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Հյուսիսային Հայաստանում երկրաշարժի զոհերի՝ Վիրահայոց թեմի բոլոր տաճարներում կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Մարդաշատ էր հատկապես Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին, ուր հոգեհանգստյան արարողությունն անցավ հանդիսապետությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և մասնակցությամբ տեղի հոգևոր դասի:

Հավարտ արարողության Սրբազան Հայրն իր խոսքն ուղղեց եկեղեցում հավաքված ներկաներին: Հիշատակի իր խոսքում քաջալերելով համայն հայությանն ու հորդորելով ապրել Աստծու պատվիրաններով՝ Վազգեն եպիսկոպոսն իր օրհնությունն ու երախտագիտությունը հայտնեց այդ օրերին հայությանն առաջին օգնություն ցուցաբերած եղբայրական վրաց ժողովրդին: Վիրահայոց սուրբ տաճարում իրենց ներկայությամբ ու աղոթքով զոհերի խնկաբույր հիշատակը ոգեկոչեցին Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Միլվանյանն ու դեսպանատան աշխատակազմը, քաղաքացիական ինտեգրացիայի պետնախարար Զինաիդա Բեստանյան, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրդյանը, Վրաստանի Հայերի Միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի գրողների միության անդամներ, թարգմանիչ-բանաստեղծներ Գիվի Շահնազարը և Անահիտ Բոստանջյանը, Թբիլիսիի հայկական դպրոցների ուսուցիչները և սաները:

Հոգեհանգստյան պաշտոններ կատարվեցին նաև թեմի Ծալկայի շրջանի Ղզլբիլիսա գյուղում և Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանում:

Զոհերի հիշատակը հավերժացնող արարողություն տեղի ունեցավ նաև Բաթումի Սուրբ Փրկիչ և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի հայկական եկեղեցիներում:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈՂ ԴԻՎԱՆ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Դեկտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Կորինթիոսին:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով դեսպանին նշանակման առիթով, մաղթեց արդյունաշատ գործունեություն Հայաստանում: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց երկու երկրների միջև առկա սերտ համագործակցությունը՝ անդրադառնալով մասնավորապես երկու ժողովուրդների միջև առկա դարավոր բարեկամությանը և Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական հարաբերություններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, նշելով, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարաբերությունները Հունաստանի դեսպանատան հետ միշտ ջերմ են եղել, վստահություն հայտնեց, որ նոր դեսպանի պաշտոնավարման շրջանը ևս կհատկանշվի սերտ համագործակցությամբ ու բարի արդյունքներով:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաև ԱՄՆ Հովվապետական իր այցի ժամանակ Հույն Ուղղափառ Եկեղեցու պետ Քրիստոփորոս Արքեպիսկոպոսի հետ ունեցած իր տեսակցությանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Դեկտեմբերի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Եգիպտոսի Արաբական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Վահիդ Ելդին Իսմայիլ Գալալին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձավ Եգիպտոսի և Հայաստանի միջև առկա սերտ կապերին: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց դեսպանին՝ եգիպտահայ համայնքի նկատմամբ իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև վերհիշեց 2000 թ. Եգիպտոս կատարած իր Հովվապետական այցը:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ միջեկեղեցական և միջկրոնական երկխոսության մեջ Հայ Եկեղեցու դերակատարությանը:

Վերջում Նորին Սրբությունն իր բարեմաղթանքներն ուղղեց դեսպանին՝ հաջողություն մաղթելով նրան դիվանագիտական իր առաքելության մեջ:

ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալիռեզա Հադիդյանին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նկատեց, որ երկու երկրների միջև փոխհարաբերությունները բոլոր ոլորտներում զարգացում են ապրում՝ դրանում կարևորելով նաև դեսպանատան դերը: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց դեսպանին՝ հայ-իրանական հարաբերություններին բերած իր նպաստի համար:

Հանդիպմանը խոսվեց նաև երկու ժողովուրդների պատմամշակութային առնչակցությունների, ներկայիս բարիդրացիական սերտ հարաբերությունների և տնտեսական համագործակցության մասին:

ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Դեկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Բուլղարիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆան Դիմիտրովին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայ-բուլղարական հարաբերությունների զարգացման և երկու պետությունների միջև առկա սերտ համագործակցության առիթով՝ անդրադարձավ երկու ժողովուրդների պատմական ընդհանրություններին:

Վեհափառ Հայրապետն ի դեմս դեսպանի իր շնորհակալությունը հայտնեց նաև Բուլղար Ուղղափառ Եկեղեցու պետ Մաքսիմ Պատրիարքին և Եկեղեցու սինոդին 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման համար՝ նկատելով, որ ցեղասպանու-

յան ճանաչմամբ և դատապարտմամբ է միայն հնարավոր կանխել այլ ցեղասպանությունները մարդկության կյանքում:

Հրաժեշտ տալով պրն Դիմիտրովին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքներն ուղղեց դեսպանին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 1-ին, շաբաթ - Տոն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թաղէոսի եւ Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Պարթն աբեղա Բարսեղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 9):

Դեկտեմբերի 2-ին, կիրակի - Բ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Դավիթ աբեղա Քարամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ով բնակվում է Իմ մեջ, եւ ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետեւ առանց Ինձ ոչինչ անել չէք կարող» (Հովհ. ԺԵ 5) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 12):

Դեկտեմբերի 9-ին, կիրակի - Գ. կիր. Յիսնակաց: Յղութիւն Սուրբ Աստուածածնի յԱննայէ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 16-ին, կիրակի - Դ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Սահակ վարդապետ Մաշայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 23-ին, կիրակի - Ե. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Գաբրիէլ աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի» (Մատթ. ԻԳ 12) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 15):

Դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի - Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Արարատ Եպիսկոպոս Գալթագճյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ղեկավարների 30-ին, կիրակի - Զ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ասում եմ ձեզ, թե՛ Ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի և այն, ինչ որ ունի» (Ղուկ. ԺԹ 26) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 18):

ՑԱՆԿ
«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի հաստատման ութսունամյակի առիթով, Ա
 13:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Հարութ Սասունյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պար-
 գևատրելու մասին, Ա 18:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Հարություն Արմենյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պար-
 գևատրելու մասին, Ա 20:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 տեր և տիկին Զիմ և Սանդրա Լայթներներին «Ս. Գրիգոր Լուսավորիչ»
 շքանշանով պարգևատրելու մասին, Դ 17:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Զեյմա Գալուստյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատ-
 րելու մասին, Զ-Է 16:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Կառլոս Պետրոսյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պար-
 գևատրելու մասին, Զ-Է 18:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Ռադիկ Մարտիրոսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պար-
 գևատրելու մասին, Զ-Է 20:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Վլադիմիր Բարխուդարյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով
 պարգևատրելու մասին, Զ-Է 22:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Պերճ Զեյթունցյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատ-
 րելու մասին, Զ-Է 24:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Ռուբեն Մաթևոսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պար-
 գևատրելու մասին, Զ-Է 26:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Սվետլանա Գրիգորյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պար-
 գևատրելու մասին, Զ-Է 28:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը
 Խորեն Մելիսանեջյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատ-
 րելու մասին, Զ-Է 30:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանին արքունիքի պատիվ շնորհելու մասին, Ը 3:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Կարպիս Նազարյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ը 5:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Հրաչ և Սյուզան Թուֆայաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ը 7:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Զավեն Մարյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Ը 9:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Սրբատառ կոնդակը «Ս. Էջմիածնի բարեկամներ» հիմնադրամին աջակցելու մասին, Թ 19:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Կրեկըրի Էքիզյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Թ 21:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Ճերըլտ Գաֆեսճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Թ 23:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Վրեթ Մարկոսյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Թ 25:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արփինե Մարգարյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Թ 27:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Ռուբեն Գրիգորյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ 3:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Քրրք Հաչիկյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ 5:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Աշոտ Արսենյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, ԺԱ 65:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Ռալֆ Յիրիկյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, ԺԲ 3:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական պատգամը Սուրբ Ծննդեան եւ Աստուածայտնութեան տօնի առիթով, Ա 3:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով, Ա 6:

Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկե-

ղեցու նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը, Ա 9:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի եպիսկոպոսական ձեռնադրության 40-ամյակի առիթով, Ա 16:

Հայրապետական գնահատություն, Ա 22:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Բանակի օրվա և Հայոց բանակի 15-ամյակի առիթով, Ա 23:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Հրանտ Դինքի սպանության առիթով, Ա 24:

Կարգալույծ է հռչակվել Տ. Խորեն աբեղա Զաքարյանը, Ա 25:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական խոսքը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի մահվան առիթով, Բ-Գ 17:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հուղարկավորության ժամանակ, Բ-Գ 18:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքին, Բ-Գ 19:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Տ. Եղիշե արքեպիսկոպոս Կիզիրյանին քահանայական ձեռնադրության վաթսունամյակի առիթով, Բ-Գ 56:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Ռոպայե Հատտեճյանին՝ ծննդյան ութսունամյակի առիթով, Բ-Գ 58:

Հայրապետական գնահատություն, Բ-Գ 60:

Արքության պատիվ Տ. Արիս, Տ. Սևան և Տ. Վիգեն Սրբազաններին, Բ-Գ 61:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առիթով, Բ-Գ 62:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ է նշանակվել Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազյանը, Բ-Գ 63:

Կարգալույծ է հռչակվել Տ. Աբգար քահանա Գըլըճյանը, Բ-Գ 63:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից պատվիրակություն չի մասնակցելու Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու բացմանը, Բ-Գ 72:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սուրբ Յարութեան տոնի Հայրապետական պատգամը, Դ 3:

Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը, Դ 6:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորանքի գիրը Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապին, Դ 16:

Հայրապետական գնահատություն, Դ 19:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել հայ կանանց՝ Ավետման և Մայրության տոների առիթով, Դ 20:

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պարգևատրվեց ԼՂՀ բարձրագույն շքանշանով, Ե 3:
- Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքին, Ե 5:
- Նորած քահանաները ծառայության կոչվեցին Մայր Աթոռում և Հայ Եկեղեցու տարբեր թեմերում, Ե 6:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հաղթանակի և Խաղաղության օրվա առիթով, Ե 7:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Անկախության օրվա առիթով, Ե 8:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Շրջանավարտների օրհնության օրվա առիթով, Ե 9:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը մեծանուն երգչուհի Գոհար Գասպարյանի հուղարկավորության ժամանակ, Ե 10:
- Հայրապետական գնահատություն, Ե 11:
- Հայրապետական տնօրինություն, Ե 12:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ՀՀ Ազգային ժողովի 4-րդ գումարման անդրանիկ նիստին, Զ-Է 13:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական գիրը ԼՂՀ նորընտիր նախագահ Բակո Սահակյանին, Զ-Է 15:
- Հայրապետական գնահատություն, Զ-Է 32:
- Կարգալույծ է հռչակվել Տ. Ավետիս արեղա Սահակյանը, Զ-Է 33:
- Կարգալույծ է հռչակվել Տ. Ռուբեն քահանա Եղիազարյանը, Զ-Է 33:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով, Զ-Է 34:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Սարգիս Մուրադյանի մահվան առիթով, Զ-Է 35:
- «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ Ռադիկ Մարտիրոսյանին և Վլադիմիր Բարխուդարյանին, Զ-Է 37:
- «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ մշակույթի անվանի երեք գործիչների (Սվետլանա Գրիգորյան, Պերճ Զեյթունցյան և Ռուբեն Մաթևոսյան), Զ-Է 40:
- Հայրապետական գնահատություն Կոտայքի մարզպետին, Զ-Է 42:
- Օրհնության գիր Ռուբեն Շարբաթյանին, Զ-Է 43:
- Ընտրվեց Ֆրանսիայի հայոց նորաստեղծ թեմի առաջնորդ, Զ-Է 44:
- «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան Հայաստանի Ամերիկյան Համալսարանի նախագահ դոկտ. Հարություն Արմենյանին, Ը 11:
